Պետական կառավարումը՝ իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի կարևորագույն մաս և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միևնույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ (Քալաշյան 81):

Կառավարման օրենքները, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և նրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք,

ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության:

«Կառավարում» կամ «իշխում» հասկացությունը քաղաքական գիտության կարևորագույն կատեգորիաներից է: «Քաղաքագիտության առարկան է, ըստ Հ. Լասուելի,«իշխանությունն ու դրա կրողները», ըստ Ռ. Դալի՝ «իշխանության, տիրապետման կամ հեղինակության» իրականացումը, ըստ Դ. Իստոնի՝ բուն քաղաքականությունը «արժեքների իշխանական բաշխումն» է» (Мельвиль 324-328):

Իշխանությունն այն առանցքն է, որի շուրջ ձևավորվում և ամրագրվում են քաղաքական գիտությունների ուսումնասիրության տարբեր օբյեկտներն ու ուղղությունները: Իսկ ինչպիսի՞ն են լինում իշխանության ձևերը, այսինքն՝ մեր բնորոշմամբ՝ քաղաքական կառավարման ձևերը. առաջնահերթ պետք է հենց դա հստակեցնել:

«Կառավարություն» տերմինը վերաբերում է այն ինստիտուտներին ու գործընթացներին, որոնց շրջանակներում սովորաբար ընդունվում են կոլեկտիվ ու, որպես կանոն, իրականացման համար պարտադիր որոշումներ: Քաղաքական համակարգը կամ ռեժիմը ավելի լայն հասկացություններ են, ներառում են ոչ միայն իշխանության մեխանիզմները և պետության ինստիտուտները, այլև այն կառույցներն ու գործընթացները, որոնց միջոցով պետությունը համագործակցում է հասարակության հետ (Мельвиль 331-335):

Հասարակության կառավարման՝ մինչ օրս ամենաարդյունավետ ինստիտուտը եղել է պետությունը:

«Պետությունը քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտն է, որը կազմակերպում, ուղղորդում և վերահսկում է մարդկանց, հասարակական խմբերի, դասակարգերի ու ասոցիացիաների համատեղ գործունեությունն ու հարաբերությունները: Պետությունը նշանակալի է նրանով, որ նրա ձեռքում է կենտրոնացված իշխանությունն ու ռեսուրսները, ինչն էլ հնարավորություն է տալիս կառավարելու ու նպատակաուղղված կարգավորելու սոցիալական հարաբերությունները: Պետությունը քաղաքական իշխանության հատուկ կազմակերպութուն է, որն ունի սուվերենիտետ և իր հրամանների համապարտադիր բնույթ» (Решетникова 123):

Բազում այլ գործոնների շարքում պետության զարգացման կարևորությամբ է պայմանավորված նաև պետության ղեկավարող կառույցների արդյունավետ աշխատանքը և ժողովրդի կենսունակության բարձրացումը: Ակնհայտ է, որ պետության արդիականացման ճանապարհին հանդիպում են բազմաթիվ մարտահրավերներ, որոնց ոչ միայն պետք է տալ համարժեք պատասխան, այլև, այդ մարտահրավերներին դիմակայելով, հավաքել անհրաժեշտ փորձ ու հմտություններ՝ պետության զարգացման գործում խորքային ծրագրեր իրականացնելու համար (Գասպարյան և Ջալինյան 10):

Քաղաքական մտածողների ուշադրության կենտրոնում մշտապես եղել է այն հարցը, թե ինչով է տարբերվում կառավարման մի ձևը մյուսից: Դեռ Ք.ա. 4-րդ դարում Արիստոտելը նախաձեռնեց քաղաքական ռեժիմների դասակարգման մեզ հայտնի առաջին փորձը: 18-րդ դարի սկզբներին շրջանառության մեջ դրվեց երկրները միապետությունների ու հանրապետությունների, ինքնակալությունների ու սահմանադրական ռեժիմների բաժանման պրակտիկան: 20-րդ դարում ի հայտ եկան նոր առավել յուրօրինակ դասակարգումներ: «Սառը պատերազմի» ժամանակահատվածում երկրագնդի քաղաքական քարտեզը բաժանված էր «Երեք աշխարհների», որում համաշխարհային քաղաքականությունը հանգեցվում էր ժողովրդավարության ու ամբողջատիրության միջև հակամարտությանը:

Այսօր այդ դասակարգումը հնացած է, մասնավորապես՝ կապված այնպիսի քաղաքական գործընթացների հետ, ինչպիսիք են՝ կոմունիզմի փլուզումը, Արևելյան Ասիայի հզորացումը և քաղաքական իսլամի կայացումը: Այսօր դեռևս պարզ չէ՝ ինչ են

նշանակում այդ փոփոխությունները՝ արևմտյան լիբերալ դեմոկրատիայի համաշխարհային հաղթարշա՞վ, թե՞ ժամանակակից աշխարհի հետագա քաղաքական ֆրագմենտացիա (Хейвуд 28):

Կառավարման ձևեր

Կառավարման ձևը համալիր սահմանադրական-իրավական ինստիտուտի, իշխանության կազմակերպում է, որը բնութագրվում է որպես ֆորմալ աղբյուր, բարձրագույն մարմինների կառուցվածք, ունի իրավական բնույթ, ինչպես նաև նրանց միջև փոխհարաբերությունների հաստատված կարգ: Կառավարման ձևի գլխավոր որոշիչ չափանիշն է պետության գլխի իրավական կարգավիճակը (ընտրվող և փոխարինվող հանրապետություններում, ժառանգական միապետություններում):

Պետական կառավարումը՝ իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի վերնաշենք և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միևնույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ: Կառավարման ընթացքում սուբյեկտիվ գործոնը սերտաճվում է օբյեկտիվ գործոններին, կառավարման ներքին տրամաբանությունը՝ կառավարվող օբյեկտի փոփոխության և գործունեության տրամաբանությանը:

Այս դիալեկտիկայի էությունը կայանում է սուբյեկտի օբյեկտիվացման և օբյեկտի սուբյեկտիվացման մեջ: Կառավարման օրենքները, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և նրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության: Պետական կառավարման օբյեկտիվ օրենքների համապատասխանելիությունը իրական կյանքին չափորոշվում է կառավարչական հարաբերություններում սուբյեկտի՝ բազմազան գործողություններով դրսևորված այն՝ էականորեն նշանակալի արդյունքներով, որոնք օժտված են պարբերական կրկնողությամբ: Սոցիալական միջավայրի վիճակից, այդ թվում՝ հասարակական համակարգի կառուցվածքից կախվածության մեջ գտնվող կառավարչական պրոցեսի վերլուծությունը, ինֆորմացիոն մոտեցման հետևողական կիրառման դեպքում, հանգեցնում է պետական կառավարման կառուցվածքային և գործառութային յուրահատուկ օրենքների բացահայտմանը (Քալաշյան 22):

Քանի որ պետությունը՝ որպես ժամանակակից պետականության ընդհանուր և համընդհանուր տեսակ, ի հայտ եկավ և հաղթականորեն զարգացավ Եվրոպայում՝ Մեծ Ֆրանսիական հեղափոխության հիման վրա, այսինքն՝ 18-րդ դարի վերջից. փաստ է, որ ժողովրդի գոյությունը որպես մարդկանց համայնք, որը միավորված է լեզվի, կրոնի, մշակույթի, պատմության, մտածելակերպի և ընդհանուր տարածքում համատեղ բնակության միջոցով, որպես կանոն, կայուն կերպով ապահովվում է միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը կառավարում է իր սեփական ինքնիշխան և անկախ պետությունը, այսինքն՝ երբ ժողովուրդը դարձել է մարդկանց քաղաքական համայնք, ազգ, այնուհետև՝ պետություն: Այս գործընթացը, ինչպես հայտնի է, ազգային ինքնորոշման սկզբունքի իրականացումն է, և պատմության մեջ սովորաբար ուղեկցվում է ուժի կիրառմամբ, հաճախ՝ արյունալի ազատագրական պայքարով (Люхтерхандт 95):

Պետության կայացածությունը, լինելով պետության նպատակադրումներին համահունչ արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակելու և իրականացնելու կարողություն, առավելապես պայմանավորված է գործունակ պետական ինստիտուտներով և դրանց աշխատանքի արդյունավետությամբ: Ներկայումս ամբողջ աշխարհում տեղի ունեցող թվային փոխակերպումները լայնորեն

ներդրվում են նաև պետական կառավարման համակարգում՝ նպատակ ունենալով ամբողջական ինտեգրված համակարգերի միջոցով ապահովելու մատուցվող պետական ծառայությունների որակը և դրանցից քաղաքացիների բավարարվածության աստիճանը (Խաչատրյան 271):

Անկասկած, կարևոր գործոն է նաև կառավարման թվայնացումը (e-Government). պետական համակարգում թվայնացման գործընթացների խթանումը նպաստում է պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Պետք է ընդունել նաև, որ պետական կառավարման թվայնացումը չի կարող ինքնաբերաբար հանգեցնել դրա արդյունավետության բարձրացմանը: Եթե թվայնացման արդյունքում սոսկ ստեղծվում են գերատեսչական՝ ֆունկցիոնալ առումով միմյանց կրկնող տեղեկատվական համակարգեր, ապա դրանք ընդամենը կարող են որոշ չափով նվազեցնել պետական մարմինների ու քաղաքացիների շփումը, էլեկտրոնային եղանակով որոշ ծառայություններ մատուցել, բայց ոչ երբեք հանգեցնել պետական ինստիտուտների կայացմանը: Թվայնացումը բարձրացնում է պետական համակարգի աշխատանքի արդյունավետությունը՝ նպաստելով առավել արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր իրագործելուն: Ուստի՝ կարելի է պնդել, որ պետության կայացածության մակարդակի գնահատման ժամանակ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել երկրի թվայնացման, պետական համակարգում թվային տեխնոլոգիաների ներդրման տարաբնույթ ցուցանիշներին (Խաչատրյան 272):

Ժամանակակից պետություններին բնորոշ է կառավարման երկու ձև՝ հանրապետություն և միապետություն (Додонов,и др . 91): Պետք է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին», «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքներով նույնպես ձևավորվեց և մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը գործում էր պետական կառավարման մի այնպիսի «հիբրիդային» համակարգ, որն իր մեջ ներառում էր ինչպես միայն խորհրդային (սովետական) կառավարմանը, այնպես էլ նախագահական և խորհրդարանական կառավարմանը բնորոշ հատկանիշներ: Նախատեսվում էին, մասնավորապես, նախագահի և փոխնախագահի պաշտոններ (ինչը հատկանշական է նախագահական կառավարման ձևի համար) և վարչապետի պաշտոն (ինչը բնորոշ է կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերին): Ավելին, նախարարների խորհրդի (կառավարության) նախագահի պաշտոնի առկայության պայմաններում, «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, հենց Հանրապետության նախագահն էր ղեկավարում կառավարության գործունեությունը և նախագահում կառավարության նիստերին:

Պատմության ընթացքում մեծ հետաքրքրություն է ներկայացրել քաղաքական կյանքի և հատկապես՝ պետության տիպաբանության խնդիրը: Պետության առավել վաղ և, թերևս,հայտնի տիպաբանությունը իրականացրել է Արիստոտելը իր «Պոլիտիկա» աշխատության մեջ (Ք. ա. 4-րդ դ.). հունական պոլիսների ուսումնասիրությամբ նա տարբերակում է պետության ճիշտ և սխալ ձևեր: Ճիշտ է համարում այն պետությունները, որոնց իրական նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ սխալ է համարում այն պետությունները, որոնք մղված են միայն կառավարիչների բարիքի ապահովմանը: Ըստ Արիստոտելի՝ պետական կարգը այն է, երբ տիրապետում է օրենքով հաստատված իշխանությունը: Համընդհանուր բարիքի չափանիշից բացի կիրառում է նաև կառավարումը իրականացնող անձանց թվի չափանիշը. մե՞կն է կառավարում, մի քանի՞սը, թ՞ե շատերը (Сморгунов 93):

Պետական կառավարման ձևերը բարդ ու բազմաբնույթ են, սակայն հիմնականում դրանք կարելի է բաժանել մի քանի հիմնական կատեգորիաների, որոնք

կախված են պետության կառավարման բնույթից և հասարակության պահանջներից: Որպես նման տիպերի օրինակներ կարելի է նշել և՛ ժամանակակից, և՛ պատմական համակարգեր:

Դեմոկրատիան այնպիսի պետական կառավարման ձև է, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդը ընտրում է իր առաջնորդներին ազատ ընտրություններով, և այն իրականացվում է բազմաթիվ տարբեր ձևերով: Դեմոկրատական կառավարման ձևերը ենթադրում են ազատություն, հավասարություն, օրենքի գերակայություն և քաղաքացիների մասնակցություն պետական գործընթացներին: Դեմոկրատիան կարող է լինել ուղիղ կամ միջնորդավորված՝ կախված նրանից, թե քաղաքացիները վերականգնում են իրենց իշխանությունը անմիջապես (ուղիղ ժողովրդավարություն) կամ ընտրում են ներկայացուցիչներ, ովքեր կառավարում են նրանց փոխարեն (միջնորդավորված ժողովրդավարություն): Օրինակ՝ Միացյալ Նահանգների նախագահական համակարգը կամ Հայաստանի խորհրդարանական համակարգը (Զալինյան 2002):

Ապարատային կամ բյուրոկրատական կառավարման ձև: Այս տեսակը հատուկ է այնպիսի համակարգերին, որտեղ պետության պաշտոնյաները հանդիսանում են ամենակարևոր գործոնները:

Ազգային կամ միանձնյա կառավարման ձև (դիկտատուրա): Այս կառավարման ձևը ենթադրում է, որ պետությունը ղեկավարվում է մեկ անձի կողմից, որի իշխանությունը չի սահմանափակվում ոչ մի օրենքով կամ հաստատությամբ: Դիկտատուրայում իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած է մեկ մարդու ձեռքում, և քաղաքացիների իրավունքն ու ազատությունները սահմանափակվում են: Իշխանության ղեկավարը որոշումներ ընդունում է առանց հանրային քննարկման կամ ընտրական ընթացակարգերի (Զալինյան 2002):

Նախագահական կառավարում: Նախագահական համակարգը բնորոշ է այն երկրներին, որտեղ պետության նախագահը կատարում է և՛ գործադիր, և՛ աջակցող դերեր, այնուամենայնիվ կարող է նաև լինել սահմանափակված խորհրդարանական վերահսկողությամբ: Նախագահական կառավարման ժամանակ նախագահի լիազորությունները լինում են ավելի լայն, քան խորհրդարանական համակարգերում: Նախագահը շատ հաճախ ընտրվում է ժողովրդի կողմից, և նրա իշխանությունը չի զուգորդվում խորհրդարանի կամ այլ մարմինների կողմից:

Խորհրդարանական կառավարման ձևում իշխանության մեծամասնությունը խորհրդարանի ձեռքում է: Այս համակարգում կառավարության ձևավորումն ու գլխավորի նշանակումը հիմնականում կախված են խորհրդարանական ընտրություններից: Այս համակարգում նախագահի պաշտոնը կարող է լինել հիմնականում խորհրդանշական կամ սահմանափակ, մինչդեռ կառավարության ղեկավարումն իրականացնում է վարչապետը, որն ընտրվում է խորհրդարանի կողմից (Զալինյան 2002):

Անկախ պետական կառավարման ձևից՝ պետության պոտենցիալի համախառն և պաշտպանական հզորության հիմքը նրա տնտեսական ներուժն է, որը կազմում է մնացած բոլոր ներուժների հիմքը, քանի որ դրանք ենթադրում են համապատասխան տնտեսական աջակցություն (Հարությունյան 54):

Քաղաքական կառավարման կոորդինատային դասակարգում

Քաղաքական համակարգի գծային տիպաբանությունը բավական սահմանափակ օգտագործման դաշտ ունի զարգացած համեմատական վերլուծության մեջ: Քաղաքական համակարգի բաժանումը երկու հիմնական խմբերի հնարավորություն չէր տալիս մի շարք հատկանիշներով խառնված քաղաքական համակարգերի հետազոտման համար: Միաչափ չափանիշները միավորում էին քաղաքական համակարգի տիպերի պարունակային կողմը: Ուստի՝ առաջացան քաղաքական համակարգի տարբեր բնութագրական գծերի համադրման

հիմքով տիպաբանություններ: Տիպերի դասակարգման չափանիշների քանակից ելնելով՝ առանձնացվում են *երկչափ և բազմաչափ* կոորդինատային համակարգեր:

Երկչափ կոորդինատային համակարգի լավ տարբերակ է առաջ քաշում **Ռ.Դալը**՝ այն դնելով պոլիարխիայի էմպիրիկ հիմքում: Այն բավական պարզ է և էմպիրիկ համեմատական վերլուծության հիմնական հասկացությունների և հիպոթեզների համար լավ միջոց է: Դալի տիպաբանությունը դասվում է ապրիոր (փորձի վրա չհիմնված) և կոնցեպտուալ տիպաբանությունների շարքին: Այն առաջ է քաշում «Պոլիարխիա. մասնակցություն և ընդդիմություն» գրքի (1971) առաջին մասում (Даль 427-455):

Դալը իր քաղաքական համակարգի իդեալական տիպերը կերտում է երկու չափանիշների հիման վրա: Առաջինը վերաբերում է թույլատրելի ընդդիմությանը կամ քաղաքական *մրցակցությանը*: Երկրորդը վերաբերում է իշխանության համար հրապարակային մրցակցության գործընթացի մեջ բնակչության *մասնակցությանը:*

Համաձայն առաջարկած չափորոշիչների՝ առանձնացնում քաղաքական համակարգի չորս տիպեր: Եթե ընդդիմություն և քաղաքական մրցակցություն չկա կամ մոտ է զրոյին, իսկ հրապարակային պայքարին մասնակցելու իրավունք ունեցողների համամասնությունը փոքր է, ապա այդ համակարգը *«փակ գերիշխանություն»* է: Փոքր մրցակցության և մեծ մասնակցության դեպքում խոսքը վերաբերում է *«ներառող գերիշխանությանը»:* Մեծ մրցակցության և փոքր մասնակցության համադրումը *«մրցակցային օլիգարխիան»* է: Իսկ զգալի մրցակցության և մասնակցության դեպքում առաջանում է «*պոլիարխիան»*: Սովորաբար հնչեցվող դեմոկրատական քաղաքական համակարգին համապատասխանում է «պոլիարխիա» հասկացությանը: Իրական քաղաքական համակարգերը Դալի սխեմայի մեջ տեղադրելիս թերևս ուղղանկյան մեջ կենտրոնական դիրքում կհանգրվանեն (Даль 427-455):

Քաղաքական համակարգի տիպաբանության կառուցման որոշ դեպքերում կիրառվում են նաև ընդհանուր հասարակությանը վերաբերող ցուցանիշներ՝ տնտեսական զարգացում, սոցիալ-տնտեսական անհավասարություն, սոցիալական և մշակութային դիֆերեցվածություն: Նման տիպավորման վառ օրինակ է առաջարկում Արենդ Լեյպհարտը: Նա անդրադառնում է կայուն քաղաքական դեմոկրատիայի վերլուծությանը: Գտնում է, որ կայուն դեմոկրատիայի պայմաններում բնակչության դիֆերենցացման գործոնը բացատրվում է քաղաքական էլիտայի վարքով:

Էլիտաները նաև կիրառում են ենթահամակարգերի արժեքները սեփական հեղինակության բարձրացման համար, ուստի և մեծանում է հավանականությունը, որ էլիտաների միջև պայմանավորվածությունը կընդունվի բնակչության կողմից:

Ըստ այդմ՝ Լեյպհարտը կառուցում է դեմոկրատական համակարգերի իր տիպաբանությունը: Նա կիրառում է երկու չափանիշներ. հասարակության կառուցվածքը՝ միատա՞րր է, թե՞ պլյուրալիստական, էլիտայի վարքը՝ թշնամակա՞ն է, թե՞ կոալիցիոն:

Կոալիցիոն համակարգերում երկակի ֆունկցիաներ են առկա: Մի կողմից մեծ է հավանականությունը պառակտման, իսկ մյուս կողմից տարբեր ենթահամակարգերի էլիտաների համագործակցմամբ հնարավոր է կայունության հաստատում: Սա կոչում է համագործակցային դեմոկրատիա, երբ էլիտաները գործում են ողջ հասարակության արժեքների հիմքով առաջնորդվելով և պատրաստակամ են պահպանելու երկրի ամբողջականությունը: Համագործակցությունը կերտվում է վստահության և կոմպրոմիսի հիմքով:

Կենտրոնամետ համակարգերում էլիտայի թշնամական վերաբերմունքը կայունությանը չի սպառնում, քանի որ հասարակության մեջ առկա են հարաբերականորեն միատարր արժեքներ:

Կենտրոնախույս համակարգերում անկայունության վտանգը մեծ է, ինչը կապված է պլյուրալիստական արժեկողմնորոշման և էլիտաների անհամագործակցային ուղղվածության հետ (Даль 427-455):

Քաղաքական կառավարման ձևերի իր դասակարգումն է առաջարկում Բլոնդելը, նրա դասակարգումն առանձնանում է մեծ թվով փոփոխականների առկայությամբ: Խմբավորման համար նա օգտագործում է 3 փոփոխականներ՝ քաղաքական մրցակցություն, էլիտայի կառուցվածք և բնակչության քաղաքական մասնակցություն:

Քաղաքական մրցակցությունը գնահատվում է բաց կամ փակ լինելու հանգամանքով, ինչը կապված է ընդդիմության գործառնման հնարավորության հետ: Էլիտայի կառուցվածքի առանձնացումը կատարվում է էլիտայում ենթախմբերի առկայության և ինքնուրույնության հիմքով, ըստ այդմ տարբերակվում են մոնոլիտ և դիֆերենցացված էլիտաներ: Քաղաքական մասնակցությունը բնութագրվում է քաղաքական կյանքում բնակչության ընդգրկվածության աստիճանով:

Ըստ որի Բլոնդելը բաժանում է ինկլյուզիվ (ներառող) և էքսկլյուզիվ (բացառող) համակարգեր: Այս փոփոխականների համադրմամբ առաջ է քաշում քաղաքական համակարգի 6 տիպեր՝ ավանդական, էգալիտար-ավտորիտար, ավտորիտար-բյուրոկրատական, ոչ էգալիտար-ավտորիտար, մրցակցող-օլիգարխիա, լիբերալ-դեմոկրատական:

Այս բաժանումները ցուցադրում են պետության կառավարման ձևերի բազմազանությունը և դրանց տարբերությունները: Ամեն մի կառավարման ձև ունի իր առանձնահատկությունները, որոնք որոշվում են յուրաքանչյուր երկրի մշակույթով, պատմությամբ և քաղաքական համակարգով:

Եզրահանգումներ

Ամփոփելով պետական կառավարման հիմնական ձևերի վերաբերյալ ուսումնասիրությունը՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. Պետական կառավարման համակարգը ապահովում է, որ պետությունը գործի կազմակերպված, կանխատեսելի և օրինական ձևով՝ ծառայելով հասարակության շահերին:
2. Պետական կառավարման ձևերը տարբեր կերպ կարող են ապահովել երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունությունը: Դեմոկրատական համակարգերը ավելի մեծ ճկունություն են ապահովում, որտեղ քաղաքացիներն ու ժողովրդավարական ինստիտուտները կարող են կանխել իշխանության չարաշահումը, մինչդեռ դիկտատուրաները կամ բյուրոկրատական համակարգերը ավելի կենտրոնացված են, բայց կարող են բերել կառավարման ծանրաբեռնվածության կամ չարդարացված ուժի կիրառման:
3. Կառավարման տարբեր ձևերի արդյունավետությունը կախված է պետության պատմությունից, մշակույթից, ավանդույթներից և քաղաքական մշակույթից: Դեմոկրատիան կարող է լինել ավելի երկարաժամկետ կայուն, բայց անհրաժեշտ է բարձր քաղաքացիական գիտակցություն և օրենքների հետևողական կիրառություն, մինչդեռ դիկտատուրաները կարող են արագ գործել, բայց հաճախ հանդիպում են ժողովրդական հակադրությունների:
4. Պետության կառուցվածքը որոշվում է հիմքում ընկած քաղաքականությամբ, այսինքն՝ ինչպիսի քաղաքական ուղղվածություն կամ գաղափարախոսություն կունենա տվյալ երկիրը, այդպիսին կլինի նրա պետական կառուցվածքը :
5. Հանրային մասնակցություն: Դեմոկրատական կառավարման ձևերը առավելապես կենտրոնացած են քաղաքացիների մասնակցության վրա, որտեղ

հանրությունը կարող է ազդել կառավարման գործընթացի վրա՝ ընտրությունների, հանրաքվեների կամ այլ մեթոդներով: Իսկ ապարատային կամ միանձնյա կառավարման ձևերում հանրային մասնակցությունը սահմանափակված է կամ նույնիսկ բացակայող է:

6. Պետական կառավարման տարբեր ձևերում իշխանության սահմանափակումները տարբեր են: Դեմոկրատիաներում իշխանությունը մոնիթորինգի և պատասխատվության ներքո է գտնվում, քանի որ քաղաքացիներն ունեն վերահսկողություն իրենց ընտրված պաշտոնյաների նկատմամբ:

7. Քաղաքական կառավարման դասակարգման լավագույն տարբերակը ձևաբանական կոորդինատային բազմաչափ դասակարգումն է:

8. Քաղաքական կառավարման այս կամ այն դասակարգման հիմքում ընկած է տվյալ մտածողի արժեկողմնորոշումը, որից էլ բխեցվում է դասակարգման չափանիշը:

9. Պետական կառավարման համակարգի զարգացումը պահանջում է երկարաժամկետ ռազմավարություն, որը միավորում է կառույցների բարեփոխում, տեխնոլոգիական նորարարություն և քաղաքացիական մասնակցություն:

10. Ո՛չ մի կառավարման ձև իդեալական չէ. հաջողությունը կախված է ոչ միայն ինստիտուտներից, այլև քաղաքական մշակույթից, քաղաքացիական գիտակցությունից և իրավական պետության սկզբունքների պահպանումից:

Ժամանակակից միտումներն են.

Թվայնացում (e-Government)–էլեկտրոնային ծառայություններ, բաց տվյալներ:

Մասնակցային կառավարում – քաղաքացիների ներգրավում որոշումների կայացման մեջ:

Կայուն զարգացում – շրջակա միջավայրի և սոցիալական հավասարակշռության պահպանում:

Այս բոլոր բաղադրիչները միասին ապահովում են այն, որ պետությունը կարողանա արդյունավետորեն կազմակերպել հասարակական կյանքը և արձագանքել փոփոխվող պայմաններին:

Այս եզրահանգումներն ընդգծում են, որ պետական կառավարման ձևը ոչ միայն ձևավորում է երկրի քաղաքական համակարգը, այլև ազդում է հասարակության զարգացման, պետական կայունության և քաղաքացիական ազատությունների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արսենյան,Գևորգ և ուրիշներ. *Պետական կառավարման հիմունքներ.* ՀՀ ԳԱԱ «Գիտություն». 2001, էջ 204:

2. Գասպարյան, Մխիթար և Ջալինյան, Աշոտ. *«Պետականաշինության մշակույթը որպես պետության բնականոն արդիականացման գրավական».Հանրային կառավարում*, 2, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա,Երևան, 2021, էջ 10-21:

3. Ջալինյան, Աշոտ.*«Պետական կառավարման համակարգերի տեսակներն ու առանձնահատկությունները:Մտորումներ պետական կառավարաման բարեփոխումների և պետական ծառայության զարգացման մասին».«Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում»* Գիտական աշխատությունների ժողովածու, N1, 2002,էջ 10:

4. Խաչատրյան, Կառլեն. *«Թվայնացումը որպես պետության կայացածության բաղադրիչ». Գիտական Արցախ*, №3 (10), Երևան, 2021, էջ 265-274, DOI: 10.52063/25792652-2021.3-265:

5. Հարությունյան, Արտակ. *«Պետության ռազմական անվտանգության ներուժը. էությունը, կառուցվածքը և առանձնահատկությունները»*. ԱԵԳՄՄ «Գիտական Արցախ» պարբերական, N 1(8), Երևան, 2021, էջ 54-63, DOI: 10.52063/25792652-2021.1-47:

6. Սարգսյան,Մերի.*«ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում».*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014. նստաշրջանի նյութերի ժողովածու. Երևան, 2015, էջ 67-85:

7. Օրդյան,Էդուարդ.*«Պետական կառավարման համակարգը Հայաստանում, ձևավորումը, բարեփոխումները և հիմնահարցերը»*. Երևան, ՀՀԿԴ, «Պետական ծառայություն», 1998:

8. Քալաշյան,Վաչե.*«Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները և առաջնահերթությունները». «Նորավանք»* գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2003,էջ 81:

9. ---.*Պետական կառավարման արդյունավետությունը.* ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 165:

10. ՀՀ Նախագահի հրամանագիր *«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին».*ՀՀԱԺՏ 1995. 1-2:

11. --- . *«Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին».* ՀՀՊՏ 2007.07.25/37 (561), հոդ. 829:

12. Аристотель. *Политика. Сочинения в 4-х томах.* Т.4. Перевод Сергей Жебелева, Мысль, 1983, стр. 502.

13. Додонов, Вячеслав и др. «*Большой юридический словарь».* Инфра-М, М., 2001, стр. 591.

14. Глазунов, Николай. *Система государственного управления: Учебник для вузов.* М., 2002.

15. Даль. «Демократия и ее критики». Пер. с англ. Под ред. 2003, стр. 427-455.

16. Люхтерхандт, Отто. *«Исторический опыт и уроки Армянской государственности – взгляд со стороны». Научный Арцах*, №1, ОМУСА, 2018, с. 95-102.

17. Мельвиль, Андрей. *Политология: учеб*. М. 2008, с. 559.

18. Пикулькин, Александр. *Система государственного управления*. 1997.

19. Сморгунов, Леонид.*Сравнительная политология: Теория и методология измерения демократии.* СПб., 1999, с. 93.

20. Светлана, Решетникова. *Политология: учебник*. под ред., 6-е изд., Минск, 2010, с. 123.

21. Хейвуд, Эзра. *Политология: Учебник для студентов вузов.* Пер. с англ. под ред., Водолазова, Григорий. В. Вельского., М.: ЮНИТИ-ДАНА, 2005, с. 28.

WORKS CITED

1. Arsenyan,Gevorg yev urishner. [Fundamentals of Public Administration]. HH GAA «Gitut'yun». 2001, ej 204. (in Armenian)

2. Gasparyan, Mkhit'ar yev Zalinyan Ashot. [The Culture of State-Building as a Guarantee of the Natural Modernization of the State]. Hanrayin karravarum, 2, Hayastani Hanrapetut'yan petakan karravarman akademia,Yerevan, 2021, ej 10-21. (in Armenian)

3. Zalinyan, Ashot. [Types and Characteristics of Public Administration Systems. Reflections on Public Administration Reforms and the Development of Public Service. "Information technologies and management] #1, 2002. (in Armenian)

4. Khach'atryan, Karrlen. [Digitalization as a Component of Statehood], Gitakan Arts'akh, №3(10), Yeyevran,2021,ej 265-274, DOI: 10.52063/25792652-2021.3-265. (in Armenian)

5. Harut'yunyan, Artak. [The State's Military Security Potential: Essence, Structure and Features]. AYEGMM-«Gitakan Arts'akh» parberakan, N 1(8),Yerevan 2021,ej 54-63, DOI: 10.52063/25792652-2021.1-47. (in Armenian)

6. Ordyan, Eduard. [The State Administration System in Armenia: Formation, Reforms and Key Issues,Yerevan]. HHKD, «Petakan tsarrayut'yun», 1998. (in Armenian)

7. Sargsyan, Meri. [The Imperative of Reforming the Form of Government of the Republic of Armenia in the Context of Increasing the Effectiveness of the Constitutional Mechanisms of Separation and Balance of Powers]. YePH iravagitut'yan fakulteti aspirantneri yev hayts'ordneri 2014 t'. nstashrjani nyut'eri zhoghovatsu, Yerevan, 2015, ej 67-85. (in Armenian)

8. K'alashyan, Vach'e. [Prospects and Priorities of the Development of the State Administration System,Yerevan], «Noravank'» gitakrt'akan himnadram», 2003t'. 81 ej. (In Armenian)

9. K'alashyan, Vach'e. [The Effectiveness of Public Administration] YePH hratarakch'ut'yun,2014,165 ej. (in Armenian)

10. HH Nakhagahi hramanagir [On Establishing the Structure and Procedure for the Activities of the Government of the Republic of Armenia] HHAZHT 1995.1-2. (in Armenian)

11. --- [On Establishing the Procedure for Organizing the Activities of the Government of the Republic of Armenia and Other State Administration Bodies Subordinate to it]. HHPT 2007.07.25/37 (561), hod. 829. (in Armenian)

12. Aristotel', Politika, Sochineniya v 4-x tomax [Politics Writings in 4 volumes] .M., Mysl', 1983. T.4. Perevod Sergej, Zebeleva. 502 9. Dodonov, Vâčeslav. Ermakov ,Dmitrij . Krilova Marina M. i dr. M. (in Russian)

13. Bol'shoj ûridičeskij slovar' [Great Legal Dictionary].Infra-M, 2001. S. 591. (in Russian)

14. Glazunov, Nikolaj. Sistema gosudarstvennogo upravleniya [System of State Administration] .Uchebnik dlya vuzov. M., 2002 (in Russian)

15. Dal', Demokratija i ee kritiki [Democracy and its critics]. Per. s angl. Pod red. M.V.Il'ina. — M., 2003. S. 427-455. (in Russian)

16. Lyukhterkhandt, Otto. Istoricheskij opyt i uroki Armjanskoj gosudarstvennosti – vzgljad so storony [Historical Experience and Lessons of Armenian Statehood – a View From the Outside] Gitakan Arc'ax, №1, 2018 t' S.95. (in Russian)

17. Mel'vil' Andrej. Politologija [Political Science]. M. 2008, S. 559

18. Pikul'kin, Aleksandr. Sistema gosudarstvennogo upravlenija [System of State Administration].M. 1997. (in Russian)

19. Smorgunov. Sravnitel'naja politologija: Teorija i metodologija izmerenija demokratii [Comparative politics: Theory and Methodology of Democracy]. SPb., 1999. S . 93. (in Russian)

20. Svetlana, Rešetnikova. Politologiâ: učebnik /pod red.. 6-e izd. Minsk. 2010, S. 123. (in Russian)

21. Hejvud, Ezra. Politologiâ [Political Science]: Uchebnik dlya studentov vuzov / Per. s angl. pod red. Vodolazova, Grigorij,Vel'skogo. M.: UNITI-DANA, 2005.s. 28. (in Russian)

THE CONTEMPORARY MAIN FORMS OF PUBLIC ADMINISTRATION

SHUSHANIK VARDERESYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student,
Senior Lieutenant of the Police of the
Ministry of Internal Affairs of the Republic of Armenia
Spitak, the Republic of Armenia

The purpose of this article is to review the current state of the country's governance systems and their various models in line with global developments.

The diversity of forms of government shows how states can shape their governance mechanisms in different social, economic and political conditions, analyze and present these forms of government, their strengths and weaknesses, as well as the peculiarities of their application in different countries, which will provide an opportunity to more deeply understand the possibilities for improving and developing modern public governance systems.

The task of this article is not only to analyze the existing forms of state governance, but also to understand their impact on society - to what extent they contribute to the protection of citizens' rights, social justice, economic stability and general well-being.

The research used analysis, synthesis, induction, deduction and comparative methods.

In the work, we have substantiated that changing geopolitical and economic situations around the world often force states to adapt to new challenges and transform their governance models for future stability and global competitiveness.

Within the framework of the article, we have identified what external and internal factors influence the choice of state governance methods.

Keywords: *State administration, form of government, monarchy, polity, aristocratic government, democracy, presidential republic, government.*

ОСНОВНЫЕ СОВРЕМЕННЫЕ ФОРМЫ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

ШУШАНИК ВАРДЕРЕСЯН
соискатель Института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения,
старший лейтенант полиции Министерств внутренних дел
Республики Армения,
г. Спитак, Республика Армения

Целью данной статьи является рассмотрение текущего состояния систем государственного управления страны и их различных моделей в соответствии с глобальными событиями.

Разнообразие форм государственного управления показывает, как государства могут формировать свои механизмы управления в различных социальных, экономических и политических условиях, анализ и представление этих форм правления, их сильные и слабые стороны, а также особенности их применения в разных странах, что позволит глубже понять возможности совершенствования и развития современных систем государственного управления.

Задача данной статьи — не только проанализировать существующие формы государственного управления, но и понять их влияние на общество: в какой степени они способствуют защите прав граждан, социальной справедливости, экономической стабильности и общему благосостоянию.

В исследовании использовались методы анализа, синтеза, индукции, дедукции и сравнительного анализа.

В работе мы обосновываем, что меняющаяся геополитическая и экономическая ситуация в мире часто вынуждает государства адаптироваться к новым вызовам и трансформировать свои модели управления для обеспечения будущей стабильности и глобальной конкурентоспособности.

В рамках статьи мы выявили, какие внешние и внутренние факторы влияют на выбор методов государственного управления.

Ключевые слова: *государственное управление, форма правления, монархия, политическое устройство, аристократическое правление, демократия, президентская республика, правительство.*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

ՎԵՐԱԲԱՇԽԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ *

ՀՏԴ 332.1 DOI: 10.52063/25792652-2025.2.25-127

ՆԱՐԻՆԵ ԱՍՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հանրային կառավարման ամբոնի դասախոս, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
narine.asryan@ysu.am
ORCID: 0000-0003-0589-8174

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում վերաբաշխիչ քաղաքականության և արդյունավետ կառավարման փոխազդեցության համակողմանի վերլուծությանը: Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել վերաբաշխիչ քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց կիրառելիությունը երկրի սոցիալ-տնտեսական իրականության պայմաններում, ինչպես նաև վերհանել դրանց փոխկապակցվածությունը արդյունավետ կառավարման հայեցակարգային և էմպիրիկ հիմքերի հետ:

Ուսումնասիրության շրջանակներում դրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հետխորհրդային անցումային շրջանում Հայաստանի Հանրապետությունում ձևավորված վերաբաշխման մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ինչպես նաև դրանց ազդեցության վերլուծությունը՝ կայուն տնտեսական աճի ապահովման, սոցիալական արդարության բարձրացման և եկամուտների անհավասարության նվազեցման տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են թե՛ հայեցակարգային, թե՛ էմպիրիկ մեթոդներ՝ ներառյալ սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծություն, պետական կառավարման գործառույթների գնահատում, ինչպես նաև վերաբաշխիչ քաղաքականության իրականացման փորձի համեմատական ուսումնասիրություն:

Էմպիրիկ վերլուծության արդյունքում բացահայտվել են վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետության հիմնական սահմանափակումները, այդ թվում՝ հարկաբյուջետային համակարգի կառուցվածքային թերությունները, սոցիալական պաշտպանության մեխանիզմների

* Հոդվածը ներկայացվել է 14.05.2025թ., գրախոսվել՝ 05.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

անկատարությունը և կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակումները:

Հետազոտության արդյունքների հիման վրա արվել են գործնական առաջարկություններ, մասնավորապես՝ առաջարկվել է համալիր ռազմավարական մոտեցում, որը ներառում է հարկային համակարգի խորքային բարեփոխումներ, սոցիալական ծրագրերի թիրախավորման մեխանիզմների բարելավում և կատարելագործում, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների ուժեղացում, ինչպես նաև թափանցիկության և հաշվետվողականության ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում:

Ստացված եզրակացությունները կարող են օգտակար լինել և ունենալ կիրառական արժեք քաղաքականություն մշակողների, տնտեսագետների, սոցիալական քաղաքականության և հանրային կառավարման ոլորտի մասնագետների համար՝ նպաստելով Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական քաղաքականության առավել արդյունավետ նախագծմանն ու իրականացմանը:

Հիմնաբառեր՝ *վերաբաշխիչ քաղաքականություն, արդյունավետ կառավարում, սոցիալական արդարություն, հարկաբյուջետային համակարգ, եկամտային հարկ, սոցիալական անհավասարություն, տնտեսական աճ, բարեփոխում, Հայաստանի Հանրապետություն:*

Ներածություն

Պետության զարգացման և, հատկապես, բնակչության կենսամակարդակի պահպանման և ավելացման ուսումնասիրության նպատակը վարվող տնտեսական քաղաքականության և բնակչության բարեկեցության աստիճանի միջև կապերի ուսումնասիրությունն է:

Կառավարման արդյունավետության բարձրացումը դիտարկվում է որպես կայուն զարգացման հիմնարար պայման, քանի որ այն ապահովում է պետական և հանրային ռեսուրսների նպատակային և օպտիմալ օգտագործումը՝ նվազեցնելով կառավարման գործընթացների անարդյունավետությունը և կորուստները: Այսպես՝ կայուն զարգացման տեսությունը (WCED 1987) շեշտում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական բաղադրիչների հավասարակշռված զարգացումը, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կառավարման համակարգը գործում է բարձր ինստիտուցիոնալ կարողությունների և հաշվետվողականության պայմաններում: Այս համատեքստում առանձնահատուկ դեր է խաղում վերաբաշխիչ քաղաքականությունը, որը, ըստ Թ. Լոուիի (Lowi, T. J.) և Մասգրեյվի, (Musgrave, R. A.), ուղղված է սոցիալական անհավասարությունների նվազեցմանը և ռեսուրսների հավասարաչափ բաշխմանը: Գիտական ուսումնասիրությունները (Acemoglu & Robinson 2012) վկայում են, որ այն երկրներում, որտեղ պետական կառավարման համակարգը ունի արդյունավետ կազմակերպչական կառուցվածք և քաղաքականությունների ճշգրիտ մշակման մեխանիզմներ, վերաբաշխիչ քաղաքականությունը նպաստում է սոցիալական կայունությանը, տնտեսական աճին և երկարաժամկետ զարգացման ապահովմանը: Ուստի՝ կառավարման արդյունավետության բարձրացումն ու ճշգրիտ իրականացված վերաբաշխիչ քաղաքականությունը հանդես են գալիս որպես փոխկապակցված գործոններ, որոնք միասին երաշխավորում են առավել կայուն զարգացում:

Հարստության և եկամուտների վերաբաշխման հիմնախնդիրը հետխորհրդային տարածքում ձևավորված նորանկախ պետությունների սոցիալական բնույթի հիմնահարցերի մեջ առանցքայիններից է՝ բնորոշ հասարակական - քաղաքական բոլոր համակարգերին: ՀՀ անկախության հռչակումից հետո երկրի առջև դրված

հիմնական խնդիրներից մեկը հասարակական հարաբերությունների այնպիսի համակարգի ձևավորումն էր, որը թույլ կտար ապահովել հասարակության կայուն զարգացումը, պայմաններ կստեղծեր քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետագա առաջընթացն ապահովելու համար (Մարկոսյան 2-4):

Հայաստանի պարագայում վերաբաշխիչ քաղաքականությունը երկրի տնտեսական ռազմավարության կարևոր բաղադրիչն է՝ ուղղված եկամուտների անհավասարության վերացմանը և ներառական տնտեսական աճի խթանմանը: Սա ենթադրում է հարկային համակարգի՝ որպես սոցիալական պետության առանցքային ինստիտուցիոնալ բնութագրիչի և բյուջեի կառավարման ռազմավարության առկայություն՝ ապահովելու սոցիալական և եկամտային տարբեր խմբերի միջև ռեսուրսների արդար բաշխումը, ինչպես նաև հավասարակշռելու եկամուտների և հարստության անհամամասնությունները:

Իր հերթին, հարկային համակարգի արդյունավետ ֆինանսական կառավարումը չափազանց կարևոր է բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման և արդյունավետ հարկային քաղաքականության իրականացման համար: Անհրաժեշտ է ընդգծել նաև պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման շարունակական գործընթացի անհրաժեշտությունը՝ ապահովելով, որ պետական ծախսերը համահունչ լինեն երկրի ռազմավարական առաջնահերթություններին և զարգացման երկարաժամկետ նպատակներին: Սա ենթադրում է ռեսուրսների վերաբաշխում ցածր առաջնահերթ ոլորտներից դեպի բարձր առաջնահերթ բնագավառներ՝ բարձրացնելու պետական միջնաժամկետ ծախսերի արդյունավետությունը:

ՀՀ-ում վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունը կարևոր է նաև երկարաժամկետ տնտեսական կայունության ապահովման տեսանկյունից: Սա ներառում է մեթոդաբանական և գործնական մարտահրավերների լուծում՝ ռեսուրսների ֆինանսական կառավարման գործընթացը բարելավելու և դրանց բաշխման արդյունավետությունը բարձրացնելու համար: Սոցիալական աջակցության ծրագրերը և հարստության արդար վերաբաշխումը կարող են նպաստել կառավարական ծրագրերին հասարակության աջակցությանը՝ նվազեցնելով ներհասարակական սոցիալական բևեռացվածությունը և լարվածությունը: Սա կարևոր է հատկապես մեր երկրների պարագայում, երբ անհրաժեշտ է դիմակայել արտաքին տնտեսական մարտահրավերներին և ներքաղաքական ու սոցիալական խնդիրներին:

Վերաբաշխիչ քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում

ՀՀ վերաբաշխիչ քաղաքականության առանձնահատկությունների, մասնավորապես՝ ոլորտային վերաբաշխումների վրա զգալի ազդեցություն են ունեցել որոշակի գործընթացներ: Նախ ներկայացնենք մինչ 2008թ.՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, ՀՀ տնտեսության վիճակը: Այդ շրջանում ՀՀ տնտեսությունը բնութագրվում էր որպես արագ աճ արձանագրող տնտեսություն, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով, այդ թվում՝ շինարարության ոլորտի բուռն զարգացում, սփյուռքից ներհոսող դրամական փոխանցումների աճ, միջազգային կապիտալ շուկաներում բարենպաստ պայմաններ և այլն:

Պետք է նշել, որ ՀՀ տնտեսությունը 2000-2007թթ. ընթացքում արձանագրել է զգալի աճ՝ տարեկան միջինը 12-13%:Այս շրջանում վերաբաշխիչ քաղաքականության հիմնական ուղղությունները ներառում էին, առաջին հերթին, հարկաբյուջետային քաղաքականությունը, որտեղ շեշտը դրված էր պետական ծախսերի կառուցվածքի բարելավման և հարկային բազայի ընդլայնման վրա: Այս շրջանը բնութագրվում էր սոցիալական ոլորտում ծախսերի համեմատաբար կայուն (ՀՆԱ-ի շուրջ 7-8%), պետական պարտքի համեմատաբար ցածր (ՀՆԱ-ի 16-20%) և պետական բյուջեի դեֆիցիտի կառավարելի մակարդակով (ՀՆԱ-ի 2-3%): Ավելին, գործարկվում էին

ենթակառուցվածքների զարգացման տարաբնույթ ծրագրեր՝ տրանսպորտի, ճանապարհաշինության, ջրամատակարարման և այլ ոլորտներում («Տնտեսական հեղափոխության» 2019թ. արդյունքները, 2):

Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո վերափոխվեց նաև բյուջետային միջոցների բաշխման տրամաբանությունը. մասնավորապես, 2009-2013թթ. զարկ տրվեց սոցիալական պաշտպանությանը և տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերին: Այս ժամանակահատվածը կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ 2009թ. արձանագրվեց 14,1% տնտեսական անկում: Վերաբաշխիչ քաղաքականության մեջ մեծացավ հակաճգնաժամային միջոցառումների մասնաբաժինը. ավելացան պետական ծախսերը՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերությունը հասցնելով մինչև 30%, ինչպես նաև ավելացավ արտաքին վարկային ռեսուրսների ներգրավման մասնաբաժինը՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 5-6%-ը (Հայաստան, տնտեսական աճը, աղքատությունը և աշխատանքի շուկայի զարգացումները 2004-2008թթ.,13): Տեղի ունեցան զգալի փոփոխություններ սոցիալական ոլորտում, արձանագրվեց սոցիալական ոլորտի ծախսերի աճ, թիրախավորվեց աղքատության կրճատումը, ինչպես նաև ընդլայնվեց և կատարելագործվեց ընտանեկան նպաստների համակարգը: Պետական ներդրումները կրթության և առողջապահության ոլորտներից վերաուղղորդվեցին դեպի գյուղատնտեսություն և զբաղվածության ոլորտներ՝ ընդլայնելով ցուցաբերվող աջակցության ծրագրերը:

Հետճգնաժամային շրջանում (2010-2013թթ.) նկատվեց պետական պարտքի զգալի աճ՝ 2008թ. ՀՆԱ-ի 16%-ից 2013թ. հասնելով շուրջ 44%-ի (ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 21-23): Այս ժամանակահատվածում բյուջետային քաղաքականության առաջնահերթությունը դարձավ մակրոտնտեսական կայունության ապահովումը և աստիճանական հարկաբյուջետային համախմբումը:

ՀՀ վերաբաշխիչ քաղաքականության առանձնահատկությունների փոփոխության մյուս ալիքը պայմանավորված էր 2020 թ. COVID-19 համավարակով և Արցախյան պատերազմով: Այս շրջանում ձեռնարկվեցին տնտեսական աջակցության հրատապ միջոցառումներ, մասնավորապես սահմանվեցին տնտեսության աջակցության հակաճգնաժամային մոտ 25 ծրագրեր՝ ուղղված համավարակի և պատերազմի ազդեցությունը մեղմելուն. այս միջոցառումների ֆինանսավորումը կազմեց ՀՆԱ-ի մոտ 3,5-4%-ը: Բացի այդ, գործարար հատվածին տրամադրվեցին հարկային արտոնություններ, վարկային արձակուրդներ (շուրջ 3-6 ամիս) և պետական երաշխիքներով վարկեր: Ավելին, իրականացվեցին շուրջ 130-140 միլիարդ ՀՀ դրամի չափով պետական երաշխիքով դրամական աջակցության ծրագրեր առավել խոցելի ճյուղերի համար (զբոսաշրջություն, հյուրանոցային բիզնես, հանրային սնունդ և այլն), ավելացվեց պետական բյուջեում սոցիալական ծախսերի մասնաբաժինը, ուժեղացվեց սոցիալական աջակցության թիրախավորվածությունը՝ պետության ռեսուրսներն ուղղվելով առավել խոցելի խմբերին, ինչպես նաև տեղի ունեցան զգալի փոփոխություններ պաշտպանության և անվտանգության ոլորտներում. զգալիորեն ավելացվեց պաշտպանական բյուջեն՝ մոտ 25-30%-ով, վերաբաշխվեցին ռեսուրսները՝ ռազմական արդիականացման և անվտանգության ոլորտում ներդրումների ավելացման նպատակով, իրականացվեցին ռազմարդյունաբերության զարգացման ծրագրեր և այլն (ՀՀ կառավարության N 142-Լ որոշում, 04.02.2021):

Հետճգնաժամային միջոցառումներից անմասն չմնաց նաև առողջապահության ոլորտը. այսպես, զգալիորեն ավելացվեցին առողջապահության ոլորտի ֆինանսավորումը և ներդրումները (մոտ 30-40%-ով), COVID-19-ի դեմ պայքարի շրջանակներում ընդլայնվեց պետական երաշխիքներով բժշկական ծառայությունների ցանկը և բարելավվեց բուժաշխատողների վարձատրության համակարգը:

Հետճգնաժամային շրջանում փոփոխվեց և վերակազմակերպվեց բյուջետային քաղաքականությունը, մասնավորապես՝ որդեգրվեցին պետական պարտքի կառավարման նոր մոտեցումներ՝ հաշվի առնելով այն, որ պարտք/ՀՆԱ

հարաբերակցությունը զգալիորեն աճեց՝ հասնելով մոտ 70%-ի (մինչև ճգնաժամը այն կազմում էր մոտ 50-55%). վերանայվեցին պետական ծախսերի առաջնահերթությունները և հարկային եկամուտների ավելացման նպատակով իրականացվեցին հարկային քաղաքականության փոփոխություններ :

Այս փոփոխությունների հիմնական տրամաբանությունը եղել է ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման և երկարաժամկետ կայունության ապահովման հավասարակշռություն գտնելը, որտեղ միաժամանակ կարևորվել են սոցիալական պաշտպանությունը, տնտեսական վերականգնումը և անվտանգության ամրապնդումը: Դրանք ուղղված են եղել թե՛ ճգնաժամային իրավիճակներին արձագանքելուն, թե՛ երկարաժամկետ համակարգային բարեփոխումներին, որոնք նպատակ ունեն բարելավելու ծառայությունների որակը, հասանելիությունը և արդյունավետությունը Հայաստանում:

Վերաբաշխիչ քաղաքականության իրագործման արդյունավետությունը հանրային կառավարման համակարգի բարեփոխման համատեքստում

Քննարկվող հասկացությունների միջև հարաբերակցային կապը հասկանալու համար դիտարկենք 2000-2024թթ. ՀՀ կառավարման արդյունավետության որակի ցուցիչներից կառավարության արդյունավետության և կարգավորման որակի ցուցիչների արժեքները, քանի որ հենց այս ցուցիչներն են մատնանշում կառավարության գործունեության արդյունավետությունը:

Գծապատկեր 1. Արդյունավետ կառավարման ցուցիչների արժեքները ՀՀ-ում 2000-2024թթ. (կառավարման արդյունավետություն և կարգավորման որակ)

Այսպես, 2000-2010 թթ. Հայաստանը դեռ շարունակում էր գտնվել անցումային փուլում՝ ինչպես պետական և քաղաքական, այնպես էլ տնտեսական ինստիտուտների կայացման առումով: Սակայն կառավարման արդյունավետության ցուցանիշները դեռևս համեմատաբար ցածր էին՝ կապված մասնավորապես պետական կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության, ձայնի լսելիության և քաղաքական կայունության խնդիրների հետ (https://data360.worldbank.org/en/search?country=ARM&themeAndTopics=P5%3BP2%3BP3_000003&search=good+governance):

Երկրորդ փուլով կարելի է դիտարկել 2010-2018 թթ., որի ընթացքում իրականացվեցին մի շարք բարեփոխումներ՝ ուղղված հանրային (պետական) ծառայության համակարգի կայացմանը և բարելավմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և կառավարման համակարգի թափանցիկության բարձրացմանը*:

Սակայն որոշ ոլորտներում դեռևս պահպանվում էին կառավարման արդյունավետության հետ կապված մարտահրավերներ:

Երրորդ փուլում՝ 2018-2024թթ., իրականացվեցին ավելի խորքային բարեփոխումներ՝ուղղված պետական կառավարման համակարգի

* Խոսքը վերաբերում է 2012 և 2018թ. ընդունված «Պետական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներին (parliament.am):

արդիականացմանը, կառավարության թվայնացմանը (e-Government) և հանրային մասնակցության խթանմանը: Այս փոփոխությունները նպաստեցին կառավարման արդյունավետության ցուցանիշների բարելավմանը: Ավելին, համաձայն 2022 թ. մայիսի 13-ի՝ ՀՀ կառավարության որոշման՝ հաստատվել է «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը»՝ «Կառավարություն 4.0» խորագրով, որը նախատեսում է պետական կառավարման համակարգի արդիականացում և գործնականության բարձրացում (ՀՀ Կառավարություն. ՀՀ կառավարության N 691-Լ որոշումը ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության ընդունման մասին. ընդ. 13.05.2022): Վերջինս հայեցակարգային փաստաթուղթ է, պետական համակարգի արդիականացման ուրույն օրակարգ, որում արտացոլված են ՀՀ պետական կառավարման համակարգի կայացման և հետագա զարգացման հեռանկարային ուղղությունները, ինչպես նաև իրականացվելիք քաղաքական կուրսերի համապարփակ շրջանակը:

Բարեփոխումների ռազմավարության հիմքում ընկած են մի շարք գլոբալ օրակարգեր ու կոնկրետ նպատակներ, որոնք համատեղում են Հայաստանի զարգացման ազգային և միջազգային շրջանակները, մասնավորապես, համընդհանուր ռազմավարական օրակարգը, «Հայաստան-2050» վերափոխման ռազմավարությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների, Եվրոպական Միության հետ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, երկրի կողմից գլոբալ և միջազգային վերաբերելի օրակարգերի շրջանակներում ստանձնած հանձնառությունները (արտաքին քաղաքական բաղադրիչներ): Սա նշանակում է, որ այն կողմնորոշված է ոչ միայն դեպի ներքին խնդիրների լուծումը, այլև միջպետական, տարածաշրջանային և համաշխարհային համագործակցության ապահովումը՝ նպաստելով երկրի հետագա կայուն զարգացմանը, իրադարձությունների արագ փոփոխություններին ադապտացվելու և միջազգային հանրության հետ արդյունավետ փոխգործակցություն հաստատելու նպատակների իրագործմանը:

Քննարկվող ռազմավարության հիմքում ընկած է «ինտեգրված կառավարության» (Whole-of-the-Government) հարացույցը, որը նպատակ ունի ապահովելու ՀՀ պետական կառավարման համակարգի փոխներդաշնակ, սիներգիկ, արհեստավարժ, տեխնոլոգիահենք, պատասխանատու գործունեությունը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ հանրային կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունը սահմանում է ՀՀ-ի ապագա պետության կայացման հայեցակարգային հիմնական ուղղությունները, որոնց պրակտիկ իրագործումն անհնար է պատկերացնել առանց կառավարման և հարստության վերաբաշխման արդյունավետ կառուցակարգերի ներդրման և գործարկման:

Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության հարաբերակցային կապը

Քննարկվող հասկացությունների միջև հարաբերակցային կապը հասկանալու համար անհրաժեշտ ենք համարում գտնել 2000-2024թթ. համար կառավարության արդյունավետության ցուցիչների և Ջինիի գործակիցների (data.worldbank.org, https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators?, 2000-2024 data), ինչպես նաև կարգավորման որակի և Ջինիի գործակիցների (GINI Index for Armenia 2020-2024) միջև հարաբերակցային կապը՝ Պիրսոնի գործակցով: Այսպես, նախ դիտարկենք կապը կառավարության արդյունավետության ցուցիչների և Ջինիի գործակիցների միջև.

Տարեթիվը	Ջինիի գործակից, %	Կառավարության արդյունավետության ցուցիչ, %
2000	0.35	-0.05
2001	0.35	-0.05
2002	0.34	-0.05
2003	0.33	0.26
2004	0.38	0.12
2005	0.36	0.14
2006	0.29	0.26
2007	0.31	0.27
2008	0.29	0.18
2009	0.28	0.03
2010	0.3	0.17
2011	0.29	0.12
2012	0.3	0.03
2013	0.3	0.08
2014	0.3	0.24
2015	0.3	0.33
2016	0.32	0.31
2017	0.33	0.25
2018	0.34	0.17
2019	0.3	0.23
2020	0.25	0.3
2021	0.27	0.14
2022	0.28	0.31
2023	0.27	0.18
2024	0.32	0.18

Աղյուսակ 1. Կառավարման արդյունավետության և Ջինիի գործակցի արժեքները, ՀՀ 2000-2024թթ

.

Կատարենք հաշվարկներ՝

$$= \frac{-0.05+-0.05+- \cdots +0.31+0.18+0.18}{25} = 0.166$$

$$= \frac{0.35+0.35+0.34+ \cdots +0.28+0.27+}{25} = 0.31$$

$\Sigma(x_i - \bar{x})^2 = (-0.05-0.17)^2+(-0.05-0.17)^2+(-0.05-0.17)^2+ \cdots +(0.31-0.17)^2+(0.18-0.17)^2+(0.18-0.17)^2 = 0.322$

$\Sigma(y_i - \bar{y})^2 = (0.35-0.31)^2+(0.35-0.31)^2+(0.34-0.31)^2+ \cdots +(0.28-0.31)^2+(0.27-0.31)^2+(0.32-0.31)^2 = 0.0238$

$\Sigma(x_i - \bar{x})(y_i - \bar{y}) = (-0.05-0.17)*(0.35-0.31)+(-0.05-0.17)*(0.35-0.31)+(-0.05-0.17)*(0.34-0.31)+ \cdots +(0.31-0.17)*(0.28-0.31)+(0.18-0.17)*(0.27-0.31)+(0.18-0.17)*(0.32-0.31) = -0.0329$

$$_{XY} = \frac{\Sigma(x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{n - 1}$$

$$_{XY} = \frac{-0.0329}{25 - 1} = -0.001371$$

$$= \frac{\Sigma(x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{(\Sigma(x_i - \bar{x})^2 \Sigma(y_i - \bar{y})^2)}}$$

$$= \frac{-0.0329}{\sqrt{(0.322*0.0238)}} = \mathbf{-0.3758}$$

$$r = \frac{S_{XY}}{S_x S_Y}$$

$$= \frac{-0.001371}{0.1158*0.03149} = \mathbf{-0.3758}$$

***r = -0.3758* (1)**

Այնուհետև՝ կապը կարգավորման որակի ցուցիչների և Ջինիի գործակիցների միջև.

Կատարենք հաշվարկներ՝

$$= \frac{-0.17+0.06+0.17+ \cdots +-0.02+0.05+0.05}{25} = 0.1736$$

$$= \frac{0.35+0.35+0.34+ \cdots +0.28+0.27+0.32}{25} = 0.31$$

$\Sigma(x_i - \bar{x})^2 = (-0.17-0.17)^2+(0.06-0.17)^2+(0.17-0.17)^2+ \cdots +(-0.02-0.17)^2+(0.05-0.17)^2+(0.05-0.17)^2 = 0.3692$

$\Sigma(y_i - \bar{y})^2 = (0.35-0.31)^2+(0.35-0.31)^2+(0.34-0.31)^2+ \cdots +(0.28-0.31)^2+(0.27-0.31)^2+(0.32-0.31)^2 = 0.0238$

$\Sigma(x_i - \bar{x})(y_i - \bar{y}) = (-0.17-0.17)*(0.35-0.31)+(0.06-0.17)*(0.35-0.31)+(0.17-0.17)*(0.34-0.31)+ \cdots +(-0.02-0.17)*(0.28-0.31)+(0.05-0.17)*(0.27-0.31)+(0.05-0.17)*(0.32-0.31) = -0.0167$

$$_{XY} = \frac{\Sigma(x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{n - 1}$$

$$_{XY} = \frac{-0.0167}{25 - 1} = -0.0006958$$

$$= \frac{\Sigma(x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{(\Sigma(x_i - \bar{x})^2 \Sigma(y_i - \bar{y})^2)}}$$

Բանագիտության մեջ սովորաբար հեքիաթներն ըստ բնույթի բաժանվում են երեք մեծ խմբի՝ կենդանապատում, հրաշապատում և իրապատում կամ կենցաղային հեքիաթներ (Հարությունյան 164): Վերոնշյալ բոլոր տեսակներն ունեն մեկ ընդհանրություն, որ կապում է մանկանոցն այս ժանրատեսակին, այն է՝ իրականությունից խույս տալը, փախուստը, երևակայական ու հնարածին աշխարհ հորինելու ցանկությունը. «Իրականությունից փախչելու ձգտումը հոգեբանության դիրքերից մանկականության դրսևորման հիմնական գծերից է: Հավանաբար իրականությունից խույս տալու ձգտումն է, որ հեքիաթն այդքան մոտեցնում է մանկանոցի տարածքին» (Ջիվանյան 35): Սակայն պետք է նշել, որ մանկական լսարանին առավել հետաքրքիր են կենդանապատում հեքիաթները, որովհետև կառուցվածքով ու բովանդակությամբ դրանք առավել հոգեհարազատ են երեխաներին: Կենդանապատում հեքիաթներն առանձնանում են պատկերավորման հարուստ միջոցներով, հատկապես՝ անձնավորմամբ: Անձնավորումը ոճական այնպիսի հնարանք է, երբ իրերին, երևույթներին, կենդանիներին վերագրվում են մարդկային հատկանիշներ: Այս իրողությունը հաճախ կապում են մարդկանց հնագույն մտածողության հետ (Եզեկյան 348) : Կենդանիներին օժտելով մարդկային հատկանիշներով՝ երեխաներն առավել հեշտ են ընկալում շրջապատող աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները, մարդկային փոխհարաբերությունները: Այսօրինակ հեքիաթներում երեխաները հանդիպում են վայրի ու ընտանի կենդանիների տեսակների, ինչն էլ նպաստում է նրանց աշխարհաճանաչողությանը: Վայրի կենդանիներից հիմնականում տարածված են արջը, առյուծը, աղվեսը, գայլը, նապաստակը, բորենին, իսկ ընտանի կենդանիներից՝ կովը, ձին, շունը, ոչխարը, գառը, վայրի թռչուններից ՝ արծիվը, ագռավը, աղավնին, ընտանի թռչուններից՝ աքլորը, հավը և այլն: Որոշ կենդանիներ ժողովրդական մտածողության մեջ ունեն խորհրդանշական արժեք, օրինակ՝ առյուծը իշխող է, գայլը՝ բռնի ուժի, արջը՝ միամտության, եղնիկը, գառը՝ մաքրության, շունը՝ հավատարմության մարմնավորում, որոշ կենդանիներ էլ դարձել են պաշտամունքի առարկա, որն էլ փաստում է դրանց հիմքում ընկած հնագույն տոտեմական աշխարհայացքի մասին: «Կենդանիների տոտեմական պաշտամունքը, ըստ այդ աշխարհայացքի, ազգակցական կապ, արյունակցություն էր սահմանում որևէ կենդանու և տվյալ տոհմի միջև: Տոտեմը հովանավորում էր տվյալ տոհմն ու տոհմակիցներին» (Հարությունյան 164): Հայ ժողովրդական բանահյուսության մեջ կարմիր կովը տոտեմ է համարվել: Այն մշտապես հովանավորել է որբ երեխաներին: «Բուսական խեժերն ու սրբազան յուղը (կաթ, մեղր, մածուն, անմահական ջուր), որ պահվում են ծիսական անոթներում, զուգամիտվում են որբ երեխաներին կերակրող կովակերպ նախամոր եղջյուրների հետ» (Հայրապետյան 229): Հայ ժողովրդական հեքիաթներում կարմիր կովը ոչ միայն սնել ու հովանավորել է որբ երեխաներին, այլև ծանրագույն պահերին դարձել նրանց հրաշագործ օգնականն ու իմաստուն խորհրդատուն: Կենդանիների պաշտամունքը, հավատը նրանց զորության նկատմամբ այնքան խորն է եղել տարբեր ժողովուրդների մոտ, որ դարձել է անուն-ազգանունների հիմք, օրինակ՝ կենդանական ծագմամբ ռուսական անզգանուններից են՝ Վոլկով, Զայցեվ, Օրլով, հայկական անուններից են Աղավնի, Կորյուն և այլն: Այս երևույթը բավական լայն տարածում էր գտել նաև աբխազական բանահյուսության մեջ. «Աբխազական ազգանունների մեծամասնությունը համարվել է որևէ կենդանու հետնորդ» (Зухба 81):

Կենդանապատում հեքիաթները որպես մանկական բանահյուսության բաղադրիչ

Կենդանապատում հեքիաթների անցումը փոքրերի միջավայր պայմանավորված է մեծերի շրջանում դրանց նկատմամբ հետաքրքրության սպառմամբ: Սակայն միանշանակ պնդել, որ մանկական լսարանին բնորոշ են միայն կենդանապատում հեքիաթները, ճիշտ չէր լինի, քանի որ մանկական հեքիաթացանկում հանդիպում ենք նաև հրաշապատում, մասամբ՝ իրապատում հեքիաթների, որոնք պատմողները միանշանակ մեծահասակներն են. «Երեխաները, ծանոթանալով հրաշապատում հեքիաթներին, կորցնում են իրենց հետաքրքրությունն առավել պարզ ու հասարակ հեքիաթների նկատմամբ» (Мельников 74): Սակայն հրաշապատում և իրապատում հեքիաթներն իրենց բարդ կառուցվածքի ու խրթին բովանդակության պատճառով սահմանափակ կենցաղավարում ունեն փոքրերի միաջավայրում: Դրանց ստեղծողն ու կրողը մեծահասակներն են: Այդ իսկ պատճառով ոչ բոլոր կենդանական հեքիաթներն են մանկական լսարանին ուղղված, կան որոշ կենդանապատում հեքիաթներ, որոնք առավելապես հետաքրքիր են մեծահասակներին կամ տարիքային ավելի բարձր շեմ ունեցող երեխաներին, հիմնականում՝ 13 - ից – 15 - 16 տարեկաններին: Կյանքի այս փուլում երեխաները փորձում են ինքնուրույնության ու հակված են արկածներով կյանքն առավել գունեղ դարձնելուն, ինչը ևս բխում է նրանց տարիքային առանձնահատկություններից: «Ըղվեսին հրսանեքը» հեքիաթը, որի ամբողջ ընթացքը արկածային հետաքրքիր զարգացումների, խորամանկությունների ու փորձությունների հաղթահարմամբ է ուղեկցվում, չի կարող հետաքրքիր չլինել այս տարիքային խմբի երեխաներին: Համաշխարհային բանահյուսության մեջ աղվեսը տրիքստերային կերպար է: Տրիքստերը համաժամանակյա նախակերպար է, որը դառնում է համաշխարհային գրականության բոլոր խաբեբա կերպարների ակունքը (Радин 242-264): Հեքիաթի սյուժեն հետևյալն է. խաբելով կենդանիներին, թե իբր հարսանիք է գնում, աղվեսը այդպիսով խորամանկորեն բոլորի հախից գալիս է: Տրիքստեր աղվեսի խորամանկության զոհ են դառնում ոչ միայն կենդանիները, այլև մարդիկ ու Աստված. «աղվեսը նստումա յուղուծուն լոխ օտում, խունգը տյուս օնում կրակեն օնում, էրում, դուդան բիդի կըլխիյեր անում, թա Աստված էս էլ քու մատաղըտ» (ՀԺՀ, հ. 7 225): Ինչպես տեսնում ենք, աղվեսի խաբեբայությունների շղթան այնքան ամուր ու լաբիրինթային է, որ նույնիսկ Աստված է մոլորվում, այսօրինակ դիպաշարերը խրթին ու անհասկանալի են փոքրերի համար. կամ ամուսնական արարողությունը, որը ևս տարիքային ցածր շեմ ունեցող երեխաների հետաքրքրությունների շրջանակից դուրս է: Սակայն դիտարկել աղվեսին միայն որպես տրիքստեր՝ ճիշտ չէր լինի, քանի որ հայ ժողովրդական բանահյուսության մեջ աղվեսը չարի և բարու հակադրամիասնություն է: Որոշ հեքիաթներում աղվեսը հրաշագործ օգնական է, փորձությունների հաղթահարման իմաստուն խորհրդատու: Օրինակ՝ «Աղվեսը» հեքիաթում այն ոչ միայն բարի ու սրտացավ խորհրդատու է, այլև փրկիչ: Հեքիաթի ողջ ընթացքում աղվեսը թագավորազնի համար կատարում է օգնականի դեր, իսկ հեքիաթի վերջում ծուղակի մեջ հայտնված արքայորդու փրկությունը վստահվում է հենց աղվեսին (ՀԺՀ, հ. 5 72): Վերոնշյալ հեքիաթը նույնպես պատկանում է առավել հասուն տարիքային շեմ ունեցողներին, քանի որ հեքիաթի ողջ ընթացքում փորձությունների բարդ ուղին լարված է պահում ունկնդրին, իսկ երեխաների համար այդպիսի գերլարումները անբնական են թվում: Ժողովրդական հավատալիքներում ևս աղվեսի շուրջ որոշակի ծիսահմայական առասպելների մնացուկներ են պահպանվել: Օրինակ՝ Վարանդայում ճանապարհին աղվեսին հանդիպելը հաջողության նշան էր համարվում (Լալայան 270): Սակայն պետք է պնդել, որ բանագիտական ողջ տիրույթում միայն կենդանապատում հեքիաթներում է լիովին բացահայտվում աղվեսի կերպարի դրական ու բացասական բոլոր կողմերը. «Աղվեսի կերպարն առավել ցայտուն է

դրսևորվում կենդանապատում հեքիաթներում: Այստեղ աղվեսն աչքի է ընկնում բացառիկ, կարելի է ասել՝ անսանձ խորամանկությամբ և հնարագիտությամբ» (Костюхин 39-44): Սակայն միշտ չէ, որ աղվեսը հաղթած է դուրս գալիս, երբեմն առավել խեղճ ու համեստ թվացող կենդանիները կարողանում են իրավիճակային ճիշտ լուծումներ գտնել ու աղվեսի հախից գալ: Կարծում ենք, որ այսօրինակ հեքիաթներն իրենց բովանդակությամբ ու կառուցվածքով նախատեսված են մանկական լսարանի՝ մասնավորապես 6–7–ից մինչև 10-11 տարեկան երեխաների համար, որոնք կրտսեր դպրոցական տարիքային շրջաբաժանի մեջ են ընդգրկվում, և քանի որ այս տարիքի երեխաների աշխարհայացքը նոր է ձևավորվում, ապա անչափ կարևորվում է հեքիաթի ուսուցողական ու բարոյախրատական դերը երեխաների կյանքում: Հենց այդպիսին է «Վըրցակեն շեն քցիլը» հեքիաթը: Հեքիաթի սյուժեն հետևյալն է՝ շունն ու աքլորը, հեռանալով իրենց տիրոջից, որոշում են ուրիշ վայրում գյուղ կառուցել և այնտեղ խաղաղ ապրել: Ճանապարհին մութն ընկնում է, և նրանք ստիպված որոշում են գիշերել անտառում: Գիշերվա կեսին աղվեսն աքլորի ձայնը լսելուն պես ուրախանում է՝ մտածելով, որ կեր ունի: Աղվեսը աքլորին առաջարկում է գիշերել իր մոտ, սակայն աքլորը մերժում է՝ ասելով, որ իր ընկերն էլ պիտի համաձայնի: Աղվեսը կարծում է, որ աքլորի ընկերը հավ պիտի լինի, և ագահաբար մոտենում է թփին. այդ պահին շունը հարձակվում է, և ձախողված աղվեսը, լեղապատառ փախչելով, գոռում է. «Ըստեղեք վեր տուք շեն քըցիք, վեշ մինըն էտ շենումը կենալ չի» (ՀԺՀ, h.7, 219): Այս հեքիաթը միջազգային ATU 62 թվահամարի հեքիաթ է, որն ունի 9 տարբերակ, որից 3 –ը՝ «Վըրցակեն շեն քցիլը», «Վերցակ նան շոնը» (Գրիգորյան-Սպանդարյան 477), «Ըստեղ շեն չի տեռնալ» (ՆԱՖ 69-70) արցախյան տարբերակներ են: Վերոնշյալ 3 տարբերակներում էլ աղվեսը լեղապատառ փախչում է, այդպիսով տեսնում ենք պարտված ու ծաղրի մատնված աղվեսին՝ ի տարբերություն այլ հեքիաթների, որտեղ տրիքստեր աղվեսը միշտ հաղթում ու խաբեությամբ հասնում է իր նենգ նպատակներին՝ անտեսելով ու ոտնահարելով ուրիշների իրավունքը: Նմանատիպ մեկ այլ հեքիաթում ՝ «Ճօրուն պիճը մին տեղ չինիլ», ջորին, հասկանալով արջի ու աղվեսի՝ իրեն ուտելու մտադրությունը, կարողանում է ճիշտ կողմնորոշվել և իրենից ֆիզիկապես ուժեղ այդ երկու գիշատիչներին պատժել: Երբ հարցնում են ջորու տարիքը, ջորին ասում է, որ հայրն իր ծնվելու օրը պայտի տակ գրել է տարիքը, թող մոտենան ու կարդան: Աղվեսը պատճառաբանում է, որ կարդալ չգիտի, իսկ արջի մոտենալուն պես ջորին հարվածում է, աղվեսը, տեսնելով գլխին գալիքը, լեղապատառ փախչելով՝ ասում է. «Էն սարեն կըլխեն իմ հարա թաղած, քիանամում կերեզմանը օրհնեմ, վեր ինձ կըրթիցրալ չի, թա չէ՝ ես էլ արչին օրը կընգիմ»: Այս հեքիաթը միջազգային ATU 80 A թվահամարի ներքո է, և հայ հեքիաթային ժառանգության մեջ ունի 9 տարբերակ: Այսօրինակ հեքիաթները վկայում են երեխաների միջավայրում դրանց ունեցած լուրջ ներգործությունը՝ երեխաներին սովորեցնելով հնարամտություն և անելանելի թվացող իրավիճակներում ճկուն մտքի միջոցով հաղթանակի հասնելու կամք: Երեխաների հոգեբանական ճիշտ մոդելի կառուցման գործում հեքիաթների ունեցած ներգործությունն աներկբա է և ընդհանրական՝ աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ (Barbara, Wheatley 70): Ժամանակի ընթացքում ժողովրդական հեքիաթները նրբանկատորեն ներառում են բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են՝ վստահությունը, խիզախությունը, հոգատարությունը, հնարամտությունը, վճռականությունը և համբերատարությունը: Ինչպես տեսնում ենք, կենդանապատում հեքիաթներում ֆիզիկապես թույլ կենդանիների հաղթանակն առավել ուժեղների նկատմամբ երեխաներին գրավում ու ոգևորում է: Ժողովուրդը նմանատիպ հեքիաթներով երեխաների մեջ սերմանում է չարի նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն ու երգիծանքի ողջ ուժով ծաղրի ենթարկում նրանց: Նմանատիպ հեքիաթներում հաղթելու գրավականը ոչ թե ուժն է, այլ խելքը, ուշիմությունը և հնարամտությունը: Միջազգային ATU 51 թվահամարին պատկանող

«Առյուծին բաժինը» հեքիաթը, որի 3 տարբերակներից 2-ը ՝ «Կյուլին աշկերը» (Գրիգորյան-Սպանդարյան 323-324) և «Օղտեն բոյը» (Առաքելյան, Ղահրամանյան 82) Արցախից գրառված հեքիաթներ են: Այսօրինակ հեքիաթների միջոցով երեխաները մանկաշխարհ են տեղափոխում կենդանական աշխարհում իշխող ճկունությունն ու հնարամտությունը: Բացի աղվեսի կերպարից՝ կենդանական հեքիաթներում բավականին լուրջ դեր ունի շունը: Հայ ժողովրդական պատկերացումներում շանը միշտ վերագրվել է հավատարմության, ազնվության, երբեմն նաև՝ գերբնական հատկանիշներ. «Մոգական ուժի շնորհիվ շունը հմայական, չարխափան ու բարեբեր զանազան գործառույթներ է ստացել, որոնք վերաբերում են նաև նրա տարբեր մասերին՝ մազերին, ոսկորներին, արյանը, նույնիսկ՝ անվանն ու ձայնին» (Իսրայելյան 469): Շան և գայլի հակադրությունը խորհրդանշում է ժուժկալության և հավատարմության հակադրությունը որկրամոլությանն ու դավաճանությանը: Հայ ժողովրդական հեքիաթների 7-րդ հատորում ընդգրկված «Շոնն նան կյուլը» հեքիաթում շունը, երկար ժամանակ սոված մնալով, գայլի հետ պայմանավորվում է մտնել գոմ և հոշոտել գառներին, սակայն, տիրոջ կողմից ստանալով իր բաժինը, դրժում է գայլի հետ կապած ուխտը՝ ասելով. «Կորի, ղրաղ քաշվի, թա չէ քեզ մուրթըհան կանեմ» (ՀԺՀ, հ.7 214): Շան և գայլի հակադրությունը խորհրդանշում է ժուժկալության և հավատարմության հակադրությունը որկրամոլությանն ու դավաճանությանը: Հայ ժողովրդական հեքիաթներում, մասնավորապես՝ արցախյան հեքիաթներում, գայլը բռնի ուժի մարմնավորում է: Երեխաները գայլի կերպարը դիտում են որպես չարի մարմնացում: Սակայն որոշ հավատալիքներում նկատվում են գայլի պաշտամունքի դրսևորումներ. «Ժողովուրդը զանազան պատմություններ է հյուսել գայլի մարմնի մասերի շուրջը՝ հմայական ուժով օժտելով դրանցից յուրաքանչյուրին» (Սահակյան 459): Գայլի պաշտամունքային ձևերին հանդիպում ենք նաև այլ ժողովուրդների մոտ: Օրինակ՝ աբխազները հպումը գայլի մորթուն համարում էին հաջողության գրավական ամբողջ օրվա համար, (Чурсин 136) կամ գայլի ատամը կրում էին իրենց վրա որպես թալիսման (Чурсин 32): Այսօրինակ հեքիաթներում, ինչպես տեսնում ենք, շեշտը դրված է ճիշտ դաստիարակության, բարոյականության, արդար ապրելաձևի վրա: Մանուկների՝ նոր ձևավորվող աշխարհայացքում մարդն ու բնությունը շաղկապված են իրար, և շրջակա միջավայրի յուրաքանչյուր բացահայտում հետաքրքիր նորույթ է նրանց համար և, որ ամենակարևորն է, գլխավոր գործառույթն ուղղված է նոր ձևավորվող աշխարհայացքի անաղարտությանը: Վերոնշյալ հեքիաթների լայն տարածվածությունը արցախյան կենսատարածքում վկայում է արցախցու անհանդուրժողականությունը կեղծիքի, ստի ու չարի նկատմամաբ: Այս բարոյական հատկանիշների ձևավորմանը նպաստել են նաև երկրի աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները: Լեռնցուն բնորոշ ազվությունն ու հաստակողությունը առկա են այս հեքիաթներից յուրաքանչյուրի ենթատեքստում, ինչն էլ ավելի ակնառու է դարձնում արցախցու բարոյական արժեհամակարգի կայունությունը:

Պատահական չէ, որ հեքիաթներում կենդանիների դերը կարևոր է, դրա ապացույցը բազմաթիվ հոգեթերապևտիկ հեքիաթներն են, որոնք, ստեղծվելով հոգեբանների կողմից, նպատակ են հետապնդում ծնողին, մոտ հարազատին կորցրած կամ որևէ այլ հոգեբանական ծանր իրավիճակում հայտնված երեխային կենդանու օգնությամբ մեղմել ցավը: Այդպիսի հետազոտություններից է Ռազիդա Տկաչի «Մանկական խնդիրների հեքիաթաթերապիա» գիրքը, որտեղ առավել ուշագրավ է «Կորուստների հեքիաթաթերապիա» բաժինը, քանի որ երեխաների ծանր ապրումները հաղթահարվում են տարբեր կենդանիների օգնությամբ՝ մի դեպքում եղնիկ, մյուս դեպքում գորտ [Տկաչ 104]: Այս հեքիաթները ևս տարիքային սահմանափակում ունեն, նախատեսված են մինչև 10 տարեկան երեխաների համար: Ինչը ևս մեկ անգամ փաստում է տարիքային առանձնահատկությունների կարևորությունը հեքիաթների ընկալման հարցում:

Բանահյուսական որոշ ժանրեր խիստ փոխկապակցված են: Ժողովրդական մտածողության մեջ հայտնի որոշ երևույթներ կարող են արտահայտվել և՛ առած-ասացվածքով, և՛ հեքիաթով, և՛ օրորոցայինով: Արցախում տարածված «ագռավեն ճոտը ուրան մօրը հետե ամենաղաշանգըն ա» ասացվածքի տրամանությամբ է ստեղծված «Որսորդն ու կաքավը» հեքիաթը: Կաքավը խնդրում է որսորդին, որ իր ձագին չսպանի, որսորդը համաձայնվում է՝ հարցնելով, թե ինչպեսի տեսք ունի ձագուկը, կաքավը գովում է, թե ամենաանախշունն ու ամենագեղեցիկն է: Սակայն երեկոյան տեսնելով որսորդին՝ նեղացած ասում է, թե ինչու չպահեց իր խոստումը՝ սպանելով ձագուկին: Որսորդը զարմացած պատասխանում է. «Ես քու ճոտետ նի չում եկալ, էս ղուշը եշի տես, քու ասած նախշունը չի, մոխռանգյա» (ՀԺՀ, հ., 6, 455): Այսպիսով՝ երեխաների համար բացահայտվում է այն պարզ ճշմարտությունը, որ մայրական սերն անսահման է[1], այս առումով հայ դասական գրականության մեջ և յուրօրինակ. նույնիսկ ամենատգեղ ձագուկն իր ծնողի համար վերերկրային գեղեցկություն ունի: Ընդհանուր բանահյուսության մեջ բավականին դժվար է գտնել տիպիկ մանկական հեքիաթներ, քանի որ բանահավաքների կողմից երբեք չի առանձնացվել այս տեսակը. «ի սկզբանե ժողովրդական հեքիաթն ամենևին էլ նախատեսված չի եղել մանուկ ունկնդրի կամ ընթերցողի համար» (Ջիվանյան 35): Սակայն մի շարք բնութագրիչ հատկանիշներ հուշում են հեքիաթի մանկական լինելու մասին, դրանք են՝ երկխոսությունները, որոնք հիմք են հանդիսանում գործողությունների հետագա զարգացման համար, կրկնությունները, երգային հատվածները, հանգավորումը, մշտապես ընթացող պայքարը թե՛ վայրի կենդանիների և թե՛ ընտանի կենդանիների միջև: Սակայն այս հանապազօրյա գոյության պայքարը բացակայում է ընտանի կենդանիների մեջ՝ դրանով ապացուցելով, որ արտաքին մարտահրավերները հաղթահարվում են միասնականությամբ և ընկերասիրությամբ, այդպիսով երեխաների մեջ սերմանելով ամուր կամք, հավատարմություն և նվիրվածություն:

Մանկական հեքիաթներ այսօր չեն ստեղծվում, եղածներն էլ սահմանափակ կիրառություն ունեն՝ պայմանավորված հարափոխ աշխարհի սրընթաց զարգացման հետ: Ինչպես նկատում է լեզվաբան Արմեն Սարգսյանը. «Հեքիաթները, կապված հասարակական և տնտեսական պայմանների փոփոխության հետ, զարգացման հեռանկարներ չունեն և աստիճանաբար մոռացության են մատնվում» (Սարգսյան 18): Սակայն պետք է խիստ կարևորել հեքիաթների արժեքայնությունը երեխաների կյանքում և փորձել ամեն գնով պահպանել դրանց գործածությունը, քանի որ հեքիաթները զարգացնում են ոչ միայն կարդալու, գրելու, վերապատմելու հմտությունները, այլև վաղ մանկությունից սեր, հարգանք ու նվիրվածություն են առաջացնում երեխաների մեջ մարդկանց ու արժեքների նկատմամբ:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով բանագիտական տիրույթում մանկական հեքիաթների շուրջ եղած տեսակետները՝ եկել ենք այն համոզման, որ երեխաները չեն կարող ինքնուրույն ստեղծել հեքիաթներ: Դրանք ստեղծվել են մեծահասակների կողմից, սակայն, ժամանակի ընթացքում կորցնելով իրենց հետաքրքրությունը, անցել են փոքրերի կենսատարածք. փաստորեն, երեխաները ոչ թե հեղինակներն են, այլ կրողները:

Քննության ենթարկելով Արցախի մանկական հեքիաթների բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկությունները ՝ գտնում ենք, որ երեխաներին առավել հոգեհարազատ են կենդանապատում հեքիաթները՝ միաժամանակ չժխտելով հրաշապատում, իրապատում ու կենցաղային հեքիաթների դերը երեխաների

[1] Այս առումով հայ դասական գրականության մեջ խիստ բնորոշ է Հովհ. Թումանյանի «Մայրը» պատմվածքը:

կյանքում, սակայն կենդանապատում հեքիաթները, ունենալով առնչակցական լուրջ կապեր առակների հետ, երեխաների համար հետաքրքրություն են առաջացնում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան-Սպանդարյան, Մարգարիտ. *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը.* Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 347:
2. Առաքելյան, Միքայել, Ղահրամանյան, Ռոբերտ. *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունից.* Երևան, «Հայաստան» հրատ. , 1978, էջ 223:
3. Իսրայելյան, Աստղիկ, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում». *Շունը բարեբեր հմայությունում,* Հայ ժողովրդական մշակույթ 16, Երևան, 2014, էջ 469:
4. Լալայան, Երվանդ. *Վարանդա.* Բ գիրք, Թիֆլիս, Ազգագրական հանդես, 1897, էջ 244:
5. Հայ ազգագրություն և բանահյուսություն. հ. 15, Երևան ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1983, էջ 192:
6. Հայ ժողովրդական հեքիաթներ 5. Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. , 1966, էջ 778:
7. Հայ ժողովրդական հեքիաթներ 6. Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. , 1973, էջ 759:
8. Հայ ժողովրդական հեքիաթներ 7. Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. , 1979, էջ 767:
9. Հայրապետյան Թամար. «Կարմիր կովի մոտիվը հայոց հրաշապատում հեքիաթներում». *Պատմաբանասիրական հանդես*, Երևան, «Գիտություն» հրատ. , 2010, էջ 228-241:
10. Հարությունյան, Լևոն. *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի բանահյուսության.* Երևան, 1991, էջ 400:
11. Հարությունյան, Սարգիս. *Բանագիտական ակնարկներ*. Երևան, «Գիտություն »հրատ, 2010, էջ 262:
12. Ջիվանյան, Ալվարդ. *Երկնքից ընկավ երեք խնձոր, հրաշապատում հեքիաթը որպես արքիտեքստ.* Երևան, «Զանգակ» հրատ., 2008, էջ 86:
13. Սահակյան Լիլիթ. Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում // *Գալը հին հավատալիքներում և ծեսերում*. Հայ ժողովրդական մշակույթ 16, Երևան, 2014, էջ 469:
14. Սարգսյան, Արմեն. *Արցախի բանահյուսությունը.* Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 748:
15. Տկաչ, Ռազիդա. *Մանկական խնդիրների հեքիաթաթերապիա*. Մոսկվա, «Խոսք» հրատ. , 2008, էջ 118:
16. Виноградов, Георгий. *Детский фольклор и быт.* Иркутск, Национальная электронная библиотека, 1925, стр. 83.
17. Зухба, Сергей. *Абхазская народная сказка*. Тибилиси, Мецниереба, 1970, стр. 255.
18. Капица, Ольга. *Детский фольклор*. Ленинград, Прибой, 1928, стр. 224.
19. Костюхин, Евгений. *Типы и формы животного эпоса*. Москва, Наука, 1987, стр. 271.
20. Литвин, Эсфирь. *К вопросу о детском фольклоре*. Москва, ГПИБ, 1958, стр. 102.
21. Мельников, Михаил, *Русский детский фольклор,* Москва, Просвещение, 1987, стр. 239.
22. Никофоров, Александр. *Народная детская сказка драматического жанра.* Сб. «Сказочная комиссия в 1927г.», Ленинград, 1928, стр. 63.

23. Радин, Пол, *Трикстер, Исследование мифов североамериканских индейцев с комментариями К. Г. Юнга и К. К. Кереньи*, Евразия, 1999, стр. 286.

24. Чурсин, Григорий. *Материалы по этнографии Абхазии*. Сухуми, Абхазское государственное издательство, 1959, стр. 265.

25. Чурсин, Григорий. *Амулеты и талисманы кавказских народов.* Ассоциация Северо- Кавказских горских краеведческих организаций, 1929, стр. 46.

26. Wheatley, Barbara C., Ed., 2020, Empowering Children's liters literature for Str e for Stressful Times. Virginia English Journal, vol. 70 (2).

WORK CITED

1. Arakelyan Mikael, Ghahramanyan Robert, Nmushner Lernayin Karabakhi banahyusutyunic, [Samples of Nagorno-Karabakh Folklore],Yerevan, Hayastan hrat., 1978, 223 ej (in Armenian)

2. Chursin Grigoriy, Amulety i talismany kavkazskikh narodov, [Amulets and Charms of the Peoples of the Caucasus], Assotsiatsiya Severo-Kavkazskikh gorskikh kraevedcheskikh organizatsiy, 1929, 46 s. (in Russian)

3. Chursin Grigoriy, Materialy po etnografii Abkhazii, [Materials on the Ethnography of Abkhazia], Sukhum, Abkhazskoe gosudarstvennoe izdatel'stvo, 1959, 265 s. (in Russian)

4. Grigoryan-Spandaryan Margarit, Lernayin Karabakhi banahyusutyun [Folklore of Nagorno-Karabakh], Yerevan, HSSH GA hrat., 1970, 347 ej.(in Armenian)

5. Harutyunyan Levon, Nmushner Lernayin Karabakhi banahyusutyunic, [Samples of Nagorno-Karabakh Folklore], Yerevan, 1991, 400 ej. (in Armenian)

6. Harutyunyan Sarkis, Banagitakan aknarkner, [Folkloristic Notes], Yerevan, Gitutyun hrat., 2010, 262 ej. (in Armenian)

7. Hay azgagrutyun yev banahyusutyun, [Armenian Ethnography and Folklore], hator 15, Yerevan, HSSR GA hrat., 1983, 192 ej. (in Armenian)

8. Hay zhoghovrdakan heqyatner, [Armenian Folk Tales], hator 5, Yerevan, HSSR GA hrat., 1966, 778 ej.(in Armenian)

9. Hay zhoghovrdakan heqyatner, [Armenian Folk Tales], hator 6, Yerevan, HSSR GA hrat., 1973, 759 ej.(in Armenian)

10. Hay zhoghovrdakan heqyatner, Armenian Folk Tales), hator 7, Yerevan, HSSR GA hrat., 1979, 767 ej. (in Armenian)

11. Hayrapetyan Tamar, Karmir kovi motivy hayots hrashapatum heqyatnerum, [The Motif of the Red Cow in Armenian FairyTales], Patmabanasirakan Handes, Yerevan, Gitutyun hrat., 2010, ej. 228-241(in Armenian)

12. Israyelyan Astghik, Avandakany yev ardiakany hayots mshakuytum, [The Traditional and the Modern in Armenian Culture] // Shuny bareber hmayutyunum, [The Dog in Fertility Charms], Hay zhoghovrdakan mshakuytum, hator 16, Yerevan, 2014, 469 ej. (in Armenian)

13. Jivanyan Alvard, Yerknqic ynkav yerek khndzor, hrashapatum heqyaty vorpes arqiteqst, [Three Apples Fell from Heaven: The Fairy Tale as Archetext], Yerevan, Zangak, 2008, 86 ej. (in Armenian)

14. Kapitsa, Olga, Detskiy folklore, [Children's Folklore], Leningrad, Priboy, 1928, 224 s. (In Russian)

15. Kostyukhin Evgeniy, Tipy i formy zhivotnogo eposa, [Types and Forms of Animal Epic], Moskva, Nauka, 1987, 271 s. (in Russian)

16. Lalayan Yervand, Varanda, B girq, Tiflis, Azgagrakan Handes, 1897, 244 ej. (in Armenian)

17. Litvin Esfir, K voprosu o detskom folklore, [On the Issue of Children's Folklore], Moskva, GPIB, 1958, 102 s. (in Russian)
18. Melnikov, Mikhail, Russkiy detskiy folklore,[Russian Children's Folklore.], Moskva, Prosveshchenie, 1987, 239 s. (in Russian)
19. Nikoforov Aleksandr, Narodnaya detskaya skazka dramaticheskogo zhanra, [The Folk Children's Tale of the Dramatic Genre], sb. "Skazochnaya komissiya v 1927 g.", Leningrad, 1928, 63 s. (in Russian)
20. Radin Pol, Trikster, Issledovanie mifov severoamerikanskikh indeytsev s komentariami, [The Trickster: A Study of North American Myths of Indians with the comments of K. G. Yunga i K. K. Kerenyi, Evraziya], 1999, 286 s (In USA)
21. Sahakyan Lilit, Avandakany yev ardiakany hayots mshakuytum, [The Traditional and the Modern in Armenian Culture] // Galy hin havataliqnerum yev tseserum, [The Rooster in Ancient Beliefs and Rituals]. // Hay zhoghovrdakan mshakuyt, hator 16, Yerevan, 2014, 469 ej. (in Armenian)
22. Sargsyan Armen, Artsakhi banahusutyun, [The Folklore of Artsak], Yerevan, Edit Print, 2015, 748 ej. (in Armenian)
23. Tkach, Razida, Mankakan khndirneri heqyataterapia, [Fairy-Tale Therapy for Children's Problems], Moskva, Khosk hrat., 2008, 118 ej. (in Russian)
24. Vinogradov Georgiy, Detskiy folklor i byt, [Children's Folklore and Everyday Life], Irkutsk, Natsionalnaya elektronaya biblioteka, 1925, 83 s. (in Russian)
25. Zukhba, Sergey, Abkhazskaya narodnaya skazka, [Abkhaz Folk Tale], Tbilisi, Metsniereba, 1970, 255 s. (in Abkhasian)

CHILDREN FOLKTALES OF ARTSAKH

MELINE PETROSYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Archaeology and Ethnography,
Department of Folklore and Textology, Senior Laboratory Assistant,
Artashat, the Republic of Armenia

The aim of the article is to study and analyze existing perspectives within Russian folklore studies and, based on them, to define the children's folktales of Artsakh as a part of the Armenian folklore tradition.

It seeks to identify their thematic and structural features and to clarify the boundaries of children's folktales, recognizing animal tales as a part of children's folklore.

The classification of Artsakh animal tales is based on children's age-specific characteristics, dividing them into two groups: older children (ages 12–16) and middle-aged children (ages 6–11).

The article applies analytical, comparative, and contrastive methods.

The study revealed that, similar to other genres of folklore, the fairy tale has largely lost its function in the everyday life of contemporary society. Nevertheless, its adaptations continue to circulate through digital media, television, and audiobooks, exerting a beneficial influence not only on children's behavioral patterns but also on the formation of their worldview and the development of free and uninhibited self-expression. In particular, animal tales represent a significant component of children's cultural experience, the pedagogical value of which contributes to the broader objective of fostering a healthy society.

The study of animal tales from Artsakh gains particular importance not only in preserving cultural identity but also in shaping national consciousness - especially in the process of strengthening the value-based connection between generations.

Keywords: *Artsakh, children's folktale, young audience, animal tale, folklore, folklorist, tale.*

ДЕТСКИЕ СКАЗКИ АРЦАХА

МЕЛИНЕ ПЕТРОСЯН
старший лаборант отдела фольклора и текстологии
Института археологии и этнографии Национальной Академии наук РА,
г. Арташат, Республика Армения

Цель статьи — изучить и проанализировать существующие взгляды в рамках российской фольклористики и, опираясь на них, определить детские сказки Арцаха как часть армянской фольклорной традиции.

Статья направлена на выявление их тематических и структурных особенностей, а также на уточнение границ детских сказок, признав при этом сказки о животныхчастью детского фольклора.

Классификация сказок о животных Арцаха основана на возрастных особенностях детей с разделением их их на две группы: старший возраст (12–16 лет) и средний возраст (6–11 лет).

В исследовании были применены аналитический, сравнительный и сопоставительный методы.

В ходе исследования мы пришли к выводу о том, что, как и многие другие фольклорные формы, сказка перестала играть значительную роль в современной повседневной жизни. Однако определённые адаптации сказки продолжают распространяться через интернет, телевидение и аудиокниги. Это оказывает положительное влияние не только на поведение детей, но и на здоровое формирование их мировоззрения.

Это положительно влияет не только на поведенческие проявления детей, но и на правильное формирование их мировоззрения, но и на их свободное и раскрепощённое самовыражение. Таким образом, сказки о животных являются одной из важнейших составляющих жизни детей, использование которых явно способствует формированию здорового общества.

Изучение сказок о животных арцахского фольклора приобретает особую важность не только для сохранения культурной идентичности, но и для формирования национального самосознания, особенно в процессе укрепления ценностной связи между поколениями.

Ключевые слова: *Арцах, детская сказка, детская аудитория, сказка о животных, фольклор, фольклорист, сказка.*

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

ՔՐԴԱԼԵԶՈՒ ՄԱՍՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (2020-2023թթ.) (Kurdistan24, Rûdaw) *

ՀՏԴ 070:93/94 DOI: 10.52063/25792652-2025.2.25-196

ՍԱԹԵՆԻԿ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ
Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tarverdiansatenik@gmail.com
ORCID: 0009-0007-9608-2483

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արցախյան երրորդ պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների վերաբերյալ քրդալեզու մամուլում հրապարակված հոդվածները: Հոդվածում ներկայացված են քրդերենի հյուսիսային բարբառով՝ կուրմանջիով, հրապարակված հոդվածների մշտադիտարկման արդյունքները:

Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել ուսումնասիրելու Իրաքյան Քրդստանի հիմնական լրատվական կայքերում (Kurdistan24, Rûdaw) հրապարակված հոդվածների բովանդակությունը, հոդվածագիրների եզրակացությունները՝ հաշվի առնելով այս կայքերի բարզանիական և թալաբանիական ուղղվածությունը: Խնդիրներից մեկն է նաև ուսումնասիրել, թե որքանով են հոդվածագիրները հիշատակել «Կարմիր Քրդստանի» մասին՝ հաշվի առնելով դրա՝ Արցախի տարածքում լինելու հանգամանքը:

Աշխատանքը հիմնված է բովանդակության որակական, խոսույթի քննական, իմաստաբանական վերլուծության և համեմատական մեթոդների վրա:

Այս աշխատանքի արդիականությունը ապահովվում է այն փաստով, որ քրդական մեդիան արձագանքել է Արցախում տեղի ունեցող պատերազմական գործողություններին և ակտիվորեն հրապարակումներ կատարել, իսկ այս հոդվածը հայկական գիտական դաշտում այդ հրապարակումների ուսումնասիրությունն է:

Ուսումնասիրությունը կատարելով՝ եզրահանգել ենք, որ քրդական հանրությունը շարունակում է հետաքրքրվել Արցախի տարածքում հայ-ադրբեջանական բախումներով, Թուրքիայի ներգրավվածությամբ, հարցի նկատմամբ միջազգային հանրության վերաբերմունքով և որոշակի կարծիք փոխանցել մեդիայի հրապարակումների մակարդակով, ինչպես նաև այդ թեմայի շուրջ տեղեկատվություն ապահովել քրդական հանրության համար: Որոշ հոդվածներում Արցախի տարածքում Սովետական Միության ժամանակաշրջանում գոյություն ունեցող, այսպես կոչված, «Կարմիր Քրդստանին» անդրադառնալով, հակիրճ ներկայացնելով՝ նրանք ցույց են

* Հոդվածը ներկայացվել է 12.05.2025թ., գրախոսվել՝ 04.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

տալիս, որ, թեպետ պատմության մեջ կարճ կյանք ունեցող քրդական «ինքնավարության» (1923-1929), այն գոյություն է ունեցել և շարունակում է «կենդանի մնալ» ժամանակակից քրդերի հասարակական և քաղաքական խոսույթում:

Հիմնաբառեր՝ *քրդալեզու լրատվական կայքեր, Արցախյան երրորդ պատերազմ, Լեռնային Ղարաբաղ, «Կարմիր Քրդստան», սիրիացի զինյալներ, թուրքական ներգրավվածություն, ադրբեջանական հարձակում, հակամարտություն, ռազմական գործողություններ:*

Նախաբան

Քրդալեզու մամուլում Արցախյան երրորդ պատերազմի վերաբերյալ տասնյակ հոդվածներ կան: Անկասկած, կախված լրատվական կայքի որոշակի կողմնորոշումից, հոդվածագրի ներկայացրած նյութը ևս ունենում է տարբերվող դիրքորոշում: Այս հոդվածում ներկայացված են Kurdistan24, Rûdaw լրատվական կայքերի՝ անգլերենով և կուրմանջիով հրապարակված հոդվածների մշտադիտարկման արդյունքները Արցախյան երրորդ պատերազմի (27. 09. 2020 – 09/10. 11. 2020), 2022թ. դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման, դրան հաջորդած իրադարձությունների և 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանական Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ լայնամասշտաբ հարձակման մասին: Թեև 2020թ. Արցախյան պատերազմից հետո արվել են դրա տարբեր ասպեկտներին նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ (Hovsepyan and Tonoyan, Davtyan, Miarka, Hecht, Lantzov, Gamaghelyan and Rumyantsev, Bivainis, Meibodi and Feizollahi, Petrosyan, Angelov, Dadparvar and Azizi), սակայն դրա համատեքստում կան նաև այնպիսի թեմաներ, որոնք չեն դարձել ուսումնասիրության առարկա: Այդօրինակ թեմաներից է այդ պատերազմի առնչությամբ քրդական մամուլի ուսումնասիրությունը, որին նվիրված է այս հոդվածը:

Գիտակցելով քրդալեզու մամուլի առատությունը՝ վերոնշյալ լրատվական կայքերը ընտրվել են Իրաքյան Քրդստանում՝ ըստ իրենց առաջատար լինելու հանգամանքի: Հաշվի առնելով Իրաքյան Քրդստանում Բարզանիների և Թալաբանիների ազդեցիկ քաղաքական դիրքը՝ այս հոդվածը շեշտը դրել է իրենց «ազդեցության» տակ գտնվող լրատվական կայքերի վրա, քանզի առանց քրդական այս ուժերի՝ հատկապես Բարզանիների թողտվության, Արցախյան երրորդ պատերազմի և դրան առնչվող իրադարձությունների վերաբերյալ հոդվածներ չէին հրապարակվի: Լրատվական երկու կայքերն էլ, ըստ որոշ շրջանառվող լուրերի, վերահսկվում և ֆինանսավորվում են Իրաքյան Քրդստանի տարածաշրջանային կառավարության ներկայացուցիչների՝ Բարզանիների և վերջիններիս՝ Քրդստանի դեմոկրատական կուսակցության կողմից, թեպետ դրանց մասին կայքերում նշված չէ, ինչպես օրինակ՝ Rûdaw[1] լրատվական կայքում նշված է դրա՝ անկախ լրատվական հաստատություն լինելու մասին: Դրանց գլխավոր շտաբները գտնվում են Էրբիլում և հրապարկում տարածաշրջանային և միջազգային լուրեր կուրմանջի, սորանի, անգլերեն, թուրքերեն, արաբերեն լեզուներով, իսկ Kurdistan24-ը[2]՝ նաև պարսկերեն: Ինչ վերաբերում է Թալաբանիների շահերը ներկայացնող PUKmedia կայքին, ապա այն ևս ուսումնասիրվել է, սակայն որևէ հոդված չի գտնվել Արցախյան երրորդ պատերազմիև դրան հաջորդող իրադարձությունների մասին:

[1] Համանուն ընկերությունը գործում է 2008թ. -ից, իսկ որպես լայն սոցիալական մեդիա կայք՝ 2013թ. -ից (“Rûdaw”):

[2] Ըստ որոշ աղբյուրների կայքը գործում է 2015թ. -ից, թեպետ դրա մասին կայքում նշված չէ (“Kurdistan24”):

Այս աշխատանքը հնարավորություն կտա ուսումնասիրողներին հասկանալու, թե որքան ուշադրություն է դարձվում Արցախյան հիմնախնդրին (2020-2023թթ. միջակայքի վերաբերյալ) քրդական քաղաքական որոշ շրջանակների կողմից: Պարզ է դառնում, որ վերջիններս հետաքրքրված են Արցախում կատարվող իրադարձություններով՝ հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների համատեքստում: Պետք է նաև անուշադրության չմատնել քրդալեզու հոդվածներում «Կարմիր Քրդստանի» վերաբերյալ հիշատակումները:

Մեր հոդվածը կունենա շարունակություն, քանզի այստեղ չեն ընդգրկվել քրդական լրատվական մի շարք կայքերի հոդվածների մշտադիտարկման արդյունքները, որոնք ևս պակաս կարևոր չեն, ուսումնասիրության ծավալուն լինելու պատճառով դրանք կներկայացվեն հաջորդ հոդվածներում:

Kurdistan24

Kurdistan24-ը մշտադիտարկման ենթարկելիս առաջին հոդվածը, որը հետաքրքրություն առաջացրեց, 2015թ. դեկտեմբերի 20-ին կուրմանջիով հրապարակված Ֆիդր Ալոյանի զոհվելու մասին հոդվածն էր, որում հոդվածագիրը գրում է. «Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանին ազերիների հարձակման հետևանքով զոհվել է Հայաստանի եզդի քուրդ: Ադրբեջանը կրակ է բացել Ղարաբաղի սահմանին Հայաստանի ուժերի վրա»: Հղում տալով «Ռյա Թազա» թերթի խմբագիր Մրազե Ջամալի ֆեյսբուքյան հայտարարությանը՝ նշված է, որ զոհվածը19-ամյա Ֆիդար Ալոյանն է (Kurdistan24, *Leşkerekî Kurd di êrîşa Azerbeycanê de hat kuştin*): Հետաքրքիր է, որ կայքում խոսք չկա Արցախյան (2016թ.) քառօրյա պատերազմի ժամանակ զոհված Քյարամ Սլոյանի մասին, որ գլխատվել էր Ադրբեջանական բանակի զինվորականների կողմից (Ստեփանյան):

Արցախյան 3-րդ պատերազմի վերաբերյալ առաջին հոդվածը կայքում հրապարակվել է 2020թ. սեպտեմբերի 28-ին՝ «Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը վնաս է հասցնում Թուրքիային» վերնագրով: Հոդվածագիրը գրում է, որ Ադրբեջանը ուշադրություն է հրավիրել Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա, որն ունի կառավարություն և ամուր կապեր Հայաստանի հետ, ինչպես նաև 90%-ով հայ բնակչություն: Հոդվածագիրը նշում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածությունը եվրոպական շուկաներ էներգամատակարարման համար կարող է խնդիրներ առաջացնել: Վերջինս, նաև անդրադառնալով Թուրքիայի և Ադրբեջանի միջև էներգետիկ հարաբերությունների ընդլայնմանը, գրել է, որ դեպի Թուրքիա ադրբեջանական գազը տեղափոխող Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը անցնում է Հայաստանի Տավուշի սահմանային մարզով, որտեղ տեղի են ունենում մարտեր (Kurdistan24, *Şerê navbera Ermenistan û Azerbaycan zirarê dide Tirkiyê*):

Վերոնշյալ հոդվածի հրապարակումից մոտ մեկ ժամ անց կայքը հրապարակեց («Ռյա Թազա» թերթից) Թեմուրե Խալիլի հետ հարցազրույցը: Ըստ որի՝ Ռուսաստանը փորձում է հանդարտեցնել այս պատերազմը, բայց անհրաժեշտության դեպքում նա կաջակցի հայերին: Խոսելով պատմության մասին՝ նա նշել է, որ Լեռնային Ղարաբաղը (Qerebaxa Çiya) հայկական հող է՝ ավելացնելով. «Սակայն երբ այն Լենինի ժամանակաշրջանում մտել է Ադրբեջանի կազմի մեջ՝ որպես ինքնավար տարածք, տարբերություն չկար, դա երկիր էր, որտեղ ապրում էինք մենք, Ադրբեջանն ու Հայաստանն էլ այդ երկրի մեջ էին: Բայց մեր այդ երկրի փլուզումից հետո հայերն ասացին, որ մեր այս հողը, որը ներառվել է Ադրբեջանի տարածքում, մենք կվերադարձնենք: Այնտեղ 95%-ով հայեր են, այսինքն՝ նրանք իրավունք ունեն իրենց հողն ունենալ առանց ադրբեջանցիների վերահսկողության: Հայերը դուրս բերեցին այն Ադրբեջանի կազմից, և այն հայերի ձեռքում է ավելի քան 20 տարի»: Ըստ Խալիլի՝ պատերազմը Հայաստանի և Ադրբեջանի միջև չէ, այլ Ղարաբաղի և Ադրբեջանի, իսկ, քանի որ Ղարաբաղը հայկական երկու պետություններից մեկն է, Հայաստանը օգնում է իր ազգին, սակայն Թուրքիան հեռահար ծրագրեր ունի տարածաշրջան մտնելու, այն

իր վերահսկողության տակ վերցնելու: Խալիլը ավելացրել է, որ 100 տարի առաջ էլ նրանք ոչնչացրին հայերին, և պատերազմը շարունակվում է մինչ օրս (Kurdistan24, *Têmûrê Xelîl: Rûsya hewl dide şerê Ermenistan û Azerbaycanê rawestîne*):

Շուտով հրապարակվեց ՀՀ 4-րդ նախագահ[1] Արմեն Սարգսյանի՝ CYBERSEC-2020 համաժողովում ունեցած ելույթի բովանդակության վերաբերյալ հոդվածը: Հոդվածագիրը գրում է, որ Արմեն Սարգսյանը հայտնել է, որ պատերազմում Թուրքիան Ադրբեջանին աջակցում է F-16 կործանիչներով, ինքնաթիռներով, անօդաչու թռչող սարքերով, զինվորականներով: Հոդվածագիրը նշում է. «ՀՀ նախագահը ուշադրություն հրավիրեց Թուրքիայի կողմից իրականացված հայերի ցեղասպանության վրա»: Kurdistan24-ի տվյալ հոդվածագիրը հոդվածի վերջում եզրակացնում է. «Ղարաբաղը փաստացի գտնվում է Հայաստանի վերահսկողության տակ: Իրավականորեն այն պատկանում է Ադրբեջանին: Ահա թե ինչու, տասնամյակներ շարունակ Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա է ռազմական և քաղաքական ճգնաժամ » (Kurdistan24, *Ermenîstan bo NATO*):

Ժամեր անց կայքում տեղադրվեց ՀՀ պատգամավոր Կնյազ Հասանովի[2]՝ Kurdistan24-ին տված հարցազրույցը: Վերջինս նշել էր, որ Թուրքիան աջակցում է Ադրբեջանին իր զինվորականներով և սիրիացի ընդդիմադիր զինյալներով: Պատգամավորը հայտնել է. «Բացի թուրք զինվորներից, Թուրքիան Աֆրինից Ադրբեջան է տեղափոխել մոտ 4000 սիրիացի ընդդիմադիր և իսլամիստ զինյալներ» (Kurdistan24, *Parlementerê Ermenistanê*):

2020 թվականի սեպտեմբերի 29-ի երեկոյան կայքը այս անգամ հրապարակեց Ռուստամ Բաքոյանի հարցազրույցը: Kurdistan24-ին տված իր հարցազրույցում Բաքոյանը[3] նշել է, որ Թուրքիայի զինվորները կռվում են Հայաստանի դեմ որպես Ադրբեջանի զինվորներ: Նա հայտնել էր, որ Ադրբեջանը ռմբակոծել է սահմանակից քաղաքները, բնակավայրերը, որի արդյունքում սպանվել են քաղաքացիական անձինք, իսկ Թուրքիան ահաբեկիչներ (ԴԱԵՇ-ից, սիրիական ընդդիմությունից) է Սիրիայից բերել Ադրբեջան: Նա նշել էր. «Հայաստանը գտնվում է իր սեփական հողի վրա: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հողն է, Թուրքիայի հավակնությունները շատ հեռու են գնում» (Kurdistan24, *Rûstem Bakoyan*):

Թեպետ կայքի հոդվածագիրները փոձել են խուսափել թեմայի վերաբերյալ կողմնակալ մեկնաբանություններից, սակայն հարկ է նշել, որ հրապարակել են նաև հայտարարություններ, որոնք ունեն հստակ դիրքորոշում: Նման հոդվածներից է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հայտարարությունը: Վերջինս հայտարարել էր, որ Թուրքիայի քաղաքականությունը տարածաշրջանում, Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմում վտանգավոր է: Հոդվածում նշվել էր նաև, որ Թուրքիայի արտգործնախարարը հայտնել է, որ Ֆրանսիայի նախագահը չի ճանաչում Ադրբեջանի օկուպացված տարածքը, ինչը նշանակում է, որ նա աջակցում է օկուպացիային: Հոդվածագիրը գրել էր, որ, ըստ Մակրոնի, թուրք պաշտոնյաների հայտարարությունները ցույց են տալիս, որ նրանք պատերազմ են ուզում, և որ այս քաղաքականությունը վտանգավոր է տարածաշրջանի համար (Kurdistan24, *Macron*):

Կայքը ակտիվորեն հրապարակում էր հոդվածներ Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Սեպտեմբերի 30-ին հրապարակվեց Հայաստանի ՊՆ հայտարարությունը, ըստ որի Ադրբեջանը Ղարաբաղում ռազմական

[1] Հոդվածում առկա է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի լուսանկարը, հավանաբար շփոթություն է եղել ՀՀ երրորդ և չորրորդ նախագահների լուսանկարների հետ կապված:

[2] ՀՀ ԱԺ պագամավոր, 2007 թվականից «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ խորհրդի նախագահն է, խորհրդի «Զագրոս» հայերեն պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր (հասարակական կարգով) (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, պաշտոնական կայք):

[3] ՀՀ ԱԺ պատգամավոր, 2007թ. «Շամս» հայ-եզդիական երիտասարդական շարժման համահիմնադիր, 2014թ.՝ նախագահ (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, պաշտոնական կայք):

գործողությունների հրամանատարությունը հանձնել էր Թուրքիային, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքերի ու F-16 կործանիչների կառավարումը: Կայքը մեջբերել էր ՀՀ ՊՆ մամլո խոսնակի հայտարարությունը. «Մեր տեղեկությունների համաձայն՝ այդ ինքնաթիռները հրամաններ են ստանում Թուրքիայի արևելքում գտնվող Էրզրում-Կարս տարածաշրջանային հրամանատարական կենտրոնից» (Kurdistan24, *Ermenistan*):

Պատերազմի հենց առաջին օրերից կայքը սկսեց հրապարակել նաև սիրիացի զինյալներին Լեռնային Ղարաբաղ բերած Թուրքիայի միջամտության մասին: Հիմնականում հղում տալով Մարդու իրավունքների սիրիական մշտադիտարկման կենտրոնին՝ ժամանակ առ ժամանակ կայքը տեղադրեց հոդվածներ՝ զինյալների ԼՂ տեղափոխման, նրանց թվի, վիրավորների, սպանվածների և Թուրքիայի կողմից նմանատիպ գործողությունների կազմակերպման և այդ թեմայի նկատմամբ միջազգային հանրության արձագանքի մասին: Այս թեմայի շուրջ մեզ հանդիպած առաջին հոդվածը հրապարակվել է հոկտեմբերի 1-ին, որը հաղորդում էր սիրիացի ընդդիմադիր 62 զինյալի վիրավորվելու կամ անհետ կորչելու և 28 զինյալի սպանվելու մասին: Ըստ հոդվածի՝ նրանց մարմինները տեղափոխվել են Թուրքիա: Հոդվածը, հղում տալով ՄԻ Սիրիայի մշտադիտարկման կենտրոնին, գրում է, որ Թուրքիան 850 սիրիացի զինյալ է տեղափոխել Ղարաբաղի մոտակայք (Kurdistan24, *28 çekdarên Sûrî di şerê Qerebaxê de hatin kuştin*):

Ֆրանսիայի նախագահ Մակրոնի հայտարարության հոդվածի հրապարակումից ժամեր անց՝ Լեռնային Ղարաբաղ ուղարկված զինյալների մասին մեկ այլ հոդված հրապարկվեց, ըստ որի՝ Ֆրանսիայի նախագահը հայտնել էր, որ, իր ունեցած տեղեկություններով, Թուրքիան Սիրիայում կռված ջիհադիստական խմբավորումներ է ուղարկել ԼՂ-ի դեմ կռվելու: Հոդվածագիրը գրում է, որ Մակրոնը նաև մեղադրել է Թուրքիային Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմ հրահրելու և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վարած քաղաքականության մեջ: Հոդվածում նշվում է նաև, որ Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը ևս հայտարարել էր, որ Սիրիայում կռվող զինյալներին գումարով ուղարկում են տարածաշրջան (Kurdistan24, *Macron*):

Kurdistan24-ը Արցախյան 3-րդ պատերազմի առաջին օրերին հրապարակում էր միջազգային մամուլում հրապարակվող հայտարարություններ, որոնցից էր Ռուսաստանի կոչով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Լեռնային Ղարաբաղում հակամարտության սրումը դատապարտող համատեղ հայտարարությունը (Kurdistan24, *Ji Trump, Macron û Pûtîn bangaweziya Qerebaxê*):

Իսրայելում ՀՀ դեսպանի հետ կանչվելու մասին հոդվածը շատ չուշացավ, և հայկական լրատվամիջոցներում հոկտեմբերի 1-ի երեկոյան հրապարակվելուց հետո՝ հոկտեմբերի 2-ին՝ վաղ առավոտյան, կայքը գրեց. «Հայաստանը դատապարտում է Իսրայելին»: Հոդվածում նշված էր, որ ՀՀ ԱԳՆ խոսնակ Աննա Նաղդալյանը հայտարարել է, որ Ադրբեջանի հետ ռազմական թշնամանքի[1] մեջ գտնվելու պահին Իսրայելի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքը մտահոգության տեղիք է տալիս և անընդունելի է: Հոդվածագիրը հոդվածի վերջում հիշեցրել էր. «2020թ. սեպտեմբերի 27-ին՝ կիրակի օրը, կրկին պատերազմ սկսվեց Լեռնային Ղարաբաղի շրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև: Երկու երկրների միջև ընթացող այս պատերազմը համարվում է տարածաշրջանի ամենավտանգավոր պատերազմը վերջին 20 տարիների ընթացքում» (Kurdistan24, *Ermenistan rexne li Îsraîlê dike*):

[1] Սույն հոդվածում հոդվածագիրը օգտագործել է dijminahiya serbazî արտահայտությունը, որում dijminahi (ya-ն ձայնավորով վերջացող իգական սեռի բառերի վերջավորությունն է իզաֆեթային կառույցում) բառը, ըստ Կուրդոևի, նշանակում է թշնամություն, իսկ serbazî բառը՝ ռազմական (տե՛ս Курдоев, 701, 212), մինչդեռ, ըստ հայկական լրատվական կայքերի հրապարակումների, Նաղդալյանն օգտագործել է «լայնածավալ ագրեսիա» արտահայտությունը:

Նույն օրը կայքը հրապարակեց ևս մեկ հոդված, որում ներկայացված է ՀՀ ՊՆ հայտարարությունն ու տեսանյութը Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական ռազմական ուղղաթիռի խոցման վերաբերյալ (Kurdistan24, *VÎDEO – Ermenistanê dîmenên têkbirina helîkoptereke Azerbaycanê belav kir*):

Հոկտեմբերի 2-ին՝ երեկոյան, այս անգամ հրապարակվեց Կանադայի հայտարարությունը՝ Թուրքիային զենք վաճառելու վերաբերյալ: Նշվում է, որ Կանադայի ԱԳՆ հայտարարել է, որ Թուրքիային զենքի վաճառքը կդադարեցվի, եթե պարզվի, որ դրա օգտագործումը մարդու իրավունքների ոտնահարման պատճառ է դառնում: Հոդվածագիրը նաև նշել է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կանադական ԶԼՄ-ներին տված հարցազրույցում հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի կազմում Թուրքիայի դաշնակիցները պետք է բացատրեն, թե ինչու են թուրքական F-16 կործանիչները ռմբակոծում Ղարաբաղը և սպանում խաղաղ բնակիչներին և նշել, որ ադրբեջանական կողմից կռվում են Մերձավոր Արևելքից բերված Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող ահաբեկիչներ (Kurdistan24, *Kanada*)[1]:

Շուտով Kurdistan24-ը հրապարակեց “The Guardian” թերթի հոդվածը և մեջբերեց. «Թուրքիան սիրիացի զինյալներին տեղափոխում է Ադրբեջան բեռնատար ինքնաթիռներով: Այն կնքում է 3-6 ամսվա պայմանագրեր և վճարում 10 հազար լիրա»: Kurdistan 24-ն այս հոդվածը գրեթե ամբողջությամբ վերցրել էր “The Guardian” թերթի նույն հոդվածից, և մեջբերել այդ զինյալներից մի քանիսի հարցազրույցը, որոնք պատմել էին, որ տեղեկացված չեն եղել պատերազմում կռվելու մասին և նրանց ասվել է, որ աշխատելու են նավթի և գազի կենտրոններում (Kurdistan24, *Şerê Qerebaxê!*):

Նույն օրը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ թվիթերյան (ներկայումս՝ X) գրառումը, որով վերջինս հայտնել էր, որ ադրբեջանական բանակը Մատաղիսում (ադրբեջանական անվանումը Madagiz, ներկայումս՝ Suqovuşan) բարձրացրել է ադրբեջանական դրոշը, հայտնվեց նաև Kurdistan24-ի հոդվածների կողքին (Kurdistan24, *Ilham Aliyev*):

Kurdistan 24-ը անգլերենով առաջին հոդվածը արցախյան մարտերի մասին հրապարակեց 2020թ. հոմտեմբերի 3-ին: Ըստ հոդվածի՝ Լեռնային Ղարաբաղում հայ-ադրբեջանական հակամարտությունը լուսաբանող Le Monde թերթի ֆրանսաքուրդ լրագրող Ալլան Կավալը ռեպորտաժ պատրաստելիս վիրավորվել է: Ըստ հոդվածի՝ Լրագրողների պաշտպանության կոմիտեն (ԼՊԿ), հղում տալով լրատվամիջոցներին, նշում է, որ Կավալը և 3 լրագրողներ վիրավորվել են Խոջավանդ քաղաքում, Ադրբեջանի հրաձգության ժամանակ, «Ադրբեջանից անջատված Լեռնային Ղարաբաղ շրջանում»: Ըստ Հերմինե Վիրաբյանի՝ ԼՊԿ-ին տված հեռախոսային հարցազրույցի, լրագրողները վիրավորվել են Press վերտառությամբ մեքենայի կողքին կանգնած, նրանց վիրահատել են Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում: Հոդվածում նաև գրվում է, որ Ալլան Կավալը, որ քուրդ ակադեմիկոս Մուսա Կավալի որդին է, լուսաբանել է քրդական հարցը և ԴԱԵՇ-ի դեմ պատերազմը Սիրիայի հյուսիս-արևելքում և Իրաքում՝ ներառյալ Իրաքյան Քրդստանի շրջանը: Հոդվածում նշվում է, որ Ադրբեջանը հերքել է մամուլի ներկայացուցիչներին միտումնավոր թիրախավորելու փաստը: Հոդվածագիրը գրում է. «Լեռնային Ղարաբաղը հիմնականում հայերով բնակեցված շրջան է, սակայն այն գտնվում է Ադրբեջանի կազմում և միջազգայնորեն ճանաչված է որպես Ադրբեջանի մաս: Տարածաշրջանը անկախություն է հռչակել 1992 թ. հունվարին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, որի մաս էին կազմում նաև Հայաստանն ու Ադրբեջանը: Հռչակագրից հետո երկու ազգերի միջև տարածաշրջանի շուրջ հակամարտության արդյունքում զոհվել է 30,000 մարդ: Նրանք 1994թ. համաձայնության են եկել հրադադարի շուրջ, սակայն

[1] Կայքը վերջին մի քանի հոդվածների ավարտին նշում էր, որ Հայաստանը մեղադրում է Ադրբեջանին ռազմական գործողությունների և հրետակոծությունների համար, իսկ Ադրբեջանն իր հերթին մեղադրում էր Հայաստանին Ադրբեջանի ժողովրդի դեմ կրակ բացելու համար:

երբեք չեն կարողացել հասնել վերջնական կարգավորման: Արդյունքում, պարբերաբար բախումներ են բռնկվել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ու Հայաստանի սահմանի մոտ գտնվող տարածքներում: Երկու երկրների միջև մարտերը վերսկսեցին սեպտեմբերի 27-ին, երբ Թուրքիան աջակցեց (supporting) ադրբեջանական ուժերին, իսկ Ռուսաստանը (backing)՝ Հայաստանին: Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ նախագահները հինգշաբթի օրը կոչ արեցին վերադառնալ 1994թ. հրադադարին, սակայն Ադրբեջանի գլխավոր դաշնակից Թուրքիան մերժեց հրադադարի առաջարկը և փոխարենը կոչ արեց Հայաստանին դուրս գալ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից: Ուրբաթ օրը Հայաստանը հայտարարեց, որ պատրաստ է վերսկսել հրադադարի շուրջ բանակցությունները, սակայն մինչ այժմ Ադրբեջանը պատրաստ չէ դրանց» (Wilgenburg, *Kurdish journalist injured in Nagorno-Karabakh conflict).*

2020թ. հոկտեմբերի 7-ին հրապարակվեց ևս մեկ հոդված, որում կրկին նշվում է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս է կազմում, սակայն ղեկավարվում է Հայաստանի կողմից և վայելում Հայաստանի կառավարության աջակցությունը 1991թ. Սովետական Միության փլուզումին հաջորդած Հայաստանի և Ադրբեջանի անկախացումից հետո: Նշվում է, որ հոկտեմբերի 5-ին Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարները համատեղ հայտարարություններ են տարածել՝ կոչ անելով հրադադար հաստատել: Նույն օրը, ըստ ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Մորգան Օրտագուսի տարածած հայտարարության՝ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգունը առանձին հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հետ, սակայն հաջորդ օրը Թուրքիայի ԱԳՆ Մևլութ Չավուշօղլուն այցելել է Ադրբեջան և ճնշում գործադրել «անջատողական տարածաշրջանի» վրա վերահսկողություն հաստատելու համար, ինչպես նաև քննադատել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Եվրոպայում անվտանգության համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի համանախագահների դիրքորոշումը: Հոդվածագիրը դրան անդրադարձել է առանձին ենթավերնագրով՝ "Էրդողանի նեոօսմանյան փառասիրությունը (ambitions)", տարածաշրջանում թուրքական միջամտությունը: Հետաքրքիր է, որ կայքը, հղում տալով Ամերիկայի ձայնին, գրել է, որ Լեռնային Ղարաբաղը հայտնվել է Էրդողանի տարածաշրջանային «փառասիրության» մեջ, որ Օսմանյան մեծությունն ու ազդեցությունը վերականգնելու ցանկության ունի: Հոդվածում ևս տեղ է գտել Էրդողանի կողմից Երուսաղեմը իրենցը համարելու մասին ելույթի բովանդակությունը: Հոդվածում հղում է տրված նաև Foreign Policy ամսագրին, ըստ որի՝ Թուրքիան Սիրիայից 1500 սիրիացի է ուղարկել Ադրբեջան: Ըստ ամսագրի՝ Սիրիայի ազգային բանակի (ՍԱԲ) հրամանատարները ժամանել են Ադրբեջան նույնիսկ մարտական գործողությունների սկսվելուց առաջ՝ «տարածաշրջանն ուսումնասիրելու և ադրբեջանական բանակի հետ զորքերի բաշխման վերաբերյալ տեղեկությունները համակարգելու համար»: Սիրիացիներին առաջարկվել են չորսամսյա պայմանագրեր՝ ամսական 1500 դոլարով, և ասվել է, որ նրանք «հիմնականում կզբաղեցնեն պահակակետերը»: Սակայն նրանք ակտիվ մարտական գործողությունների մեջ են եղել: Ըստ հոդվածի՝ Foreign Policy-ն նշում է, որ առանց որևէ ապացույց ներկայացնելու, Թուրքիան պնդում է՝ Հայաստանին Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK)՝ աջակցության մասին (Mylroie, *US, France, Russia call for Nagorno-Karabakh ceasefire, but Turkey encourages Azeri offensive*):

Հոկտեմբերի 7-ին հրապարակված հերթական հոդվածներից մեկում "Kurdistan24" անվան տակ գտնվող հոդվածագիրը գրել է. «Ռազմական տեխնիկայի և հզորության տեսանկյունից Ադրբեջանն ավելի ուժեղ է, սակայն շատ հզոր երկրներ, այդ թվում՝ Ռուսաստանը և Ֆրանսիան, աջակցում են Հայաստանին: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թուրքիան և Իսրայելը, օգնում են Ադրբեջանին: Ասվում է, որ Իրանը Հայաստանի քաղաքական հենարանն է»: Հոդվածի վերջում հոդվածագիրը

գրում է. «Անցյալ երկուշաբթի Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմ սկսվեց: Պատերազմը Լեռնային Ղարաբաղի տարածքում է: Ղարաբաղի տարածքի մեծ մասը Քրդստանի պատմական ու իրավական[1] տարածքն է» (Kurdistan24, *Ermenistan û Azerbaycan hev bi kûştina sivîlan tometbar dikin*):

• *Ընկերային փոխհարաբերությունների խզումը:* Սիրահարված անձը բախվում է դարի ու միջավայրի պատնեշներին, իր ընկերների անհասկացողությանը, քանի որ՝ «Դոստիրըս դուշման շինեցիր»:

• *Սեր արտահայտող փոխաբերություններ:* Սերը համեմատվում է ծովի հետ, որտեղ բանաստեղծն իրեն փոթորկահույզ ջրերում տարուբերվող նավ է զգում:

Սիրո զգացմունքի ուժգնությունը պատկերելիս բանաստեղծը հաճախ օգտագործում է չափազանցություններ, ինչպես՝

Էս էլ էն Դիբա ու յենգիդունիայի հանգում, Արութինի ասած,

Մե խոսկ ունիմ իլթիմազով, անգամ ա՛րա, օ՛վ աճկի՛լուս,
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսը բարով, աճկի՛լուս,
Աջաբ քիզ ի՛նչ գեթ իմ արի՝ կենում իս խըռով, աճկի՛լուս,
Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սով, աճկի՛լուս

(Բախչինյան, 95):

Սայաթ-Նովան սկսում է՝ հիշատակելով «Դիբա ու յենգիդունիա», որտեղ դիբան նուրբ մետաքսյա գործվածք է, իսկ յենգիդունիան՝ նոր աշխարհ: Սա մատնանշում է, որ բանաստեղծությունը հյուսված է նուրբ մետաքսի պես և ներկայացնում է սիրո նոր աշխարհ:

Իլթիմազ բառը պարսկական ծագում ունի և նշանակում է խնդրանք կամ աղերս: Բանաստեղծը խնդրում է սիրելիին՝ ականջ դնել իրեն:

Ինթիզար բառը նշանակում է կարոտ կամ սպասում՝ ցույց տալով բանաստեղծի երազանքը՝ տեսնել սիրելիին:

Վերջին տողը պատկերավոր հզոր հակադրություն է, որի մի եզրը վայելքի ու լիության աշխարհն է՝ «Աշխարս աշխարով կըշտացավ», մյուս եզրը վայելքից զուրկ, տառապանքի բովում խարկվող բանաստեղծը՝ «յիս քիզանից սո՛վ, աճկի՛ լուս» (աշխարհը լիության մեջ հագեցավ), սակայն բանաստեղծը սով է զգում սիրելիի հեռու և անմատչելի լինելուց, և գնալով սաստկանում է ցավը, կարոտի կսկիծը, որը նրան խորովում է լորի պես ու հասցնում է խենթության.

Մագամ օչ օվ յար չէ՞ սիրի, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
Էշխեմեդ ջունուն իմ էլի, ման իմ գալի յանա-յանա,
Էս դարդեն օչ օվ չը քաշե, վուր մե դանգին չի դիմանա,
Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիդ կըրակով, աճկի՛լուս:

Մագամ բառը հարցական-հաստատական եղանակավորիչ է, ճարտասանական երանգով, նշանակում է երբ, չէ՞ որ (մագամ սիրտս ունիմ քարած): Նա հարցնում է՝ չէ՞ որ բոլորն էլ սիրում են:

«Էշխեմեդ ջունուն իմ էլի» տողում *էշխեմեդ* նշանակում է քո սիրուց, իսկ *ջունունը*՝ խենթ, արևելյան հայտնի սիրավեպի հերոս Մեջլումն է (Մեջլումի պես

կորավ յարս), որ սիրուց խենթացել է և թափառում է յանա-յանա (այս ու այն կողմ, այրվելով):

Դարդ բառը նշանակում է *վիշտ, ցավ, տառապանք, մորմոք*: Բանաստեղծը պնդում է, որ ոչ ոք չի կարող դիմանալ իր կրած ցավին՝ նույնիսկ մեկ *դանգի* չափով (*դանգը, քարտեզը* (քարիզկնոց) կիլիկյան դարաշրջանում ստեղծված նվազագույն արժեքով պղնձադրամներ են):

Վերջին տողում նա իր սիրտը համեմատում է լորի հետ, որը խորովվում է սիրո կրակում: Սա հզոր պատկեր է, որը ցույց է տալիս սիրո տառապանքը:

Յիս մե փուքըր նավի նըման, քու էշխըն է ծով, աճկի՛լուս:

Վերը նշված տողում կա գեղեցիկ փոխաբերույթ: Բանաստեղծն իրեն համեմատում է փոքր նավի, իսկ սիրելիի սերը՝ անհուն ու անափ ծովի հետ: Սա ցույց է տալիս, թե որքան փոքր և անզոր է ինքն զգում սիրո հզոր զգացմունքի առջև:

Բութա Շահսանամըս դուն իս, Է՛լ չունիմ օչ օվ, աճկի՛ լուս:

«Բութա Շահսանամ»-ը հղում է դասական սիրո պատմության: Բութան կարող է նշանակել սեր, հույս, ապավեն (Որս եմ՝ բութես ձեզ արած ՀԹ), իսկ Շահսանամը հայտնի արևելյան «Աշուղ Ղարիբ» երգախառն սիրավեպի հերոսուհու անունն է (հայկական տարբերակում՝ Ջիվանու փոխադրությամբ): Սայաթ-Նովան սիրելիին Շահսանամ է անվանել, որին արժանանալու հույսով աշուղ Ղարիբը յոթ տարի թափառել է օտարության մեջ (Օխտն տարի էլ ման գուքամ սազը ձիռիս՝ Ղարիբի պես): Նա միակն է աշխարհում, և որից բացի ուրիշ ոչ ոք չունի:

Կենսական խոր բովանդակությամբ հարուստ ու գեղեցիկ այս պատկերում Սայաթ-Նովան ընդգծել է, որ մահն անգամ անզոր է իրեն զրկել սիրուց. նույնիսկ մահվանն էլ մահ չի ասի, եթե սիրելի «զալումը» գա և լաց լինի իր վրա՝ մազերը շաղ տալով:

Այս բանաստեղծությունը լի է արևելյան բանաստեղծական ավանդույթներին բնորոշ պատկերներով և արտահայտչամիջոցներով:

Սայաթ-Նովայի այս բանաստեղծությունը մաքրագույն սիրո, անմնացորդ նվիրվածության, հիացմունքի, բայց, միևնույն ժամանակ, հոգեկան խոր տառապանքի հանճարեղ արտացոլում է: Իրական կնոջ՝ մեծարանքի և երկրպագության արժանի աստվածային գեղեցկության գովերգ է այն՝ հուզական գուներանգներով, ժամանակի ու մշակույթի սահմաններից դուրս ապրող ստեղծագործություն:

Ինձ ու իմ սիրեկան յարին մէ տարի բերած գիդենաք

Սայաթ-Նովայի քնարերգությունը հարուստ է ուղղակի և անուղղակի ինքնակենսագրական ակնարկներով, որոնք ծառայում են որպես իրական ապրումի հիմք: «Ինձ ու իմ սիրեկան յարին մէ տարի բերած գիդենաք» խաղի վերնագիրն իսկ հուշում է անձնական պատմության մասին: Այստեղ սերը ոչ թե վերացական զգացում է, այլ կոնկրետ, ժամանակի մեջ տեղայնացված փորձառություն: Նույն կերպ՝ «Թամամ աշխարհ պըտուտ էկա» խաղում «յարիս նըման յար չըգըտա» տողը վկայում է ոչ թե իդեալականացված կերպարի, այլ կոնկրետ, անկրկնելի սիրելիի մասին, որի փնտրտուքը դառնում է բանաստեղծական սյուժե:

Այս խաղի առաջին տող-վերնագիրն իսկ հուշում է նրա ինքնակենսագրական բնույթը: Բանաստեղծը սերը պատկերում է որպես կյանքի և մահվան սահմանին գտնվող տառապող անհատի փրկարար զգացմունք: Ինչպես Հովհաննես Թումանյանն է նշել, նման զգացմունքները չէին կարող առաջանալ առանց իրական փորձառության: Սայաթ-Նովայի սիրո ուժը, գեղեցկությունն ու անկեղծությունը հստակ դրսևորվում են այս խաղում: Այն շարունակում է արևելյան բանաստեղծական ավանդույթները՝ արտահայտելով քնարական հերոսի խորը հուզականությունն ու ներքին պայքարը:

Բանաստեղծությունը հյուսված է քառատող տների ձևաչափով՝ պահպանելով դասական սիրային տաղերի կառուցվածքը՝ Սայաթ-Նովայի անհատականության դրոշմով: Բանաստեղծական պատկերներում առկա են հայերենին միահյուսված պարսկերեն և թուրքերեն ժողովրդախոսակցական բառեր, որոնք փոխանցում են բանաստեղծի ներքին ապրումները առավելագույն կենդանի արտահայտչականությամբ:

Բանաստեղծության մեջ կրկնվում է «գիդենաք» բառը (իմանաք, իմացեք), որն ուժեղացնում է ապրված զգացմունքների տեղեկացման անհրաժեշտության հրատապությունը: Այն կարծես հիշեցնում է, որ բանաստեղծի ցավն ու ապրումները կիսվելու և գիտակցվելու կարիք ունեն:

● *Սիրային տառապանք:* Բանաստեղծի սերը հասել է այն աստիճանի, որ բառացիորեն «սիրտը արնաքամ է», «հոգին հալվում է», իսկ աչքերը երբեք չեն չորանում.

Աչքըս՝ թաց, բերանըս՝ ցամաք, լիզուս հիդքերած գիդենաք:

Սույն տողով բանաստեղծը սգում է իրեն անմարդկային տառապանք պատճառած չիրականացած սերը: Նա ոչ միայն հոգեպես, այլև ֆիզիկապես խեղճացած է:

● *Հոգեկան խռովք ու անկայունություն:* Սերը ոչ միայն ցավ է պատճառում, այլև շփոթմունք, մտավոր ու ֆիզիկական ուժի կորուստ.

Սիրտըս փուրումըս թուլացաւ անգալներու զախ անիլէն,
Ուշք ու միտքըս խառնըվեցաւ խուռըն-խուռըն խաղ հանիլէն:

Արդյունքում նա իրեն կորցրել է, դարձել է անօգնական, ինչպես ջրերի հոսանքով քշված մի իր.

Էշխէն ուշք ու միտքըս կապած, ինձ ջրրի տարած գիդենաք:

Սայաթ-Նովան հաճախ օգտագործում է փոխաբերություններ, որոնք ընդգծում են սիրո զգացմունքի ուժգնությունն ու վայրիվերումները: Պատկերներում սերը ջրային տարերքի՝ փոթորկոտ ծովի հետ է համեմատվում (Տալղա տվիր, գեմիս տարար ծովի պես), ինչը ներկայացնում է իր զգացմունքային տատանումները:

● *Կյանքի անիմաստություն առանց սիրո:* Սիրելիի բացակայությունը հանգեցնում է բանաստեղծի կյանքի անիմաստության.

Էլ ապրիլու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գիդենաք:

Սա բացահայտում է այն կործանարար ազդեցությունը, որ կարող է ունենալ սերը: Այն ոչ միայն հույզերի պոռթկում է, այլև գոյության հարց է դառնում բանաստեղծի համար:

● *Կյանքի երազային ավարտ:* Բանաստեղծության վերջին հատվածում կյանքն այլևս ներկայացվում է որպես անկատար երազ.

Ումբրըս էրազի պէս գընաց՝ ծառըս չըխերած գիդենաք:

Այսինքն՝ բանաստեղծը հեռացավ կյանքից՝ առանց իր «ծառը» բերք տալու, առանց սիրո պտուղները վայելելու: Աշխարհից, մարդկային հարաբերություններից դառնացած մարդու այս կենսափիլիսոփայության ողբերգական տարրերը հատուկ են ոչ միայն Սայաթ-Նովային, այլև առհասարակ արևելյան քնարերգությանը:

Այսպիսով՝ բանաստեղծությունը ամփոփում է Սայաթ-Նովայի ողջ սիրային ստեղծագործության էությունը. սերը ոչ միայն սրբազան զգացմունք է, այլև այն կրողին կարող է դարձնել տառապանքի զոհ: Սերը տրված չէ միայն ուրախություն պարգևելու համար. այն նաև մեծ փորձություն է, որը կարող է դառնալ կյանքի մղձավանջ: Այս բանաստեղծության վերաբերյալ Պ. Սևակը գրել է. «Այս խաղը մեկն է (Ղ-57) այն բազմաթիվ բանաստեղծություններից, որոնց մինչևիսկ լուսանցքն էլ լեցուն է բանաստեղծի սիրով ու տառապանքով: Եվ «ախ քաշելուց մերած արուն» կա այստեղ, և «էրած ջիգյար», և «արուն-արտասուք»-ից թաց «դոշ ու յախա», և

շաղախված-կապված ուշք ու միտք, և այն «դուգունը» (այսինքն չբացված վերքը), որ դեղ ու դարմանից ոչ թե փակվում, այլ բացվում է ավելի, քանի որ շարունակում է գործել «էն ղադա դար ու դարդ», որ «ջրի տարած», «տանեն դուս արած» ու «յարեն յիդ արած» բանաստեղծին ստիպում է խոսել ու դարձյալ խոսել՝ միշտ նույն «դար ու դարդ»-ից, բայց ամեն անգամ նոր ձևով, նոր հոմանիշով, նոր հնչերանգով, որից նրա պոեզիան դառնում է ինքնաշրջումների մի շարան և անդրադարձումների մի կրակե շղթա՝ մեկը մյուսից ինքնեկ ու առինքնող…»: (Սևակ, 157):

Այս ստեղծագործությունը յուրահատուկ է իր զգացմունքային խտությամբ, փոխաբերությների ու խորհրդանիշների բազմազանությամբ: Այն լավագույնս ներկայացնում է արևելյան բանաստեղծական մտածողությունը՝ միախառնելով կրոնական, առօրեական և գեղարվեստական տարրերը: Սայաթնովյան այս խաղը ոչ թե պարզապես խոսք է սիրո մասին, այլ անձնականից վերաճում է տիեզերական ողբերգության՝ փոխանցելով մի ամբողջ սերնդի հոգևոր ցավը, կարոտն ու տառապանքը: Հենց այս էլ դառնում է նրա զգացմունքների արհեստականության ուղղակի հերքումը:

Դուն էն հուրին իս

Լինելով իր ժամանակի աշուղական ավանդույթի կրող՝ Սայաթ-Նովան օգտագործում է արևելյան պոեզիային բնորոշ պատկերներ ու կերպարներ՝ հուրի, ջեյրան, վարդ ու բլբուլ: Սակայն նա այս ավանդական կերպարները լցնում է անհատական, ապրված բովանդակությամբ: «Դուն էն հուրին իս» խաղում սիրելին ոչ միայն երկնային գեղեցկուհի է, այլև «գէմի կու զաւթէ»՝ դառնալով ակտիվ, երբեմն նույնիսկ վտանգավոր ուժ: «Աշխարհը ծով, դու մեջը նավ» համեմատությունը («Պատկիրքըդ ղալամով քաշած») վերցված է ավանդույթից, սակայն Սայաթ-Նովայի տաղում այն ստանում է փրկության և միակ հույսի խորհրդանիշի իմաստ՝ արտահայտելով բանաստեղծի կախվածությունը սիրելիից: Սա ցույց է տալիս, թե ինչպես է անձնական ապրումը ոչ թե պարզապես տեղավորվում կանոնի մեջ, այլ վերաիմաստավորում այն:

Նմանատիպ մոտեցում կարելի է տեսնել նաև այս երգում, որտեղ արտաքին գեղեցկությունը դառնում է ներքին հոգևոր գեղեցկության արտացոլանք:

Դուն էն հուրին իս, վուր գէմի կու զաւթէ,
Չունքի ինձ զաւթեցիր խափով, նազա՛նի,
Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս
Չըկայ քիզի նըման չափով, նազա՛նի:

Շատ մարդ քու էշխէմէն կու դառնայ յիզիդ,
Արի մէ ռա՛հմ արա, լա՛ւ կացի միզիդ,
Գ՚ուզիմ, թէ համաշա դամ անիմ քիզիդ՝
Սանթուրով, քամանչով, դափով, նազա՛նի:

Դարդիդըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում.
Աչքէմէս արտասունք հուսիլ իմ ուզում.
Համաշա, եա~ր, քիզիդ խօսիլ իմ ուզում,
Սիրտըս չէ կըշտանում գափով, նազա՛նի

(Բախչինյան, 61):

Բանաստեղծության փիլիսոփայական շերտերում առանցքային է սիրո եռաստիճան ընկալումը:

- Առաջին մակարդակում սերը ներկայանում է որպես աշխարհիկ զգացմունք՝ արտահայտված «գէմի կու զաւթէ» տողով: Չմոռանանք, որ ակնարկվում է Հոմերոսի

«Ոդիսականում» Իթաքե վերադարձող նավը զավթած Կալիպսե դիցուհուն, որ Ոդիսևսին իր կախարդիչ խոսքով, երգով ու հմայքով գերել էր յոթ տարի:

● Երկրորդ մակարդակում այն վերածվում է հոգևոր փորձառության՝ «քու էշխէմէն» արտահայտությամբ:

● Երրորդ՝ բարձրագույն մակարդակում սերն արդեն դառնում է միստիկ միավորման ձգտում՝ «Գուզիմ թե համաշա դամ անիմ քիզիդ»:

Սուֆիական միստիցիզմի ազդեցությունն արտահայտվում է մի քանի հիմնական մոտիվներով: «Հուրի» կերպարը խորհրդանշում է աստվածային գեղեցկությունը, իսկ տառապանքի թեման («դարդիրըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում») ներկայացնում է հոգևոր կատարելագործման ուղին: Մահվան մոտիվը («ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին») դառնում է սիրո անձնվիրության և զոհաբերության բարձրագույն արտահայտություն:

Բանաստեղծության գեղարվեստական համակարգում կարևորվում են աշխարհագրական խորհրդանիշները («Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս»), որոնք ընդգծում են սիրո համընդգրկուն բնույթը: Երաժշտական գործիքների հիշատակումը («Սանթուրով, քամանչով, դափով») ստեղծում է սիրո բազմաձայն համանվագ:

XVIII դարի համապատկերում Սայաթ-Նովայի սիրո փիլիսոփայությունն առանձնանում է արևելյան և հայկական ավանդույթների յուրօրինակ համադրությամբ: Նա կարողանում է ներդաշնակելով միավորել աշխարհիկ և հոգևոր սերը՝ ստեղծելով սիրո համընդհանուր փիլիսոփայական հայեցակարգ:

Մեծ սիրերգակի խաղերից յուրաքանչյուրը պատկերավորման մի գունագեղ առանցք է պարունակում, ինչպես «Պատկիրքըդ՝ ղալամով քաշած» խաղում վարպետորեն հյուսել է գեղեցիկ կնոջ կերպարը՝ օգտագործելով պատկերավորման հարուստ միջոցներ, որոնց մեջ գերակշռում են արևելյան պոեզիային բնորոշ համեմատությունները:

Բանաստեղծությունը կառուցված է հինգ քառատող տներից. առաջին տան բոլոր տողերը, հաջորդ տների վերջին տողերն ավարտվում են «. . . իս անում» կրկնվող հանգաբառով: Հեղինակը կիրառում է բազմաթիվ գեղարվեստական հնարքներ՝ փոխաբերություններ, համեմատություններ և այլաբանություններ:

Առաջին քառատողում բանաստեղծը նկարագրում է սիրելիի արտաքին գեղեցկությունը՝ համեմատելով նրան վրձնանկարի («պատկիրքըդ՝ ղալամով քաշած, թահրըդ ռանգեռանգ իս անում») հետ: Երկրորդ տան մեջ կնոջ երեսը համեմատվում է նոր բոլորվող լուսնի հետ, իսկ նրա «առանց հյուսիլ» ոլորվող մազերը պատկերվում են որպես բնական գեղեցկության խորհրդանիշ:

Երրորդ և չորրորդ քառատողերում Սայաթ-Նովան անդրադառնում է կնոջ հմայքին՝ օգտագործելով երաժշտական գործիքների (սանթուր, քամանչա) և բնության գեղեցկությունները (վարդ, մանուշակ) խորհրդանշող պատկերներ:

● *Պատկերդ՝ վրձինով քաշած*- սիրելիի գեղեցկությունը համեմատվում է նկարչի վրձնով արված գեղանկարի հետ՝ ընդգծելով նրա արտաքինի կատարելությունը:

● *Բացվել ես կարմիր վարդի պես*- սիրելին համեմատվում է սոխակի հետ սիրաբանող (բլբուլի հիդ հանգ իս անում) նոր բացված վարդի հետ, որը խորհրդանշում է թարմություն, գեղեցկություն և կենսունակություն:

● *Երեսդ նոր լուսնի նման քանի կեհա կու բոլորվի*- դեմքի գեղեցկությունը համեմատվում է նորալուսնի հետ, որը արևելյան պոեզիայում գեղեցկության դասական խորհրդանիշ է:

● *Զրնգում ես ծնծղայի պես*- շարժումների նրբությունն ու կենդանությունը, կրած բազմաթիվ զարդերի զրնգունը համեմատվում են երաժշտական նվագարանների հնչյունների հետ (*Յիփ մտնում իս մեջլիսումն՝ շըխկշըկում իս ջիղջիղի պես// Ի՞նչ կոնիմ սանթուր, քամանչեն՝ զուգսըդ չոնգուր-չանգ իս անում*):

● *Նունուֆար, ծաղիկ ծովային*- սիրելին համեմատվում է ջրաշուշանի հետ, որը խորհրդանշում է մաքրություն և նրբություն:

Ամենախորը համեմատություններից մեկն է «Աշխարհը ծով, դու մեջը նավ»-ը, որտեղ սիրելին պատկերվում է որպես նավ՝ կյանքի ծովում, ինչը ցույց է տալիս նրա առանձնահատուկ լինելը:

Աշխարհը համեմատվում է անծայր ծովի հետ՝ ընդգծելով նրա անսահմանությունն ու անկանխատեսելիությունը: Սիրելին պատկերվում է որպես նավ, որը շարժվում է այդ ծովում՝ առանձնանալով և գրավելով շրջապատի ուշադրությունը:

Առավել խորը ըմբռնմամբ՝ ծովը խորհրդանշում է կյանքի դժվարությունները, փորձությունները, վտանգները, նավը դառնում է ապաստանի, հույսի և փրկության խորհրդանիշ, իսկ սիրելին դիտվում է որպես ուղեցույց, որը կարող է օգնել անցնել կյանքի փոթորիկների միջով:

Այս համեմատությունները ոչ միայն բացահայտում են սիրելիի արտաքին գեղեցկությունը, այլև նրա ներքին հմայքը և ազդեցությունը շրջապատի վրա, քանի որ վերջիններս միավորում են և՛ տեսողական պատկերը, և՛ փիլիսոփայական իմաստը, և՛ հուզական բովանդակությունը:

Ընդհանուր առմամբ, այս ստեղծագործությունը Սայաթ-Նովայի սիրային քնարերգության փայլուն նմուշներից է, որտեղ միահյուսված են արևելյան պոեզիայի ավանդույթները և հեղինակի անհատական պատկերավոր հզոր ոճը: Սակայն, այս ընդհանրացումով հանդերձ, կերպավորված է այն նախատիպ գեղեցկուհին, որ իրական անձնավորություն է իր անմատչելի բարեմասնություններով, որոնցով դարձել է սիրո մեծ երգչի վեհացնող տառապանքի և ոգեշնչման իրական աղբյուրը:

Եզրահանգումներ

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, Սայաթ-Նովայի սիրային քնարերգությունը չի կարող միանշանակ սահմանվել որպես «իրականություն» կամ «երևակայություն»: Այն շատ ավելի բարդ երևույթ է՝ ապրված իրականության գեղարվեստական կերպարանափոխում: Նրա պոեզիան սկիզբ է առնում կենսագրական խորը ապրումից, որի վկայությունն են անձնական ակնարկները, հուզական անկեղծությունը և տառապանքի իրապատում պատկերումը:

Սակայն այդ իրական զգացմունքը գեղարվեստական ձև է ստանում աշուղական արվեստի ավանդական կանոնների և պատկերային համակարգի միջոցով: Սայաթ-Նովան ոչ թե պարզապես պատճենում է իրականությունը, այլ այն վերածևում է պոեզիայի օրենքներով՝ անձնական ցավը վերածելով համամարդկային արժեքի և գեղագիտական փորձառության: Նրա ստեղծագործության հանճարը կայանում է հենց այդ սինթեզի մեջ. նա կարողանում է խոսել ամենաանձնականի մասին՝ այն դարձնելով համընդհանուր և անժամանակ:

1. Սայաթ-Նովայի սերն իրական, ապրված փորձառություն է, այլ ոչ թե զուտ գեղարվեստական երևակայության արդյունք: Սա հոդվածի գլխավոր եզրակացությունն է, որը հերքում է ակադեմիկոս Ս. Սարինյանի տեսակետը:

2. Ստեղծագործություններում առկա զգացմունքների խորությունը, տառապանքի վառ նկարագրությունն ու կենդանի մանրամասները վկայում են, որ դրանք չէին կարող հորինված լինել, ինչպես նշել են Հ. Թումանյանը և Պ. Սևակը:

3. Ստեղծագործություններում առկա են բազմաթիվ կենսագրական ակնարկներ, իսկ աշուղի՝ կյանքի վերջին շրջանում վանք գնալու որոշումը մեկնաբանվում է որպես իրական սիրո անհասանելիության և ողբերգականության հաստատում:

4. Սիրո երևակայական լինելու վարկածն անտեսում է աշուղական արվեստի բուն էությունը, որտեղ անձնական փորձառությունն ու ապրումները հիմնարար նշանակություն ունեն:

5. Հենց այս իրական, տառապալից և անհասանելի սերն է դարձել Սայաթ-Նովայի անմահ պոեզիայի հիմքը, կյանքի, արվեստի և նվիրումի մասին խորհրդածությունների շարժիչ ուժը: Սայաթ-Նովայի քնարերգության մեջ սերը ներկայացվում է որպես համապարփակ երևույթ՝ աշխարհիկ հիացմունքից մինչև հոգևոր զոհաբերություն և միստիկ միավորման ձգտում:

Այսպիսով՝ Սայաթ-Նովայի սիրո շուրջ բանավեճը լուծվում է ոչ թե կողմերից մեկի հաղթանակով, այլ երկուսի միասնությամբ: Սերն իրական էր իր ակունքներում, բայց այն մեզ է հասել գեղարվեստական հանճարի միջոցով վերափոխված և անմահացած: Նրա պոեզիան վկայությունն է այն բանի, որ արվեստի մեծագույն գործերը ծնվում են կյանքից և համալրվում գեղարվեստական երևակայությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղբալյան, Նիկոլ. *Սայաթ-Նովայի հետ:* Մատենաշար «Համազգային», Պեյրութ, 1966, 158 էջ:
2. Բախչինյան, Հենրիկ. *Խաղերի ժողովածու. Սայաթ-Նովա*: «Սովետական գրող» հրատ., Երևան, 1987, 284 էջ:
3. ---. *Սայաթ Նովայի կյանքը:* Երևան, 2021, 144 էջ:
4. ---. *Սայաթ-Նովա. բանաստեղծություններ:* Երևան, 2007, 95 էջ:
5. ---. *Սայաթ-Նովա. Կյանքը և գործը:* ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 2010, 99 էջ:
6. ---. *Սայաթ-Նովայի կենսագրության երկու հարցի շուրջ*: «Բանբեր Երևանի համալսարանի», № 2 (32), Երևան, 1977, էջ 162-175:
7. Զարգարյան, Վարդգես. *Բառ ու բանք Սայաթ-Նովայի:* «Նաիրի» հրատ., Թեհրան, 2009, 264 էջ:
8. Թումանյան, Հովհաննես. *Երկերի լիակատար ժողովածու:* ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. , № 1, Երևան, 1988, էջ 269:
9. ---. *Սայաթ-Նովա:* Երևան, 1945, էջ 45:
10. ---. *Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը:* «Հորիզոն» հրատ. , մայիսի 25, № 113, Երևան, 1973, էջ 52-68:
11. Հասրաթյան, Մորուս. *Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու:* Միչիգանի համալսարան, «Հայպետհրատ», Երևան, 2008, 316 էջ:
12. ---. *Սայաթ-Նովայի դավթարը:* ՀՍՍՌ ԳԱ հրատ. № 10, Երևան, 1963, էջ 3-32:
13. Ղազարյան, Սևակ. *Պարույր Սևակի «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» անավարտ աշխատությունը»:* «Բանբեր Երևանի համալսարանի», 136.1, Երևան, 2012, էջ 9-22:
14. Նալբանդյան, Գեորգի, *Սայաթ-Նովայի ծածկագիր տաղերի վերծանման շուրջը:* «Բանբեր Երևանի համալսարանի», № 2 (29), Երևան, 1976, էջ 158-166:
15. *Սայաթ-Նովա. «Խաղեր»:* ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 1987, 527 էջ:
16. *Սայաթ-Նովա. «Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն տաղերի ժողովածու»:* «Հայպետհրատ», Երևան, 1959, 317 էջ:
17. Սարինյան, Սերգեյ. *Պարույր Սևակի Սայաթ-Նովան*: Դպրատուն. Գիտական հոդվածների ժողովածու, 1, Երևան, 2014, էջ 12:
18. Սևակ, Պարույր. *Մենագրություն:* Երևան, 1987, էջ 115:
19. ---. *Սայաթ-Նովա:* «Սովետական գրող» հրատ., Երևան, 1987, 400 էջ:

20. Ստեփանյան, Իշխան. *Սայաթ-Նովայի սիրո առասպելը:* «Գրական թերթ» 2(2785), Երևան, 2003, էջ 4-12:

21. ---. *Սայաթ-Նովա. Հայերեն թուրքերեն խաղեր:* Հեղինակային հրատ., Երևան, 2006, 222 էջ:

22. Օհանյան, Ավետիք. *Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:* Ս. Էջմիածին, Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի հր. , հատոր Ի, № Թ-Ժ, Էջմիածին 1963, 82 էջ:

23. Dowsett, Charles J. F. Sayat-Nova: An 18th-century Troubadour, A Biographical and Literary Study. Peeters Publishers, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 561, Subsidia, vol. 91, Louvain, 1997, pp. 232-364, https://archive.org/stream/dowsett-1997-sayat-nova/Dowsett_1997_Sayat-Nova_djvu.txt Accessed: 30 July 2025.

WORKS CITED

1. Aghbalyan, Nikol. Sayat-Novayi het. Matenashar "Hamazgayin", Peyrut, [With Sayat-Nova, Beirut] 1966. (in Armenian)

2. Bakhchinyan, Henrik. Khagheri zhoghovatsu. Sayat-Nova. "Sovetakan grogh" hrat., Yerevan, [Collection of Songs. Sayat-Nova, Yerevan] 1987. (in Armenian)

3. ---. Sayat Novayi kyanqy. Yerevan, [The Life of Sayat-Nova. Yerevan] 2021. (in Armenian)

4. ---. Sayat-nova banasteghtsutyunner. Yerevan, [Sayat-Nova Poems. Yerevan] 2007. (In Armenian)

5. ---. Sayat-Nova. Kyanqy yev gortsy. HKhSH GA hrat., Yerevan, [Sayat-Nova. Life and Work, Yerevan] 2010. (in Armenian)

6. ---. “Sayat-Novayi kensagrutyan yerku hartsi shurj”. Banber Yerevani hamalsarani, № 2 (32), Yerevan, [On Two Questions of Sayat-Nova's Biography, Yerevan] 1977, pp. 162-175. (in Armenian)

7. Ghazaryan, Sevak. “Paruyr Sevaki "Sayat-Novan yev hay mijnadary" anavart ashkhautyuny”. Banber Yerevani hamalsarani, 136.1, Yerevan, [Paruyr Sevak's Unfinished Work "Sayat-Nova and the Armenian Middle Ages", Yerevan] 2012, pp. 9-22. (in Armenian)

8. Hasratyan, Morus. Hayeren, vratseren yev adrbejaneren khagheri zhoghovatsu. "Haypethrat", Yerevan, [Collection of Armenian, Georgian and Azerbaijani Songs, Yerevan] 2008. (in Armenian)

9. ---. “Sayat-Novayi davtary”. HSSR GA hrat., № 10, Yerevan, [The Notebook of Sayat-Nova. Publ, Yerevan] 1963, pp. 3-32. (in Armenian)

10. Nalbandyan, Georgi. “Sayat-Novayi tsatskagir tagheri vertsanman shurjy”. Banber Yerevani hamalsarani, № 2 (29), Yerevan, [On the Decipherment of Sayat-Nova's Coded Verses, Yerevan] 1976, pp. 158-166. (in Armenian)

11. Ohanyan, Avetik. “Sayat-Novayi tsynyndyan 250-amyaky”. S. Ejmiatsin, Hayrapetakan ator S. Ejmiatsni hr., vol. I, № T-Zh, Ejmiatsin, [The 250th Anniversary of Sayat-Nova's Birth, Ejmiatsin] 1963. (in Armenian)

12. Sarinyan, Sergey. “Paruyr Sevaki Sayat-Novan”. Dpratun. Gitakan hodvatsneri zhoghovatsu, 1, Yerevan, [Paruyr Sevak's Sayat-Nova, Yerevan] 2014, p. 12. (in Armenian)

13. Sayat-Nova. "Khagher". YePH hratarakchutyun, Yerevan, [Songs, Yerevan] 1987. (in Armenian)

14. ---. "Hayeren, vratseren yev adrbejaneren tagheri zhoghovatsu". "Haypethrat", Yerevan, [Collection of Armenian, Georgian, and Azerbaijani Verses, Yerevan] 1959. (in Armenian)

15. Sevak, Paruyr. Menagrutyun. Yerevan, [Monograph. Yerevan] 1987. (in Armenian)

16. ---. Sayat-Nova. "Sovetakan grogh" hrat., Yerevan, [Sayat-Nova, Yerevan] 1987. (in Armenian)
17. Stepanyan, Ishkhan. “Sayat-Novayi siro araspely”. "Grakan tert", 2(2785), Yerevan, [The Myth of Sayat-Nova's Love, Yerevan] 2003, pp. 4-12. (in Armenian)
18. ---. Sayat-Nova. Hayeren turkeren khagher. Heghinakayin hrat., Yerevan, [Sayat-Nova. Armenian-Turkish Songs, Yerevan] 2006. (in Armenian)
19. Tumanyan, Hovhannes. Yerk’eri liakat’ar zhoghovatsu. HH GAA "Gitutyun" hrat., № 1, Yerevan, [Complete Collection of Works. Yerevan] 1988. (in Armenian)
20. ---. Sayat-Nova. Yerevan, [Sayat-Nova. Yerevan] 1945. (in Armenian)
21. ---. “Sayat-Novayi yergeri bnavorutyuny. "Horizon" hrat., May 25, № 113, Yerevan, [The Character of Sayat-Nova's Songs, Yerevan] 1973, pp. 52-68. (in Armenian)
22. Zargaryan, Vardges. Barr u ban Sayat-Novayi. "Nairi" hrat., Tehran, [Word and Verse of Sayat-Nova, Tehran] 2009. (in Armenian)

SAYAT-NOVA'S LOVE LYRICS: FROM AN EXPERIENCED REALITY TO A FICTIONAL CHARACTER

ELICHKA MELIKBEKYAN
European College in Armenia Foundation, Lecturer;
National University of Architecture and Construction of Armenia, Lecturer;
Department of History and Theory of Armenian Literature named after Academician Hrant Tamrazyan, Ph. D. Student
Yerevan, the Republic of Armenia

The present study is devoted to the key problem of Sayat-Nova's love lyrics: the relationship between experienced reality and artistic imagination. There has long been a debate in Armenian literary criticism about the nature of the ashugh's love, which is often polarized around the dilemma of "real or fictional." However, such an approach oversimplifies the complex nature of troubadour art.

The purpose of the study is to examine the relationship between experienced reality and artistic imagination in Sayat-Nova's love lyrics, arguing that the poet's love is not a mere literary device but the result of the artistic fictionalization of real experience.

To achieve this goal, a comprehensive approach was applied, combining comparative, literary-philosophical, and structural analysis methods. The two main viewpoints are contrasted, and based on the arguments of H. Tumanyan, P. Sevak, and H. Bakhchinyan, an in-depth examination of Sayat-Nova's songs (games) is conducted.

As a result of applying these comprehensive methods, the following objectives were set and addressed:

- To analyze the two main viewpoints in Armenian literary criticism regarding the nature of Sayat-Nova's love: the "real" and the "fictional."
- To investigate the causes of the tragedy in his love, as well as the biographical and creative interrelations.
- To reveal the philosophical and psychological layers of Sayat-Nova's love through a thematic analysis of key songs.

The study concludes that Sayat-Nova's love is a real, lived experience, which is confirmed by the emotional sincerity of his songs, biographical references, and the depth of his feelings. His unattainable love became not only the basis of his immortal poetry but also the driving force behind his reflections on life, art, and devotion. Born from a real foundation, his poetry is reshaped and universalized through the conventions of troubadour art, transforming personal suffering into a universal human experience.

Thus, Sayat-Nova's unattainable love became not only the foundation of his immortal poetry but also the driving force behind his reflections on life, art, and devotion.

Keywords: *love, lyrics, game analysis, troubadour art, reality, imagination, emotions, state of mind, fictions*.

ЛЮБОВНАЯ ЛИРИКА САЯТ-НОВЫ: ОТ ПРОЖИТОЙРЕАЛЬНОСТИ К ВЫМЫШЛЕННОМУ ПЕРСОНАЖУ

ЭЛИЧКА МЕЛИКБЕКЯН
соискатель кафедры истории и теории армянской литературы имени академика Гранта Тамразяна,
преподаватель фонда Европейского колледжа в Армении,
преподаватель Национального аграрного университета Армении,
г. Ереван, Республика Армения

Настоящее исследование посвящено ключевой проблеме любовной лирики Саят-Новы: взаимосвязи между пережитой реальностью и художественным воображением. В армянском литературоведении уже давно ведутся споры о природе любви ашуга, которые часто поляризуются вокруг дилеммы «настоящая или вымышленная». Однако такой подход упрощает сложную сущность искусства ашугов.

Цель исследования – изучить взаимосвязь между прожитой реальностью и художественным воображением в любовной лирике Саят-Новы, подчеркивая, что поэтическое отражение любови является не просто литературным приемом, а результатом художественного преобразования реального опыта.

Для достижения этой цели был применен комплексный подход, сочетающий сравнительный, литературно-философский и структурный методы анализа. Противопоставляются две основные точки зрения и на основе доводов О. Туманяна, П. Севака и Г. Бахчиняна проводится углубленное изучение песен (игр) Саят-Новы.

В результате применения комплексных методов были поставлены и решены следующие задачи:

- проанализировать две основные точки зрения в армянском литературоведении о природе любви Саят-Новы: «реальная» и «вымышленная».
- рассмотреть причины трагической окраски его любви, а также биографические и творческие взаимосвязи.

• раскрыть философские и психологические стороны любви Саят-Новы через тематический анализ ключевых песен.

Исследование приводит к заключению о том, что любовь в изображении Саят-Новы – это реальный, пережитый опыт, что подтверждается эмоциональной искренностью песен, биографическими отсылками и глубиной чувств. Его недостижимая любовь стала не только основой бессмертной поэзии, но и движущей силой для размышлений о жизни, искусстве и преданности. Поэзия, рожденная на реальной основе, преобразуется и становится универсальной через каноны ашугского искусства, превращая личное страдание в общечеловеческое переживание.

Таким образом, недосягаемая любовь Саят-Новы стала не только основой его бессмертной поэзии, но и движущей силой размышлений о жизни, искусстве и преданности.

Ключевые слова: *любовь, лирика, анализ игр, искусство трубадуров, реальность, воображение, эмоции, душевное состояние, вымыслы*.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱՎԵՃԸ (1969–1971) ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ *

ՀՏԴ 82 DOI: 10.52063/25792652-2025.2.25-265

ԱՍՏՂԻԿ ՕՀԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
astghik.ohanyan28@gmail.com
ORCID:0000-0003-4202-6965

Հոդվածի քննության առարկան խորհրդահայ գրական միջավայրում 1969-1971 թթ. ծավալված երիտասարդական պոեզիայի շուրջ բանավեճի ծագումն է ու ընթացքը՝ այդ գործընթացում Հովհաննես Գրիգորյանի դերի շեշտադրումով: Հետազոտության նպատակը նշված բանավեճի վերլուծությունն է և այն խնդիրների լուսաբանումը, որոնք առաջացան պոեզիայի լեզվի, ձևի, բովանդակության, ավանդույթի և նորարարության շուրջ: Քննության են առնված ինչպես գրականագետների, այնպես էլ բանաստեղծների պատասխան արձագանքները՝ ներկայացնելով հակասական գնահատականները, որոնք ընդգծում էին թե՛ ազատ բանաստեղծության և կետադրության խնդիրը, թե՛ նոր սերնդի ինքնատիպության որոնումները: Ներկայացված են տարբեր մոտեցումներ՝ սկսած երիտասարդ գրողների քննադատությունից մինչև նրանց պաշտպանություն: Անդրադարձ է կատարվել նաև արտասահմանյան գրականությունից կրած ազդեցությունների գնահատմանը՝ որպես կամ հարստացնող, կամ ազգային ինքնատիպությանը սպառնացող գործոն:

Հոդվածում կիրառվել է գրականագիտական վերլուծության և պատմահամեմատական մոտեցման համադրություն՝ 1969-1971 թթ. երիտասարդական պոեզիայի շուրջ ծավալված բանավեճի նյութերի համադրական ուսումնասիրության միջոցով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդական պոեզիայի շուրջ բանավեճը կարևոր հիմք է ստեղծել ժամանակակից հայ գրականության ընթացքը հասկանալու, ստեղծագործական նոր ուղղությունների ձևավորման գործընթացը գնահատելու և ազգային ու համաշխարհային ազդեցությունների փոխներգործությունը բացահայտելու համար՝ ներկայացնելով դրանց դերը հետագա ժամանակաշրջանի հայ պոեզիայի զարգացման մեջ:

Հիմնաբառեր՝ *երիտասարդական պոեզիա, գրական բանավեճ, Հովհաննես Գրիգորյան, ձև և բովանդակություն, խորհրդահայ գրականություն, ավանդույթ և նորարարություն, արևմտյան ազդեցություն, ազատ բանաստեղծություն, գրական քննադատություն:*

* Հոդվածը ներկայացվել է 30.07.2025թ., գրախոսվել՝ 20.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Մուտքը

1960-ական թվականների վերջին, երբ Պարույր Սևակն արդեն հրատարակել էր «Անլռելի զանգակատուն» պոեմը և «Մարդը ափի մեջ» ժողովածուն, երբ թարգմանվում և գրական մամուլում տպագրվում էին համաշխարհային պոեզիայի լավագույն նմուշները, հայ գրականության մեջ ասպարեզ է գալիս պոետների նոր սերունդը՝ նոր ասելիքով և ասելիքի արտահայտման յուրօրինակ ձևով:

Նոր սերնդի ներկայացուցիչներից ոմանք արդեն հանդես էին եկել առանձին գրքերով, ինչպես օրինակ՝ Ռազմիկ Դավոյանը («Իմ աշխարհը» (1963 թ.), «Ստվերների միջով» (1967 թ.), «Ռեքվիեմ» (1969 թ.)), ոմանք էլ տպագրվում էին գրական մամուլում, մասնավորապես՝ «Գարուն» ամսագրում (Դավիթ Հովհաննես, Սլավիկ Չիլոյան, Հենրիկ Էդոյան, Հովհաննես Գրիգորյան): Ժամանակին ստեղծվող պոեզիան գրավեց ինչպես քննադատների, այնպես էլ գրողների և ընթերցողների լայն շերտերի ուշադրությունը, սակայն կարծիքները միանշանակ չէին: Սրա պատճառով ծավալվեց երիտասարդական պոեզիային նվիրված բանավեճ, որը պաշտոնապես տևեց գրեթե երեք տարի՝ 1969-1971 թթ., սակայն թեմայի շուրջ քննարկումները շարունակվեցին տասնամյակներ: Այսպես՝ 1969 թ. «Սովետական գրականություն» ամսագրի 7-րդ համարում լույս է տեսնում **Ալբերտ Կոստանյանի**՝ «Ինքնադրսևորման տառապանքը» խորագրով հոդվածը, որը, ըստ էության, բանավեճի հրավեր էր: Հոդվածում Ալբերտ Կոստանյանը, խոսելով իր ժամանակի երիտասարդական պոեզիայի մասին, այն համարում է խոստումնալից: Ավելին՝ հեղինակը թվարկում է այն գրողներին, որոնց անվան շուրջ են կառուցում երիտասարդական պոեզիայի մասին պատկերացումները, ապա վերլուծում է յուրաքանչյուրից մեկ բանաստեղծություն (Դավիթ Հովհաննես, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան, Սլավիկ Չիլոյան, Ջուլիետ Գրիգորյան, Յուրի Սահակյան): Հեղինակն առաջինը անդրադառնում է Հովհաննես Գրիգորյանին և վերլուծում նրա «Հրաժեշտի երգեր» բանաստեղծությունը:

Այս բանաստեղծության մասին Կոստանյանը գրում է. «Բանաստեղծի ապրումը գերիրական է՝ ոճով և գրելակերպով. աչքերը, որոնց ծունկի իջած աղոթում է բանաստեղծը, վերածվում են ոգիացած նշանի» (Կոստանյան 126): Անդրադառնալով արդեն «ոչ պաշտոնապես» ծավալվող բանավեճին՝ գրականագետը նշում է մի «մեղադրանք», որն առկա էր ժամանակի պոեզիայի շուրջ ծավալվող քննարկումների խոսույթում. «Նորերին կշտամբում են անհասկանալիության մեջ» (Կոստանյան 125): Այս դեպքում, ըստ գրականագետի, երկու տարբերակ կա. կա՛մ մեղադրանքն արդարացի է, ուրեմն՝ ցավալի է երևույթը, կա՛մ պարզապես տգիտության արդյունք է, ինչը նույնպես ցավալի է: Ամփոփելով՝ Ալբերտ Կոստանյանը գտնում է, որ, չնայած ինքնատիպության պակասին և այլ խնդիրներին, ժամանակակից մտածելակերպի երանգները վերոնշյալ հեղինակների ստեղծագործություններում հնարավորություն են տալիս խոսելու սերնդի ամբողջական հոգեբանության մասին:

Մինչ այս հոդվածը, իհարկե, ժամանակակից պոեզիային անդրադարձներ եղել էին հենց «Սովետական գրականություն» ամսագրում, սակայն Ալբերտ Կոստանյանի հոդվածը սկիզբ դրեց մեր ուսումնասիրության նյութ դարձած՝ ժամանակի երիտասարդական պոեզիայի մասին բանավեճին:

Ձևը և բովանդակությունը

1969 թ. Հայաստանի գրողների միության վարչության՝ պոեզիայի հարցերին նվիրված պլենումում Պարույր Սևակը հանդես է գալիս զեկուցումով, որը այս բանավեճի շրջանակում «Դժվարը իրենից հասուն լինելն է…» խորագրով տպագրվում է «Սովետական գրականություն» ամսագրի 1970 թ. N5-ում (հոդվածը հետագայում տեղ է գտնում նաև Սևակի երկերի վեցհատորյա ժողովածուի 5-րդ հատորում): Պարուր Սևակը, խոսելով ժամանակի պոեզիայի մասին, անդրադառնում է այն ստեղծող ավագ, միջին և կրտսեր սերունդներին: Եթե առաջին երկուսը, ըստ գրողի,

արդեն իրենց գործն արել են, հիմանական աշխատանքը և դրան ուղղված քննադատությունը կրտսեր սերնդի՝ երիտասարդների կողմն է: Քննելով ստեղծվող գրականությունը՝ Պարույր Սևակը խոսում է հետևյալ խնդիրների մասին.

- Հանգ, չափ և վանկ
- Լեզու
- Ինքնատիպություն

Խոսելով բանաստեղծների երիտասարդ սերնդի մասին՝ նա ներկայացնում է թերությունները. «Ոչ՛ հանգ ու վանկ, ո՛չ կշռույթ ու չափ, ո՛չ մարմին-օրգանիզմ»: Սա, ըստ հեղինակի, ձևի անկատարություն է, որը Պարույր Սևակը կապում է բովանդակության թերի լինելու, ավելի ստույգ՝ ասելիքի պակասի հետ: «Ասելիքի պակասից է ծագում այն, որ մեր երիտասարդական արձակը շատ է բանաստեղծական: Ասելիքի պակասից է բխում և այն, որ մեր երիտասարդական բանաստեղծությունը շատ է արձակունակ»,- գրում է Պարույր Սևակը (Սևակ, 1970, 163):

Կարող ենք ենթադրել՝ բովանդակությունն է ծնում ձևը: Նկատենք, որ ասելիքի բացակայությանը հետագայում անդրադրաձներ էլի են լինում, ինչպես օրինակ՝ Գևորգ Էմինի հոդվածը (Էմին 125-143):

Վերոնշյալ զեկուցման մեջ Պարույր Սևակը որպես ժամանակակից բանաստեղծության խնդիր մատնանշում է ոչ միայն հանգի (որը, ի դեպ, ըստ հեղինակի, պարտադիր չէ կիրառել, սակայն պարտադիր է որպես արհեստ տիրապետելու համար), այլ նաև կշռույթի և չափի բացակայությունը: Գրողը, բավական մեծ տեղ տալով վերոնշյալին, խոսում է նաև իր ժամանակի երիտասարդ սերնդի կողմից ստեղծվող բանաստեղծության լեզվի մասին, որը, ըստ նրա. «ծայրաստիճան աղքատ է, անհարդար, անփույթ և անխնամ» (Սևակ, 1970, 165): Սևակր խոսքն ավարտում է՝ անդրադառնալով ինքնատիպության խնդրին, ավելի ճիշտ՝ դրա բացակայությանը:

Պարույր Սևակը, ըստ էության, բավական կոշտ և կտրուկ որակումներով է խոսում իր ժամանակի գրականության մասին՝ առանց առանձնացնելու և անվանելու՝ դրանով իսկ համահարթեցնելով և մերժելով մի ամբողջ սերնդի ստեղծած գրականություն:

Ավանդույթ և ազդեցություններ

1960-70-ական թթ. խորհրդահայ միջավայրում տեղի ունեցող փոփոխություններն ու միտումները, դրանց շուրջ ծավալվող քննարկումները կարծես շարունակությունը լինեն 1910-20-ականներին Անգլիայում և Եվրոպայում գրական միջավայրի կրած խորը փոփոխությունների՝ մոդեռնիզմի վերելք, ավանդական արժեքների վերանայում, Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցություններ: Այդ պայմաններում Թոմաս Սթըրնս Էլիոթը «Ավանդույթը և անհատի տաղանդը» (Tradition and the Individual Talent) էսսեում փորձել է պաշտպանել այն միտքը, որ իսկական նորարարությունը հնարավոր է միայն ավանդույթի խորը ըմբռնման դեպքում. «…Իսկ նորությունը կրկնությունից ավելի լավ է: Ավանդույթը շատ ավելի լայն նշանակություն ունեցող մի բան է: Այն հնարավոր չէ ժառանգել, և եթե դու այն ուզում ես, ապա պետք է ձեռք բերես մեծ աշխատանքի շնորհիվ» (Eliot 43):

Մեր ուսումնասիրության նյութ դարձած բանավեճի շրջանակում նորարարությունը և ավանդույթից հեռանալը ուղիղ կապվում են արտասահմանյան պոեզիայի ազդեցության հետ. սա դառնում է կարևոր կետերից մեկը: Այս ազդեցության մասին կարծիքները շատ տարբեր են՝ սկսած որպես դրական և ողջունելի միտում ընդունելուց մինչև որպես կործանարար երևույթ ներկայացնելը: Մի կողմից ողջունվում են թարգմանությունները, մյուս կողմից կա բողոք թարգմանությունների որակի և քիչ քանակի վերաբերյալ, իսկ ընդհանրապես, թե՛ քննադատողները, թե՛ քննադատվողները և՛ որպես մեղադրանք, և՛ որպես

պաշտպանություն օգտագործում են արտասահմանյան պոեզիայի ներկայացուցիչների անունները:

Եթե Պարույր Սևակը երիտասարդական պոեզիայում մատնանշում էր ասելիքի բացակայությունից տուժող ձևը, ապա Գևորգ Էմինը նկատում էր կարծես թե հաջողված ձև, որն ասելիք չունի: «Սովետական գրականություն» ամսագրի 1970 թ. առաջին համարում տպագրած մի հոդվածում **Գևորգ Էմինը** անդրադառնում է հայ պոեզիային՝ այն համարելով խորհրդային մեծ պոեզիայի ամենից ուժեղ և ինքնատիպ երևույթներից մեկը: Ապա, ծավալուն անդրադարձ կատարելով «պոեզիայի քաղաքական ոգուն», նա անցնում է երիտասարդական պոեզիային:

Գևորգ Էմինն անդրադառնում է համաշխարհային գրականության ազդեցությանը, այն՝ որպես միտում, համարում գովելի և դրական: Երիտասարդ սերնդի առավելությունը, ըստ Գևորգ Էմինի, այն է, որ «զինված է» ոչ միայն հայ դասական և խորհրդային գրականության, այլ նաև համաշխարհային ժամանակակից գրականության փորձով. «Այդ սերունդը համարյա զերծ է ազգային սահմանափակությունից» (Էմին 129): Նոր սերնդի պոեզիայում Գևորգ Էմինը նկատում է ինչպես թարմություն և նորարարություն, այնպես էլ հնի ու նորի սինթեզ:

Սակայն այս նորությունը, ըստ Գևորգ Էմինի, միայն ձևի մեջ է. «Գրականություն մտնելով բավականին հետաքրքիր «ինչպես»-ով, այդ սերունդը չի բերում իր հետ իր շեշտված և որոշակի «ինչ»-ը՝ նոր թեմա, նոր ասելիք, կենսական նյութի նոր, դեռևս չպեղված պաշարներ (Էմին 130):

Գևորգ Էմինը ասելիքի պակասի հետ է կապում նաև այդ սերնդի, իր խոսքով ասած, մեծամտությունը և չմահավատությունը, ինչպես նաև յուրաքանչյուր գրողի ստեղծագործության՝ միայն իրեն հասկանալի լինելը, այսինքն՝ ընդհանրապես հասկանալի չլինելը:

Դասական գրականության դիրքերից է հանդես գալիս **Սևակ Արզումանյանը**: 1971 թ. «Գրական թերթի» 5-րդ համարում հրատարակված «Հայրենական ավանդները և երիտասարդական պոեզիան» հոդվածում անդրադառնալով մամուլում երիտասարդական պոեզիային վերագրվող նորամուծություններին՝ նա հավելում է, որ երիտասարդ գրողները, ընդօրինակելով Ուիթմենին, Ապոլիներին, Էլյուարին և Լորկային, չեն ուզում տեսնել նրանց ստեղծագործության ժողովրդական-ազգային տարրերը :

Բանավեճը շարունակում է **Վաչե Սաֆարյանը** (Սաֆարյան, 157-163), որը մի կողմից հակադրվում է Գևորգ Հատիտյանին,[1] մյուս կողմից՝ սուր քննադատության է ենթարկում երիտասարդ պոետներին: Քննադատության ամենասուր կողմը կարծես

[1] 1970 թ. «Սովետական գրականություն» ամսագրի 3-րդ համարում հրատարակվում է **Գևորգ Հատիտյանի՝** «Նորագույն բանաստեղծության ձգտումների մասին» խորագրով հոդվածը, որը դառնում է բազմաթիվ քննադատությունների առարկա: Այն մի կողմից Ալբերտ Կոստանյանի հոդվածի քննադատությունն է, մյուս կողմից՝ ժամանակակից պոեզիայի արմատական ժխտումը՝ դրանում (պոեզիայում) և ոչ մի հուսադրող գիծ չտեսնելը: Գևորգ Հատիտյանը նախ մեղադրում է Ալբերտ Կոստանյանին՝ երիտասարդների մոդայիկ գրվածքները որպես «ստեղծագործություն» ներկայացնելու համար, ապա, պաշտպանելով քննադատության սրերը մշտապես դեպի երիտասարդական պոեզիան ուղղող գրականագետներին, հայտարարում, որ իսկական բանաստեղծները կկարողանային ճեղքել դիմադրության պատը (բերում է շահեկան օրինակներ դասական գրականությունից). այս «չճեղքվող» դիմադրությունը ևս գրականագետը ներկայացնում է որպես իսկական բանաստեղծության բացակայություն:

Գևորգ Հատիտյանը հայտարարում է. «Այս ամենի մեջ բանաստեղծությունը չքացել, անհետացել է իսպառ» (Հատիտյան,1970 թ., 126): Այս «անհետացող» բանաստեղծությանը հետագայում անդրադարձավ Հովհաննես Գրիգորյանը: Գևորգ Հատիտյանը, մեջբերելով Հովհաննես Գրիգորյանի «Հրաժեշտի երգեր» բանաստեղծությունը, այն բնութագրում է այսպես. «Անհույզ, անկենդան տողերի շարակարգություն, որ ոչնչով չի տարբերվում առօրյա խոսակցության անգույն ու տափակ ձևերից» (նույն տեղում):

Հատիտյանի կտրուկ բնորոշումներին պատասխանում են շատերը, այդ թվում նաև՝ Հենրիկ Գալստյանը: Վերջինս մի կողմից հակադրվում է Գևորգ Հատիտյանին, մյուս կողմից՝ երիտասարդական պոեզիան ներկայացնում «դեֆորմացած կառույց» բնորոշմամբ (Գալստյան,133):

թե նորից ուղղված է Հովհաննես Գրիգորյանի կողմը: Խոսելով մասնավորապես երկու բանաստեղծությունների և դրանով ընդհանրապես ստեղծագործության մասին՝ Վաչե Սաֆարյանը գրողին քննադատում է, այսպես կոչված, «ֆոտոգրաֆիկական իրապաշտության» համար (նկատենք, որ ֆոտոռեալիզմը արվեստում, հատկապես՝ գեղանկարչության մեջ տարածում է գտնում հենց 1960-ականներին) և ստեղծագործություններին վերագրում «լավագույն դեպքում թարգմանության կամ օտար լեզվով գրվածի» տպավորություն (Սաֆարյան, 162): Նա Հովհաննես Գրիգորյանի գործերում նկատում է նրա թարգմանած ստեղծագործությունների բացահայտ նույնություն և ազդեցություն: Ըստ էության, Վաչե Սաֆարյանը նույնպես անդրադառնում է արտասահմանյան գրականության ազդեցությանը՝ այն համարելով ինքնատիպությանը վնասող միտում:

Բանավեճը տեղափոխվում է նաև «Գրական թերթ», որի 35-րդ և 36-րդ համարներում հրապարակվում է **Ստեփան Կուրտիկյանի** «Խստապահանջություն, առավել հոգատարություն» հոդվածը, որը թերթի խմբագրության կողմից բանավեճին մասնակցելու է հրավիրում գրականագետներին, գրողներին և ընթերցողներին: Ստեփան Կուրտիկյանը, ի թիվս այլ հեղինակների, անդրադառնում է նաև Հովհաննես Գրիգորյանի պոեզիային՝ այն անվանելով ոչ գեղարվեստական՝ էժանագին հեգնանքով (Կուրտիկյան, 2):

Ստեփան Կուրտիկյանին պատասխանում է **Ալեքսանդր Թոփչյանը՝** թեմային ավելի թարմ և առարկայական անդրադարձ կատարելով: Թոփչյանը, անդրադառնալով երիտասարդական պոեզիայի հանդեպ մեծ ուշադրության ուրախալի փաստին, նկատում է մի հանգամանք. այդ բանավեճն այնքան երկար է շարունակվել, որ հրապարակ են եկել նոր անուններ, որոնց, սակայն, քննադատները չեն անդրադառնում: Ալեքսանդր Թոփչյանը, ի թիվս այլոց, անդրադառնում է նաև Պարույր Սևակի հոդվածին՝ նկատելով, որ Պարույր Սևակը, որ շատ բան է արել գրական մթնոլորտը թարմացնելու համար, այժմ հանդես է գալիս ակադեմիական դիրքերից և մեղադրում է երիտասարդներին: Երիտասարդական պոեզիան անմիջապես զուգորդվում էր Հովհաննես Գրիգորյանի անվան հետ, և ինչպես նախորդ քննադատները, Ալեքսանդր Թոփչյանը նույնպես չէր կարող խոսել ժամանակի պոեզիայի մասին՝ առանց խոսելու Հովհաննես Գրիգորյանի մասին: Քննադատն անդրադառնում է Ստեփան Կուրտիկյանի վերոնշյալ հոդվածին և Հովհաննես Գրիգորյանի «Հրաժեշտի երգեր» բանաստեղծության նրա քննադատությանը: Ինչպես արդեն նշվել է, Ստեփան Կուրտիկյանը մեղադրում էր Հովհաննես Գրիգորյանին՝ պոեզիայի մեջ «էժանագին հեգնանք» բերելու համար: Ալեքսանդր Թոփչյանը նկատում է. «Բայց երգիծանքից և գրոտեսկից լիրիկան չի կորչում: Վիճաբանության նյութ դարձած բանաստեղծությունն իսկական լիրիկայի օրինակ է» (Թոփչյան,108):

Երիտասարդ բանաստեղծների պաշտպանի դիրքերից հանդես է գալիս և Ստեփան Կուտիկյանի հետ բանավիճում է **Արմեն Մարտիրոսյանը:** Նա մեջբերում է Հովհաննես Գրիգորյանի «Սա իմ փողոցն է» սկզբնատողով բանաստեղծությունը, ապա խոսում ժամանակի երիտասարդական պոեզիայի մասին. «Պոեզիան աստիճանաբար ձեռք է բերում ավելի շատ իմացական հատկանիշ: Այդպիսի պոեզիան, սակայն, չի բացառում զգացմունքի գոյությունը: Այդ պոեզիայի ամենից աչքի ընկնող հատկանիշը զգացմունքների խտացումն է, համակենտրոնացումը մտքի անմիջական հսկողության տակ» (Մարտիրոսյան, 2):

Երիտասարդական պոեզիային նվիրված բանավեճն ավելի առարկայական դարձնելու համար «Գրական թերթի» 1970 թ. 41-րդ համարում հրատարակվում են Հովհաննես Գրիգորյանի, Դավիթ Հովհաննեսի, Հենրիկ Էդոյանի, Արտեմ Հարությունյանի, Արմեն Մարտիրոսյանի և այլոց բանաստեղծությունները:

Բանավեճի նյութ էր դարձել ոչ միայն նոր բանաստեղծության ձևը՝ ազատ բանաստեղծությունը և դրա բովանդակությունը, այլ նաև լեզուն, որով ստեղծվում է այդ բանաստեղծությունը: Քննադատների վրդովմունքի հիմնական առարկան

կետադրության բացակայությունը և ոչ գրական, մինչ այդ ստեղծված պոեզիային ոչ բնորոշ բարձր ոճի բառապաշարի կիրառումն էր:

Հովհաննես Գրիգորյանի անդրադարձը

1970 թ. «Գրական թերթ» շաբաթերթի 45-րդ համարում լույս տեսավ **Հովհաննես Գրիգորյանի** հոդվածը, որ վերնագրված էր «Թե ինչպես «անհետացավ» բանաստեղծությունը»[1]: Հովհաննես Գրիգորյանն այս հոդվածով ոչ թե պաշտպանում է իր կամ սերնդակիցների պոեզիան և մեթոդները կամ քննադատում իրենց դեմ դուրս եկած գրականագետներին, այլ քննում է արմատները՝ փորձելով գտնել «ինչպես և ինչու է փոխվել բանաստեղծությունը» հարցի պատասխանը: Նա անդրադառնում է մի քանի խնդիրների.

- ազգայինը և ոչ ազգայինը
- ազատ բանաստեղծությունը
- կետադրությունը
- բովանդակությունը:

Ինչպես արդեն նշվել է, բանավեճի շրջանակում ամենահաճախ հնչող մեղադրանքը ազգային գրականությունից հեռանալը, արտասահմանյան գրականության միտումներին հետևելն ու արմատները մոռանալն էր: Հենց սկզբում անդրադառնալով այդ հարցին՝ Հովհաննես Գրիգորյանը նշում է, որ բանաստեղծությունն ինքնին ազգային երևույթ չէ, ուրեմն՝ ո՞րն է ազգային բանաստեղծությունը: Գրողը վկայակոչում է Եղիշե Չարենցին և Վահան Տերյանին, որոնք գրում էին գազելի ժանրով, որը, ինչպես գիտենք, բոլորովին էլ հայկական չէ:

Հաջորդ կարևոր հարցը, որի շուրջ ի սկզբանե ծավալվեց բանավեճը, ազատ բանաստեղծությունն է: Հանգից հրաժարվելով, ըստ շատ քննադատների, երիտասարդները հրաժարվում էին պոեզիայի կարևոր հատկանիշներից մեկից՝ դրանով բանաստեղծությունը դարձնելով առանց ռիթմի և չափի մի ստեղծագործություն, որը նույնիսկ գեղարվեստական կոչել չի կարելի: Սակայն սա ժամանակի պահանջն էր (չմոռանանք Գրիգոր Նարեկացուն և Սիամանթոյին): Ինչպես նշում է Հովհաննես Գրիգորյանը, արդեն անհնարին է հանգավորված խոսելը. «Այս դեպքում յուրաքանչյուր բառ անփոխարինելի է արժեքի տեսանկյունից, իսկ քանի որ հանգավորելու դեպքում վտանգ կա հանուն կոկիկ հանգի գնալ բազմաթիվ բառափոխությունների, ուրեմն այժմ ավելի ճիշտ կլինի ընտրել սպիտակ բանաստեղծության կառուցման ձերը» (Գրիգորյան, 1970 թ., 6-7):

Այս նույն հարցից է բխում հաջորդ երևույթը, որը քիչ թե շատ տարածում ուներ ժամանակի պոեզիայում (այսօր՝ ավելի շատ) և անընդունելի էր գրականագետներից շատերի համար՝ կետադրությանը: Հովհաննես Գրիգորյանը նախ վկայակոչում է ծագումով լեհ ֆրանսիացի բանաստեղծ Գիյոմ Ապոլիներին, որը դեռևս 20-րդ դարի սկզբին էր հրաժարվել կետադրական նշաններից: Նկատենք, որ Ապոլիների անունը բավական հաճախ էր շրջանառվում մեր քննության առարկա դարձած բանավեճի ընթացքում՝ որպես գրողի, որին, ըստ քննադատների, կուրորեն հետևելով՝ արմատներից հեռանում են երիտասարդ պոետները: Ուրեմն ի՞նչն է ստիպում բանաստեղծներին հրաժարվել կետադրական նշաններից կամ, որ ավելի ճիշտ է, ինչո՞ւ այլևս չկա կետադրական նշանների կարիք: Ազատ բանաստեղծության դեպքում, երբ « շփոթեցնող տողատակի ասելիքներ» այլևս չկան, կետադրությունը, ըստ Հովհաննես Գրիգորյանի, դառնում է ավելորդ: Հեղինակը նշում է նաև չկետադրելու նպատակը՝ ռիթմի և բովանդակության համաձուլվածք ստանալը: Նկատենք, որ Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունների մի մասն է միայն չկետադրված, հետևաբար դրա լինել-չլինելը նպատակաուղղված է: Բացի այդ, կարող ենք հանդիպել չկետադրված որոշ բանաստեղծությունների, որոնք երկրորդ

[1] Հոդվածը հետագայում զետեղվել է Հովհաննես Գրիգորյանի «Բաց դռների օր Մհերի քարայրում» գրքում

հրատարակության մեջ արդեն կետադրված են, և հակառակը. սրա շնորհիվ տեղի է ունենում ասելիքի և հատկապես՝ վերաբերմունքի, շեշտադրության փոփոխություն: Հովհաննես Գրիգորյանը խոսում է նաև այն երևույթի մասին, որ երբեմն ոչ ձևի և բովանդակության պահանջով, այլ տուրք տալով նոր երևույթներին՝ որոշ բանաստեղծներ իրենց հնաոճ բանաստեղծությունները չեն կետադրում (Վ. Գարակյոզյան, Ալ. Գրիգորյան):

Եվ վերջապես ամենակարևորը՝ բովանդակությունը: Խոսքը պոեզիայի առօրեականացման կամ, ինչպես Հովհաննես Գրիգորյանն է ասում, նոր սերնդի՝ Պեգասից իջնելու և ոտքով ման գալու մասին է: Այս դեպքում հեղինակն առաջնորդվում է «ամեն ինչ կարող է լինել պոեզիա» սկզբունքով, ուրեմն պոեզիան դառնում է ավելի մարդկային և մարդամոտ:

Լեզուն

«Գրական թերթի» 1970 թ. 50-րդ համարում լույս է տեսնում **Սերգեյ Աթաբեկյանի** «Չապրված զգացումների հորձանուտում» հոդվածը, որում հեղինակն անդրադառնում է ինչպես երիտասարդ գրողների՝ նախկինում «Գրական թերթում» հրապարակված բանաստեղծություններին, այնպես էլ Հովհաննես Գրիգորյանի հոդվածին: Աթաբեկյանը մեջբերում է Հովհաննես Գրիգորյանի «Պատերազմ և խաղաղություն» շարքից մի բանաստեղծություն: Քննադատը նախ փորձում է վերլուծել բանաստեղծությունը՝ դրանում որևէ իմաստ չգտնելով, ապա, չհասնելով արդյունքի, անցնում է լեզվաբանությանը՝ հայտարարելով. «Դեռ մի կողմ թողնենք երիցս հալածական հանգը: Հապա ուղղագրությո՞ւնը, հապա արտառոց շարադրա՞նքը» (Աթաբեկյան, 3):

Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի լեզվի խնդրին անդրադառնում է նաև **Սևակ Արզումանյանը**: 1971 թ. «Գրական թերթի» 5-րդ համարում լույս է տեսնում նրա «Հայրենական ավանդները և երիտասարդական պոեզիան» խորագրով հոդվածը, որը, ըստ էության, նորից երիտասարդական պոեզիայի դեմ գրված հերթական հոդվածն է: Հեղինակը, ի թիվս այլ՝ արդեն բազմիցս հնչած մեղադրանքների, մեղադրում է Հովհաննես Գրիգորյանին՝ կետադրությունից հրաժարվելու և միայն գծիկը «ընդունելու» մեջ (Արզումանյան, 2):

1971 թ. «Սովետական գրականություն» ամսագրի 1-ին համարում լույս է տեսնում **Հենրիկ Էդոյանի** «Բառի որոնումը» խորագրով հոդվածը: Հենրիկ Էդոյանը, որի դեմ էր նաև ուղղված բանավեճի մասնակիցներից շատերի քննատատությունը, անդրադառնում է իր սերնդակից պոետներից մի քանիսին՝ Հովհաննես Գրիգորյանին, Արտեմ Հարությունյանին, Արմեն Մարտիրոսյանին, Արտաշես Ավագյանին: Մեջբերելով Հովհաննես Գրիգորյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունից մի հատված՝ Էդոյանը վերլուծում է նրա ստեղծագործության առանձնահատկությունները՝ նույնպես անդրադառնալով հեգնանքին, որն ինքը համարում է շահեկան առանձնահատկություն. «Նրա տեքստերում թաքնված է մի ենթատեքստ: Հեղինակը, կարծես, միշտ ուզում է հասկացնել, թե ինքը գիտե նաև հակառակը» (Էդոյան, 134): Այսպիսով, ըստ Հենրիկ Էդոյանի, հեգնանքը թարմություն է հաղորդում Հովհաննես Գրիգորյանի պոեզիային:

Ամփոփում և եզրահանգումներ

Բանավեճն ամփոփվեց 1971 թ.: «Սովետական գրականություն» ամսագիրը հրավիրեց հատուկ խորհրդակցություն՝ նվիրված բանաստեղծական նոր սերնդին, ինչից հետո ելույթները և խմբագրությանը տրամադրած գրավոր տեքստերը տպագրվեցին ամսագրի 2-րդ համարում: 17 հոդվածում, որոնց հիմնական մասի հեղինակները միջին սերնդի ներկայացուցիչներ էին, ովքեր բանավեճում հանդես էին եկել իրենց խոսքով. հիմնականում վերլուծվում են հետևյալ խնդիրները՝ ժամանակի թելադրանքը որպես նոր բանաստեղծության պահանջ, գեղեցիկի և

«բանաստեղծականի» անտեսումը և անկարևորի բանաստեղծականացումը, ազգայինը բանաստեղծության մեջ և օտար ազդեցությունները, վերջինիցս բխող պոեզիայի թարգմանության խնդիրները, ինքնատիպությունը և դրա բացակայությունը, հանգի և ռիթմի տեղն ու դերը, կետադրությունն ու լեզուն: Քննադատության առարկա են դառնում ոչ միայն երիտասարդ բանաստեղծները, այլ նաև նրանց մասին գրվող հոդվածները, նոր բանաստեղծության մասին ստեղծվող տեսությունները:

ՀՀ օրենսդրությամբ բուժաշխատողների մասնագիտական պարտակա-նությունների հիմնական շրջանակը սահմանում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը (անշուշտ ոլորտային մի շարք այլ օրենքներ, որպիսիք են «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին», «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» և այլն, ունեն առանձնահատուկ կարգավորումներ, սակայն համընդհանուր կարգավորումների համատեքստում նպատակահարմար է անդրադառնալ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքին), որի 31-րդ հոդվածում ամփոփված են օրենքում բուժաշխատողների համար ամրագրված պարտականությունների ողջ շրջանակը՝ ներառյալ պատասխանատվության համար հիմք հանդիսացող առանցքային նորմը, ըստ որի, բուժաշխատողներն օրենքով նախատեսված դեպքերում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Համաձայն այդ նորմի, քրեական և քաղաքացիական օրենսգրքերը սահմանում են պատասխանատվություն օրենքով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և դրանցից բխող առողջությանը պատճառված վնասների համար: Սակայն «բուժաշխատողի օրենքով սահմանված պարտականությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում» հասկացությունն ունի իրավական որոշակիության և դրան առնչվող օրենսդրական բացերի խնդիրներ, որոնք գործնականում բարդացնում են բուժաշխատողի մասնագիտական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստի որոշումը:

Առաջնահերթորեն՝ սահմանված չեն, թե հատկապես, որոնք են մասնագիտական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման շրջանակը (խորհրդատվություն, ախտորոշում, բուժում, բժշկական սարքերի, սարքավորումների կիրառում, դեղերի նշանակում, էթիկայի կանոնները): Սա չափազանց կարևոր է այն դեպքերում, երբ բժշկական օգնության և սպասարկման գործընթացում ներգրավված են տարբեր մասնագիտացման բուժաշխատողներ և անհրաժեշտ է որոշել կոնկրետ բուժաշխատողի մեղքը (օրինակ՝ բժիշկ-ռադիոլոգի կողմից համակարգչային տոմոգրաֆիայի արդյունքում տրված սխալ եզրակացության հիման վրա կատարված վիրահատությամբ պատճառված վնաս (լեղապարկի հեռացում), որը չէր հասցվի, եթե վիրահատությունը չկատարվեր):

Երկրորդը՝ մասնագիտական պարտականությունների հիմնական մասը սահմանող իրավական ակտերի բացակայությունը: Այսպես՝ բուժաշխատողների մասնագիտական գործունեության հիմքում նրանց մասնագիտական բնութագրերն են, որոնք, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի համաձայն, առողջապահության բնագավառի բժշկական և ոչ բժշկական, ինչպես նաև նեղ մասնագիտություններից յուրաքանչյուրի ընդհանուր նկարագիրը, մասնագետի տեսական և գործնական գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների, ինչպես նաև մասնագիտական իրավունքների, պարտականությունների և գործառույթների ծավալը սահմանող փաստաթղթեր են և պետք է սահմանվեն ՀՀ առողջապահության նախարարի կողմից: Մեր դիտարկումներով, նման բնութագրեր որևէ նորմատիվ

իրավական ակտով դեռևս հաստատված չեն, նույնը վերաբերում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով նախատեսված պացիենտի վարման գործելակարգերին (հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությանը, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ), որոնք, հանդիսանալով բժշկական օգնության և սպասարկման համար կարևորագույն ակտեր, ըստ ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքի, դեռևս շատ սահմանափակ թվով են ընդունված և չեն կարող ներկա փուլում ապահովել համապարփակ կարգավորում բոլոր նոզոլոգիաների (հիվանդությունների) գծով:

Քննության ենթակա հաջորդ հարցը ոչ նյութական պատասխանատվության համար առողջությանը պատճառված վնասի պարտադիրության կամ ոչ պարտադիրության հարցի որոշումն է: Այս հարցի քննարկումը կարևոր է, քանի «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 31-րդ հոդվածում ամրագրված են բուժաշխատողի մասնագիտական պարտականություններ, որոնք որպես այդպիսին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը չի հանգեցնում առողջության վնասի, սակայն հոգեկան տառապանքների կարող է ենթարկել: Օրինակ՝ բուժաշխատողի կողմից բժշկական գաղտնիքի հրապարակումը կամ անհարգալից վերաբերմունքը, ընդ որում՝ բժշկական գաղտնիքի պահպանումը և հարգալից վերաբերմունքը որպես պարտականություններ ամրագրված են բուժաշխատողի պարտականությունները սահմանող հոդվածում: Հատկապես հանրային առումով խոցելիություն ունեցող հիվանդությունների դեպքում (ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ) այս հարցը կարող է շատ արդիական լինել:

Մյուս կարևոր հարցը բուժաշխատողների աշխատանքային ռիսկերից ապահովագրված լինելու խնդիրն է, որը կարևոր գործիք է տուժած անձանց հատուցումը երաշխավորող պատշաճ գործիքակազմի ապահովման տեսանկյունից: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բուժաշխատողները իրավունք ունեն ապահովագրելու իրենց գործունեության հետ կապված քաղաքացիական պատասխանատվության ռիսկը: Նման ապահովագրության հնարավորությունն ապահովված է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով (ֆինանսական վնասների ապահովագրություն, որոնք առաջանում են աշխատանքային ռիսկերից): Բուժաշխատողների՝ այդ ապահովագրության տեսակից օգտվելու վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների բացակայությունը թույլ է տալիս պնդել, որ այն տարածված չէ բուժաշխատողների շրջանում, ուստի՝ որպես իրավունք ամրագրված լինելու պարագայում այն չի դարձել արդյունավետ գործիք մասնագիտական գործունեության արդյունքում պատճառված վնասների հատուցման համար:

Եզրահանգումներ

ՀՀ-ում բուժաշխատողի մասնագիտական գործունեության արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համապատասխան կառուցակարգեր սահմանելու նպատակով առաջարկվում է՝

1. Բժշկական սխալի հետևանքով առողջությանը ոչ նյութական վնասների հատուցման համակարգ ներդնելու, ինչպես պատճառված նյութական վնասի հատուցման համակարգը բարելավելու նպատակով՝

1) առողջապահության ոլորտի օրենսդրության մեջ սահմանել բուժաշխատողի մասնագիտական պարտականությունների շրջանակը, որոնց չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ոչ նյութական վնասի հատուցման հիմք կարող է հանդիսանալ.

2) ՀՀ-ում փուլային կարգով ներդնել ավագ և միջին բուժաշխատողների մասնագիտական գործունեության ռիսկի պարտադիր ապահովագրության համակարգ՝ սկզբնական փուլում ներառելով առավել ռիսկային մասնագիտացումները (վիրաբույժներ, ռեանիմատոլոգներ, անեսթեզիոլոգներ, շտապ օգնության բժիշկներ և այլն): Առաջարկությունը պայմանավորված է բուժաշխատողների համար կանխատեսելի մասնագիտական միջավայր ստեղծելու և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արձանագրած՝ «պաշտպանիչ բժշկությունը» (defensive medicine) կանխարգելելու նկատառումներով, բայց առավելապես տուժողների համար վնասների հատուցման առավել արդյունավետ կառուցակարգերի, իսկ բուժաշխատողների համար վնասի հատուցմամբ պայմանավորված ծախսերի արդյունքում նյութապես անապահով վիճակում չհայտնվելու երաշխիքների ստեղծմամբ.

3) ընդունել բուժաշխատողների մասնագիտական բնութագրերը՝ բոլոր մասնագիտությունների, նեղ և լրացուցիչ մասնագիտությունների գծով.

4) ընդունել պացիենտի վարման գործելակարգերը՝ ՀՀ-ում առավել տարածված նոզոլոգիաների (հիվանդությունների) գծով.

1. քաղաքացիական օրենսդրության մեջ՝

1) սահմանել բուժաշխատողի մասնագիտական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցմանն ուղղված հատուկ իրավակարգավորումներ, ընդ որում՝ ոչ նյութական վնասը պատճառելու դեպքում որպես արտապայմանագրային պատասխանատվության պարտադիր պայմաններ դիտարկել վնաս պատճառած անձի ոչ օրինաչափ վարքագծի (գործողությունը կամ անգործությունը՝ ներառյալ պացիենտին պատշաճ իրազեկում չիրականացնելու հետևանքով հասցված վնասը), վնասի, վնասի և ոչ օրինաչափ գործողության միջև ուղղակի պատճառահետևանքային կապի, մեղքի միաժամանակյա առկայությունը:

2) Արտապայմանագրային պատասխանատվության նշված պայմանների շարքում հատուկ ուշադրություն դարձնել վնաս պատճառած անձի՝ ըստ մեղքի պատասխանատվություն նախատեսելուն՝ բացառելով առանց մեղքի պատասխանատվություն նախատեսելու հնարավորությունը: Նշվածը պայմանավորված է նրանով, որ բժշկության ոլորտը բնութագրվում է բարդությամբ, անկանխատեսելիությամբ, հաճախ՝ մասնագիտական ինտուիտիվ որոշումներ կայացնելու անհրաժեշտությամբ, ինչը պայմանավորված է ինչպես անձի ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, այնպես էլ՝ կոնկրետ բժշկական միջամտությունների ժամանակ առկա օբյեկտիվ տարբերություններով: Այս համատեքստում բուժաշխատողի պատշաճ մասնագիտական գործունեությունը հաճախ պահանջում է ոչ միայն տեսական բավարար գիտելիքների տիրապետում, այլև իրավիճակին անհապաղ արձագանքելու ունակություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ արտապայմանագրային պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի վնաս պատճառած անձի մեղավոր վարքագիծը: Բացի այդ, առանց մեղքի պատասխանատվության ներդրումը քննարկվող հարցի համատեքստում կարող է հանգեցնել մի շարք բացասական հետևանքների ինչպես առողջապահական համակարգի, այնպես էլ՝ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Մասնավորապես՝ իրավական նման մոտեցումը կարող է բուժաշխատողներին դարձնել պացիենտների կողմից ներկայացվող հայցերի «թիրախ»:

Սա կարող է խաթարել բուժաշխատողների մասնագիտական նախաձեռնողականությունը, ազդել բժշկական օգնության և սպասարկման որակի վրա, և հանգեցնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արձանագրած՝ այսպես կոչված «պաշտպանիչ բժշկության» (defensive medicine) տարածմանը: Այդ պայմաններում բուժաշխատողները հակված կլինեն խուսափել

բժշկական տեսանկյունից հիմնավորված, սակայն իրավական ռիսկեր պարունակող որոշումներ կայացնելուց՝ հանուն սեփական պաշտպանվածության: Այդպիսի գործելակերպը կարող է վնաս հասցնել ինչպես անհատ պացիենտներին, այնպես էլ՝ գլոբալ հանրային առողջության շահերին.

3) ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմ նախատեսելիս առաջարկում ենք օրենսդրորեն նախատեսել դրույթ այն մասին, որ արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով վնասի հատուցում հնարավոր է պահանջել՝ անկախ վնաս պատճառողի և տուժողի՝ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից, եթե պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված չլինի պայմանագրով: Նշված մոտեցումը պատճառված ոչ նյութական վնասների հատուցման հարցում առանցքային նշանակություն ունի հատկապես տուժողի իրավունքների արդյունավետ պաշտպանության ու վնասների ամբողջական հատուցման ապահովման տեսանկյունից

4) ոչ նյութական վնասի հատուցման պատասխանատու սուբյեկտ առաջարկում ենք դիտարկել բուժաշխատողին՝ ըստ այդմ բացառելով բուժհաստատության դեմ ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավական հնարավորությունը: Նշված մոտեցումը, մեր կարծիքով, մի կողմից բարձրացնելու է բուժաշխատողների պատասխանատվության մակարդակը, ապահովելու է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի արդյունավետ կիրառումը, կանխելու է նաև վնասի հատուցման ինստիտուտի անհիմն «կոլեկտիվացումը»: Նշված մոտեցումը միաժամանակ ուղղված է նաև առողջապահական ոլորտում ֆինանսական կայունության պահպանմանը, մասնավորապես՝ այն կկանխի բուժհաստատությունների նկատմամբ այնպիսի իրավական և տնտեսական ճնշումների կիրառումը, որոնք կարող են խիստ բացասական ազդեցություն ունենալ բժշկական հաստատությունների գործունեության վրա:

Բացի այդ, հաշվի առնելով ոլորտում գործող մասնավոր բժշկական հաստատությունների միջև առկա մրցակցային հարաբերությունները, չի կարելի անտեսել այն ռիսկը, որ մի շարք դեպքերում մրցակից բուժհաստատությունները կարող են նպատակաուղղված խրախուսել կամ ուղղորդել պացիենտներին՝ ոչ նյութական վնասի հատուցման հայցեր ներկայացնելու կոնկրետ բուժհաստատությունների դեմ՝ այդ կերպ հետապնդելով նշված բժշկական հաստատություններին ֆինանսական վնաս հասցնելու կամ վերջիններիս գործարար համբավը արատավորելու նպատակ:

5) Առաջարկում ենք նախատեսել ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն սահման, որով կառաջնորդվեն դատարանները համանման գործերը քննելիս: Որպես առավելագույն սահմանաչափ առաջարկում ենք դիտարկել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Նշված սահմանաչափը ունի նաև համադրելիություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ոչ նյութական վնասի սահմանաչափերի հետ (տես օրինակ՝ անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման պարագայում 1087.2 հոդվածի 7-րդ մասով սահմանված սահմանաչափը): Հատկապես ոչ նյութական վնասների պարագայում, երբ փոխհատուցման չափի որոշումը հաճախ գտնվում է դատարանի հայեցողության դաշտում, օրենսդրորեն վերին շեմի սահմանումը կարող է նպաստել ինչպես իրավական կայունության ապահովմանը և օրենքի միատեսակ կիրառման երաշխավորմանը, այնպես էլ հետագայում ապահովագրական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար ապահովագրական հատուցումների չափի կանխատեսելիության ապահովմանը.

6) Առաջարկում ենք բժշկական սխալի համար ոչ նյութական վնասի կոնկրետ չափը որոշի դատարանը՝ որպես հիմք ընդունելով անձի ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը, տևողությունը, պատճառված վնասի

հետևանքները, դրա ազդեցությունը տուժողի առօրյա կյանքի և կենսագործունեության վրա, վնաս պատճառելիս մեղքի դրսևորման ձևը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական և ֆիզիոլոգիական հատկանիշները և այլ վերաբերելի հանգամանքները: Օրինակ՝ այլ վերաբերելի հանգամանքների շարքում կարելի է առանձնացնել բուժաշխատողի վարքագիծը մասնագիտական պարտականությունների չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից հետո, այն հանգամանքը, թե արդյո՞ք վերջինս փորձել է մեղմել պացիենտի ֆիզիկական կամ հոգեկան ցավի հետևանքները: Նշված հանգամանքները հաշվի առնելու պահանջը օրենսդրության շրջանակում նախատեսելը կարող է ապահովել հատուցման չափի որոշման գործընթացի անհատականացվածությունը, արդարացիությունը և տուժողի իրական՝ կրած ֆիզիկական և հոգեկան տառապանքին համաչափ վնասի տրամադրումը:

7) Առաջարկում ենք անձին վնաս պատճառելու դեպքում վերջինիս մահվան կամ վնաս կրած անձի անչափահաս լինելու կամ անգործունակության դեպքում դատական կարգով ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունք վերապահել անձի ամուսնուն, ծնողին, որդեգրողին, որդեգրվածին, երեխային կամ խնամակալին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեքմեզյան, Գրիգոր. *ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ոչ նյութական վնասի հատուցման մի շարք հարցերի շուրջ*. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015:
2. Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Որոշում «Ֆիորենցան ընդդեմ Իտալիայի» գործով*, գանգատ թիվ 44393/9. 28 Նոյեմբերի 2000:
3. Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Որոշում «Պաստորինոն և այլք ընդդեմ Իտալիայի» գործով*, գանգատ թիվ 17640/02. 11 Հուլիսի 2006:
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Վճիռ «Բոթոյանն ընդդեմ Հայաստանի» գործով,* գանգատ թիվ 5766/17. 08 Փետրվարի 2022:
5. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Վճիռ «Վասիլևա ընդդեմ Բուլղարիայի» գործով*, գանգատ թիվ 23796/10. 17 Մարտի 2016:
6. ՀՀ Սահմանադրական դատարան. *Որոշում ՍԴՈ-1121*. 05 Նոյեմբերի 2013. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86683: Մուտք՝ 26.05.2025:
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն. *Arlis*, 06 Դեկտեմբեր 2015, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723: Մուտք՝ 26.05.2025:
8. ՀՀ Ազգային ժողով. *«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք*. 04 Մարտի 1996. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=200927: Մուտք՝ 26.05.2025:
9. ՀՀ Ազգային ժողով. *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք*. 05 Մայիսի 1998. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206627: Մուտք՝ 26.05.2025:
10. ՀՀ Ազգային ժողով. *«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք*. 25 Մայիսի 2004. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=198724: Մուտք՝ 26.05.2025:
11. ՀՀ Ազգային ժողով. *«Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք*. 16 Ապրիլի 2002. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192467: Մուտք՝ 26.05.2025:
12. Эрделевский, Александр. *Компенсация морального вреда*. Москва, 2014.

WORKS CITED

1. Beqmezyan, Grigor. HH qaghaqaciakan o'rensdrut'yamb och nyut'akan vnasi hatucman mi sharq harceri shurj. EPH iravagitut'yan fakulteti profesoradasaxosakan kazmi gitakan nyut'eri jhoghovac'u, Erevan, EPH hrat. [On Certain Issues of Compensation for Non-Pecuniary Damage under the Civil Code of the Republic of Armenia. Collection of Scientific Papers of the Faculty of Law of Yerevan State University, Yerevan, YSU Publishing House], 2015: (in Armenian)

2. Mardu iravunqneri evropakan dataran. Oroshum «Fiorencan y'nddem Italiayi» gorc'ov, gangat t'iv 44393/9 [Judgment in the case of Fiorenzano v. Italy, Application No. 44393/9]. 28 Noyemberi 2000: (in Armenian)

3. Mardu iravunqneri evropakan dataran. Oroshum «Pastorinon ev aylq y'nddem Italiayi» gorc'ov, gangat t'iv 17640/02 [Judgment in the case of Pastorino and Others v. Italy, Application No. 17640/02]. 11 Hulisi 2006: (in Armenian)

4. Mardu iravunqneri evropakan dataran. Vtwir' «Bot'oyann y'nddem Hayastani» gorc'ov, gangat t'iv 5766/17. 08 P'etrvari [Judgment in the case of Botoian v. Armenia, Application No. 5766/17], 2022: (in Armenian)

5. Mardu iravunqneri evropakan dataran, Vtwir' «Vasileva y'nddem Bulghariayi» gorc'ov, gangat t'iv 23796/10 [Judgment in the case of Vasileva v. Bulgaria, Application No. 23796/10]. 17 Marti 2016: (in Armenian)

6. HH Sahmanadrakan dataran. Oroshum SDO-1121 [Constitutional Court of the Republic of Armenia. Decision SDO-1121]. 05 Noyemberi 2013. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86683: Accessed: 26.05.2025: (in Armenian)

7. Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yun. Arlis [Constitution of the Republic of Armenia. Arlis], 06 Dektember 2015, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723: Accessed: 26.05.2025:(in Armenian)

8. HH Azgayin jhoghov. «Bnakchut'yan bjhshkakan o'gnut'yan ev spasarkman masin» HH o'renq [National Assembly of the Republic of Armenia. Law of the Republic of Armenia on Medical Care and Services for the Population], 04 Marti 1996. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=200927: Accessed: 26.05.2025: (in Armenian)

9. HH Azgayin jhoghov. Hayastani Hanrapetut'yan qaghaqaciakan o'rensgirq [National Assembly of the Republic of Armenia. Civil Code of the Republic of Armenia]. 05 Mayisi 1998. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206627: Accessed: 26.05.2025: (I in Armenian)

10. HH Azgayin jhoghov. «Hogebujhakan o'gnut'yan ev spasarkman masin» HH o'renq [National Assembly of the Republic of Armenia. Law of the Republic of Armenia on Psychiatric Care and Services]. 25 Mayisi 2004. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=198724: Accessed: 26.05.2025: (in Armenian)

11. HH Azgayin jhoghov. «Mardun o'rganner ev (kam) hyusvac'qner p'oxpatvastelu masin» HH o'renq [National Assembly of the Republic of Armenia. Law of the Republic of Armenia on Transplantation of Human Organs and/or Tissues]. 16 Aprili 2002. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192467: Accessed: 26.05.2025: (in Armenian)

12. Jerdelevskij, Aleksandr. Kompensacija moral'nogo vreda. Moskva [Compensation for Moral Damage. Moscow], 2014. (in Russian)

COMPENSATION OF NON-PECUNIARY DAMAGE IN THE CONTEXT OF MEDICAL MALPRACTICE

SHUSHANIK GHUKASYAN
Yerevan State University,
Department of Civil Law, Lecturere
Ph.D. in Law, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

IZABEL ABGARYAN
Commission on Violations of Medical Ethics, Chair,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to study and analyze the issue of compensation of non-pecuniary damage caused by medical malpractice, the prospects for implementing mechanisms for such compensation in the Republic of Armenia, the potential risks involved, and ways to overcome them.

To achieve this aim, the article examines legal regulations related to non-pecuniary damage compensation and analyzes the judgment of the European Court of Human Rights in the case of Botoian v. Armenia (Application No. 5766/17), which also emphasized the need to introduce mechanisms for compensating non-pecuniary damage resulting from medical malpractice. The research employs the methods of analysis, synthesis, induction, and deduction.

The main conclusion of the study is that, in the event of establishing a mechanism for compensating non-pecuniary damage caused by medical malpractice, it is necessary to introduce, in a phased manner, a mandatory professional liability insurance system for healthcare professionals in the Republic of Armenia. It is also essential to define the scope of professional duties of healthcare providers, the failure to fulfill or the improper fulfillment of which may serve as grounds for compensating non-pecuniary damage.

Furthermore, the study substantiates that at least in the initial phase, when developing a mechanism for compensating non-pecuniary damage due to medical malpractice, liability should be based on the principle of fault.

The obligation to compensate for such damage should rest not with the medical institution but with the individual healthcare professional. It is also necessary to establish an upper monetary limit for non-pecuniary compensation, along with the key criteria for determining this limit.

Keywords: *medical malpractice, non-pecuniary damage, moral suffering, mental distress, physical suffering, tort liability, compensation for damage, tortfeasor, victim.*

КОМПЕНСАЦИЯ МОРАЛЬНОГО ВРЕДА В КОНТЕКСТЕ МЕДИЦИНСКОЙ ОШИБКИ

ШУШАНИК ГУКАСЯН
преподаватель кафедры гражданского права
Ереванского государственного университета,
кандидат юридических наук, доцент
г. Ереван, Республика Армения

ИЗАБЕЛ АБГАРЯН
председатель Комиссии по рассмотрению нарушений
профессиональной этики медицинских работников,
г. Ереван, Республика Армения

Цель статьи - изучение и анализ проблемы компенсации морального вреда, причиненного в результате медицинской ошибки, перспектив внедрения механизмов такой компенсации в Республике Армения, возможных рисков и путей их преодоления.

Для достижения данной цели в статье рассматриваются правовые нормы, регулирующие компенсацию морального вреда, а также анализируется решение Европейского суда по правам человека по делу «Ботоян против Армении» (жалоба № 5766/17), в котором также подчеркивается необходимость внедрения механизмов компенсации морального вреда, вызванного медицинской ошибкой.

В исследовании применяются методы анализа, синтеза, индукции и дедукции.

Основной вывод исследования заключается в том, что при разработке механизма компенсации морального вреда, причиненного медицинской ошибкой, необходимо поэтапно внедрить в Республике Армения систему обязательного страхования профессиональной ответственности медицинских работников. Также важно четко определить объем профессиональных обязанностей медицинских работников, неисполнение или ненадлежащее исполнение которых может служить основанием для компенсации морального вреда.

Кроме того, обосновано, что на начальном этапе разработка механизма компенсации морального вреда вследствие медицинской ошибки должна основываться на принципе вины. Обязанность по возмещению такого вреда должна возлагаться не на медицинское учреждение, а на конкретного медицинского работника. Также необходимо установить верхний предел денежной компенсации за моральный вред, а также ключевые критерии для определения этого предела.

Ключевые слова: *медицинская ошибка, моральный вред, моральные страдания, психическое расстройство, физические страдания, внедоговорная ответственность, возмещение вреда, причинитель вреда, потерпевший.*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ (ԱՐՑԱԽԻՑ) ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ *

ՀՏԴ 341.1/.8 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-82*

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս, Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sergey.ghazinyan@ysu.am
ORCID: 0000-0003-2796-1322

2023 թ. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) բնակչության բռնի տեղահանությունը և նրանց իրավական կարգավիճակի վերաբերյալ խնդիրները առաջացրել են նրանց վերադարձի և սեփականության իրավունքների պահպանմանը վերաբերող մի շարք իրավական հարցեր:

Սույն հոդվածը նպատակ ունի վերլուծելու՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) բնակչության՝ վերը նշված իրավունքների բովանդակությունը և իրավական կարգավիճակով պայմանավորված՝ դրանց սահմանափակումների հնարավորությանն առնչվող հարցեր:

Որպես խնդիր դիտարկվում են թե՛ վերադարձի իրավունքի կիրառելիությունը հակամարտությունից հետո, թե՛ սեփականության իրավունքի ճանաչումը միջազգային և տարածաշրջանային իրավական հարթակներում:

Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի և այլ համեմատելի իրավիճակների վերլուծությունը փաստում է, որ նշված իրավունքները չեն կարող սահմանափակվել իրավական կարգավիճակի հիմքով:

Վերադարձի և սեփականության իրավունքները ճանաչվում են որպես շարունակական իրավունքներ, որոնք ենթակա են պաշտպանության՝ անկախ իրավական կարգավիճակից: Հոդվածում հանգամանալից ներկայացված են նաև պետությունների պարտավորությունները և միջազգային մշտադիտարկման մեխանիզմների դերը դրանց երաշխավորման գործում:

Բացի իրավական փաստաթղթերի՝ բովանդակային և համեմատական վերլուծությունից, հոդվածում կիրառվել է նաև իրավական մոտեցումների՝ համադրված և դատական նախադեպերի՝ գործնական կիրառման գնահատում: Հետազոտությունը ներառում է նաև համատեքստային վերլուծություն՝ հակամարտությունից հետո ձևավորված իրավիճակային գործոններն արձանագրելու նպատակով:

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2025թ., գրախոսվել՝ 22.07.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Հիմնաբառեր՝ *Լեռնային Ղարաբաղ, բռնի տեղահանում, քաղաքացիություն, վերադարձի իրավունք, սեփականության իրավունք, ՄԻԵԴ, միջազգային իրավունք, փախստական, պաշտպանության միջոցներ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունները վկայում են, որ Լեռնային Ղարաբաղում (Արցախ) մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների և ռազմական հանցագործությունների համար չկրելով ոչ մի պատասխանատվություն՝ Ադրբեջանը 2023 թ. սեպտեմբերի 19-ին շարունակել է իր ցեղասպանական քաղաքականությունը՝ հասնելով Արցախի ամբողջական հայաթափմանը: Այդ ամենի հետևանքով 120.000 էթնիկ հայեր տեղահանվում են Հայաստան (Ավետիք Հարությունյան, Սոնա Հայրապետյան. Արցախի Հանրապետության շրջափակումը, հայաթափումը և միջազգային իրավունքը):

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելուն առնչվող մտահոգությունների շարքում է եղել այն հարցը, թե ինչպես կարող է քաղաքացիություն ձեռք բերելը ազդել Լեռնային Ղարաբաղ վերադարձի իրավունքի և սեփականության իրավունքի վրա: Հետևաբար՝ սույն իրավական վերլուծության շրջանակում այս խնդիրը դիտարկելով որպես Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակի վրա ազդեցություն ունեցող հանգամանք՝ անհրաժեշտ է դարձել դրա շուրջ ուսումնասիրություն իրականացնել:

Վերլուծությունը ներառում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, մարդու իրավունքների միջազգային կարգավորումների, միջազգային մարդասիրական իրավունքի, գործնականում այլ հետկոնֆլիկտային տարածաշրջաններում նմանատիպ դեպքերի համեմատական վերլուծություն՝ բացահայտելու բռնի տեղահանված բնակչության իրավունքների երաշխավորման փորձը: Այն նպատակ ունի ներկայացնելու միջազգային իրավունքի վերաբերելի կառուցակարգերի վերլուծության վրա հիմնված իրավական եզրակացություն՝ աջակցելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակի շուրջ վերը նշված խնդիրների լուծմանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերադարձի իրավունքը միջազգային իրավունքում հաստատված սկզբունք է, որը հաճախ կիրառվում է տեղահանված բնակչության, այդ թվում՝ փախստականների և այլ խմբերի համատեքստում, որոնք ստիպված են եղել լքել իրենց տները հակամարտությունների, հետապնդումների կամ այլ մարտահրավերների պատճառով: Վերադարձի իրավունքը հստակորեն արձանագրվում է առանցքային միջազգային իրավական փաստաթղթերում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկիր՝ ներառյալ իր երկիրը, լքելու, և իր երկիր վերադառնալու իրավունք (Մարդու իրավունքների համընդհանուր հրչակագիր, Հոդված 13): Այս սկզբունքը հետագայում վերահաստատվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (այսուհետ՝ ՔՔԻՄԴ), որտեղ սահմանվում է, որ ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր երկիր մուտք գործելու իրավունքից (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Հոդված 12):

Ինչպես բոլոր իրավունքների, այնպես էլ՝ վերադարձի իրավունքի արդյունավետ իրացման երաշխավորը պետք է հանդիսանա ներպետական իշխանությունը: Միակ

ճանապարհը, որով երկրները կարող են շեղվել այս պարտականությունից, ՔՔԻՄԴ-ով սահմանված ծայրահեղ հանգամանքներն են, օրինակ՝ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրությունը, որը պետք է պաշտոնապես հայտարարվի: Այդուամենայնիվ, նույնիսկ այս իրավիճակներում պետությունները պետք է ապահովեն, որ իրենց գործողությունները չխախտեն միջազգային իրավունքով նախատեսված իրենց մյուս պարտավորությունները և չառաջացնեն խտրականություն ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիման վրա:

Մարդու իրավունքների կոմիտեն ներկայացրել է ընդհանուր մեկնաբանություն ՔՔԻՄԴ վերաբերելի դրույթի՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ: Մասնավորապես, այն արձանագրում է, որ անձի՝ սեփական երկիր մուտք գործելու իրավունքը ճանաչում է տվյալ երկրի հետ անձի հատուկ հարաբերությունները: Դա ենթադրում է սեփական երկրում մնալու իրավունք: Այն ներառում է ոչ միայն սեփական երկիրը լքելուց հետո վերադառնալու իրավունքը, այլ նաև անձին առաջին անգամ իր երկիր գալու իրավունք տալը, եթե նա ծնվել է երկրից դուրս: Վերադարձի իրավունքը ենթադրում է այլ երկրներ բնակչության բռնի տեղահանության կամ զանգվածային արտաքսման արգելք:

Ըստ Մարդու իրավունքների կոմիտեի մեկնաբանության՝ ՔՔԻՄԴ 12-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումը չի տարբերում քաղաքացիներին և օտարերկրացիներին («ոչ ոք»): Այսպիսով՝ այս իրավունքից օգտվելու հնարավորություն ունեցող անձինք կարող են նույնացվել միայն «իր սեփական երկիրը» արտահայտության իմաստը մեկնաբանելով: «Իր սեփական երկրի» շրջանակն ավելի լայն է, քան «իր ազգության երկիր» հասկացությունը: Այն չի սահմանափակվում ֆորմալ առումով քաղաքացիությամբ, այսինքն՝ ծննդյան պահին կամ շնորհման արդյունքում ձեռք բերված քաղաքացիությամբ: Այն ընդգրկում է առնվազն այն անհատներին, որոնք տվյալ երկրի հետ իրենց հատուկ կապերի կամ պահանջների պատճառով չեն կարող համարվել «պարզապես օտարերկրացիներ»:

Ավելին՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասը թույլ է տալիս ավելի լայն մեկնաբանություն, որը կարող է ներառել երկարաժամկետ բնակիչների այլ կատեգորիաներ՝ չսահմանափակվելով քաղաքացիություն չունեցող անձանցով, որոնք կամայականորեն զրկված են նման բնակության երկրի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքից: Քանի որ այլ գործոնները որոշակի հանգամանքներում կարող են հանգեցնել անձի և երկրի միջև սերտ և երկարատև կապերի հաստատմանը. մասնակից պետություններն իրենց զեկույցներում պետք է ներառեն տեղեկատվություն մշտական բնակիչների՝ իրենց բնակության երկիր վերադառնալու իրավունքների մասին:

Ոչ մի դեպքում չի կարելի անձին կամայականորեն զրկել սեփական երկիր մուտք գործելու իրավունքից: Այս համատեքստում կամայականության հայեցակարգին հղումը նպատակ ունի ընդգծելու, որ այն վերաբերում է պետության բոլոր գործողություններին՝ օրենսդրական, վարչական և դատական բնույթի: Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ քիչ են, եթե այդպիսիք կան, այնպիսի հանգամանքները, որոնց դեպքում սեփական երկիր մուտք գործելու իրավունքից զրկելը կարող է ողջամիտ լինել: Մասնակից պետությունը չպետք է անձին քաղաքացիությունից զրկելով կամ անձին երրորդ երկիր վտարելով կամայականորեն արգելի այդ անձին վերադառնալ իր երկիր (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 27 ընդհանուր մեկնաբանությունները, պարբերություններ 19-21):

Ուստի՝ ՔՔԻՄԴ-ի համաձայն՝ վերադարձի իրավունքը կախված չէ անձի իրավական կարգավիճակից: Յուրաքանչյուր անհատ, որ պահպանել է «իսկական և արդյունավետ կապեր» խնդրո առարկա տարածքների հետ, պետք է օգտվի վերադարձի իրավունքից՝ անկախ նրանից՝ նա փախստակա՞ն է, այսինքն՝ հալածանքներից փախա՞ծ, թե՞ այլ իրավական կարգավիճակ ունեցող անձ:

Հատկանշական է, որ իրավունք ունեն ոչ միայն նրանք, ովքեր ի սկզբանե լքել են տարածքը, այլ նաև նրանց ժառանգները, քանի դեռ նրանք համապատասխան կապեր են պահպանել այդ տարածքի հետ: Իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ տարածքի նկատմամբ ինքնիշխանությունը վիճարկվում է կամ փոխվել է (Վերադարձի իրավունքի վերաբերյալ «Human Rights Watch»-ի դիտարկումներ):

Ամփոփելով նշենք, որ Մարդու իրավունքների կոմիտեի՝ քննարկվող ընդհանուր մեկնաբանությունը և մասնավորապես՝ «սեփական երկրի» ընդգրկուն մեկնաբանությունը միտված է պաշտպանելու բոլոր նրանց վերադարձի իրավունքը, ովքեր «հատուկ կապեր» ունեն որևէ երկրի հետ: Այդ անձինք նրանք են, ովքեր չեն կարող համարվել «պարզապես օտարերկրացիներ»: Մարդու իրավունքների կոմիտեն նշել է, որ տարածքը «սեփական երկիր» է համարվում այն դեպքում, երբ «անհատը, որը տվյալ երկրի հետ իր հատուկ կապերի կամ հավակնությունների պատճառով չի կարող պարզապես օտարերկրացի համարվել», և այդ տարածքի հետ ունի «իսկական և արդյունավետ կապեր»:

«Իսկական և արդյունավետ կապը» «սեփական երկրի» հետ կարող է կազմված լինել տարբեր տարրերից՝ ներառյալ լեզուն, երկարաժամկետ բնակությունը, մշակութային ինքնությունը, ընտանեկան կապերը և այլն: Այն չի կարող սահմանափակվել միայն մշտական բնակության վայրով: «Սեփական երկիրը» ենթադրում է կապերի ավելի լայն շրջանակներ, որոնք միասին կազմում են «իսկական և արդյունավետ կապ»: Այն թույլ է տալիս իրենց երկրից դուրս գտնվողներին առաջին անգամ վերադառնալ, նույնիսկ եթե նրանք ծնվել են այլ վայրում և առաջին անգամ են մտնելու այդ երկիր, քանի որ նրանք պահպանել են «իսկական և արդյունավետ կապ» երկրի հետ:

Վերադարձի իրավունքն արձանագրվում է նաև **Աշխատանքի միջազգային կազմակերպության Բնիկ և ցեղային ժողովուրդների թիվ 169** կոնվենցիայով: Այն արձանագրում է, որ հնարավորության դեպքում այդ ժողովուրդները պետք է իրավունք ունենան վերադառնալու իրենց ավանդական հողերը այն պահին, երբ տեղահանության հիմքերը դադարեն գոյություն ունենալ (Աշխատանքի միջազգային կազմակերպության Բնիկ և ցեղային ժողովուրդների թիվ 169 կոնվենցիա, Հոդված 16):

Միավորված ազգերի կազմակերպության **Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագրի** համաձայն՝ բնիկ ժողովուրդները չպետք է բռնի հեռացվեն իրենց հողերից կամ տարածքներից: Ոչ մի վերաբնակեցում չպետք է տեղի ունենա առանց համապատասխան բնիկ ժողովուրդների ազատ, նախնական և տեղեկացված համաձայնության և արդար փոխհատուցման վերաբերյալ համաձայնությունից հետո և, հնարավորության դեպքում, վերադարձի տարբերակով (Միավորված ազգերի կազմակերպության բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիր, Հոդված 10):

Ի լրումն մարդու իրավունքների վկայակոչված հիմնարար փաստաթղթերի՝ վերադարձի իրավունքը պաշտպանվում է միջազգային մարդասիրական իրավունքով: Ժնևի չորրորդ կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունները վերաբերում են զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական անձանց նկատմամբ վերաբերմունքին: Այն ընդգծում է տեղահանված անձանց իրավունքները հարգելու և ռազմական գործողությունների դադարեցման դեպքում նրանց վերադարձը հեշտացնելու անհրաժեշտությունը (Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիա, Հոդված 45):

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում վերադարձի իրավունքի իրականացումը մեծապես տատանվում է՝ կախված համատեքստից: Որոշ հայտնի դեպքեր ցույց են տալիս և՛ հաջողությունները, և՛ մարտահրավերները այս իրավունքի իրացման հարցում: Մասնավորապես՝ պաղեստինցի փախստականների վերադարձի իրավունքը իսրայելա-պաղեստինյան

հակամարտության կենտրոնական խնդիրն է: **Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1948-ի 194 (III)** բանաձևը հստակորեն նշում է, որ փախստականներին, որոնք ցանկանում են վերադառնալ իրենց տները և խաղաղ ապրել իրենց հարևանների հետ, պետք է թույլատրեն դա անել (Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1948-ի 194 (III) բանաձև): Չնայած դրան՝ խնդիրը մնում է չլուծված, քանի որ միլիոնավոր պաղեստինցի փախստականներ և նրանց ժառանգները դեռևս փնտրում են կայուն լուծում (Պաղեստինի ժողովրդի վերադարձի իրավունքը, ՄԱԿ հետազոտություն):

Մեկ այլ իրավիճակում, Բոսնիական պատերազմից հետո (1992–1995թթ.) Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության ընդհանուր շրջանակային համաձայնագիրը (Դեյթոնի հռչակագիր) ներառում էր տեղահանվածների վերադարձի դրույթներ: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող գործընթացը նպաստեց բազմաթիվ տեղահանված բոսնիացիների, խորվաթների և սերբերի վերադարձին իրենց նախապատերազմյան տները, թեև սեփականության վերադարձի և էթնիկական լարվածության հետ կապված մարտահրավերները շարունակվում էին (Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության ընդհանուր շրջանակային համաձայնագիրը (Դեյթոնի հռչակագիր)):

Միջազգային պրակտիկան ընդգծում է վերադարձի համար բարենպաստ պայմանների ստեղծման կարևորությունը՝ ներառյալ անվտանգության երաշխիքները, ենթակառուցվածքների վերակառուցումը և հաշտեցման ջանքերը: Այն նաև ընդգծում է տեղահանման հիմնական պատճառները լուծելու և վերադարձի կամավոր և տեղեկացված լինելու անհրաժեշտությունը: Պետությունները և միջազգային դերակատարները ընդհանուր պատասխանատվություն ունեն՝ պաշտպանելու վերադարձի իրավունքը:

Վերադարձի իրավունքը Լեռնային Ղարաբաղի համատեքստում ներկայացնում է եզակի մարտահրավերներ և բարդություններ, որոնք արմատավորված են տասնամյակների հակամարտությունների, էթնիկ ատելության, տարածքային վերահսկողության փոփոխման և մարդկանց զանգվածային տեղահանության վրա: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դեպք անհատական հանգամանքների միասնություն է, համեմատական վերլուծությունը միջազգային այլ իրավիճակների հետ կարող է ունենալ ոչ ամբողջական վերաբերելիություն:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց վերադարձի իրավունքն ամրագրված է ոլորտի փաստաթղթերով, մասնավորապես՝ **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և ՔՔՄԻԴ-ով**: «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով Արդարադատության միջազգային դատարանի՝ (այսուհետ՝ ԱՄԴ) ժամանակավոր միջոցներ կիրառելու որոշումը (17 նոյեմբերի 2023թ.) անդրադառնում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված էթնիկ հայերի վերադարձի իրավունքին վերաբերող հիմնական խնդիրներին: Դատարանի վերլուծությունը ընդգծում է պետությունների պարտավորությունները՝ պաշտպանելու և հարգելու տեղահանված բնակչության իրավունքները՝ միջազգային իրավունքի համաձայն՝ ներառյալ՝ իրենց տները ապահով և արժանապատիվ վերադառնալու նրանց իրավունքը:

Ադրբեջանը հայտարարություններ է արել հայ բնակչության վերադարձը Լեռնային Ղարաբաղ ապահովելու մասին, սակայն այդ խոստումները թերահավատության են բախվում առաջադրված նախապայմանների, պատմական դժգոհությունների, անվտանգության մտահոգությունների և տեղահանվածների անվտանգ, կամավոր և արժանապատիվ վերադարձը երաշխավորող մեխանիզմների բացակայության պատճառով:

ԱՄԴ-ն ընդգծել է Ադրբեջանի պարտավորությունը՝ զերծ մնալու գործողություններից, որոնք կխոչընդոտեն տեղահանված հայերի վերադարձը Լեռնային Ղարաբաղ: Սա ներառում է խտրականության բացառումը և տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը, մասնավորապես՝ նրանց՝

անվտանգության, սեփականության և մշակութային ինքնության իրավունքները: Դատարանը նաև ընդգծել է, որ վերադարձի գործընթացը պետք է համապատասխանի միջազգային իրավունքի չափանիշներին՝ ներառյալ կամավորությունը և անվտանգ ու կայուն վերադարձի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Իր հիմնավորման մեջ ԱՄԴ-ն ընդգծել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի կիրառելիությունը այս համատեքստում: Դատարանը նշել է, որ Ադրբեջանը պետք է կանխի և հասցեագրի ցանկացած խտրական պրակտիկա կամ հռետորաբանություն, որը կարող է խոչընդոտել էթնիկ հայերի վերադարձը: Բացի այդ, այն ընդգծել է, որ վստահությունը վերականգնելու և տեղահանված բնակչության անվտանգությունը ապահովելու անհրաժեշտությունը:

ԱՄԴ-ը նաև ճանաչել է հակամարտության ավելի լայն համատեքստը և պատմական դժգոհությունները հայերի և ադրբեջանցիների միջև: Թեև Դատարանի որոշումը կենտրոնանում է ժամանակավոր միջոցների վրա, այն ընդգծում է միջազգային վերահսկողության կարևորությունը վերադարձի գործընթացը հեշտացնելու և միջազգային իրավական չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց վերադարձի իրավունքի տեսանկյունից այս որոշումն ունի հիմնարար նշանակություն, քանի որ այն սահմանում է հստակ իրավական դաշտ տեղահանված էթնիկ հայերի՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու իրավունքներին անդրադառնալու համար: Այնուամենայնիվ, այս միջոցառումների գործնական իրականացումը մնում է մարտահրավեր, որը պահանջում է Ադրբեջանի կողմից համագործակցություն, արդյունավետ միջազգային մոնիթորինգ և խնդիրները լուծելու այլ մեխանիզմներ (Արդարադատության միջազգային դատարանի «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով ժամանակավոր միջոցներ կիրառելու վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի 2023 թվականի նոյեմբերի 17-ի որոշում):

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք կորցրել են իրենց՝ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք՝ բնակարաններ, առանձնատներ, գյուղատնտեսական և արտադրական նշանակության հողեր, գործարաններ, արտադրամասեր և այլ սեփականության օբյեկտներ, որոնց նկատմամբ սեփականության իրավունքից բխող և որևէ իրավազորություն իրականացնելը սույն վերլուծության պահին եղել է անհնարին:

Հաշվի առնելով, որ Ադրբեջանը հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) անդամ պետություն, նշված գույքի նկատմամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սեփականության իրավունքի վերականգնման շուրջ իրավական վերլուծությունն անհրաժեշտ է հիմնականում ծավալել ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի շրջանակում:

ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում մեկնաբանել է ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը՝ որպես վերադարձի իրավունքի ասպեկտ, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է տեղահանված բնակչության սեփականության իրավունքին: Քննարկվող դրույթը, մասնավորապես, ամրագրում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իրեն պատկանող գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի

ընդհանուր սկզբունքներով (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված):

Բռնի տեղահանության համատեքստում սեփականության իրավունքը ՄԻԵԴ-ի կողմից մեկնաբանվել է որպես գույքային իրավունքների վերականգնման կամ փոխհատուցման երաշխիք, ինչը կարող է անուղղակիորեն աջակցել վերադարձի իրավունքին: Մասնավորապես, ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում ընդհանուր առմամբ չի դիտարկել տեղահանված անձանց կողմից այլ երկրում քաղաքացիություն ձեռք բերելը որպես, ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, նրանց սեփականության իրավունքի վրա ազդող որոշիչ գործոն: Դատարանի ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են սեփականության իրավունքի, հասանելիության և արդյունավետ պաշտպանության միջոցների շարունակականությունը, այլ ոչ թե տեղահանված բնակչության իրավական կարգավիճակը:

Այսպես՝ *Լուիզոդուն ընդդեմ Թուրքիայի* գործով, որի շրջանակում ՄԻԵԴ-ն առաջին անգամ քննարկում է տեղահանված անձանց՝ իրենց տան և գույքի նկատմամբ հարգանքի իրավունքի հարցը, արձանագրվել է, որ, չնայած թուրքական կառավարության այն փաստարկներին, որ տարածքն այժմ գտնվում է Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության իրավասության ներքո, Թուրքիան իրականացնում է արդյունավետ վերահսկողություն տարածքի նկատմամբ և պատասխանատու է իրավունքի խախտման համար: Դատարանը հաստատել է, որ դիմումատուի տեղահանությունը չի զրկել նրան իր սեփականության իրավունքներից և պատասխանատվության է ենթարկել Թուրքիային՝ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի տնօրինումն արգելելու համար: Այս վճիռը հատկապես վերաբերելի է, քանի որ սահմանում է, որ երկարատև տեղահանությունը չի խզում իրավական կապը տեղահանված անձանց և նրանց սեփականությամբ պատկանող գույքի միջև: Սա կարևոր արձանագրում է, որը կիրառելի է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության համար:

Ավելին՝ *Լուիզոդուն ընդդեմ Թուրքիայի* գործով դիմումատուի՝ Կիպրոսի հունական քաղաքացիությունը և Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության տարածքից դուրս բնակվելը չի ազդել նրա սեփականության իրավունքների վրա: Դատարանը ընդգծել է, որ սեփականության իրավունքները չեն մարվում տեղահանման կամ երկարատև բացակայությամբ, նույնիսկ եթե դիմումատուն ձեռք է բերում կամ ունի այլ երկրի քաղաքացիություն (*Լուիզոդուն ընդդեմ Թուրքիայի* (ըստ էության քննություն)):

Մենթեշը և այլք ընդդեմ Թուրքիայի գործով քուրդ գյուղացիները տեղահանվել են ռազմական գործողությունների պատճառով, իսկ նրանց տներն ու ունեցվածքը ավերվել են թուրքական ուժերի կողմից: Դիմումատուները պնդում էին, որ իրենց մերժել են վերադառնալ իրենց բնակության վայր և զրկել են իրենց ունեցվածքը հետ պահանջելու հնարավորությունից: ՄԻԵԴ-ը համարել է, որ Թուրքիան խախտում է դիմումատուների սեփականության իրավունքը՝ նշելով, որ գույքի ոչնչացումը և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայությունը հանդիսանում է դիմումատուների իրավունքների խախտում:

Լրացնելով՝ հարկ է նշել, որ *Մենթեշը և այլք ընդդեմ Թուրքիայի* գործում քուրդ գյուղացիների տեղահանությունը և նրանց ունեցվածքին հասանելիության բացակայությունը հիմնական խնդիրներն էին, սակայն նրանց քաղաքացիությունը կամ այլ երկրում քաղաքացիություն ձեռք բերելը չեն ներկայացվել որպես սեփականության իրավունքի վրա ազդող գործոններ: ՄԻԵԴ-ն ընդգծել է պետության պարտավորությունները՝ հարգելու և վերականգնելու սեփականության իրավունքը՝ անկախ տեղահանված բնակչության իրավական կարգավիճակից (Մենթեշը և այլք ընդդեմ Թուրքիայի (ըստ էության քննություն) 1997):

Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի գործով դիմումատուն՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ տեղահանված էթնիկ հայը, չի կարողացել վերադառնալ

Գյուլիստան գյուղում գտնվող իր տուն: Նա պնդել է, որ Ադրբեջանի՝ իր վերադարձը և սեփականության հասանելիությունը թույլ չտալը խախտում է ՄԻԵԿ-ով երաշխավորված իր իրավունքները: ՄԻԵԴ-ն արձանագրել է դիմումատուի՝ սեփականության իրավունքների մնայուն բնույթը՝ չնայած տասնամյակների տեղահանմանը, և ընդգծել, որ Ադրբեջանը պարտավոր է ստեղծել պայմաններ, որոնք կապահովեն անվտանգ վերադարձ կամ արդյունավետ պաշտպանության միջոցներ, ինչպիսին է փոխհատուցումը: Վճիռն ուղղակիորեն առնչվում է Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի իրավունքների վերաբերյալ սույն հոդվածում ներկայացված վերլուծությանը, քանի որ այն վերահաստատում է այն սկզբունքը, որ հակամարտությունների հետևանքով առաջացած տեղահանությունները չեն ժխտում սեփականության իրավունքները: Ավելին՝ գույքի հասանելիության խոչընդոտների հետևանքով առաջացած իրավունքի շարունակական խախտումը թույլ չի տալիս այդ իրավունքի վերականգնման համար սահմանել որևէ կոնկրետ ժամկետ: Օրինակ՝ կոնկրետ դեպքում սեփականության իրավունքի ճանաչում և դրա վերականգնման պահանջ է ներկայացվել շուրջ երկու տասնամյակ անց:

Անդրադառնալով սույն հետազոտությանը վերաբերող կոնկրետ խնդրին՝ անհրաժեշտ է նկատել, որ *Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի* գործով դիմումատուի՝ Գյուլիստանից տեղահանումը և հետագա բնակությունը Հայաստանում չեն դիտարկվել որպես նրա սեփականության իրավունքները սահմանափակելու հիմքեր: Չանաչելով դիմումատուի *Հայաստանի քաղաքացի* իրավական կարգավիճակը՝ ՄԻԵԴ-ը կենտրոնացել է նրա վերադարձի համար պայմաններ ստեղծելու կամ փոխհատուցում տրամադրելու համար Ադրբեջանի պարտավորությունների վրա (Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի (ըստ էության քննություն) 2015):

Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի գործով Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում Լաչինից տեղահանված Ադրբեջանի քաղաքացի, ազգութամբ քուրդ դիմումատուները խնդրել են փոխհատուցել իրենց ունեցվածքը: ՄԻԵԴ-ը նախ արձանագրել է, որ գանգատի քննության ժամանակահատվածում Հայաստանը արդյունավետ վերահսկողություն է իրականացրել տարածաշրջանի նկատմամբ և պատասխանատվություն է կրում վերադարձի համար պայմաններ ստեղծելու կամ համարժեք փոխհատուցում չտրամադրելու համար: *Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ-ը դիմումատուների քաղաքացիությունը չի համարել ազդող գործոն, որը կարող է փոխել նրանց սեփականության կամ փոխհատուցման իրավունքը: (Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի (ըստ էության քննություն) 2015):

Քերիմովան և այլք ընդդեմ Ռուսաստանի գործով դիմումատուները տեղահանվել են Չեչնիայի Հանրապետությունից ռազմական գործողությունների և իրենց տների ենթադրյալ ավերման պատճառով: Նրանք պնդում էին, որ ռուսական իշխանությունները չեն կարողացել ապահովել իրենց վերադարձը կամ փոխհատուցել իրենց կորուստները: ՄԻԵԴ-ը ճանաչել է Ռուսաստանի պարտավորությունը՝ նպաստելու վերադարձին և տրամադրելու գույքի կորստի փոխհատուցում՝ վերահաստատելով սեփականության իրավունքի կարևոր նշանակությունը հետկոնֆլիկտային վերականգնման գործընթացում (Քերիմովան և այլք ընդդեմ Ռուսաստանի (ըստ էության քննություն) 2011):

Ուստի՝ ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում դրսևորում է հետևողական մոտեցում տեղահանված բնակչության սեփականության իրավունքների պաշտպանության համար: Այն ընդգծում է անդամ պետությունների պարտավորությունները՝ հնարավորության դեպքում երաշխավորելու արդյունավետ վերադարձը և տրամադրելու փոխհատուցում կամ տրամադրելու փոխհատուցում, եթե վերադարձն անհնարին է: Այս նախադեպերը կարևոր նշանակություն ունեն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի իրավունքների շրջանակում և

գնահատելու՝ Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքով, մասնավորապես՝ ՄԻԵԿ-ով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Սույն վերլուծության իմաստով կարևոր է գնահատել նաև ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող «սեփականության» շրջանակը: Այսպես, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն, ըստ էության, երաշխավորում է դասական իմաստով սեփականության իրավունքը: Այնուամենայնիվ, «տիրապետում» («possession») հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում գրանցված սեփականության իրավունքով: ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերլուծությունը վկայում է, որ նման իրավիճակներում դատարանի կողմից գնահատման հիմնական առարկան է գույքի «տիրապետումը»: Ընդ որում, այդ ընթացքում ՄԻԵԴ-ը կաշկանդված չէ ներպետական օրենսդրության կարգավորումներով:

Մասնավորապես, *Դողանը և այլք ընդդեմ Թուրքիայի* գործով ՄԻԵԴ-ը վկայակոչել է «սեփականություն» բառի ինքնավար նշանակությունը: Ի պատասխան Կառավարության այն փաստարկի, որ դիմումատուները ցույց չեն տվել, որ իրենք սեփականության իրավունք ունեն և, հետևաբար, չեն կարող պատշաճ կերպով համարվել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման զոհ, ՄԻԵԴ-ը գնահատել է, որ սեփականության իրավունքի վկայականների բացակայությունը խնդիր չէ: Դատարանը գտել է, որ իրենից չի պահանջվում որոշել, թե արդյոք սեփականության իրավունքի վկայականների բացակայության դեպքում դիմումատուները թուրքական օրենսդրության համաձայն ունեն սեփականության իրավունքներ: Փոխարենը սահմանեց այն հարցը, թե, արդյո՞ք, դիմումատուների կողմից իրականացվող ընդհանուր տնտեսական գործունեությունը «տիրապետում» է (Դողանը և այլք ընդդեմ Թուրքիայի (ըստ էության քննություն) 2004):

Տեղահանված անձանց առնչվող մեկ այլ՝ *Սագինաձեն և այլք ընդդեմ Վրաստանի* գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ, նույնիսկ գրանցված սեփականության իրավունքի բացակայության դեպքում, դիմումատուի կողմից քոթեջի տնօրինումը ավելի քան 10 տարի շարունակ, կարող է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի նպատակների տեսանկյունից համարվել «տիրապետում»: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել «տիրապետման» բարեխիղճ բնույթը, ինչպես նաև իշխանությունների կողմից ակնհայտ հանդուրժողականությունը և տարբեր իրավական ակտերի ընդունումը, որոնք հաստատում են ներքին տեղահանված անձանց իրավունքները բնակարանային ոլորտում և դրանց պաշտպանության ամուր երաշխիքներ (Սագինաձեն և այլք ընդդեմ Վրաստանի (ըստ էության քննություն) 2010):

Ուստի՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքով ձևավորված դիրքորոշման համաձայն՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն սեփականության իրավունքը կապված է սեփականությունից օգտվելու, այն տնօրինելու և սեփականության իրավունքն իրացնելու կարողության հետ: Այն պարտադիր կերպով չի ենթադրում սեփականության պաշտոնական գրանցում, այլ գնահատում է դիմումատուի կողմից խնդրո առարկա գույքի «տիրապետման» հարցը: Տեղահանված անձանց իրավական կարգավիճակը կամ քաղաքացիությունը, ներառյալ այլ երկրում քաղաքացիություն ստանալը, չի սահմանափակում այդ իրավունքը կամ զրկում դրանից (Տեղահանված անձանց տիրապետման իրավունքի իրացման հարցի շուրջ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համապարփակ վերլուծություն է ներկայացված *Ներքին տեղահանված անձանց պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի այլ չափանիշների համաձայն* ձեռնարկում:):

Սույն հարցի քննարկման շրջանակում անհրաժեշտ է անդրադառնալ նաև Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների և տեղահանված անձանց բնակարանների և գույքի վերադարձի վերաբերյալ սկզբունքներին

(այսուհետ՝ Պինհեյրոյի սկզբունքներ) (Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների և տեղահանված անձանց բնակարանների և գույքի վերադարձի վերաբերյալ սկզբունքներ):[1] Այս փաստաթուղթն ընդգծում է տեղահանված բնակչության գույքի և վերադարձի իրավունքների հետ կապված իրավիճակների շուրջ կարևոր իրավական շրջանակ: Այս սկզբունքները սահմանում են տեղահանված անձանց՝ իրենց տներ վերադառնալու իրավունքների պաշտպանության, կորցրած գույքի փոխհատուցման կամ փոխհատուցման և սեփականությունից կամ հողի սեփականությունից կամայական զրկվելուց պաշտպանվելու կարևորությունը:

Պինհեյրոյի սկզբունքների համաձայն՝ պետությունները պարտավոր են պայմաններ ստեղծել կայուն վերադարձի համար՝ ներառյալ բնակարանների, գույքի և ապրուստի միջոցների վերականգնումը: Տեղահանված անձինք չպետք է ենթարկվեն խտրականության՝ օգտվելով այդ իրավունքներից՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից կամ ազգությունից: Պինհեյրոյի սկզբունքներն ամրապնդում են այն տեսակետը, որ սեփականության պաշտպանությունը և վերադարձի իրավունքը փոխկապակցված տարրեր են, որոնք պետք է պահպանվեն՝ տեղահանված բնակչության համար արդարություն և կայունություն ապահովելու համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով վերլուծությունը՝ կարող ենք հաստատել, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք ունեն վերադարձի անօտարելի իրավունք, որը չի կարող սահմանափակվել իրավական կարգավիճակի հիմքով: Վերադարձի իրավունքն ունի միջազգային իրավունքի ուժով երաշխավորված բնույթ՝ հիմնված լինելով ինչպես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի վրա, այնպես էլ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և համապատասխան դատական պրակտիկայի վրա:

Արդարադատության միջազգային դատարանի՝ 2023թ. ընդունած ժամանակավոր միջոցների վերաբերյալ որոշումը հստակորեն արձանագրում է Ադրբեջանի՝ վերադարձի իրավունքը հարգելու և ապահովելու միջազգային պարտավորությունը: Սակայն տեղահանված անձանց վերադարձի արդյունավետ իրացման տեսանկյունից շարունակում են պահպանվել մի շարք մտահոգիչ խոչընդոտներ, ինչը հավաստվում է նաև Հայաստանի կողմից ժամանակավոր պաշտպանության երկարացմամբ մինչև 2025 թվականի վերջը:

Մյուս կողմից, ՄԻԵԴ նախադեպային իրավունքը միանշանակորեն հաստատում է, որ սեփականության իրավունքի ճանաչումը չի կարող պայմանավորված լինել ոչ իրավական կարգավիճակով, ոչ էլ քաղաքացիության փոփոխությամբ: Ըստ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մեկնաբանության՝ «սեփականության» ներառական ըմբռնումն ընդգրկում է նաև փաստացի տիրապետումը, իսկ դրա պաշտպանության իրավունքը տարածվում է բոլոր այն անձանց վրա, ովքեր կապ են պահպանել գույքի հետ՝ անկախ գրանցման փաստից կամ քաղաքացիական պատկանելությունից:

Ելնելով վերոգրյալից՝ հստակ է, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ինչպես վերադարձի, այնպես էլ սեփականության իրավունքները վայելում են միջազգային իրավունքի ճանաչում և գործնականում պետք է ունենան պաշտպանության երաշխիքներ: Նրանց իրավունքների իրացումը ենթադրում է անհատական գնահատում և պետությունների կողմից արդյունավետ իրավական և գործնական միջոցների ներդրում՝ ուղղված այդ իրավունքների վերականգնմանը:

[1] Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների և տեղահանված անձանց բնակարանների և գույքի վերադարձի վերաբերյալ սկզբունքներին (Պինհեյրոյի սկզբունքներ), հասանելի է հետևյալ հղումով՝ https://2001-2009.state.gov/documents/organization/99774.pdf:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր. *Հոդված 13,* https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896: Մուտք՝ 26.07.2025:

2. *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր.* Հոդված 12, https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500: Մուտք՝ 26.07.2025:

3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 27 ընդհանուր մեկնաբանությունները. *պարբերություններ 19-21:* https://www.refworld.org/legal/general/hrc/1999/en/46752: Մուտք՝ 26.07.2025:

4. Վերադարձի իրավունքի վերաբերյալ «Human Rights Watch»-ի դիտարկումներ: https://www.hrw.org/legacy/campaigns/israel/return/index.htm: Մուտք՝ 26.07.2025:

5. Աշխատանքի միջազգային կազմակերպության Բնիկ և ցեղային ժողովուրդների թիվ 169 կոնվենցիա. *Հոդված 16,* https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:55:0::NO::P55_TYPE%2CP55_LANG%2CP55_DOCUMENT%2CP55_NODE:REV%2Cen%2CC169%2C%2FDocument: Մուտք՝ 26.07.2025:

6. Միավորված ազգերի կազմակերպության բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիր. *Հոդված 10,* https://www.un.org/development/desa/indigenouspeoples/wp-content/uploads/sites/19/2018/11/UNDRIP_E_web.pdf: Մուտք՝ 26.07.2025:

7. Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիա. *Հոդված 45,* https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20872: Մուտք՝ 26.07.2025:

8. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1948-ի 194 (III) բանաձև. https://www.hrw.org/legacy/campaigns/israel/return/un194-rtr.htm: Մուտք՝ 26.07.2025:

9. «Պաղեստինի ժողովրդի վերադարձի իրավունքը» հետազոտություն. https://www.un.org/unispal/document/auto-insert-210170/: Մուտք՝ 26.07.2025:

10. Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության ընդհանուր շրջանակային համաձայնագիրը (Դեյթոնի հռչակագիր). https://www.osce.org/files/f/documents/e/0/126173.pdf: Մուտք՝ 26.07.2025:

11. Արդարադատության միջազգային դատարանի «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով ժամանակավոր միջոցներ կիրառելու վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի 2023 թվականի նոյեմբերի 17-ին որոշումը. https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20231117-ord-01-00-en.pdf: Մուտք՝ 26.07.2025:

12. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա. https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870: Մուտք՝ 26.07.2025:

13. «Լոիզոդուն ընդդեմ Թուրքիայի » (ըստ էության քննություն). *1996 թվականի դեկտեմբերի 18-ի ՄԻԵԴ (Մեծ պալատ) վճիռ, Գանգատ թիվ 15318/89,* https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58007: Մուտք՝ 26.07.2025:

14. «Մենթեշը և այլք ընդդեմ Թուրքիայի» (ըստ էության քննություն). *1997 թվականի նոյեմբերի 28-ի ՄԻԵԴ վճիռ, Գանգատ թիվ 58/1996/677/867,* https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58120: Մուտք՝ 26.07.2025:

15. «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» (ըստ էության քննություն). *2015 թվականի հունիսի 16-ի ՄԻԵԴ (Մեծ պալատ) վճիռ, Գանգատ թիվ 40167/06,* https://hudoc.echr.coe.int/fre?i=001-155662: Մուտք՝ 26.07.2025:

16. «Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի» (ըստ էության քննություն). *2015 թվականի հունիսի 16-ի ՄԻԵԴ (Մեծ պալատ) վճիռ, Գանգատ թիվ 13216/05,*

https://rilm.am/wp-content/uploads/2022/08/6f7f8c14435e124be4da6143e71ea136.pdf: Մուտք՝ 26.07.2025:

17. «Քերիմովան և այլք ընդդեմ Ռուսաստանի» (ըստ էության քննություն). *2011 թվականի մայիսի 3-ի ՄԻԵԴ (Մեծ պալատ) վճիռ, Գանգատներ թիվ 17170/04, 20792/04, 22448/04, 23360/04, 5681/05 և 5684/05,* https://hudoc.echr.coe.int/eng?i=001-104662: Մուտք՝ 26.07.2025:

18. «Սագինաձեն և այլք ընդդեմ Վրաստանի» (ըստ էության քննություն). *2010 թվականի մայիսի 27-ի ՄԻԵԴ վճիռ, Գանգատներ թիվ 18768/05,* https://hudoc.echr.coe.int/fre?i=001-98885: Մուտք՝ 26.07.2025:

19. «Ներքին տեղահանված անանց պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի այլ չափանիշների համաձայն» ձեռնարկ. https://rm.coe.int/handbook-costas-paraskeva-eng/168076087f: Մուտք՝ 26.07.2025:

20. Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների և տեղահանված անձանց բնակարանների և գույքի վերադարձի վերաբերյալ սկզբունքներին (Պինհեյրոյի սկզբունքներ). https://2001-2009.state.gov/documents/organization/99774.pdf: Մուտք՝ 26.07.2025:

21. Harutyunyan Avetik, Hayrapetyan Sona. “The blockade, depopulation of the Republic of Artsakh and International Law”. *Scientific Artsakh*, № 1(20), 2024, https://tinyurl.com/bdywpyuz, pp. 9-19. Accessed: 26.07.2025.

WORKS CITED

1. Mardu iravunqneri hamy'ndhanur hrchakagir. Hodvac' 13 [Universal Declaration of Human Rights, Article 13], https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896: Accessed: 26.07.2025: (In Armenian)

2. Qaghaqaciakan ev qaghaqakan iravunqneri masin mijazgayin dashnagir. Hodvac' 12 [International Covenant on Civil and Political Rights, Article 12], https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500: Accessed: 26.07.2025: (In Armenian)

3. Qaghaqaciakan ev qaghaqakan iravunqneri masin mijazgayin dashnagri 12-rd hodvac'i veraberyal Mardu iarvunqneri komitei t'iv 27 y'ndhanur meknabanut'yunnery'. parberut'yunner 19-21 [Human Rights Committee, General Comment No. 27 on Article 12 of the ICCPR (Freedom of Movement), paras. 19–21]: https://www.refworld.org/legal/general/hrc/1999/en/46752: Accessed: 26.07.2025: (In Armenian)

4. Veradard'i iravunqi veraberyal «Human Rights Watch»-i ditarkumner: [Human Rights Watch – The Right of Return (Observations on the Right to Return)] https://www.hrw.org/legacy/campaigns/israel/return/index.htm: Accessed: 26.07.2025: (In Armenian)

5. Ashxatanqi mijazgayin kazmakerput'yan Bnik ev ceghayin jhoghovurdneri t'iv 169 konvencia. Hodvac' 16 [ILO Convention No. 169 concerning Indigenous and Tribal Peoples in Independent Countries, Article 16], https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:55:0::NO::P55_TYPE%2CP55_LANG%2CP55_DOCUMENT%2CP55_NODE:REV%2Cen%2CC169%2C%2FDocument: Accessed: 26.07.2025: (In Armenian)

6. Miavorvac' azgeri kazmakerput'yan bnik jhoghovurdneri iravunqneri masin hr'chakagir. Hodvac' 10 [United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples, Article 10], https://www.un.org/development/desa/indigenouspeoples/wp-

content/uploads/sites/19/2018/11/UNDRIP_E_web.pdf: Accessed: 26.07.2025: (In Armenian)

7. Paterazmi jhamanak qaghaqaciakan bnakchut'yan pashtpanut'yan masin konvencia. Hodvac' 45 [Geneva Convention Relative to the Protection of Civilian Persons in Time of War (Fourth Geneva Convention)], https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20872: Accessed: 26.07.2025: (In Armenian)

8. Miavorvac' azgeri kazmakerput'yan Glxavor asambleayi 1948-i 194 (III) banad'ev [UN General Assembly Resolution 194 (III) of 1948]. https://www.hrw.org/legacy/campaigns/israel/return/un194-rtr.htm: Accessed: 26.07.2025: (In Armenian)

9. «Paghestini jhoghovrdi veradard'i iravunqy'» hetazotut'yun [The Right of Return of the Palestinian People – UN Study]. https://www.un.org/unispal/document/auto-insert-210170/: Accessed: 26.07.2025: (In Armenian)

10. Bosnia ev Hercegovinayum xaghaghut'yan y'ndhanur shrjanakayin hamad'aynagiry' (Deynt'oni hr'chakagir) [General Framework Agreement for Peace in Bosnia and Herzegovina (Dayton Peace Accords)]. https://www.osce.org/files/f/documents/e/0/126173.pdf: Accessed: 26.07.2025: (In Armenian)

11. Ardaradatut'yan mijazgayin datarani «Hayastann y'nddem Adrbejani» gorc'ov jhamanakavor mijocner kirar'elu veraberyal Ardaradatut'yan mijazgayin datarani 2023 t'vakani noyemberi 17-in oroshumy' [International Court of Justice, Order on Provisional Measures in the case Armenia v. Azerbaijan, November 17, 2023]. https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/180/180-20231117-ord-01-00-en.pdf: Accessed: 26.07.2025: (In Armenian)

12. Mardu iravunqneri evropakan konvencia [European Convention on Human Rights (ECHR)]. https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870: Accessed: 26.07.2025: (In Armenian)

13. «Loizodun y'nddem T'urqiayi » (y'st e'ut'yan qnnut'yun). 1996 t'vakani dektemberi 18-i MIED (Mec' palat) vtwir', Gangat t'iv 15318/89 [Loizidou v. Turkey (Merits), Judgment of 18 December 1996 (Grand Chamber), Application No. 15318/89], https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58007: Accessed: 26.07.2025: (In Armenian)

14. «Ment'eshy' ev aylq y'nddem T'urqiayi» (y'st e'ut'yan qnnut'yun). 1997 t'vakani noyemberi 28-i MIED vtwir', Gangat t'iv 58/1996/677/867 [Mentes and Others v. Turkey (Merits), Judgment of 28 November 1997, Application No. 58/1996/677/867], https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58120: Accessed: 26.07.2025: (In Armenian)

15. «Sargsyann y'nddem Adrbejani» (y'st e'ut'yan qnnut'yun). 2015 t'vakani hunisi 16-i MIED (Mec' palat) vtwir', Gangat t'iv 40167/06, [Sargsyan v. Azerbaijan (Merits), Judgment of 16 June 2015 (Grand Chamber), Application No. 40167/06] https://hudoc.echr.coe.int/fre?i=001-155662: Accessed: 26.07.2025: (In Armenian)

16. «Chiragovy' ev aylq y'nddem Hayastani» (y'st e'ut'yan qnnut'yun). 2015 t'vakani hunisi 16-i MIED (Mec' palat) vtwir', Gangat t'iv 13216/05, [Chiragov and Others v. Armenia (Merits), Judgment of 16 June 2015 (Grand Chamber), Application No. 13216/05] https://rilm.am/wp-content/uploads/2022/08/6f7f8c14435e124be4da6143e71ea136.pdf: Accessed: 26.07.2025: (In Armenian)

17. «Qerimovan ev aylq y'nddem R'usastani» (y'st e'ut'yan qnnut'yun). 2011 t'vakani mayisi 3-i MIED (Mec' palat) vtwir', Gangatner t'iv 17170/04, 20792/04, 22448/04, 23360/04, 5681/05 ev 5684/05 [Kerimova and Others v. Russia (Merits), Judgment of 3 May 2011 (Grand Chamber), Applications Nos. 17170/04, 20792/04, 22448/04,

23360/04, 5681/05 and 5684/05], https://hudoc.echr.coe.int/eng?i=001-104662: Accessed: 26.07.2025: (In Armenian)

18. «Saginad'en ev aylq y'nddem Vrastani» (y'st e'ut'yan qnnut'yun). 2010 t'vakani mayisi 27-i MIED vtwir', Gangatner t'iv 18768/05 [Saghinadze and Others v. Georgia (Merits), Judgment of 27 May 2010, Application No. 18768/05], https://hudoc.echr.coe.int/fre?i=001-98885: Accessed: 26.07.2025: (In Armenian)

19. «Nerqin teghahanvac' ananc pashtpanut'yuny' Mardu iravunqneri evropakan konvenciayi ev Evropayi xorhrdi ayl chap'anishneri hamad'ayn» d'er'nark [Handbook on the Protection of Internally Displaced Persons under the European Convention on Human Rights and Other Council of Europe Standards, Council of Europe]. https://rm.coe.int/handbook-costas-paraskeva-eng/168076087f: Accessed: 26.07.2025: (In Armenian)

20. Miavorvac' azgeri kazmakerput'yan P'axstakanneri ev teghahanvac' and'anc bnakaranneri ev guyqi veradard'i veraberyal skzbunqnerin (Pinheyroyi skzbunqner) [United Nations Principles on Housing and Property Restitution for Refugees and Displaced Persons (Pinheiro Principles)]. https://2001-2009.state.gov/documents/organization/99774.pdf: Accessed: 26.07.2025: (In Armenian)

THE RIGHT TO RETURN AND THE RIGHT TO PROPERTY OF PERSONS FORCIBLY DISPLACED FROM NAGORNO-KARABAKH (ARTSAKH) IN THE CONTEXT OF INTERNATIONAL LAW

SERGEY GHAZINYAN
Yerevan State University,
Chair of European and International Law, Lecturer
American University of Armenia, Lecturer,
YSU Center for European Studies, Expert,
Yerevan, The Republic of Armenia

The forced displacement of the population of Nagorno-Karabakh (Artsakh) in 2023 and the resulting questions regarding their legal status have raised a number of legal issues concerning the protection of their right to return and right to property.

This article aims to analyse the scope of these rights and examine whether they may be lawfully restricted based on the legal status of the displaced persons. The applicability of the right to return in the post-conflict context and the recognition of property rights under international and regional legal frameworks are among the central questions addressed.

Based on the analysis of international human rights instruments, the case law of the European Court of Human Rights (ECHR), and comparative post-conflict situations, the article demonstrates that these rights cannot be restricted solely on the basis of legal status.

The rights to return and to property are recognised as continuing rights, subject to protection regardless of an individual’s legal classification. The article also elaborates on state obligations and the role of international monitoring mechanisms in ensuring the enforcement of these rights.

In addition to the content-based and comparative analysis of legal instruments, the article also employs a combined examination of legal approaches and an assessment of the practical application of judicial precedents. The study further includes a contextual analysis aimed at identifying the situational factors that emerged in the aftermath of the conflict.

Keywords: *Nagorno-Karabakh, forced displacement, citizenship, right to return, right to property, ECHR, international law, refugees, protection measures.*

ПРАВО НА ВОЗВРАЩЕНИЕ И ПРАВО СОБСТВЕННОСТИ ЛИЦ, ПРИНУДИТЕЛЬНО ПЕРЕМЕЩЁННЫХ ИЗ НАГОРНОГО КАРАБАХА (АРЦАХА), В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

СЕРГЕЙ КАЗИНЯН
преподаватель кафедры европейского и международного права Ереванского государственного университета и Американского университета Армении, эксперт Центра европейских исследований Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

Принудительное выселение населения Нагорного Карабаха (Арцаха) в 2023 году и связанные с этим вопросы правового статуса вызвали ряд юридических проблем, касающихся обеспечения их права на возвращение и права собственности.

Настоящая статья направлена на анализ содержания этих прав, а также на рассмотрение вопроса о допустимости их ограничения в зависимости от правового статуса перемещённых лиц. В центре внимания — как применимость права на возвращение в постконфликтный период, так и признание права собственности в рамках международного и регионального права.

Опираясь на международные документы в области прав человека, прецедентную практику Европейского суда по правам человека (ЕСПЧ), а также сравнительный анализ других постконфликтных ситуаций, статья демонстрирует, что указанные права не могут быть ограничены лишь на основании правового статуса.

Права на возвращение и на собственность признаются как непрерывные и подлежащие защите вне зависимости от юридической классификации лица. В статье также подробно рассматриваются обязательства государств и роль международных механизмов мониторинга в обеспечении реализации этих прав.

В дополнение к содержательному и сравнительному анализу правовых документов в статье также применяется комплексное рассмотрение правовых подходов и оценка практического применения судебных прецедентов. Исследование включает также контекстуальный анализ с целью выявления ситуационных факторов, возникших после конфликта.

Ключевые слова: *Нагорный Карабах, принудительное перемещение, гражданство, право на возвращение, право собственности, ЕСПЧ, международное право, беженцы, меры защиты.*

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ *

ՀՏԴ 349 DOI: 10.52063/25792652-2025.2.25-97

ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mane.markosyan@ysu.am
ORCID: 0000-0002-0348-8879

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ընդերքօգտագործման մասին ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի տեսակները, դրանց տրամադրման ընթացակարգերի առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման իրավունքի դադարման հարաբերությունները և վեր հանել այդ գործընթացներում հանդիպող համակարգային իրավական խնդիրները՝ այդ հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հարցերի լույսի ներքո:

Ներկայումս ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությունը թևակոխել է համակարգային բարեփոխումների շրջափուլ, ինչի մասին է վկայում ՀՀ կառավարության՝ 2022 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշմամբ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության հաստատումը: Այս համատեքստում ընդերքօգտագործման իրավունքի տեսակների, ծագման և դադարման իրավական հիմքերի և ընթացակարգերի ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևոր են՝ ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդիրները վեր հանելու և լուծումներ առաջարկելու համար:

Սույն հետազոտության նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- ***ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի տեսակների և դրանց ծագման իրավական հիմքերի, ընթացակարգի ուսումնասիրություն և վերլուծություն,***
- ***ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի դադարման իրավական հիմքերի և ընթացակարգի ուսումնասիրություն և վերլուծություն:***

Սույն աշխատանքի մեթոդոլոգիական բազան են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, ինդուկցիա), այնպես էլ հատուկ (իրավահամեմատական) մեթոդները:

Հիմք ընդունելով սույն աշխատանքի շրջանակում կատարված հետազոտությունը՝ կատարվել են մի շարք եզրահանգումներ՝ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային կառուցակարգեր նախատեսելու, ընդերքօգտագործման իրավունքի և դրա հետ կապված գործարքների պետական գրանցման, ինչպես նաև՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով

* Հոդվածը ներկայացվել է 09.06.2025թ., գրախոսվել՝ 10.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման իրավական հիմքերի հստակեցման վերաբերյալ:

Հիմնաբառեր՝ *ընդերքօգտագործման իրավունք, արտոնյալ դիմումատուի կարգավիճակ, պայմանագրի լուծում, ընդերքօգտագործման իրավունքի պետական գրանցում, զգուշացում, մրցութային կարգ, երկրաբանական ուսումնասիրություն, օգտակար հանածոյի արդյունահանում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդերքը պետությանը բացառիկ սեփականության իրավունքով պատկանող օբյեկտ է: Ընդերքի տեղամասերը կարող են տրամադրվել իրավաբանական անձանց միայն օգտագործման իրավունքով՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ «Օրենսգիրք») նախատեսված երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով (Օրենսգրքի 19-րդ հոդված): Ըստ այդմ էլ, Օրենսգիրքը առանձնացնում է ընդերքօգտագործման իրավունքի երկու տեսակ՝ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով ընդերքօգտագործման իրավունք և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք (“Lexology GTDT, 2022” 9):

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է ընդերքօգտագործումը որպես երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեություն: Նշված սահմանումից պարզ է դառնում, որ օրենսդիրը *«ընդերքօգտագործում»* հասկացությունը լայն է մեկնաբանել՝ դրա տակ հասկանալով նաև «ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը», որը, մեր կարծիքով, ընդերքօգտագործման բուն գործունեության հետ կապ չունի, քանի որ ենթադրում է ոչ թե ընդերքի տեղամասի տիրապետում և օգտագործում՝ դրանից այլ գույքի՝ օգտակար հանածոյի կամ երկրաբանական տեղեկատվության ստացման (գույքի փոխակերպման) նպատակով, այլ արդեն ընդերքի տեղամասից ստացված գույքից՝ ընդերքօգտագործման թափոններից, օգտակար հանածոյի կորզում, այդ թվում՝ դրա չափերի փոփոխում, դասակարգում, առանձնացում, թափոնների վերամշակում (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետ): Այս համատեքստում ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը դուրս է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման բուն նպատակների շրջանակից և սույն հետազոտության առարկայից:

Պետության կողմից ընդերքը օգտագործման իրավունքով տրամադրելու բուն նպատակը ոչ թե սոսկ ընդերքի տեղամասի տիրապետման իրավունքի փոխանցումն է ընդերքօգտագործողին, այլ ընդերքի տեղամասի փոխակերպումը մեկ այլ գույքի (օգտակար հանածո, երկրաբանական տեղեկություն և այլն)՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման կամ օգտակար հանածոների արդյունահանման միջոցով (Неделько 97):

Առաջինն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետեր): Ընդ որում, Օրենսգրքի համակարգային ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով ընդերքօգտագործման իրավունքն իր հերթին ունի երկու ենթատեսակ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ) և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքը (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետ)։ Նշված երկու ենթատեսակների հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի նպատակը օգտակար հանածոների պաշարների հայտնաբերումը չէ, այլ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նկարագրված գործունեության իրականացումը *(ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրություն, հրաբխային գործունեության ուսումնասիրության երկրաբանական աշխատանքներ և այլն)*։ Ըստ այդմ էլ տարբեր են նաև երկրաբանական ուսումնասիրության իրավունքի՝ նշված երկու ենթատեսակների տրամադրման իրավական հիմքերը և բովանդակությունը։ Նախ, ի թիվս Օրենսգրքով պահանջվող այլ փաստաթղթերի, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի դեպքում պահանջվում է ոչ թե լիազոր մարմնի թույլտվության, այլ համաձայնության տրամադրումը։ Բացի այդ, ի տարբերություն ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող ընդերքօգտագործողի, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք կրող իրավաբանական անձը ստանում է արտոնյալ դիմումատուի կարգավիճակ (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետ), ինչը վերջինիս տալիս է ընդերքի տվյալ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման համար դիմելու նախապատվության իրավունք (Օրենսգրքի 51-րդ հոդվածի 10-րդ մաս)։

Ընդերքօգտագործման իրավունքի երկրորդ տեսակը՝ օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը, տրամադրվում է ընդերքի որոշակի տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքների իրականացման նպատակով (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ)։

1. Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ընթացակարգը.

Տեսական գրականության և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում առանձնացվում են ընդերքօգտագործման իրավունքի 3 իրավական ռեժիմներ՝ **թույլատվական (Licensing Regime), պայմանագրային (Contract Regime)** (Kienzler, et al. 7-14)**, խառը** (թույլատվական և պայմանագրային իրավական ռեժիմների միաժամանակյա կիրառում) (Omalu and Wälde)։ Պատմականորեն ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համակարգը հիմնված է եղել թույլատվական ռեժիմի վրա, իսկ պայմանագրային իրավական ռեժիմը կիրառվել է՝ սկսած 19-րդ դարի 2-րդ կեսից (Налетов 11)։

Ընդերքօգտագործման իրավունքի թույլատվական համակարգի (*Ավստրալիա, Բրազիլիա, Կանադա, Չիլի, Պերու, Զամբիա*) էությունը կայանում է նրանում, որ ընդերքօգտագործման հարաբերության կողմերի իրավունքները և պարտականությունները տվյալ պետության օրենսդրությամբ ենթարկված են մանրամասն նորմատիվ-իրավական կարգավորման, ուստի՝ միատեսակ են բոլոր ընդերքօգտագործողների համար. կողմերը պայմանագրի կնքման միջոցով չեն կարող փոփոխել, օրենսդրությամբ մանրամասն կարգավորված, ընդերքօգտագործման պայմանները, դրանք փաստորեն սահմանվում և դադարեցվում են պետության միակողմանի կամքով (Kienzler, et al. 9)։

Պայմանագրային իրավական ռեժիմի դեպքում ընդերքօգտագործման հարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթուղթը պետության և ընդերքօգտագործողի միջև կնքվող ընդերքօգտագործման պայմանագիրն է, որը յուրաքանչյուր ընդերքօգտագործողի հետ բանակցվում և կնքվում է առանձին պայմաններով՝ հաշվի առնելով ընդերքօգտագործման տվյալ նախագծի առանձնահատկությունները (“International Senior Lawyers Project, et al., 2013”)։ Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պայմանագրային իրավական ռեժիմը առավել բնորոշ է զարգացող պետություններին *(Աֆղանստան, Ադրբեջան,*

Ֆիլիպիններ, Լիբերիա, Գվինեա, Կամերուն, Էկվադոր, Մոզամբիկ, Մոնղոլիա, Սիերա Լեոնե և այլն) (Kienzler, et al. 9), որոնք չունեն ոլորտը կարգավորող կայուն օրենսդրական դաշտ (“International Senior Lawyers Project, et al., 2013” 12):

Կարելի է պնդել, որ մեր հանրապետությունում գերակշռում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման թույլատվական իրավական ռեժիմը (Թևանյան 34-35): Չնայած օրենսդիրը ֆորմալ առումով չի բացառել ընդերքօգտագործման պայմանագրում օրենսդրությանը չհակասող այլ պայմանների նախատեսման հնարավորությունը (Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մաս[1])՝ գործնականում ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասը կրկնում է ՀՀ կառավարության՝ 2012թ. մարտի 22-ի N 437-Ն որոշման Հավելվածներ N 2-ով և N 3-ով հաստատված օրինակելի պայմանագրերի (այսուհետ՝ նաև «Օրինակելի ձևեր») բովանդակությունը[2]:

Ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված կարգով: Առանց Օրենսգրքով սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ընդերքօգտագործումը թույլատրվում է բացառապես երկու դեպքում՝ 1) իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից իրենց սեփական հողամասերում մինչև 2 մետր խորությամբ ընդերքից տնտեսական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը՝ լիազոր մարմնին տեղյակ պահելու պայմանով (Օրենսգրքի 48-րդ հոդված) և 2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ հանրամատչելի գույք հավաքելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 175-րդ հոդված):

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է **ընդհանուր կարգով կամ մրցութային կարգով՝** Օրենսգրքով սահմանված որոշակի ժամկետներով: Մրցութային կարգը կիրառվում է միայն ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության դեպքում (Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման վերը նշված ընթացակարգերը ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակներն են:

Օրենսգրքով մանրամասն նկարագրված է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ողջ գործընթացը՝ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման դիմումին ներկայացվող պահանջները, ընդերքօգտագործման իրավունք տրամադրելու համար անցկացվող փորձաքննությունների տեսակները, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման դիմումը բավարարելու կամ մերժելու հիմքերը (Օրենսգրքի 4-5-րդ գլուխներ):

Այսպես՝ Օրենսգրքի 51-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման գործընթացի հիմքում ընկած է **արտոնյալ դիմումատուի կարգավիճակի կիրառման սկզբունքը,** ինչը նշանակում է, որ եթե ընդերքի միևնույն տեղամասի կամ ընդհանուր մաս ունեցող ընդերքի տեղամասերի արդյունահանման իրավունքի համար դիմել է երկու կամ ավելի անձ, ապա նախապատվություն է տրվում **տվյալ տեղամասի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու իրավունք կրողին:** Մեր կարծիքով, նշված սկզբունքի կիրառումը օգտակար հանածոյի արդյունահանման

[1] Հատկանշական է, որ Օրենսգրքով նախատեսվել է միայն օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագրի պայմանները փոփոխելու հնարավորություն, իսկ երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի պայմանները փոփոխելու հնարավորություն՝ անհասկանալի պատճառներով նախատեսված չէ:

[2] Տրամադրված թույլտվությունների և պայմանագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության (https://www.mtad.am/) կայքէջում:

գործընթացում արդարացված է, քանի որ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների միջև առկա է տնտեսական և տեխնիկական շղթայական կապ. ընդերքօգտագործողի կողմից երկրաբանական ուսումնասիրության գործընթացում կատարված ծախսերը պետք է փոխհատուցվեն օգտակար հանածոների արդյունահանումից ստացված օգուտներով (Налетов 74):

Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման գործընթացի հիմքում, ըստ Օրենսգրքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի, ընկած է ***«Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում» (“first come, first served”)*** **սկզբունքը:** Համաձայն նշված հոդվածի՝ եթե երկու կամ ավելի անձ դիմում է ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, որի դիմումն առաջինն է գրանցվել լիազոր մարմնում: Նույն՝ *«Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում»* սկզբունքը կիրառվում է նաև օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դեպքում, եթե բացակայում է արտոնյալ դիմումատուի կարգավիճակի սկզբունքի կիրառման հիմքը (Օրենսգրքի 51-րդ հոդվածի 10-րդ մաս):

ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հանքարդյունաբերության ոլորտում կատարված ուսումնասիրության շրջանակում խնդրահարույց է դիտարկել *«Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում»* սկզբունքն այն պատճառաբանությամբ, որ կարող է սահմանափակել մրցակցությունը, քանի որ չի ստեղծում հավասար պայմաններ տվյալ տեղամասում ընդերքօգտագործում իրականացնել ցանկացող բոլոր կազմակերպությունների համար («Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, 2021» 12):

Չնայած նշված սկզբունքը կիրառվում է նաև այլ՝ դեռևս լավ չուսումնասիրված ընդերքի պաշարներ ունեցող պետություններում և նպատակ ունի խրախուսել երկրաբանական ուսումնասիրությունների իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ որպես նշված սկզբունքի կիրառման այլընտրանք կարող են դիտարկվել տարբեր պետություններում (Պորտուգալիայում, Հնդկաստանում, Ռումինիայում, Ֆրանսիայում) կիրառվող մրցութային կառուցակարգերը («Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, 2021» 12; Ericsson and Löf 38): Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային կառուցակարգերը որպես *«Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում»* սկզբունքի այլընտրանք, խրախուսվում է կիրառել նաև ոլորտի կարգավորմանը նվիրված միջազգային խորհրդատվական փաստաթղթերում («Համաշխարհային բանկ և համահեղինակներ, 2016» 58): Այս կառուցակարգերի դեպքում, նախքան բուն մրցույթի մեկնարկը, կիրառվում է հայտատուների նախաորակավորման գործընթաց (pre-qualification), ինչի արդյունքում օրենսդրական պահանջներին չբավարարող ընկերությունները զերծ են մնում նախագիծ կազմելու համար անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների անհարկի վատնումից («Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, 2021» 12):

Ելնելով ողջ վերոգրյալից՝ առաջարկում ենք հրաժարվել ՀՀ օրենսդրությամբ կիրառվող՝ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ***«Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում»*** սկզբունքից և դրա փոխարեն ՀՀ օրենսդրությամբ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի, ինչպես նաև՝ արտոնյալ դիմումատուի բացակայության դեպքում օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման ընթացակարգերի դեպքում նախատեսել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային կառուցակարգեր:

Պետք է նշել, որ մրցութային կարգով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման դեպքում (Օրենսգրքի 20.1-րդ հոդված), ի տարբերություն ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ընդհանուր հիմքի, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացն (ՀՀ Կառավարություն. N 439-Ն որոշում. 25 Ապր. 2013) առավելապես կարգավորվում է ՀՀ

քաղաքացիական իրավունքի նորմերով: Օրենսգրքի 20.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մրցույթի կազմակերպման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերի նկատմամբ կիրառվում է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ և 464-րդ հոդվածներից բխում է, որ սակարկությունների միջոցով պայմանագրի կնքման իրավունքի ծագման համար իրավաստեղծ իրավաբանական փաստ է աճուրդում կամ մրցույթում հաղթելը: ՀՀ օրենսդրությամբ ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության դեպքում մրցույթում հաղթող անձի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքումը լիազոր մարմնի՝ օրենքով սահմանված պարտականությունն է:

Որպես ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման **ածանցյալ եղանակներ** պետք է առանձնացնել Օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը (Օրենսգրքի 22-23-րդ հոդվածներ) և գրավի առարկա հանդիսացող ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումը (Օրենսգրքի 29-րդ հոդված): Օրենսգրքի համաձայն՝ թե՛ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման, թե՛ հարկադիր օտարման դեպքում պահանջվում է լիազոր մարմնի համաձայնությունը:

Օրենսդիրը ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար նախատեսել է **բարդ իրավաբանական փաստակազմի առկայության պահանջ**. միայն թույլտվության կամ համաձայնության (երկրաբանական ուսումնասիրության դեպքում) տրամադրման կամ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման հիմքով ընդերքօգտագործման իրավունքը չի կարող ծագած համարվել, պարտադիր է, որ միաժամանակ առկա լինեն Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված բոլոր իրավաբանական փաստերը՝ 1) ընդերքօգտագործման թույլտվությունը (ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի դեպքում՝ համաձայնություն), 2) ծրագիր կամ արդյունահանման նախագիծ, 3) լեռնահատկացման ակտ, 4) ընդերքօգտագործման պայմանագիր: Որոշ դեպքերում Օրենսգրքի տարբեր հոդվածներում օրենսդիրը կարծես թե փոքր-ինչ շեղվել է Օրենսգրքի 3-րդ հոդվածում նախատեսված փաստակազմից: Մասնավորապես, Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ չի նշվում «ուսումնասիրության ծրագիրը կամ օգտակար հանածոների արդյունահանման նախագիծը»: Ավելին, Օրենսգրքի այլ հոդվածներից պարզ է դառնում, որ ընդերքօգտագործման պայմանագիրը և ուսումնասիրության ծրագիրը կամ օգտակար հանածոների արդյունահանման նախագիծը թույլտվության, իսկ երկրաբանական ուսումնասիրությունների դեպքում՝ համաձայնության անքակտելի մասն են, սակայն այդ դեպքում էլ լեռնահատկացման ակտի մասին խոսք չի գնում (Օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածներ): Այս առումով առաջին հերթին անհրաժեշտ է Օրենսգրքի տարբեր հոդվածներում ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող իրավաբանական փաստերը համապատասխանեցնել Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին:

Ինչպես նշեցինք, ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար պահանջվող իրավաբանական փաստերից մեկը ընդերքօգտագործման թույլտվությունն է (բացի ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից, որի դեպքում պահանջվում է լիազոր մարմնի համաձայնությունը): Այս առումով Օրենսգիրքը տարբերակում է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունները (Օրենսգրքի 3-րդ հոդված): «Թույլտվության» գիտական և օրենսդրական բնորոշումներից երևում է, որ թույլտվությունը՝ որպես պետական կառավարման մեթոդ, ունենալով վարչահրավական բնույթ (Մուրադյան 124), միայն արձանագրում է դրա հասցեատիրոջ՝ թույլտվություն ստացած սուբյեկտի մոտ

որոշակի գործունեություն իրականացնելու իրավունքը (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետեր, 37-րդ, 53-րդ հոդվածներ) և չի սահմանում ընդերքօգտագործողի և պետության իրավահարաբերության բովանդակությունը, հետևաբար չի առաջացնում կողմերի համար փոխադարձ իրավունքներ և պարտավորություններ: Այս առումով թույլտվությունը ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման բարդ փաստակազմում ընդամենը իրավահաստատող իրավաբանական փաստ է: Ընդ որում, թույլտվության տրամադրումը, ի տարբերություն պայմանագրի, ենթադրում է պետության միակողմանի կամահայտնություն:

Հաջորդ իրավաբանական փաստը ընդերքօգտագործման պայմանագիրն է, որը կարգավորում է ընդերքօգտագործողի և պետության փոխադարձ իրավունքները և պարտավորությունները: Օրենսգրքի 2-րդ մասի 6-րդ կետը նախատեսում է ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատման՝ պետության իրավասությունը: Հիմք ընդունելով Օրենսգրքի նշված նորմը՝ ՀՀ կառավարությունը հաստատել է ընդերքօգտագործման պայմանագրերի Օրինակելի ձևերը: Կարծում ենք, որ Օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրի կնքման վերաբերյալ օրենսդիրը օգտագործում է սխալ տերմինաբանություն՝ նշելով, որ լիազոր մարմինը հրավիրում է դիմումատուին Օրինակելի ձևը «վավերացնելու» համար (Օրենսգրքի 41-րդ և 54-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի էական պայմանների շուրջ կողմերի միջև պետք է համաձայնությունը պահանջվող ձևով ձեռք բերվի, որպեսզի այն համարվի կնքված: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ ԵԿԴ/1867/02/14 քաղաքացիական գործով որոշմամբ արտահայտված դիրքորոշման՝ «Համաձայնության ձեռքբերման ձևը օֆերտա-ակցեպտ ձևն է, որի պահպանման արդյունքում է միայն հնարավոր ձեռք բերել պայմանադիր կողմերի միասնական կամքն արտահայտող համաձայնություն»: Մինչդեռ, Օրենսգրքով ընդերքօգտագործման պայմանագրի կնքումը ենթադրում է ընդերքօգտագործողի կողմից Օրինակելի ձևով պետության միակողմանի սահմանած բոլոր պայմանների ընդունում (Օրենսգրքի 41-րդ և 54-րդ հոդվածներ): Ստացվում է, որ ընդերքօգտագործողի և պետության միջև ընդերքօգտագործման պայմանագրի պայմանները (այդ թվում՝ էական) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով չեն համաձայնեցվում, այլ, փոխարենը, յուրաքանչյուր դեպքում ընդերօգտագործողի կողմից ընդունվում են պետության կողմից միակողմանի կարգով հաստատված պայմանները: Արդյունքում, ընդերքօգտագործման պայմանագիրը ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման համար կրում է խիստ ձևական բնույթ:

Լեռնահատկացման ակտը հավաստում է ընդերքի որոշակի տեղամասի կոորդինատները, որում ընդերքօգտագործողը ստանում է գործունեություն ծավալելու բացառիկ իրավունքը (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետ), իսկ երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը կամ օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը՝ սահմանում են այն բոլոր աշխատանքները, որոնք նախատեսվում է իրականացնել ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ, 50-րդ հոդված):

Օրենսգրքի 31-րդ հոդվածով նախատեսված է ընդերքօգտագործման իրավունքի պետական հաշվառման պահանջը, որն Օրենսգրքում սահմանվում է որպես ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթ (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ) և կատարվում է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից (ՀՀ կառավարություն. N 1758-Ն որոշում. 31 Հոկ. 2002; Republican Geological Fund 2025): Ուշագրավ է, որ Օրենսգրքով ընդերքօգտագործման իրավունքի պետական հաշվառման պահանջը

ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար պարտադիր իրավաբանական փաստ չէ, ինչը բխում է Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից, որում սպառիչ թվարկված են ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար բավարար բոլոր իրավաբանական փաստերը: Ստացվում է, որ ընդերքօգտագործման իրավունքի պետական հաշվառման նպատակը ոչ թե ընդերքօգտագործման իրավունքի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցումն է, այլ պետության կողմից ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացի պատշաճ կառավարումը, էկոլոգիական վիճակի վերահսկումը և այլն (Неделько 51):

Չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն ընդերքի մասը դիտարկվում է որպես անշարժ գույք, ընդերքի մասերի նկատմամբ ծագող գույքային իրավունքները և կնքվող գործարքներից ծագող իրավունքները չեն ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման, ինչն, ըստ էության, գործող օրենսդրության խախտում է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս և 301-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ ընդերքօգտագործման իրավունքի պետական հաշվառման հետ, ինչպես նշեցինք, օրենսդիրը տվյալ իրավունքի ծագման փաստը չի կապում:

Տարբեր պետություններում ընդերքօգտագործման իրավունքի ծագման հիմքերի ուսումնասիրությունը վկայում է, որ ընդերքօգտագործման իրավունքի ծագումը կապվում է հենց ընդերքօգտագործման իրավունքի՝ որպես գույքային իրավունքի պետական գրանցման իրավաբանական փաստի հետ (Չինաստան, Անգլիա, Գերմանիա (“Federal Mining Act of 13 August 1980”, Article 17(3); “Law Business Research Ltd, 2020” 4, 64-65):

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ընդերքօգտագործման իրավունքը, ընդերքի մասերի նկատմամբ ծագող այլ գույքային իրավունքները և ընդերքի մասերի վերաբերյալ կնքվող գործարքներից ծագող իրավունքները ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետք է ենթարկվեն պետական գրանցման: Ըստ այդմ էլ, ընդերքօգտագործման իրավունքը պետք է ծագի դրա պետական գրանցման պահից: Ուստի՝ առաջարկում ենք ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում նախատեսել ընդերքօգտագործման իրավունքի, ընդերքի մասերի նկատմամբ ծագող գույքային իրավունքների և ընդերքի մասերի վերաբերյալ կնքվող գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը:

2. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգը.

ՀՀ օրենսդրությունը կարգավորում է նաև ընդերքօգտագործման իրավունքի **դադարեցման իրավահարաբերությունները:** ՀՀ օրենսդրությամբ, ըստ էության, առանձնացվում են ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (դադարման)[1] **երեք խումբ հիմքեր՝** 1) ընդերքօգտագործողի պարտավորությունները խախտելու դեպքում Օրենսգրքի 30-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում զգուշացման կամ ընդերքօգտագործման իրավունքի կասեցման հիմքերը չվերացնելու դեպքում

[1] Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը նվիրված Օրենսգրքի 30-րդ հոդվածում առկա է եզրութաբանական շփոթ, քանի որ **«իրավունքի դադարեցում»** և **«իրավունքի դադարում»** հասկացությունները կիրառվում են նույն իմաստով: Մինչդեռ «դադարեցումը» որոշակի իրավական գործընթացի հետևանք է, պետաիշխանական լիազորությամբ օժտված մարմնի կամաարտահայտման հետևանք, իսկ «դադարումը» ենթադրում է իրավունքի ուժով առաջացող իրավական հետևանք (տե՛ս, օրինակ՝ Սահմանադրական դատարանի 29. 11. 2016թ. թիվ ՍԴՈ-1325 որոշումը):

ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը[1], 2) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (Օրենսգրքի 30-րդ հոդվածի 7-րդ մաս) ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը, 3) որոշակի իրավաբանական փաստերի վրա հասնելու ուժով (իրավաբանական անձ-ընդերքօգտագործողի լուծարում և այլն) ընդերքօգտագործման իրավունքի դադարումը (Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մաս):

Օրենսգրքի 2-րդ հոդվածը նախատեսում է, որ ընդերքօգտագործման հարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ինչը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման հարաբերությունները *mutatis mutandis* ենթակա են կարգավորման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագիրը փոփոխելու և լուծելու վերաբերյալ կարգավորումներ նախատեսող 466-469-րդ հոդվածներով: Նշված նորմերից բխում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է պայմանագիրը **կողմերի համաձայնությամբ** փոփոխելու և լուծելու ընդհանուր կանոնը, իսկ պայմանագիրը միակողմանի լուծելու հնարավորություն նախատեսել է միայն պայմանագրի էական խախտման (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդված) կամ հանգամանքների էական փոփոխության դեպքում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդված)՝ հնարավորություն տալով օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսել պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու այլ ընթացակարգ:

Օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից բխում է, որ լիազոր մարմինը զգուշացման մասին ընդերքօգտագործողի կողմից ծանուցումը ստանալու պահից՝ 90 օրվա ընթացքում, իրավունք ունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե ընդերքօգտագործողն այդ ժամկետում չի վերացրել զգուշացման հիմքերը: Բացառություն են կազմում միայն Օրենսգրքի 2.1-րդ հոդվածով թվարկված պարտավորությունները, որոնց դեպքում լիազոր մարմինը զգուշացման հիմքերը չվերացնելու դեպքում մինչև ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելը նախ կիրառում է ընդերքօգտագործման իրավունքի կասեցման կառուցակարգը: Միաժամանակ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ որպես ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք, ընհանրական կերպով նախատեսում են, Օրենսգրքով նախատեսված պարտավորությունների, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման իրավունքի պայմանների չկատարումը: Այսպիսով՝ Օրենսգրքի 30-րդ հոդվածի համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ստացվում է, որ լիազոր մարմինը կարող է նախաձեռնել թույլտվությունը միակողմանի դադարեցնելու և պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթաց ընդերքօգտագործողի ցանկացած տեսակի պարտավորության խախտման դեպքում (բացառությամբ Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2.1-րդ մասով թվարկված պարտավորությունների), եթե ընդերքօգտագործողը չի վերացնում այդ պարտավորության խախտումը զգուշացման մասին ծանուցվելու պահից 90-օրյա ժամկետում:

Նույն մոտեցումն է որդեգրված նաև ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի N 437-Ն որոշման Հավելվածներ N 2-ով և N 3-ով հաստատված Օրինակելի ձևերով, որի 6.3.1-րդ կետի համաձայն՝ *պայմանագիրը կարող է լուծվել, ի թիվս այլոց (պետք է լիներ՝ «այլնի»), լիազոր մարմնի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից պայմանագրի դրույթների խախտման դեպքում*: Ինչպես վերը նշել ենք, պայմանագրի դրույթների խախտումը հիշատակվում է նաև Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում **որպես ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք,** որը ՀՀ

[1] Օրենսգրքում կոնկրետ թվարկված պարտավորությունների խախտման համար Օրենսգրքի 30-րդ հոդվածով նախատեսվում է ընդերքօգտագործման իրավունքի կասեցման, իսկ կասեցման հիմքերը չվերացնելու դեպքում՝ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման կառուցակարգը (Օրենսգրքի 2.1-րդ հոդված):

ընդերքի մասին օրենսգրքով սահմանված կարգով կարող է հանգեցնել ընդերքօգտագործման թույլտվության դադարեցման: Այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման թույլտվության դադարեցման և ընդերքօգտագործման պայմանագրի լուծման հիմքերը փաստացի համընկնում են: Միաժամանակ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 6-րդ մասը փաստացի ամրագրում է ընդերքօգտագործման թույլտվության դադարման դեպքում պետության՝ ընդերքօգտագործման պայմանագիրը լուծելու լիազոր մարմնի հայեցողական լիազորությունը, ինչն անտրամաբանական է թվում, քանի որ թույլտվության բացակայության պայմաններում պայմանագրային հարաբերությունների շարունակվելը միայն ստեղծում է իրավական անորոշություն:

Օրենսգրքի 30-րդ հոդվածի իրավակարգավորումների պարագայում ՀՀ-ում ընդերքօգտագործման ոլորտում ծագած բոլոր վեճերը (այդ թվում՝ մասնավոր-իրավական) ներկայումս լուծվում են բացառապես վարչական դատավարության կարգով, ինչը հանգեցնում է վարչական դատավարության կարգով քննվող վեճի շրջանակում ՀՀ քաղաքացիական իրավունքի ինստիտուտների կիրառման և մեկնաբանման անհրաժեշտության:

Նշվածի վառ օրինակ է Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/10905/05/19 վարչական գործով 09. 06. 2023 թվականի որոշումը, որով Վճռաբեկ դատարանն ընդերքօգտագործողի սնանկ ճանաչված լինելու իրավաբանական փաստը դիտարկել է որպես ընդերքօգտագործողի պարտավորությունների կատարման անհնարինություն առաջացնող և ընդերքօգտագործողի պատասխանատվությունը՝ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը, բացառող հանգամանք՝ **«անհաղթահարելի ուժ»** ***(“Force Majeure”)*** ՝ ըստ Էության մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական իրավունքի համանուն ինստիտուտը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մաս, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, 55.1-րդ հոդված): Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանը սույն որոշման պատճառաբանական մասում չի անդրադարձել 27.11.2015թ. թիվ ԵԷԴ/0888/02/14, 17.04.2009թ. թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործերով կայացված նախադեպային որոշումներով սահմանված՝ անհաղթահարելի ուժի գնահատման անհրաժեշտ պայմաններին (արտակարգ, անկանխելի հանգամանքներ և այլն): Այսպիսով՝ ընդերքօգտագործողի սնանկ ճանաչված լինելու իրավաբանական փաստը որպես ընդերքօգտագործողի պարտավորությունների կատարման անհնարինություն առաջացնող **«անհաղթահարելի ուժ»** դիտարկելով՝ Վճռաբեկ դատարանը չի հիմնավորել իր նախադեպային որոշումներով անհաղթահարելի ուժի գնահատման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ դոկտրինալ աղբյուներում նույնպես «անհաղթահարելի ուժ»-ը մեկնաբանվել է որպես *«դեպք կամ ազդեցություն, որն անսպասելի է, անկառավարելի, աննախադեպ և դուրս է կողմերի վերահսկողությունից»* (G&A Advocates LLP 2025): Սույն հոդվածում նպատակ չունենալով քննարկելու սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու փաստը անհաղթահարելի ուժ համարելու հարցը և հիմք ընդունելով դոկտրինալ աղբյուրներում և ներպետական իրավակիրառ պրակտիկայում «անհաղթահարելի ուժ» եզրույթի մեկնաբանությունները՝ գտնում ենք, որ ընդերքօգտագործողին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու փաստը չի կարող դիտարկվել որպես ընդերքօգտագործողի բոլոր պարտավորությունների կատարման բացարձակ անհնարինություն առաջացնող հանգամանք, քանի որ սնանկության վարույթում հայտնվելը պայմանավորված է սուբյեկտիվ գործոններով, որոնցից հիմնականը ընդերքօգտագործող-իրավաբանական անձի սեփական գույքի ոչ արդյունավետ կառավարումն է, ինչը չի կարող մեկնաբանվել որպես արտակարգ կամ անկանխելի հանգամանք:

Նշված օրինակով պարզ է դառնում, որ Օրենսգրքի 30-րդ հոդվածով ընդերքօգտագործման պայմանագրի լուծման վարչահրավական ընթացակարգը և վարչական դատավարության կարգով ցանկացած դեպքում ընդերքօգտագործման պայմանագրի վիճարկումը ոչ միայն իմաստազրկում է ընդերքօգտագործման հարաբերություններում պայմանագրի ինստիտուտը և նշանակությունը, այլև, ի թիվս այլնի, հանգեցնում է ընդերքօգտագործման ոլորտում ծագող մասնավոր-իրավական բնույթի վեճերի՝ վարչական դատավարության կարգով նմանօրինակ լուծումների:

Պատմական այս երկու շրջանների հետ Շանթը զուգորդում է նաև երրորդը, և գործողությունների կենտրոնում է հայտնվում Արտավազդը, որի մասին Խորենացին շատ հակասական կարծիք է հայտնում՝ նշելով, որ նա դուրս եկավ մի քաջ, ինքնահավան և հպարտ մարդ: Նա ծերունի Արգամին նախանձելով՝ իր հոր զայրույթը շարժեց Արգամի դեմ, իբրև թե նա մտածում է բոլորի վրա թագավորել: Այս կերպով նրան պատվից գցելով՝ ինքն է ստանում երկրորդական գահը (Խորենացի, Հայոց պատմություն 120):

Հետագա պատմագիտական աղբյուրները սակավ տեղեկություններ են հաղորդում Արտավազդի մասին: Հակոբ Մանանդյանը նշում է. «Պատմական ու բանասիրական նորագույն երկերում Արտաշես Ա-ի հաջորդների և Արտավազդի ու Տիգրան Բ-ի ազգակցության մասին հայտնվել են հակասական կարծիքներ: Կարող ենք, ըստ իս, համաձայն Ապպիանոսի տեղեկությունների, հավանական համարել, որ Արտաշես Ա-ին հաջորդել է նրա որդին՝ Արտավազդ Ա-ը, և ապա՝ սրա եղբայրը՝ Տիգրան Ա-ը» (Մանանդյան, Երկեր 138-139):

Ինչպես տեսնում ենք, Արտավազդին անդրադարձ կատարվում է մասնակի, և մոտեցման այս կերպը գալիս է Խորենացուց, որ իր աշխատությունում զուգորդել է պատմական իրականությունն ու առասպելը, ինչը պատճառ է դարձել, որ հետագա ուսումնասիրողները կամ մեկ-երկու նախադասությամբ նշեն, որ նա Արտաշեսի որդին էր, կամ շեշտեն այն հանգամանքը, որ խոսքը գնում է հայ հին վեպից հայտնի անիծված թագաժառանգի մասին (Գիւզալեան 564):

Ի վերջո ո՞րն էր Շանթի նպատակը, և ինչու՞ է պատմական այդ խառնակ ժամանակաշրջանի նկարագրության համար գլխավոր կերպար ընտրում Արտավազդին: Ո՞վ կարող էր ավելի լավ իմանալ ազատության գինը, եթե ոչ շղթայված Արտավազդը: Շանթի զուգորդած բոլոր պատմական ժամանակաշրջաններում էական խնդիր է ազատությունը: Արտավազդ, 12-րդ դարի Անի և 1918 թվականի Հայաստան. երեք տարբեր ժամանակաշրջան, և փոխվել է միայն այդ ազատությունը սահմանափակող շղթաների ձևը:

«Շանթի Արտավազդը՝ որպես ազատության գաղափար, իր մեջ մարմնավորում է հասկացության հակադիր ծայրաթևերը: Արտավազդ-Նաղաշ Նաթանը հիասթափված է մարդ-արարածի վայրենաբարո վարքագծից. նա հասկանում է, որ իր մղած ջանքերն այլ պտուղներ են տվել, արթնացած բնազդները ժամանակի մեջ բացառում են նաև հանրային կարգը, ինչը վերջնական արդյունքում բարոյական առաջընթացի ճանապարհին դառնում է լուրջ վտանգ» (Գրիգորյան 278):

Շանթը ներքին զգացողությամբ փորձում էր վանել առավել ակնհայտ դարձող սպառնալիքները: Սակայն սկզբում ուղղակի անիրական թվացող մտքերը մարմին են առնում, և բոլշևիկյան մեքենան սկսում է կազմաքանդ անել նոր ձևավորված և երերուն հիմքերի վրա գտնվող պետականությունը: Խավար սենյակում հավաքված հեղափոխական գործիչները նույն միտքն ունեին. հայրենիքը կործանվում էր նրանց աչքի առաջ, իսկ դժվարությամբ ձեռք բերված անկախությունը միֆ էր, որ քիչ անց պիտի ցնդեր և տպավորություն ստեղծեր, որ չի էլ եղել:

Շանթի գաղափարական հերոսի վերջնական կործանումը Մոսկվայի պայմանագրի ստորագրումն էր, որտեղ հայկական պատվիրակության կազմում իր իսկ կամքին հակառակ ընդգրվում է նաև Շանթը: Այդ օրերի մասին կարդում ենք Սիմոն Վրացյանի հուշերում. «Մոսկուայից վերադարձին Շանթին ես շատ փոխուած տեսայ: Ընկճուած չէր: Արտաքնապես պահում էր նախկին աշխույժը և անայլայլ շարունակում էր հետաքրքրուիլ պետական գործերով: Դարձել էր մտամփոփ, աւելի եւս կոճկուած: Աւելի լսում էր, քան խոսում: Եւ երբ վեճերը սուր բնոյթ էին ստանում, նա գլուխը կախ, հայացքը մի կէտի յառած՝ մնում էր անշարժ: Երբեմն թւում էր նոյնիսկ, թէ բացակայ էր ժողովից» (Ակօս 24):

Շանթը մեղադրում էր նաև իրեն նշված իրավիճակի համար, և ինքնահալածանքի վերջնակետը պիտի լիներ մեկընդմիշտ Հայաստանից հեռանալն ու օտար ափերում հոգեկան հանգստություն փնտրելը:

«1928-ին Հայաստանի Հանրապետության տասնամյակին նվիրված հանդիսության ժամանակ արտասանած ճառում Լևոն Շանթը նկատում էր. «Օտար գաղութներու մեջ, շրջապատի հազար ու մեկ վտանգներուն մեջ ինչպե՞ս կրնա նոր սերունդը հայ ըլլալ և անկախության պայքարը մղել: Մանավանդ ինչպե՞ս պետք է հոգիով հայ մնա: Մայիսի 28-ը անցյալ կդառնա, մինչ ան պետք է ապագայի տենչ մը ըլլա: Ո՞վ պետք է կատարե այս դերը. հայրենիք չկա . . . »» (Փանոսյան 7):

«Շղթայվածի» պատմագեղարվեստական հենքը հասկանալու համար, անշուշտ, պետք է իմանալ այս նախապատմությունը, քայլել գրողի անցած ճանապարհով և հետո անխուսափելիորեն գիտակցել, որ Շանթը չէր կարող կտրվել իրականությունից՝ լինելով այդ ամենի կիզակետում. «Անխուսափելի էր անշուշտ, որ ռուսական յեղափոխութիւնը եւ ազգային անկախ գոյութեան ստեղծած հարցերը այս կամ այն ձեւով արձագանք գտած ըլլան պատրաստութեան մէջ եղող գրքին մէջ, որ ժողովրդական խանդավառութեան կողքին՝ ամբոխային տրամադրութիւններ ալ կը պատկերէ, ընկերային առողջ ձգտումներու հետ՝ բռնակալական թաքուն կամ բացայայտ ախորժակներ:

Աննախընթաց վերիվայրումներու ստեղծած տպաւորութիւնը տակաւին թարմ իր մտքին ու երեւակայութեան մէջ՝ Լեւոն Շանթ կը ձեռնարկէ յեղափոխական պայքարի գեղարուեստական պատկերումին» (Շահինյան 138):

Արդյո՞ք պատմական դրամա է Շանթի այս գործը: Շանթի այս երկում զուգորդվել են երեք ժամանակաշրջան՝ ներկան՝ իր հեղափոխական փոթորկուն պատկերով, անցյալը, որից դարեր անց ոչինչ չի փոխվել և ապագան, որն անհայտ է, միֆական ու գալու է շղթայված Արտավազդի կապանքների ազատվելուց հետո, և հայտնի չէ այդ ապագան բարի՞ է, թե՞ կործանում է նախանշում:

Ներկայի և անցյալի գեղարվեստական բախումը դրամայում

«Շղթայվածը» դրաման ունի երկու բնաբան՝ Խորենացի. «Զրուցեն զսմանէ եւ պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք. եւ երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանալ ելանել եւ առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնոց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ բազումք ի դարբնաց յաւուր միաշաբաթւոջ երիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ» և Եզնիկ Կողբացի. «Զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս» (Շանթ, Երկեր 515):

Եղած բնաբաններն թույլ են տալիս ենթադրել, որ Շանթը դրաման գրելուց առաջ ուսումնասիրել է Արտավազդի կերպարը և դրա շուրջ եղած տարակարծությունները և գտել է պատմական այդ հակասական կերպարը մեկնելու իր տարբերակը:

Շանթի այս գործը կարելի է համարել պատմական, քանզի հեղինակը քննում է հստակ պատմական իրողություն՝ **Դավիթ Շինարարի օրոք (1089-1125)** հայ-վրացական միացյալ ուժերը կազմակերպեցին ապստամբություն, և քաղաքը ազատեցին սելջուկների տիրապետությունից: Դավիթ Շինարարի անունը կապվում է Կիլիկիայի և, հատկապես, Անիի վերաշինման և բարգավաճման հետ: 1123թ-ին քաղաքի ազատագրությունից հետո ավագանին քաղաքի իշխանությունը հանձնում է Դավիթ Շինարարին: Նրա կերպարը դրամայում հանդես է գալիս իշխան «անվան» տակ, և սա պատահական չէ: Շանթը Դավիթ Շինարարի կերպարի միջոցով պատկերել է ներկա և նախկին բոլոր իշխանավորներին: Նախ իշխանը կերպավորվում է Էմիրի հետ ունեցած զրույցում, որտեղ նկարագրված երկխոսությունը թույլ է տալիս առաջին կարծիք կազմել իշխանի կերպարի մասին.

Էմիրը — Կա ավելին. զորքերս թալաներ են եղեր չգիտեմ վարի որ գյուղերը. կարծես թե զինվոր ըսածդ պարտական է քաղցած պտտելու: Չի ամչնար՝ եկեր է վրաս գանգատի քանի մը հավի ու քանի մը չուլի համար:

Իշխանը — Թո՛ղ, Էմիր, ժողովուրդ ըսածդ միշտ կտրտնջա, միշտ ալ բեռը շալակը առած քաշ կու տա. այդպես է անոր հնադարյան սովորությունը (Շանթ, Երկեր 519):

Երկու իշխողների միջև եղած խոսակցություն, որը ոչ միայն Էմիրին հաճոյանալու իշխանի ցանկության մասին է, այլ նաև ներկայացնում է «իշխողների» ընդհանուր հոգեբանությունը. տիրել, ճնշել և հաշվի չառնել հասարակ ժողովրդի կեցության ծանր պայմանները:

-Ես մարդն մըն եմ, որ կսիրեմ իշխելը: Իսկ ով կուզե, որ խոնարհին իր առջևը,պետք է ինքը խոնարհիլ գիտնա իրմե ուժեղին առջևը,- ասում է իշխանը և վերահաստատում իր դիրքը: Հետագայում արդեն Սաղաթելի հետ ունեցած զրույցում արդեն իսկ նկատելի են իշխանի սեփականատիրական մտքերը. «Չէ՞ որ Անին, իսկն ըսած, իմ քաղաքս է, ի՛մ» (Շանթ, Երկեր 521):

Չինված ապստամբությունից հետո Պահլավունի իշխանը հասնում է այդքան բաղձալի իշխանությանը. սակայն չնկատելով որևէ փոփոխություն՝ ժողովուրդը դարձյալ ապստամբում է, և իշխանը ստիպված է լինում հանձնել իշխանությունը դարբինին,սակայն դարբինն էլ այս իշխողների շղթայի հերթական օղակն էր: Սոցիալական հիմքի վրա սկիզբ առած պայքարը սելջուկյան բռնատիրական իշխանության դեմ ժամանակի ընթացքում վերաճում է գաղափարական պայքարի, որտեղ նժարի մի կողմում իշխանությունն է, իսկ մյուս կողմում՝ դրա հետևանքով մարդկանց մոտ երևան եկած բարոյական նորմերի խախտումները: Շանթի ճանաչողությունը զուգակշռում է այդ նժարները և ցավով արձանագրում դրանց հավասարությունը. «Իզու՛ր այրեցի. . . իզուր այրեցի: Ահա՛ մուխին ու

բոցերուն մեջեն կծլի նորեն հին բերդը, կբուսնի նորեն հին շենքը, հին պատերը, հին կապերը, և իմ ճակատիս հին սև գիրը... որուն դեմ իզուր է, իզու՛ր մաքառիլը» (Շանթ, Երկեր 558):

Լինելով քաղաքական բարձր գիտակցության կրող՝ Լևոն Շանթը համեմատականներ է տանում պատմական ներկայի և անցյալի միջև, և իր իսկ խոսքերով՝ այդքան սպասված անկախությունը կարելի է ձեռք բերել հանրային շարժումով, որն էլ իրագործվում է քարոզչությամբ և գաղափարներով, սակայն գաղափարական պայքարին պետք է հաջորդի գործը, իսկ մեր գործիչներն անցյալում բավարարվել են միայն քարոզով ու երազանքներով. «Լա՛վ, թողնե՛նք անցյալը. ինչ որ եղեր է՝ եղեր է: Իսկ հիմա՞, ասկե՞ետքը, ո՞րն է ըլլալու հայության խելացի ձգտումը: Ինչքան ալ որ ինքնին անհեթեթ և լուսնի վրայեն նոր վար իջած մարդու խոսք ըլլա այս հարցը, բայց և այնպես հիմա՝ որ կողմ ալ դառնաս՝ կհանդիպես այդ հարցին»: (Շանթ, Անկախությունը պահանջ ազգային գոյության 95):

Եվ միգուցե հիմա ևս կարիք կա անցնելու քարոզից գործի՝ փշրելու համար այն կապանքները, որոնք օր օրի ավելի են հեռացնում մեզ ամենակարևորից՝ անկախությունից:

Ամփոփում

Շանթը ընդգծում է հետևյալը, որ քանի աշխարհը այս ընթացքի մեջ է, արդարությունն ու ազատությունը տեղ չունեն այստեղ: Փոխվելու են իշխողները, բայց նրանց ներսում եղած բնազդները մնալու են նույնը: Պիտի գա Արտավազդը, որ կործանի աշխարհը, որ վերափոխի այն, և այդ փոփոխությունը պետք է սկսվի ոչ թե արտաքին աշխարհից, այլ սեփական եսից, մտածողության կերպից. «Եթե կուզե՛ք, որ փրթին ձեր բոլոր շղթաները, եթե կուզեք, որ փրթին ձեր բոլորի շղթաները, ընկճեցե՛ք այն բռնակալը, որ կտիրե ձեզմե ամեն մեկուն կրծքին տակ,մեռցուցեք ձեր մեջի՛ բռնակալը:

Զարմացա՛ք, գիտեմ. ատ չէր ձեր լսել ուզածը. դուք կսիրեք դուրսի բռնակալները, որոնց դեմ կարելի է բողոքել, աղմկել, կրճըտել ու դավել: Բայց ես կըսեմ ձեզի. հո՛ն է, հո՛ն, ձեր հոգիներուն թավ խավարին մեջ թափառող այն հզոր, այն անզուսպ բռնակալը, որ կուզե իշխե ամենուն վրա, կուզե խլե ուրիշներուն ունեցածը, կուզե ուտե ուրիշներուն աշխատանքը. կուզե, որ բոլորը երկրպագեն իրեն ու ծառայեն իր քմայքին ու հաճույքին. հո՛ն է, հոն. ձեր հոգիներու թավ խավարին մեջ, հո՛ն, ձեզմե ամեն մեկուն կրծքին տակ» (Շանթ, Երկեր 564):

Շանթը հավատում է Արտավազդի գալուն, ապրում է այդ օրը տեսնելու ցանկությամբ, սակայն Հակոբ Օշականը հենց այս փաստն է կասկածի տակ դնում . «Կասկածի կենթարկեմ բոլոր շղթայվածներուն դերը, երբ օր մը կկոտրեն զանոնք կապող երկաթները» (Շանթ, Մարդը և գործը 208):

Իսկ միգուցե այդ «շղթայվածը» մենք ենք: Մեր ներսի մութ քարայրում փակված ամեն օր կռիվ ենք տալիս ազատության, արդարության և հաճախ նաև դրանց հակասող մեր արարքների համար: Այդ պայքարը հավերժական է, քանի դեռ մարդը անցնում է մարդուց մարդ դառնալու դժվար ճանապարհը, և Շանթը հավատում է, որ միֆի և իրականի զուգորդմամբ գալու է այդքան գիտակցական ազատությունը. «Ո՞ւր է, ո՞ւր է Արտավազդը»,-կպոռա հիմա ի՛մ սիրտս: Ե՞րբ պիտի փրցընե ան կապանքները. ձեր կապանքները. ե՞րբ պիտի դուրս գա ան ձեր հոգիներու թանձր խավարեն, ձեր ներքին անդունդներուն խորին խավերեն. ե՞րբ պիտի դուրս գա. ըսե՛ք, հիմա ես եմ, որ կհարցնեմ ձեզի:Ո՞ւր է, ո՞ւր է իմ Արտավազդը: Ինչո՞ւ, ինչո՞ւ ամուր կպահեք կալանքներու տակ, կապանքներու տակ, փականքներու տակ, ձեր կրծքերու տակ: Ո՞ւր է, ո՞ւր է իմ Արտավազդը: Հիմա ե՛ս եմ, որ կհարցնեմ ձեզի, հիմա ե՛ս եմ, որ…» (Շանթ, Երկեր 564):

Եզրահանգումներ

Ամփոփելով «Շղթայվածը» դրամայի պատմական և գեղարվեստական կողմերը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները:

- 20-րդ դարասկզբի քաղաքական իրադարձությունները իրենց հունի մեջ են առնում նաև Լևոն Շանթին, և գրողը իր գործուն մասնակցությունն է ունեցել Առաջին հանրապետության ձևավորման գործընթացում:
- «Շղթայվածը» դրաման տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների անմիջական արձագանքն է, որտեղ 12-րդ դարի իրադարձություններին կենդանություն տալու միջոցով հեղինակը խոսում է իր ժամանակի ցավալի իրողությունների մասին:
- Լևոն Շանթը խոսում է այն իրողությունների մասին, որոնք օրհասական են նաև այսօր: Հեղինակը Անի քաղաքի օրինակով ներկայացնում է երեք իշխանություն՝ թուրք Էմիր, Վահրամ Պահլավունի և արհեստավորներ: Հեղինակը աստիճանական դասակարգման մեջ կարծես թե սկսում է ամենաածանր կառավարման օղակից, երբ Անին կառավարում էր Էմիրը, սակայն հետագա իրադարձությունները ցույց են տալիս, որ այս երեք իշխողների դեպքում էլ փոխվում են միայն անունները, իսկ հասարակ ժողովրդի վիճակը ավելի է վատթարանում:
- Նաղաշի բերանով Շանթը քարոզում է այդքան բաղձալի ազատության՝ շղթայված Արտավազդի միջոցով հասնելը, իսկ հարճը կանգնած է իրականության և առասպելի ընկալման ցավոտ սահմանագծին. մի կողմում կրակի մատնված Անին է, իսկ մյուս կողմում՝ Արտավազդը: Իսկ ու՞ր է Արտավազդը և ե՞րբ պիտի գա. . .

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ակօս». N2-3/ բացառիկ, Սիմոն Վրացեան, Շանթի հետ, Պէյրութ, 1952, էջ 23-24:

2. Գիւզալեան Գառնիկ. *Պատմութիւն Մերձաւոր Արեւելքի եւ Հայաստանի.* Համազգային ընկերութեան տպարան, Պէյրութ, 1951:

3. Գրիգորյան, Վաչագան. *Լևոն Շանթի դրամատուրգիան*. Արտագերս հրատարակչություն, Երևան, 2020:

4. Խորենացի, Մովսես. *Հայոց պատմություն*. Հայպետհրատ, Երևան, 1940:

5. Մանանդյան, Հակոբ. *Երկեր.* Հատոր Ա, ՀՍԱՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1977:

6. Շանթ Լևոն. *Անկախությունը պահանջ ազգային գոյության*. Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան,1991:

7. ---. *Երկեր.* Երևան, Սովետական գրող, 1989:

8. ---. *Մարդը և գործը*. Համազգային հայ կրթական և մշակութային միություն, Երևան, 2019:

9. Շահինյան, Գրիգոր. *Ձիւներն ի վեր*. Պէյրութ, 1967:

10. Փանոսյան, Սարգիս. *Լևոն Շանթ*. Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1992:

WORKS CITED

1. Gyuzalyan, Garnik, ″Patmutyun Merdzavor Arevelqi ev Hayastani″ [The History of Middle East and Armenia], Hamazgayin ynkerutyan tparan, Peyrut, 1951. (in Armenian)

2. Grigoryan, Vachagan, ″Levon Shanti dramaturgian′ [The Dramaturgy of Levon Shant]′, Artagers hratarakchutyun ,Yerevan, 2020. (in Armenian)

3. Manandyan, Hakob, ″Erker″ [Works], Haypethrat, Hator A, HSAH GA hratarakchutyun, Yerevan, 1977. (in Armenian)
4. ″Levon Shant mardy ev gorcy [Levon Shant: A Person and a Work], Hamzagayin hay krtakan ev mshakutayin miutyun, Yerevan, 2019. (in Armenian)
5. Panosyan, Sargis, ″Levon Shant″, Yerevani hamalsarani hratarakchutyun, Yerevan, 1992. (in Armenian)
6. Shahinyan, Grigor.″Dzyunern i ver″ [Since the Snows], Peyrut, 1967. (in Armenian)
7. Shant Levon, Ankaxutyuny pahanj azgayin goyutyan The Independence as the Demand for the National Existence], Erevani hamalsarani hratarakchutyun, Yerevan, 1991. (in Armenian)
8. Shant, Levon. ″Erker″, Yerevan, 1989. (In Armenian)
9. Xorenaci, Movses, ″Hayoc patmutyun″ [History of Armenia], Haypethrat, Yerevan, 1940. (in Armenian)
10. "Akos", Peyrut, 1952, N2-3/ bacarik, Simon Vracyan, ″Shanti het″, ej 23-24. (in Armenian)

SHANT'S «THE CHARMED» DRAMA IN HISTORICAL AND FICTION ASPECTS

ASTGHIK BOYAJYAN

Khachatur Abovian Armenian State Pedagogical University,
Department of Armenian New and Modern Literature and its Teaching Methods after Vache Partizuni, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to present Levon Shant's drama "The Chained" in historical and artistic contexts. The research is relevant, since even a century later we facing the problems that found their expression in the drama. In this regard, our goal was to subject the work to an in-depth analysis and find the motives of the writing and the ways of shaping the historical past.

To achieve the goal, the following tasks were set: to study the events preceding and following the proclamation of the First Republic and their impact on Shant's drama "The Chained" based on historical realities and scientific materials.

During the research, the methods of synthesis, induction, deduction and historical comparison were used.

The main conclusion of the study is that, in addition to depicting the events of the 12th century in the drama "The Chained", also sought to ‘project the events of his own era’ onto that historical period. Being one of the pioneers of the First Republic, Shant experiences deep disappointment due to the events that followed the loss of statehood. Through the voices of his characters, Shant speaks of a painful reality that remains relevant today.

Keywords: *First Republic, Artavazd, independence, history, Moscow Treaty, literary criticism, Levon Shant.*

ДРАМА ШАНТА «ЗАЧАРОВАННЫЕ» В ИСТОРИКО-ХУДОЖЕСТВЕННОМ АСПЕКТЕ

АСТХИК БОЯДЖЯН

аспирант кафедры новой армянской литературы и методики её преподавания имени Вече Партизуни Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна,

г. Ереван, Республика Армения

Цель статьи – представить драму Левона Шанта «Скованные» в историко-художественном контексте. Исследование актуально, поскольку даже спустя столетие актуальными остаются проблемамы, нашедшие отражение в этой драме. В связи с этим нашей целью было подвергнуть произведение глубокому анализу, выявить мотивы создания драмы и способы преобразования в ней исторического прошлого.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: изучить события, предшествовавшие и последовавшие за провозглашением Первой республики в Армении, и их влияние на драму Шанта «Скованные» на основе исторических реалий и научного материала.

В ходе исследования использовались методы синтеза, индукции, дедукции и исторического сопоставления.

Главный вывод, сделанный в рамках исследования, заключается в том, что Шант, помимо описания событий XII века в драме «Скованные», также пытается «перенести» в этот период события своей эпохи. Будучи одним из пионеров Первой республики, Шант испытывает глубокое разочарование в связи с событиями, последовавшими за потерей государственности. Устами своих героев Шант говорит о болезненной реальности, что актуально и сегодня.

Ключевые слова: *Первая республика, Артавазд, независимость, история, Московский договор, литературная критика, Левон Шант.*

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՍԻՐԱՅԻՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ. ԱՊՐՎԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐ *

ՀՏԴ 801.7 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-249*

ԷԼԻՉԿԱ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ
Ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ,
«Հայաստանում Եվրոպական Քոլեջ» հիմնադրամի դասախոս,
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ellameliqbekyan1979@gmail.com
ORCID 0009-0006-9542-0404

Հետազոտությունը նվիրված է Սայաթ-Նովայի սիրային քնարերգության առանցքային խնդրին՝ ապրված իրականության և գեղարվեստական երևակայության փոխհարաբերությանը: Հայ գրականագիտության մեջ երկար ժամանակ բանավեճ է ընթանում աշուղի սիրո բնույթի շուրջ, որը հաճախ բևեռացվում է «իրակա՞ն, թե՞ հորինված» երկընտրանքի շուրջ: Սակայն նման մոտեցումը պարզունակ է դարձնում աշուղական արվեստի բարդ էությունը:

Հետազոտության նպատակը Սայաթ-Նովայի սիրային քնարերգության մեջ ապրված իրականության և գեղարվեստական երևակայության փոխհարաբերության քննությունն է՝ հիմնավորելով, որ բանաստեղծի սերը ոչ թե զուտ գրական հնարք է, այլ իրական փորձառության գեղարվեստականացման արդյունք:

Այս նպատակին հասնելու համար կիրառվել է համալիր մոտեցում՝ համադրելով համեմատական, գրական-փիլիսոփայական և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Հակադրվում են երկու հիմնական տեսակետները, և հիմք ընդունելով Հ. Թումանյանի, Պ. Սևակի և Հ. Բախչինյանի փաստարկները՝ իրականացվում է Սայաթ-Նովայի խաղերի խորքային քննություն:

Համալիր մեթոդների կիրառման արդյունքնում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ***Վերլուծել հայ գրականագիտության մեջ Սայաթ-Նովայի սիրո բնույթի շուրջ առկա երկու հիմնական՝ «իրականի» և «հորինվածի» տեսակետները:***
- ***Քննել սիրո ողբերգականության պատճառները, կենսագրական և ստեղծագործական փոխհարաբերությունները:***
- ***Բացահայտել Սայաթ-Նովայի սիրո փիլիսոփայական և հոգեբանական շերտերն առանցքային խաղերի թեմատիկ վերլուծության միջոցով:***

Հետազոտությունը հանգում է այն եզրակացության, որ Սայաթ-Նովայի սերն իրական, ապրված փորձառություն է, ինչը հաստատվում է խաղերի հուզական անկեղծությամբ, կենսագրական ակնարկներով և զգացմունքների խորությամբ: Նրա անհասանելի սերը դարձել է ոչ միայն անմահ պոեզիայի հիմք, այլև կյանքի, արվեստի և նվիրումի մասին խորհրդածությունների շարժիչ ուժ: Պոեզիան, ծնունդ առնելով իրական հիմքից, վերածվում և համընդհանրանում է աշուղական արվեստի կանոնների միջոցով՝ անձնական տառապանքը վերածելով համամարդկային ապրումի:

* Հոդվածը ներկայացվել է 14.07.2025թ., գրախոսվել՝ 10.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Այսպիսով՝ Սայաթ-Նովայի անհասանելի սերն է դարձել ոչ միայն նրա անմահ պոեզիայի հիմքը, այլև կյանքի, արվեստի և նվիրումի մասին խորհրդածությունների շարժիչ ուժը:

Հիմնաբառեր՝ *սեր, քնարերգություն, խաղերի վերլուծություն, աշուղական արվեստ, իրական, երևակայական, զգացմունք, հոգեվիճակ, գեղարվեստականացում:*

Ներածություն

Սայաթ-Նովայի պոեզիան մի հսկայական տիեզերք է, որի կենտրոնական առանցքը սերն է: Սակայն նրա ստեղծագործություններում սերը ոչ թե պարզապես զգացմունք է, այլ մի ամբողջական աշխարհայացք, փիլիսոփայական համակարգ՝ իր օրինաչափություններով ու հակասություններով: Նրա սիրային քնարերգությունը բարձրացնում է մի շարք հարցեր, որոնց վերլուծությունը թույլ է տալիս խորամուխ լինել աշուղի հոգևոր աշխարհի խորքերը: Դիտարկենք այդ փիլիսոփայության առանցքային մի քանի դրույթներ:

Պարույր Սևակն իր «Սայաթ-Նովա» մենագրության էջերում Սայաթ-Նովային բնորոշում է որպես «ողբերգականորեն անհույս սիրո երգիչ» մի քանի հիմնական պատճառներով:

Պ. Սևակը նշել է նաև, որ Սայաթ-Նովայի սիրո ողբերգականությունն արտահայտվում է նրա խաղերում առկա երկակիությամբ. մի կողմից սերը ներկայացվում է որպես վսեմ, մարդուն վեհացնող աստվածային զգացմունք, մյուս կողմից՝ որպես անկարելի, հասարակության կառուցվածքի և սոցիալական անհավասարության պատճառով անիրագործելի երազանք: Ահա մի հատված Պ. Սևակի հիմնավորումից. «Սայաթ-Նովայի սերը փոխադա՞րձ էր արդյոք. ահա մի հարց, որի պատասխանից էլ ոչինչ չի փոխվում: Եթե մինչև իսկ փոխադարձ էր, դարձյալ երջանիկ չէր այդ սերը, որովհետև ավելին էր, քան թե նույնիսկ մերժվածությունը: Անհույս էր այդ սերը (Բոլոր սայաթնովագետներն անխտիր Գ. Ախվերդյանից մինչև Հ. Թումանյան և Հ. Թումանյանից մինչև Մ. Հասրաթյան) միաբերան խոսել են Սայաթ-նովայի սիրո ողբերգական բնույթի մասին, շեշտել այդ սիրո անհուսությունը: Միայն վերջերս (Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի օրերին) գտնվեցին մեկ-երկու անձինք, որոնք տարաձայնություն մտցրին ընդհանուր համաձայնության մեջ՝ պնդելով ուղիղ հակառակը): Անհույս էր, որովհետև Սայաթ-Նովայի ճակատագրական Ցարը մի սովորական կին չէր, այլ վրաց արքայադուստրը, և այն էլ՝ արդեն հարսնացած իշխան Օրբելյանների մեծանուն գերդաստանին:

«Դասակարգային սահմանազատության դարաշրջանում այսպիսի սերը չէր կարող չդառնալ դժբախտության մի բույն, որտեղ մշտական թախություն պիտի աներ կիզիչ տառապանքը» (Սևակ, 116):

Սայաթ-Նովայի սիրո իրականության շուրջ բանավեճը

Սայաթ-Նովայի սիրո բնույթի շուրջ բանավեճը հիմնականում ձևավորվել է երկու մոտեցումների շուրջ: Առաջինը, որի վառ ներկայացուցիչն է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը, հիմնվում է գրական տեքստի ինքնավարության գաղափարի վրա: Սարինյանը, կասկածի տակ դնելով աշուղի սիրո կենսագրական հիմքը (մասնավորապես՝ Աննա իշխանուհու հետ կապված վարկածը), առաջնային է համարում գեղարվեստական երևակայությունը: Այս մոտեցման համաձայն՝ աշուղի ապրումները պետք է դիտարկել ոչ թե որպես փաստ, այլ որպես գրական կերպարի ստեղծման միջոց:

Երկրորդ մոտեցումը, որի արմատները գալիս են դեռևս Հովհաննես Թումանյանից և իր ամբողջական հիմնավորումն են ստացել Պարույր Սևակի

մենագրության մեջ, պնդում է աշուղական պոեզիայի խորքային կապը անձնական ապրումի հետ: Թումանյանի համոզմամբ՝ «ոչ մի պոետ չի կարող այնպիսի վառ գույներով նկարագրել սիրո տառապանքները, եթե ինքը չի ապրել այդ զգացմունքը»: Սևակն այս թեզը զարգացնում է՝ ցույց տալով, որ սիրո ողբերգականությունը պայմանավորված է ոչ միայն անձնական դրամայով, այլև դարաշրջանի սոցիալական անհավասարությամբ: Այս տեսակետի կողմնակիցների համար ստեղծագործության հուզական անկեղծությունը իրականության անվիճելի վկայություն է:

Սակայն այս բանավեճում հաճախ անտեսվում է այն հարցը, թե ինչպես է կենսագրական իրողությունը վերածվում գեղարվեստական տեքստի: Սույն հոդվածը փորձում է լրացնել այս բացը՝ վերլուծելով ոչ թե այն, թե արդյո՞ք սերն իրական էր, այլ այն, թե ինչպես էր իրական ապրումը կերպարանափոխվում պոեզիայի:

Ակադեմիկոս Ս. Սարինյանն իր հոդվածում մեջբերել է Գ. Ախվերդյանի և Հ. Թումանյանի խոսքը, որը հակասում է Պ. Սևակի վերոնշյալ մեջբերմանը. «Ախվերդյանը, վկայակոչելով «մեծերուց լսած» խոսքերը Սայաթ-Նովայի մասին, ասում է. «Սայաթ-Նովան Իրակլե թագավորի ու սրա արքունաց սիրեկան աշուղն ըլլում է մեկ անհոգ ասող ու քեֆ սիրող, սիրուն աղջկերանց ուրախացնող ու որբևերի կանանց մխիթարիչ, և ըլլալով հիանալի քամանչա ածող, մանավանդ իր քաղցր ձայնի հետ՝ էլել է միշտ թագավորի ու ազգի խրախճանքներու պատվական ու անհրաժեշտ զարդը»»:

Հարց է ծագում,- գրում է Սարինյանը, - ի՞նչ հիմք կա վարկած հորինելու, թե Սայաթ-Նովան սիրահարվել է Թեյմուրազ արքայի դուստր, Իրակլիի քույր Աննային, և այդ անպարկեշտ վարքի համար վտարվել արքունիքից ու ենթարկվել հալածանքի: Այս վարկածն է ահա, որ կասկածի է ենթարկում Հ. Թումանյանը. «Չգիտեմ՝ ով է տեղեկություն տվել պ. Բրյուսովին, թե Սայաթ-Նովան սիրահարված է եղել վրաց թագավորի աղջկա վրա, որ էդ միևնույն բանը հայտնում է և իր գրքի հառաջաբանում» (Թումանյան, 388):

Հարկ է նշել, որ, ինչպես Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցն էր համարվում կասկածելի, ոչ հիմնավորված, այնպես էլ նրա սիրած կնոջ գոյությունը կարող էր կասկածի տակ լինել: Եվ վերջապես՝ փոխվել է բովանդակ աշխարհը, երբեմն հանճարների խոսքը ժամանակավրեպ է դառնում, ուստի՝ պետք չէր «գիտական» թեմա դարձնել և կասկածի տակ դնել մեծատաղանդ Պ. Սևակի սայաթնովագիտական հետազոտությունները:

Եվս մեկ փաստ, որը կրկին հակասում է հարգարժան ակադեմիկոսին: Հովհաննես Թումանյանն իր «Քուչակ Նահապետի, Նաղաշ Հովնաթանի և Սայաթ-Նովայի սերը» աշխատության մեջ գրում է. «Սայաթ-Նովայի սերն իրական է և խորապես անձնական: Ոչ մի պոետ չի կարող այնպիսի վառ գույներով նկարագրել սիրո տառապանքները, ինչպես Սայաթ-Նովան է արել, եթե ինքը չի ապրել այդ զգացմունքը» (Թումանյան, 49): Նույն աշխատության մեջ Հովհ. Թումանյանն անդրադարձել է նաև Սայաթ-Նովայի տխուր ու դժբախտ սիրուն՝ համեմատելով նրան Նաղաշ Հովնաթանի ու Քուչակ Նահապետի զվարթ պատկերների հետ, ինչը հետագայում վերահաստատել է Պ. Սևակը. «…Էստեղ առաջ է գալիս Սայաթ-նովայի տխուր- ազնիվ դեմքը: Ահա թե ով է դժբախտը սիրո մեջ, և ահա թե որտեղ են մերժված սիրո իսկական հառաչանքն ու տառապանքը: Կանգնելու չենք սրան տանջող «բեմուրվաթի» պատկերի վրա, և ինքը՝ Սայաթ-Նովան էլ քիչ է նկարագրում նրան, որովհետև ավելի շատ զբաղված է նրա տված վշտով, քան թե նրանով: Եթե Նաղաշ Հովնաթանի «զալումը» կարմիր էր ինքը ու կարմիր էր հագնում ոտից գլուխ, եթե Քուչակ Նահապետի «խոշ յարը» ինչ հագել՝ ամենն է կանաչ, Սայաթ-Նովայի «բեմուրվաթը», որի «ռանգը գուլգազի է նման», ու ինքը՝ «կրակի ծովեմեն դուրս եկած ռաշ ու ջեյրանի», ըստ երևույթին, գուլգազ գույնն է սիրում և լոկ բառախաղի համար չէ, որ բանաստեղծը իր գանգատի մեջ ասում է. «Դուն կըրակ, հագածըդ կըրակ, վու՞ր մի կըրակին դիմանամ», և ճշմարիտ որ՝ կրակ: Մինչդեռ Քուչակին ու Հովնաթանին

իրենց սիրածները միշտ դիմավորում են ժպիտներով ու ծաղիկներով…» (Թումանյան, 40):

Այսպիսով՝ ուսումնասիրելով սայաթնովագետների աշխատությունները՝ եկանք այն համոզման, որ անթույլատրելի է կասկածի տակ դնել մեծավաստակ սայաթնովագետների աշխատանքը:

Հայտնի խաղերից մեկում՝ «Թամամ աշխարհ պըտուտ էկա», արտահայտված է իրական սիրո փնտրտուք, որն ունի կենսագրական հիմք: Բանաստեղծը ներկայացնում է իր ներաշխարհը՝ որպես աշխարհը շրջող և իր սիրելիին փնտրող ճշմարիտ սիրահար: Մեծ է խաղի դրամատիկ լարվածությունը:

«Թամամ աշխարհ պըտուտ էկա» արտահայտությունը վկայում է սիրելիին ողջ աշխարհում որոնումների մասին: Նրա եզակիությունը («յարիս նըման յար չըգըտա») խոսում է այն մասին, որ խոսքը կոնկրետ, իրական անձի մասին է: Եթե սա պարզապես երևակայական սեր լիներ, գրողը, ինչպես Հովի. Թումանյանն է ընդգծել, չէր շեշտի սիրելիի անկրկնելիությունը նման հուզական եռանդով:

Սայաթ-Նովան խաղերում գովաբանել է սիրելիի իմաստնությունը, ինչը վկայում է, որ խոսքը սոսկ մարմնական սիրո մասին չէ, այլ հոգևոր կապվածության: «Դուն ասիղիս անգին քարն իս» տողը ցույց է տալիս, որ սիրելին նրա՝ որպես բանաստեղծի, ստեղծագործության աղբյուրն է:

Մեկ այլ նշանավոր խաղում՝ «Բաղում թութի ղուշն է կանչում», Սայաթ-Նովան գրում է.

Դուս եկ, պահված դա՛շտի մարալ, քի պահպանող ծառիտ էրնեկ,
Գունքըտ կոկած թուղթ-մաքաղաթ, մարմարե դիդարիտ էրնեկ,.
Դուն մե թազա Չինումալին՝ ի՞նչպես չասիմ, յարիտ էրնեկ.
Հին քարխանի զար ու զարբաբ, ինձ ամա քու խամն իմ ուզում

(Բախչինյան, 341):

Բանաստեղծը սիրելիին համեմատում է դաշտի մարալի հետ և երանի է տալիս նրան պահպանող ծառին: Այստեղ «մարալ» բառապատկերը խորհրդանշում է գեղեցկություն և նրբություն: Սիրելիի մաշկի գույնը համեմատվում է հարթեցված թղթի, իսկ դեմքը՝ մարմարի հետ: Սրանք դասական պատկերներ են, որոնք արտահայտում են հիացմունք սիրելիի գեղեցկության հանդեպ:

Մեջբերման երրորդ տողում՝ «Դուն մե թազա Չինումալին՝ ի՞նչպես չասիմ, յարիտ էրնեկ», այս «թազա»՝ նորագյուտ Չինումալինը հավանաբար հղում է չինական արվեստին՝ որպես արտասովոր գեղեցկության և նրբության խորհրդանիշ:

Վերջին տողում բանաստեղծը հակադրում է թանկարժեք նյութերը (զար ու զարբաբ՝ ոսկի և թանկարժեք գործվածք) սիրելիի բնական, անմշակ գեղեցկությանը (խամն): Նա նախընտրում է սիրելիի պարզ, բնական էությունը՝ շինծու շքեղության փոխարեն:

Այս տողերը բնորոշ են Սայաթ-Նովայի ոճին, որտեղ նա միախառնում է հայկական, վրացական և պարսկական բանաստեղծական ավանդույթները՝ օգտագործելով հարուստ փոխաբերություններ և արտահայտելով սիրո, գեղեցկության և կարոտի թեմաները:

Ակադեմիկոս Ս. Սարինյանի այն պնդումը, թե Սայաթ-Նովայի սերը պարզապես երևակայական է, անտեսում է աշուղական արվեստի էությունը, որտեղ անձնական փորձառությունն ու զգացմունքները հիմնարար նշանակություն ունեն:

- Առաջին՝ Սայաթ-Նովայի ստեղծագործություններում առկա են բազմաթիվ կենսագրական մանրամասներ, որոնք վկայում են, որ երգիչն արտահայտել է իրական ապրումներ և կենսազգացողություն: Նրա խաղերում պատկերված հոգեվիճակների բազմազանությունը, հակասականությունը և կենդանի մանրամասները դժվար թե լինեին այդքան համոզիչ, եթե դրանք լինեին սոսկ երևակայական:

• Երկրորդ՝ Սայաթ-Նովայի ստեղծագործական ժառանգության վրա իր կնիքն է թողել աշուղական երգարվեստի ավանդույթը, որտեղ սերը միշտ ունեցել է խորապես անձնական, ապրված բնույթ: Աշուղի ինքնությունը և նրա ստեղծագործությունն անբաժանելի էին, և Սայաթ-Նովան այս առումով բացառություն չէր:

• Երրորդ՝ նրա կյանքի վերջին շրջանում վանք գնալու որոշումը նույնպես կարող է մեկնաբանվել որպես իր սիրո անհասանելիության և ողբերգական բնույթի հաստատում: Այս քայլը համահունչ է նրա խաղերում արտահայտված զգացմունքներին և ցույց է տալիս, որ դրանք ոչ թե սոսկ գրական հնարքներ էին, այլ իրական կյանքի պատկերավոր արտացոլում:

Ակադեմիկոս Ս. Սարինյանի տեսակետը թերևս ճգտում է Սայաթ-Նովայի ստեղծագործությունը դիտարկել միայն գրականագիտական հայեցակետից՝ անտեսելով կենսագրական համատեքստը, որն այդքան կարևոր է աշուղական և հատկապես՝ Սայաթ-Նովայի արվեստում: Սայաթ-Նովայի սիրո զգացմունքի անկեղծությունն ու անմիջականությունը, խորությունը, որ արտահայտվում են նրա խաղերում, վկայում են այդ սիրո հենց իրական բնույթը:

Անշուշտ, մենք բոլոր սիրային խաղերը չենք դիտարկելու, բայց, ինչպես կտեսնենք ստորև դիտարկվող սայաթնովյան մյուս խաղերի վերլուծությամբ, նրանցում սերը ոչ թե գրական հորինվածք է, այլ իրական, մարդկային ապրված զգացմունքների և խոհերի հանճարեղ գեղարվեստականացումներ:

Այսպիսով՝ Սայաթ-Նովայի խաղերի խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա արտահայտած սերն իրական է, ոչ թե երևակայական: Նրա ստեղծագործությունների հուզական անկեղծությունը, մանրամասների կենդանությունը և այն բնական վիշտը, որ արտահայտված է նրա տաղերում, վկայում են իրական, ապրված փորձառության մասին: Սիրո այս ընկալումն ու բնական ապրումը բանաստեղծ աշուղին հասցրել են ողբերգական անհուսության, ինչպես նշել է Սևակը, սակայն այն, միևնույն ժամանակ, դարձել է անմահ պոեզիայի աղբյուր, որը անմրցելի բարձր արվեստի շնորհիվ շարունակում է հուզել ընթերցողներին դարեր անց:

Մե խոսկ ունիմ իլթիմազով

Այս խաղում Սայաթ-Նովան արտահայտում է սիրո խորքային ապրումը, որն անձնական կենսափորձի արտացոլանք է: Բանաստեղծը պատկերում է սեր, որը միաժամանակ և՛ տառապանք է, և՛ երջանկություն, սակայն հիմնականում՝ անհասանելի: Խաղում նկատելի է հոգևոր և մարմնական սիրո համադրությունը, որը խորապես բնորոշ է Սայաթ-Նովայի ստեղծագործությանը: Պ. Սևակն ընդգծում է, որ այս խաղում արտահայտված զգացմունքների բազմազանությունն ու հակասականությունը վկայում են դրանց իրական բնույթը (Սևակ, 154):

Սայաթ-Նովայի պոեզիայի ամենահամոզիչ փաստարկը նրա հուզական խորությունն է: Նա տառապանքը պատկերում է ֆիզիկական մակարդակում՝ դարձնելով այն գրեթե շոշափելի: «Մե խոսկ ունիմ իլթիմազով» խաղի «Սիրտըս լուրի պես խորվեցիր Էշխիդ կըրակով» տողը սովորական փոխաբերություն չէ. այն մարմնավորում է սիրո կործանարար ուժը: Նույն իրապատումը առկա է նաև «Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սով» տողում, որտեղ սիրելիի բացակայությունից առաջացած դատարկությունը հակադրվում է աշխարհի առատությանը՝ ստեղծելով ողբերգական մեկուսացման զգացում:

Սայաթ-Նովայի այս բանաստեղծությունը սիրո արտակարգ խոր ապրումների արտացոլք է՝ համեմված արևելյան բանաստեղծական ավանդույթների, կրոնական խորհրդաբանության և ժողովրդական արտահայտչաձևերի զուգորդմամբ: Վերլուծենք այն՝ ըստ մի քանի հիմնական կետերի:

Բանաստեղծությունը գրված է միջինարևելյան ազդեցությամբ ձևավորված լեզվով՝ հայերեն, բայց արևելյան լեզուների բարբառային արտահայտություններով, որոնք հատուկ են Սայաթ-Նովայի ստեղծագործություններին: Օգտագործվում են թուրքերեն և պարսկերեն արմատներով բառեր, ինչպիսիք են՝ «ինթիզար», «աջաբ», «փադիշահ», «հուքմի-հեքիմ» և այլն:

Այն կառուցված է քառատող տներով, որոնց ավարտին կրկնվում է «աճկի՛ լուս» արտահայտությունը: Սա կարելի է մեկնաբանել որպես վերացական կերպար, որի առջև բանաստեղծը երկրպագության պես խոսում է:

Բանաստեղծության գլխավոր թեման սերն է՝ խորը, կրքոտ և երբեմն նաև՝ ցավալի:

• *Սիրո տառապանքն ու սպասումը:* Սիրված անձի բացակայությունը բանաստեղծի սիրտը վառում է, ինչպես ինքն է ասում. «Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիդ կըրակով, աճկի՛ լուս»:

• *Ընկերային փոխհարաբերությունների խզումը:* Սիրահարված անձը բախվում է դարի ու միջավայրի պատնեշներին, իր ընկերների անհասկացողությանը, քանի որ՝ «Դոստիրըս դուշման շինեցիր»:

• *Սեր արտահայտող փոխաբերություններ:* Սերը համեմատվում է ծովի հետ, որտեղ բանաստեղծն իրեն փոթորկահույզ ջրերում տարուբերվող նավ է զգում:

Սիրո զգացմունքի ուժգնությունը պատկերելիս բանաստեղծը հաճախ օգտագործում է չափազանցություններ, ինչպես՝

Էս էլ էն Դիբա ու յենգիդունիայի հանգում, Արութինի ասած,

Մե խոսկ ունիմ իլթիմազով, անգամ ա՛րա, օ՛վ աճկի՛լուս,
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսը բարով, աճկի՛լուս,
Աջաբ քիզ ի՛նչ գեթ իմ արի՝ կենում իս խըռով, աճկի՛լուս,
Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սով, աճկի՛լուս

(Բախչինյան, 95):

Սայաթ-Նովան սկսում է՝ հիշատակելով «Դիբա ու յենգիդունիա», որտեղ դիբան նուրբ մետաքսյա գործվածք է, իսկ յենգիդունիան՝ նոր աշխարհ: Սա մատնանշում է, որ բանաստեղծությունը հյուսված է նուրբ մետաքսի պես և ներկայացնում է սիրո նոր աշխարհ:

Իլթիմազ բառը պարսկական ծագում ունի և նշանակում է խնդրանք կամ աղերս: Բանաստեղծը խնդրում է սիրելիին՝ ականջ դնել իրեն:

Ինթիզար բառը նշանակում է կարոտ կամ սպասում՝ ցույց տալով բանաստեղծի երազանքը՝ տեսնել սիրելիին:

Վերջին տողը պատկերավոր հզոր հակադրություն է, որի մի եզրը վայելքի ու լիության աշխարհն է՝ «Աշխարս աշխարով կըշտացավ», մյուս եզրը վայելքից զուրկ, տառապանքի բովում խարկվող բանաստեղծը՝ «յիս քիզանից սո՛վ, աճկի՛ լուս» (աշխարհը լիության մեջ հագեցավ), սակայն բանաստեղծը սով է զգում սիրելիի հեռու և անմատչելի լինելուց, և գնալով սաստկանում է ցավը, կարոտի կսկիծը, որը նրան խորովում է լորի պես ու հասցնում է խենթության.

Մագամ օչ օվ յար չէ՞ սիրի, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
Էշխեմեդ ջունուն իմ էլի, ման իմ գալի յանա-յանա,
Էս դարդեն օչ օվ չը քաշե, վուր մե դանգին չի դիմանա,
Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիդ կըրակով, աճկի՛լուս:

Մագամ բառը հարցական-հաստատական եղանակավորիչ է, ճարտասանական երանգով, նշանակում է երբ, չէ՞ որ (մագամ սիրտս ունիմ քարած): Նա հարցնում է՝ չէ՞ որ բոլորն էլ սիրում են:

«Էշխեմեդ ջունուն իմ էլի» տողում *էշխեմեդ* նշանակում է քո սիրուց, իսկ *ջունունը*՝ խենթ, արևելյան հայտնի սիրավեպի հերոս Մեջլումն է (Մեջլումի պես

կորավ յարս), որ սիրուց խենթացել է և թափառում է յանա-յանա (այս ու այն կողմ, այրվելով):

Դարդ բառը նշանակում է *վիշտ, ցավ, տառապանք, մորմոք*: Բանաստեղծը պնդում է, որ ոչ ոք չի կարող դիմանալ իր կրած ցավին՝ նույնիսկ մեկ *դանգի* չափով (*դանգը, քարտեզը* (քարիզկնոց) կիլիկյան դարաշրջանում ստեղծված նվազագույն արժեքով պղնձադրամներ են):

Վերջին տողում նա իր սիրտը համեմատում է լորի հետ, որը խորովվում է սիրո կրակում: Սա հզոր պատկեր է, որը ցույց է տալիս սիրո տառապանքը:

Յիս մե փուքըր նավի նըման, քու էշխըն է ծով, աճկի՛լուս:

Վերը նշված տողում կա գեղեցիկ փոխաբերույթ: Բանաստեղծն իրեն համեմատում է փոքր նավի, իսկ սիրելիի սերը՝ անհուն ու անափ ծովի հետ: Սա ցույց է տալիս, թե որքան փոքր և անզոր է ինքն զգում սիրո հզոր զգացմունքի առջև:

Բութա Շահսանամըս դուն իս, Է՛լ չունիմ օչ օվ, աճկի՛ լուս:

«Բութա Շահսանամ»-ը հղում է դասական սիրո պատմության: Բութան կարող է նշանակել սեր, հույս, ապավեն (Որս եմ՝ բութես ձեզ արած ՀԹ), իսկ Շահսանամը հայտնի արևելյան «Աշուղ Ղարիբ» երգախառն սիրավեպի հերոսուհու անունն է (հայկական տարբերակում՝ Ջիվանու փոխադրությամբ): Սայաթ-Նովան սիրելիին Շահսանամ է անվանել, որին արժանանալու հույսով աշուղ Ղարիբը յոթ տարի թափառել է օտարության մեջ (Օխտն տարի էլ ման գուքամ սազը ձիռիս՝ Ղարիբի պես): Նա միակն է աշխարհում, և որից բացի ուրիշ ոչ ոք չունի:

Կենսական խոր բովանդակությամբ հարուստ ու գեղեցիկ այս պատկերում Սայաթ-Նովան ընդգծել է, որ մահն անգամ անզոր է իրեն զրկել սիրուց. նույնիսկ մահվանն էլ մահ չի ասի, եթե սիրելի «զալումը» գա և լաց լինի իր վրա՝ մազերը շաղ տալով:

Այս բանաստեղծությունը լի է արևելյան բանաստեղծական ավանդույթներին բնորոշ պատկերներով և արտահայտչամիջոցներով:

Սայաթ-Նովայի այս բանաստեղծությունը մաքրագույն սիրո, անմնացորդ նվիրվածության, հիացմունքի, բայց, միևնույն ժամանակ, հոգեկան խոր տառապանքի հանճարեղ արտացոլում է: Իրական կնոջ՝ մեծարանքի և երկրպագության արժանի աստվածային գեղեցկության գովերգ է այն՝ հուզական գուներանգներով, ժամանակի ու մշակույթի սահմաններից դուրս ապրող ստեղծագործություն:

Ինձ ու իմ սիրեկան յարին մէ տարի բերած գիդենաք

Սայաթ-Նովայի քնարերգությունը հարուստ է ուղղակի և անուղղակի ինքնակենսագրական ակնարկներով, որոնք ծառայում են որպես իրական ապրումի հիմք: «Ինձ ու իմ սիրեկան յարին մէ տարի բերած գիդենաք» խաղի վերնագիրն իսկ հուշում է անձնական պատմության մասին: Այստեղ սերը ոչ թե վերացական զգացում է, այլ կոնկրետ, ժամանակի մեջ տեղայնացված փորձառություն: Նույն կերպ՝ «Թամամ աշխարհ պըտուտ էկա» խաղում «յարիս նըման յար չըգըտա» տողը վկայում է ոչ թե իդեալականացված կերպարի, այլ կոնկրետ, անկրկնելի սիրելիի մասին, որի փնտրտուքը դառնում է բանաստեղծական սյուժե:

Այս խաղի առաջին տող-վերնագիրն իսկ հուշում է նրա ինքնակենսագրական բնույթը: Բանաստեղծը սերը պատկերում է որպես կյանքի և մահվան սահմանին գտնվող տառապող անհատի փրկարար զգացմունք: Ինչպես Հովհաննես Թումանյանն է նշել, նման զգացմունքները չէին կարող առաջանալ առանց իրական փորձառության: Սայաթ-Նովայի սիրո ուժը, գեղեցկությունն ու անկեղծությունը հստակ դրսևորվում են այս խաղում: Այն շարունակում է արևելյան բանաստեղծական ավանդույթները՝ արտահայտելով քնարական հերոսի խորը հուզականությունն ու ներքին պայքարը:

Բանաստեղծությունը հյուսված է քառատող տների ձևաչափով՝ պահպանելով դասական սիրային տաղերի կառուցվածքը՝ Սայաթ-Նովայի անհատականության դրոշմով: Բանաստեղծական պատկերներում առկա են հայերենին միահյուսված պարսկերեն և թուրքերեն ժողովրդախոսակցական բառեր, որոնք փոխանցում են բանաստեղծի ներքին ապրումները առավելագույն կենդանի արտահայտչականությամբ:

Բանաստեղծության մեջ կրկնվում է «գիդենաք» բառը (իմանաք, իմացեք), որն ուժեղացնում է ապրված զգացմունքների տեղեկացման անհրաժեշտության հրատապությունը: Այն կարծես հիշեցնում է, որ բանաստեղծի ցավն ու ապրումները կիսվելու և գիտակցվելու կարիք ունեն:

● *Սիրային տառապանք:* Բանաստեղծի սերը հասել է այն աստիճանի, որ բառացիորեն «սիրտը արնաքամ է», «հոգին հալվում է», իսկ աչքերը երբեք չեն չորանում.

Աչքըս՝ թաց, բերանըս՝ ցամաք, լիզուս հիդքերած գիդենաք:

Սույն տողով բանաստեղծը սգում է իրեն անմարդկային տառապանք պատճառած չիրականացած սերը: Նա ոչ միայն հոգեպես, այլև ֆիզիկապես խեղճացած է:

● *Հոգեկան խռովք ու անկայունություն:* Սերը ոչ միայն ցավ է պատճառում, այլև շփոթմունք, մտավոր ու ֆիզիկական ուժի կորուստ.

Սիրտըս փուրումըս թուլացաւ անգալներու զախ անիլէն,
Ուշք ու միտքըս խառնըվեցաւ խուռըն-խուռըն խաղ հանիլէն:

Արդյունքում նա իրեն կորցրել է, դարձել է անօգնական, ինչպես ջրերի հոսանքով քշված մի իր.

Էշխէն ուշք ու միտքըս կապած, ինձ ջրրի տարած գիդենաք:

Սայաթ-Նովան հաճախ օգտագործում է փոխաբերություններ, որոնք ընդգծում են սիրո զգացմունքի ուժգնությունն ու վայրիվերումները: Պատկերներում սերը ջրային տարերքի՝ փոթորկոտ ծովի հետ է համեմատվում (Տալղա տվիր, գեմիս տարար ծովի պես), ինչը ներկայացնում է իր զգացմունքային տատանումները:

● *Կյանքի անիմաստություն առանց սիրո:* Սիրելիի բացակայությունը հանգեցնում է բանաստեղծի կյանքի անիմաստության.

Էլ ապրիլու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գիդենաք:

Սա բացահայտում է այն կործանարար ազդեցությունը, որ կարող է ունենալ սերը: Այն ոչ միայն հույզերի պոռթկում է, այլև գոյության հարց է դառնում բանաստեղծի համար:

● *Կյանքի երազային ավարտ:* Բանաստեղծության վերջին հատվածում կյանքն այլևս ներկայացվում է որպես անկատար երազ.

Ումբրըս էրազի պէս գընաց՝ ծառըս չըխերած գիդենաք:

Այսինքն՝ բանաստեղծը հեռացավ կյանքից՝ առանց իր «ծառը» բերք տալու, առանց սիրո պտուղները վայելելու: Աշխարհից, մարդկային հարաբերություններից դառնացած մարդու այս կենսափիլիսոփայության ողբերգական տարրերը հատուկ են ոչ միայն Սայաթ-Նովային, այլև առհասարակ արևելյան քնարերգությանը:

Այսպիսով՝ բանաստեղծությունը ամփոփում է Սայաթ-Նովայի ողջ սիրային ստեղծագործության էությունը. սերը ոչ միայն սրբազան զգացմունք է, այլև այն կրողին կարող է դարձնել տառապանքի զոհ: Սերը տրված չէ միայն ուրախություն պարգևելու համար. այն նաև մեծ փորձություն է, որը կարող է դառնալ կյանքի մղձավանջ: Այս բանաստեղծության վերաբերյալ Պ. Սևակը գրել է. «Այս խաղը մեկն է (Ղ-57) այն բազմաթիվ բանաստեղծություններից, որոնց մինչևիսկ լուսանցքն էլ լեցուն է բանաստեղծի սիրով ու տառապանքով: Եվ «ախ քաշելուց մերած արուն» կա այստեղ, և «էրած ջիգյար», և «արուն-արտասուք»-ից թաց «դոշ ու յախա», և

շաղախված-կապված ուշք ու միտք, և այն «դուգունը» (այսինքն չբացված վերքը), որ դեղ ու դարմանից ոչ թե փակվում, այլ բացվում է ավելի, քանի որ շարունակում է գործել «էն ղադա դար ու դարդ», որ «ջրի տարած», «տանեն դուս արած» ու «յարեն յիդ արած» բանաստեղծին ստիպում է խոսել ու դարձյալ խոսել՝ միշտ նույն «դար ու դարդ»-ից, բայց ամեն անգամ նոր ձևով, նոր հոմանիշով, նոր հնչերանգով, որից նրա պոեզիան դառնում է ինքնաշրջումների մի շարան և անդրադարձումների մի կրակե շղթա՝ մեկը մյուսից ինքնեկ ու առինքնող…»: (Սևակ, 157):

Այս ստեղծագործությունը յուրահատուկ է իր զգացմունքային խտությամբ, փոխաբերությների ու խորհրդանիշների բազմազանությամբ: Այն լավագույնս ներկայացնում է արևելյան բանաստեղծական մտածողությունը՝ միախառնելով կրոնական, առօրեական և գեղարվեստական տարրերը: Սայաթնովյան այս խաղը ոչ թե պարզապես խոսք է սիրո մասին, այլ անձնականից վերաճում է տիեզերական ողբերգության՝ փոխանցելով մի ամբողջ սերնդի հոգևոր ցավը, կարոտն ու տառապանքը: Հենց այս էլ դառնում է նրա զգացմունքների արհեստականության ուղղակի հերքումը:

Դուն էն հուրին իս

Լինելով իր ժամանակի աշուղական ավանդույթի կրող՝ Սայաթ-Նովան օգտագործում է արևելյան պոեզիային բնորոշ պատկերներ ու կերպարներ՝ հուրի, ջեյրան, վարդ ու բլբուլ: Սակայն նա այս ավանդական կերպարները լցնում է անհատական, ապրված բովանդակությամբ: «Դուն էն հուրին իս» խաղում սիրելին ոչ միայն երկնային գեղեցկուհի է, այլև «գէմի կու զաւթէ»՝ դառնալով ակտիվ, երբեմն նույնիսկ վտանգավոր ուժ: «Աշխարհը ծով, դու մեջը նավ» համեմատությունը («Պատկիրքըդ ղալամով քաշած») վերցված է ավանդույթից, սակայն Սայաթ-Նովայի տաղում այն ստանում է փրկության և միակ հույսի խորհրդանիշի իմաստ՝ արտահայտելով բանաստեղծի կախվածությունը սիրելիից: Սա ցույց է տալիս, թե ինչպես է անձնական ապրումը ոչ թե պարզապես տեղավորվում կանոնի մեջ, այլ վերաիմաստավորում այն:

Նմանատիպ մոտեցում կարելի է տեսնել նաև այս երգում, որտեղ արտաքին գեղեցկությունը դառնում է ներքին հոգևոր գեղեցկության արտացոլանք:

Դուն էն հուրին իս, վուր գէմի կու զաւթէ,
Չունքի ինձ զաւթեցիր խափով, նազա՛նի,
Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս
Չըկայ քիզի նըման չափով, նազա՛նի:

Շատ մարդ քու էշխէմէն կու դառնայ յիզիդ,
Արի մէ ռա՛հմ արա, լա՛ւ կացի միզիդ,
Գ՚ուզիմ, թէ համաշա դամ անիմ քիզիդ՝
Սանթուրով, քամանչով, դափով, նազա՛նի:

Դարդիդըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում.
Աչքէմէս արտասունք հուսիլ իմ ուզում.
Համաշա, եա~ր, քիզիդ խօսիլ իմ ուզում,
Սիրտըս չէ կըշտանում գափով, նազա՛նի

(Բախչինյան, 61):

Բանաստեղծության փիլիսոփայական շերտերում առանցքային է սիրո եռաստիճան ընկալումը:

- Առաջին մակարդակում սերը ներկայանում է որպես աշխարհիկ զգացմունք՝ արտահայտված «գէմի կու զաւթէ» տողով: Չմոռանանք, որ ակնարկվում է Հոմերոսի

«Ոդիսականում» Իթաքե վերադարձող նավը զավթած Կալիպսե դիցուհուն, որ Ոդիսևսին իր կախարդիչ խոսքով, երգով ու հմայքով գերել էր յոթ տարի:

● Երկրորդ մակարդակում այն վերածվում է հոգևոր փորձառության՝ «քու էշխէմէն» արտահայտությամբ:

● Երրորդ՝ բարձրագույն մակարդակում սերն արդեն դառնում է միստիկ միավորման ձգտում՝ «Գուզիմ թե համաշա դամ անիմ քիզիդ»:

Սուֆիական միստիցիզմի ազդեցությունն արտահայտվում է մի քանի հիմնական մոտիվներով: «Հուրի» կերպարը խորհրդանշում է աստվածային գեղեցկությունը, իսկ տառապանքի թեման («դարդիրըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում») ներկայացնում է հոգևոր կատարելագործման ուղին: Մահվան մոտիվը («ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին») դառնում է սիրո անձնվիրության և զոհաբերության բարձրագույն արտահայտություն:

Բանաստեղծության գեղարվեստական համակարգում կարևորվում են աշխարհագրական խորհրդանիշները («Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս»), որոնք ընդգծում են սիրո համընդգրկուն բնույթը: Երաժշտական գործիքների հիշատակումը («Սանթուրով, քամանչով, դափով») ստեղծում է սիրո բազմաձայն համանվագ:

XVIII դարի համապատկերում Սայաթ-Նովայի սիրո փիլիսոփայությունն առանձնանում է արևելյան և հայկական ավանդույթների յուրօրինակ համադրությամբ: Նա կարողանում է ներդաշնակելով միավորել աշխարհիկ և հոգևոր սերը՝ ստեղծելով սիրո համընդհանուր փիլիսոփայական հայեցակարգ:

Մեծ սիրերգակի խաղերից յուրաքանչյուրը պատկերավորման մի գունագեղ առանցք է պարունակում, ինչպես «Պատկիրքըդ՝ ղալամով քաշած» խաղում վարպետորեն հյուսել է գեղեցիկ կնոջ կերպարը՝ օգտագործելով պատկերավորման հարուստ միջոցներ, որոնց մեջ գերակշռում են արևելյան պոեզիային բնորոշ համեմատությունները:

Բանաստեղծությունը կառուցված է հինգ քառատող տներից. առաջին տան բոլոր տողերը, հաջորդ տների վերջին տողերն ավարտվում են «. . . իս անում» կրկնվող հանգաբառով: Հեղինակը կիրառում է բազմաթիվ գեղարվեստական հնարքներ՝ փոխաբերություններ, համեմատություններ և այլաբանություններ:

Առաջին քառատողում բանաստեղծը նկարագրում է սիրելիի արտաքին գեղեցկությունը՝ համեմատելով նրան վրձնանկարի («պատկիրքըդ՝ ղալամով քաշած, թահրըդ ռանգեռանգ իս անում») հետ: Երկրորդ տան մեջ կնոջ երեսը համեմատվում է նոր բոլորվող լուսնի հետ, իսկ նրա «առանց հյուսիլ» ոլորվող մազերը պատկերվում են որպես բնական գեղեցկության խորհրդանիշ:

Երրորդ և չորրորդ քառատողերում Սայաթ-Նովան անդրադառնում է կնոջ հմայքին՝ օգտագործելով երաժշտական գործիքների (սանթուր, քամանչա) և բնության գեղեցկությունները (վարդ, մանուշակ) խորհրդանշող պատկերներ:

● *Պատկերդ՝ վրձինով քաշած*- սիրելիի գեղեցկությունը համեմատվում է նկարչի վրձնով արված գեղանկարի հետ՝ ընդգծելով նրա արտաքինի կատարելությունը:

● *Բացվել ես կարմիր վարդի պես*- սիրելին համեմատվում է սոխակի հետ սիրաբանող (բլբուլի հիդ հանգ իս անում) նոր բացված վարդի հետ, որը խորհրդանշում է թարմություն, գեղեցկություն և կենսունակություն:

● *Երեսդ նոր լուսնի նման քանի կեհա կու բոլորվի*- դեմքի գեղեցկությունը համեմատվում է նորալուսնի հետ, որը արևելյան պոեզիայում գեղեցկության դասական խորհրդանիշ է:

● *Զրնգում ես ծնծղայի պես*- շարժումների նրբությունն ու կենդանությունը, կրած բազմաթիվ զարդերի զրնգունը համեմատվում են երաժշտական նվագարանների հնչյունների հետ (*Յիփ մտնում իս մեջլիսումն՝ շըխկշըկում իս ջիղջիղի պես// Ի՞նչ կոնիմ սանթուր, քամանչեն՝ զուգսըդ չոնգուր-չանգ իս անում*):

● *Նունուֆար, ծաղիկ ծովային*- սիրելին համեմատվում է ջրաշուշանի հետ, որը խորհրդանշում է մաքրություն և նրբություն:

Ամենախորը համեմատություններից մեկն է «Աշխարհը ծով, դու մեջը նավ»-ը, որտեղ սիրելին պատկերվում է որպես նավ՝ կյանքի ծովում, ինչը ցույց է տալիս նրա առանձնահատուկ լինելը:

Աշխարհը համեմատվում է անծայր ծովի հետ՝ ընդգծելով նրա անսահմանությունն ու անկանխատեսելիությունը: Սիրելին պատկերվում է որպես նավ, որը շարժվում է այդ ծովում՝ առանձնանալով և գրավելով շրջապատի ուշադրությունը:

Առավել խորը ըմբռնմամբ՝ ծովը խորհրդանշում է կյանքի դժվարությունները, փորձությունները, վտանգները, նավը դառնում է ապաստանի, հույսի և փրկության խորհրդանիշ, իսկ սիրելին դիտվում է որպես ուղեցույց, որը կարող է օգնել անցնել կյանքի փոթորիկների միջով:

Այս համեմատությունները ոչ միայն բացահայտում են սիրելիի արտաքին գեղեցկությունը, այլև նրա ներքին հմայքը և ազդեցությունը շրջապատի վրա, քանի որ վերջիններս միավորում են և՛ տեսողական պատկերը, և՛ փիլիսոփայական իմաստը, և՛ հուզական բովանդակությունը:

Ընդհանուր առմամբ, այս ստեղծագործությունը Սայաթ-Նովայի սիրային քնարերգության փայլուն նմուշներից է, որտեղ միահյուսված են արևելյան պոեզիայի ավանդույթները և հեղինակի անհատական պատկերավոր հզոր ոճը: Սակայն, այս ընդհանրացումով հանդերձ, կերպավորված է այն նախատիպ գեղեցկուհին, որ իրական անձնավորություն է իր անմատչելի բարեմասնություններով, որոնցով դարձել է սիրո մեծ երգչի վեհացնող տառապանքի և ոգեշնչման իրական աղբյուրը:

Եզրահանգումներ

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, Սայաթ-Նովայի սիրային քնարերգությունը չի կարող միանշանակ սահմանվել որպես «իրականություն» կամ «երևակայություն»: Այն շատ ավելի բարդ երևույթ է՝ ապրված իրականության գեղարվեստական կերպարանափոխում: Նրա պոեզիան սկիզբ է առնում կենսագրական խորը ապրումից, որի վկայությունն են անձնական ակնարկները, հուզական անկեղծությունը և տառապանքի իրապատում պատկերումը:

Ըստ Jen Basco-ի (2025), ով մանրամասնորեն անդրադարձել է Generation Beta-ի առանձնահատկություններին իր «Generation Beta Characteristics» հոդվածում, այս սերունդը, որը ծնվելու է մոտավորապես 2025թ.-ից սկսած, լիովին ինտեգրված կլինի արհեստական ինտելեկտի, ավտոմատացման և թվային տեխնոլոգիաների հետ (Basco 2025): Բետա սերունդը կդառնա առաջին սերունդը, որը կշահագործի ԱԲ և վիրտուալ իրականության տեխնոլոգիաները առօրյա կյանքում՝ ներառյալ կրթության, աշխատանքի և սոցիալական շփումների ոլորտներում: Այդ սերունդի ներկայացուցիչները կունենան բարձր մակարդակի գլոբալ մտածողություն և բազմակրոն մշակութային զգայունություն՝ համաշխարհային թվային հարթակների ազդեցությամբ, ինչը խթանում է ներառականությունը և հաղորդակցությունը տարբեր մշակույթների միջև: Basco-ն ընդգծում է, որ այս առանձնահատկությունները պահանջում են նոր մոտեցումներ կրթության, սոցիալական քաղաքականության և շուկայավարման ոլորտներում՝ հաշվի առնելով սերնդի տեխնոլոգիական և մշակութային առանձնահատկությունները:

Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը զգալիորեն ձևավորում է ոչ միայն սերունդների միջեւ փոխգործակցությունն ու կրթական մոտեցումները, այլև փոխակերպում է նրանց ֆինանսական վարքագիծը: Յուրաքանչյուր սերունդ՝ Millennials, Gen Z, Generation Alpha և առաջիկա Generation Beta, յուրովի է օգտագործում թվային ծառայություններ, ինչի արդյունքում փոխվում են նաև վճարումների և ֆինանսական գործարքների ձևերը:

Թվային վճարումների զարգացումը

COVID-19 համավարակը զգալիորեն արագացրեց թվային վճարումների ներդրումը ամերիկացիների առօրյա կյանքում: Ըստ ուսումնասիրության՝ 2025թ. ԱՄՆ-ում կոնտակտային բջջային վճարումների օգտագործողների թիվը կհասնի 125 միլիոնի՝ 2021թ. 101.2 միլիոնի դիմաց: Մասնավորապես, 70% քարտապաններ իրենց սմարթֆոններն օգտագործել են անձնական փոխանցումների և էլեկտրոնային առևտրի գնումների համար, իսկ 60%-ը՝ մթերք գնելու նպատակով: Թվային վճարումների աճող կիրառումը և ինտեգրումը առևտրային հարթակներում հանգեցրել է նոր վարքագծային միտումների: Օրինակ՝ որոշ հավելվածներ ապահովում են մեկ հպումով վճարում՝ քարտի կամ թվային դրամապանակի նախապես պահպանված տվյալների միջոցով: Այդպիսին է, օրինակ, Toast հարթակը, որն առաջարկում է QR-կոդի միջոցով սեղմ ու արագ պատվերներ ռեստորաններում: Amazon Go-ի նման հարթակները ամբողջությամբ վերացրել են վճարման

ավանդական ընթացակարգը: Այս համատեքստում վճարումների «առաջնային քարտի» կարգավիճակն առավել մրցակցային է դարձել, և թողարկողներն այժմ ձգտում են բարձրացնել քարտերի արժեքը՝ օգտատիրոջ փորձի ողջ փուլերում թվայնացված լուծումներ առաջարկելով՝ սկսած դիմումից մինչև պարգևների մարում: Deloitte Development LLC (2022) զեկույցը Elevating the Payments Experience, մանրամասն ներկայացնում է ժամանակակից քարտային թողարկման լուծումների ազդեցությունը թվային վճարումների ոլորտում և ֆինանսական հաստատությունների հետագա զարգացման վրա: Ներկայիս թվային միջավայրում հաճախորդների պահանջներն ու ակնկալիքները շատ արագ են փոփոխվում, ինչը բանկերին և վճարային համակարգերին դրդում է կատարել նորարարություններ՝ առաջարկելով ավելի հարմար, անվտանգ և անհատականացված ծառայություններ:



Գծապատկեր 2. Ժամանակակից քարտային թողարկման ազդեցությունը քարտապանների բավարարվածության բարձրացման վրա՝ վճարային փորձի համատեքստում: Ընտրեք այն երեք ամենակարևոր հնարավորությունները, որոնք, ըստ Ձեզ, կբարձրացնեն ձեր բավարարվածությունը վճարումների փորձից: Տոկոսները ներկայացնում են այն հարցվողների մասնաբաժինը, ովքեր տվյալ հատկությունը նշել են որպես իրենց առաջնահերթ երեքից մեկը:

IMARC Group-ի վերջին զեկույցի համաձայն՝ բջջային վճարումների շուկան աշխարհում մեծ արագությամբ զարգանում է՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով և սպառողների վճարումների նոր հարմարությունների պահանջարկով: Այս տեխնոլոգիաները բարելավում են ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և արագությունը՝ նպաստելով թե՛ անհատական, թե՛ բիզնես հաճախորդների թվային ֆինանսական էկոհամակարգի արդյունավետությանը:

Ըստ զեկույցի՝ մոբայլ վճարումների օգտագործումը համաճարակի հետևանքով կտրուկ աճ է գրանցել, ինչը էապես փոխել է սպառողական վարքագիծը՝ խրախուսելով անփորձիլային և արագ վճարումների մեթոդների ավելի լայն ընդունումը: Շուկայի այս աճը պայմանավորված է ինչպես տեխնոլոգիական նորարարություններով, այնպես էլ 5G կապի, NFC և QR կոդերի կիրառությամբ:

Զեկույցը շեշտում է, որ բանկերն ու վճարային ծառայություններ մատուցող ընկերությունները պետք է մշտապես հարմարվեն այս փոփոխություններին՝ առաջարկելով անվտանգ, հարմար և ինտեգրված վճարային լուծումներ: Նոր սերունդների՝ հատկապես թվային բնիկների՝ մեծացվող մասնակցությունը շուկայում ուժեղացնում է այս պահանջը՝ դարձնելով բջջային վճարումները ֆինանսական ծառայությունների ապագան (IMARC Group 2024):

Թվային բանկային տեխնոլոգիաների զարգացման համատեքստում սերունդների ֆինանսական վարքագիծը զգալիորեն տարբերվում է՝ ներկայացնելով յուրօրինակ պահանջներ և սպասելիքներ: Ըստ Finance Magnates-ի վերլուծության՝ յուրաքանչյուր սերունդ ունի իր «ֆինանսական ԴՆԹ»-ն, որը պայմանավորված է տեխնոլոգիական միջավայրով, սոցիալ-տնտեսական պայմաններով և կրթության մակարդակով: Մինչ ավագ սերունդները նախընտրում են ավանդական բանկային ծառայությունները՝ ապահովված անվտանգության և վստահության պատճառով, նոր սերունդները՝ Millennials և Gen Z, առավել խոցելի են նորարար թվային ծառայությունների, ավտոմատացման և անհատականացված ֆինանսական լուծումների նկատմամբ: Այս միտումները ստիպում են ֆինանսական ինստիտուտներին վերաձևակերպել իրենց ռազմավարությունը՝ ներդնելով հարմարեցված թվային փորձառություններ, որոնք համադրում են արագություն, մատչելիություն և բարձրակարգ անվտանգություն: Հետևաբար՝ սերունդների տարբերությունները ֆինանսական ինտերակտիվության և տեխնոլոգիական ընդունման հարցում կարևոր են բանկային ծառայությունների զարգացման և հաճախորդների հավատարմության ապահովման տեսանկյունից (Finance Magnates 2023):

Global Banking & Finance-ի զեկույցում շեշտադրվում է ֆինանսական հաստատությունների համար անհրաժեշտությունը՝ անհապաղ հարմարվել նոր սերունդների՝ հատկապես Z և Ալֆա սերունդների սպասումներին: Այս թվային բնիկ սերունդները առաջնահերթություն են տալիս հարթ, անհատականացված և շարժական ծառայություններին, ինչը պարտադրում է բանկերին կատարել նորարարություններ ավանդական մոդելներից դուրս: Հոդվածում նշվում է արհեստական բանականության, մեքենայական ուսուցման և տվյալների վերլուծության նշանակությունը՝ ֆինանսական ծառայություններն ավելի հարմարեցված դարձնելու նպատակով: Նպատակն է նաև ուժեղացնել ֆինանսական կրթությունը և թվային գրագիտությունը՝ հաճախորդներին օգնելով կայացնելու որոշումներ: Ներկայումս տեխնոլոգիաների և սերունդների հոգեբանության

համադրման միջոցով հնարավոր է ձևավորել երկարաժամկետ հավատարմություն և մրցակցային առավելություն ֆինանսական ոլորտում: Բանկերի համար կարևորվում է ոչ միայն նորարարական լուծումներ առաջարկելը, այլև վստահություն և թափանցիկություն ապահովելը՝ բարձրակարգ օգտագործողական փորձի ստեղծմամբ:

Թվային ինքնության հաստատման նույնականացման համակարգեր

Գաղտնիք չէ, որ բանկային ոլորտը շատ մրցակցային է, և ամեն օր հայտնվում են նոր բանկեր, որոնք առաջարկում են ավելի լավ հավելվածներ, ծառայություններ կամ հաճախորդների սպասարկման ավելի բարձր որակ: Եվ որքան շատ են նոր մրցակիցները, այնքան ավելի պարտավորեցնող է դառնում առաջատար դիրք զբաղեցնելը: Այս ամենին համընթաց քայլելու համար բանկերը մեծ ներդրումներ են կատարում տեխնոլոգիաներում, օգտատերերի փորձառության լավացման և անվտանգային գործիքների մեջ: Թվային ինքնությունը հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ կազմակերպելու նույնականացման գործընթացը թվային հարթակներում՝ միևնույն ժամանակ ապահովելով օգտատերերի անվտանգությունը և սեփական տվյալների տնօրինման հնարավորությունը: Ըստ կանխատեսումների՝ այն երկրները, որոնք արդյունավետ թվային ինքնություն ունեն, կարող են իրենց ՀՆԱ-ն ավելացնել 3-6%-ով մինչև 2030թ.: Իսկ սա խոսում է թվային ինքության հսկայական պոտենցիալի մասին: Թվային ինքնության տեխնոլոգիայի մատակարարները կենտրոնանանում են ID դրամապանակների և դրանց լայն տարածման վրա: Շվեյցարիան արդեն իսկ աշխատանքներ է տանում էլեկտրոնային ինքնության (electronic ID) զարգացման ուղղությամբ: Նախնական տվյալներով e-ID-ն կներկայացվի 2026թ.-ին:

Այսօրվա թվայնացած աշխարհում կենսաչափական տեխնոլոգիաներն իրենց հաստատուն տեղն են զբաղեցրել ինքնության կառավարման համակարգերում՝ պայմանավորված իրենց բարձր արդյունավետությամբ և ճշգրտությամբ: Անվտանգության ոլորտում աճող ռիսկերը՝ ներառյալ տվյալների չարտոնված հասանելիությունն ու ինքնության գողությունը, բերում են այն անհրաժեշտությանը, որ անձի նույնականացումը հիմնվի առավել հուսալի և դժվարությամբ կեղծվող մեթոդների վրա: Կենսաչափական տվյալները՝ այդ թվում դեմքի, մատնահետքերի, ձայնի, ափի, աչքի ցանցաթաղանթի և այլ ֆիզիոլոգիական առանձնահատկություններ, համարվում են գրեթե բացառիկ՝ յուրաքանչյուր անհատի համար, ինչն էլ դրանք դարձնում է ինքնության հաստատման արդյունավետ միջոց:

Գծապատկեր 3. Կենսաչափական նույնականացումը դեմքի միջոցով, աչքի ցանցաթաղաթնի և մատնահետքի

Ի տարբերություն ավանդական նույնականացման միջոցների՝ ինչպես օգտանուններն ու գաղտնաբառերը, որոնք ենթակա են կոտրման և փոխանցման, կենսաչափական ճանաչումը հիմնվում է ոչ փոխանակելի տվյալների վրա: Սա ոչ միայն ապահովում է ավելի բարձր մակարդակի պաշտպանություն, այլև պարզեցնում է օգտատերերի համար մուտքի գործընթացը՝ բարելավելով օգտագործման հարմարավետությունը տարբեր համակարգերում, ինչպիսիք են ֆինանսական գործարքները կամ տվյալների անվտանգ պահպանումը: Կենսաչափական տեխնոլոգիաների առավելություններն առավել ակնառու են դառնում լայնածավալ կիրառությունների դեպքում: Մասնավորապես՝ պետական և կորպորատիվ

կազմակերպությունները մեծապես ապավինում են այս համակարգերին՝ ազգային նույնականացման քարտերի տրամադրման, սահմանային հսկողության, աշխատակիցների մուտքի վերահսկման և այլ կարևոր ոլորտներում: Այս համակարգերի միջոցով նույնականացման գործընթացը ոչ միայն դառնում է ավելի արագ և ճշգրիտ, այլև նվազեցնում է վարչարարական ծախսերն ու մարդկային սխալների հավանականությունը:

Բացի այդ, կենսաչափական նույնականացումը դարձել է ժամանակակից կիբերանվտանգության ռազմավարությունների առանցքային բաղադրիչներից մեկը: Այն ապահովում է մուտքի բազմաշերտ վերահսկողություն՝ սահմանափակելով առանց լիազորման հասանելիությունը կենսական կարևորության ունեցող տեղեկատվությանը և ենթակառուցվածքներին:

Կենսաչափական տեխնոլոգիաների ակտիվ զարգացումը կարևոր առաջընթաց է ապահովել ինքնության կառավարման և վավերացման համակարգերում, ինչը հանգեցրել է առաջին ազգային մակարդակի ծրագրերի ստեղծմանը՝ այս նորարար տեխնոլոգիայի կիրառմամբ: Հայտնի ու օրիգինալ նախաձեռնություններից է Հնդկաստանի կառավարության՝ 2009թ. գործարկած «Ադհար» ծրագիրը, որը յուրաքանչյուր քաղաքացին համալրում է յուրահատուկ 12-անիշային նույնականացման համարով՝ հիմնված կենսաչափական և ժողովրդագրական տվյալների վրա:

Կենսաչափական տվյալներ՝ ինչպիսիք են մատնահետքերը և աչքի ձգունքի սկանավորումները, ապահովում են անհատականության ճշգրտությունն ու բացառիկությունը Հնդկաստանի մեծաթիվ բնակչության մեջ: «Ադհար»-ը ոչ միայն համակողմանիորեն օպտիմալացրել է կառավարության ծառայությունների անվտանգ մուտքը, այլև խթանել է ֆինանսական ներառականությունը՝ դառնալով բազմաթիվ սոցիալական բարեկեցության և ֆինանսական ծրագրերի հիմնասյուն: Ծրագրի հաջողությունը դարձել է մի խոշոր ազդակ՝ նմանատիպ նախաձեռնությունների համար ողջ աշխարհում, որտեղ կառավարություններն սկսել են ակտիվորեն օգտագործել կենսաչափական տեխնոլոգիաները ազգային ինքնության նախագծերում: 2023թ. սեպտեմբերի դրությամբ Ադհար համակարգում գրանցվել է ավելի քան 1,38 միլիարդ օգտատեր (UIDAI 2023):

«TECH5» ընկերությունը, որը հիմնադրվել է կենսաչափական ոլորտի փորձառու մասնագետների կողմից, ունեցել է գլխավոր դեր աշխարհի խոշորագույն կենսաչափական ծրագրերի մշակման և ներդրման մեջ: Ընկերության թիմը ակտիվ մասնակցություն է ունեցել Հնդկաստանի «Ադհար» (2009) և Ինդոնեզիայի ազգային ID (2011) ծրագրերի, ինչպես նաև ավելի վաղ իրականացված նախաձեռնությունների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի աչքի ցանցաթաղանթի գրանցման (2002), ՄԱԿ-ի փախստականների գրանցման (UNHCR 2003), Աֆղանստանի ընտրությունների (2007) և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում գլխիվիների ձերբակալման (UNDP/World Bank 2006) ծրագրերի մշակման և իրականացման մեջ:

Կենսաչափական հիմքով հիմնարար նույնականացման (Foundational ID) ծրագրերը ներկայացնում են ինքնության վավերացման և հաստատման նորարարական մոտեցում, որը արմատապես փոխում է անհատների նույնականացման և ճանաչման գործընթացը տարբեր համատեքստերում: Այս ծրագրերն օգտագործում են կենսաչափական տվյալներ՝ անձանց համար ստեղծելով միանշանակ թվային ինքնություններ: Կենսաչափական ID-ների առավելություններից են դրանց բարձր ճշգրտությունն ու անվտանգությունը, քանի որ դրանք գրեթե անհնար է կեղծել կամ ենթարկել մանիպուլյացիայի: Բացի այդ, տվյալ համակարգերն ապահովում են օգտատիրոջ համար հարմարավետություն՝ հեշտությամբ

ինտեգրվելով տարբեր ոլորտների ծառայությունների մեջ, ներառյալ՝ պետական, ֆինանսական և առողջապահական համակարգերը:



Գծապատկեր 4. Եթովպիայի հիմնարար նույնականացման ծրագրի նույնականացման քայլերը

Եթովպիայի հիմնարար նույնականացման ծրագիրը՝ Foundational ID-ն, հանդիսանում է հաջող օրինակ TECH5 ընկերության կենսաչափական և թվային նույնականացման տեխնոլոգիաների կիրառման՝ ազգային մակարդակի նախագծում: 2021թ. Եթովպիայի Ազգային Ինքնության Ծրագիրը՝ NIDP Ethiopia-ը համագործակցեց TECH5 ընկերության հետ՝ նպատակ ունենալով ներդնելու դեմքի, մատնահետքի և իռիսի կենսաչափական նույնականացման հիման վրա կառուցված համակարգ: Այս համագործակցությունը նախատեսում էր ինչպես կենսաչափական նույնականացում, կրկնվող գրանցումների բացառում (de-duplication), այնպես էլ բնակիչների հիմնարար ID-ների թողարկում և վավերացում՝ օգտագործելով T5-Digital ID պլատֆորմը:

2022թ. Եթովպիան պաշտոնապես իրականացրեց իր առաջին Foundational ID նախագիծը՝ նախնական փորձարկման փուլում հիմնելով արտադրական համակարգ: Ծրագիրն ուղղված է թվային նույնականացման գործընթացի դյուրացմանը, «սմարթ» քարտերից կախվածության նվազեցմանը, նոր ID-ների բաշխման և օգտագործման պարզեցմանը, ինչպես նաև նույնականացման ժամանակ թանկարժեք սարքավորումների պահանջարկի կրճատմանը:

Համակարգը նախագծված է ինչպես առցանց, այնպես էլ անցանց վավերացման հնարավորություններով՝ խթանելով մատչելիությունն ու արդյունավետությունը:

Եթովպիայի ազգային թվային նույնականացման ծրագիրը՝ Fayda Digital ID-ը, դարձել է երկրի թվայնացման ռազմավարության առանցքային հենասյուներից մեկը՝ նպատակ ունենալով մինչև 2027թ. ընդգրկել առնվազն 90 միլիոն քաղաքացի: Ազգային ինքնության ծրագրի (NIDP) գործադիր տնօրեն Յոդահե Զեմիխայելի խոսքով՝ այս ծրագիրը պարտադիր է երկրի սոցիալական, ֆինանսական և վարչարարական համակարգերի կայուն զարգացման համար, այլ ոչ թե պարզապես հավակնոտ նախաձեռնություն: 2025թ. հունիսի 4-ի դրությամբ արդեն իսկ 16.4 միլիոն մարդ գրանցվել է Fayda համակարգում, ինչը վկայում է գործընթացի առաջընթացի մասին: Ծրագիրը հիմնված է բազմաշերտ և համապարփակ ռազմավարության վրա, որը ներառում է բնակչության սեգմենտացիա՝ ըստ սոցիալ-տնտեսական խմբերի: Այս մոտեցմամբ մասնավորապես թիրախավորվում են SIM քարտերի բաժանորդները (որոնք կազմում են շուրջ 80 միլիոն ակտիվ միավոր), բանկային հաշիվ ունեցողները (ավելի քան 40 միլիոն մարդ), առողջապահական ապահովագրության համակարգում ընդգրկվածները (մոտ 55

միլիոն), ինչպես նաև գյուղատնտեսական և պետական աշխատակիցները: Այս խմբերի միջոցով իրականացվում է զանգվածային մոբիլիզացիա և գրանցում: Բացի տեխնիկական առաջընթացից, իշխանությունները կիրառում են կարգավորող մեխանիզմներ՝ թվային ID-ի պարտադիր օգտագործումն ապահովելու նպատակով: Օրինակ՝ 2024թ. հունվարից Ադիս Աբեբայում նոր բանկային հաշիվ բացելու համար պահանջվում է Fayda ID, և այս քաղաքականությունը կկիրառվի ամբողջ երկրով մեկ՝ առաջիկա ամիսների ընթացքում՝ հետագայում ընդգրկելով նաև արդեն գործող հաշիվները:

Կենսաչափական տեխնոլոգիաների կիրառությունն այսօր դարձել է առանցքային գործոն հանրային անվտանգության ապահովման գործում: Դեմքի, մատնահետքի և ցանցաթաղանթի (իրիսի) նույնականացման համակարգերը հանդիսանում են հուսալի մեխանիզմներ անհատների նույնականացման համար՝ էական դեր ունենալով ազգային անվտանգության երաշխավորման գործընթացում: Իրավապահ մարմինները և սահմանային վերահսկողության ծառայությունները լայնորեն կիրառում են այս տեխնոլոգիաները՝ հնարավոր սպառնալիքներ ներկայացնող անձանց արագ և ճշգրիտ նույնականացնելու և հետևելու նպատակով: Բացի այդ, կենսաչափական համակարգերը նպաստում են կորած անձանց հայտնաբերմանը և ընտանիքներին վերամիավորմանը՝ նպաստելով հանրային անվտանգության մակարդակի ընդհանուր բարձրացմանը: Կենսաչափական վավերացման մեթոդները նաև էական են մուտքի վերահսկման համակարգերում՝ կարևոր ենթակառուցվածքների, պետական շենքերի և ապահով գոտիների չարտոնված մուտքի կանխման նպատակով:

TECH5-ի համահիմնադիր, նախագահ և տեխնիկական տնօրեն Ռահուլ Պարթեն նշել է. «Անձանց նույնականացումը տարբեր կենսաչափական մեթոդներով կարող է զգալիորեն բարձրացնել ռազմավարական առաքելությունների արդյունավետությունն ու նպաստել ազգային անվտանգությանը: Մեր փորձառությամբ և նորարարական մոտեցումներով ուրախ ենք նպաստել այս կարևոր ծրագրին»:

Կոլումբիայում հանրային անվտանգության ապահովման նպատակով TECH5 ընկերությունը համագործակցել է պետական Indumil ձեռնարկության հետ՝ բարելավելու զենք կրելու և պահելու թույլտվությունները թվային նույնականացման տեխնոլոգիաներով: Այս համագործակցությունը ներառում է TECH5-ի T5-Cryptograph տեխնոլոգիայի ներդրում՝ ապահովելով անձի կենսաչափական և դեմոգրաֆիկ տվյալների անվտանգ պահպանում և արագ նույնականացում: T5-Cryptograph-ը թույլ է տալիս իրավապահ մարմիններին իրականացնել նույնականացում՝ նույնիսկ առանց ինտերնետ կապի՝ օգտագործելով միայն սմարթֆոն: Այս նոր համակարգը նախատեսում է ավելի քան 700,000 թույլտվությունների թողարկում՝ ներառելով ինչպես կրողներին, այնպես էլ զենքի սեփականատերերին: Համակարգը նախատեսում է նաև էլեկտրոնային ձևաչափով թույլտվություններ՝ հեշտացնելով դրանց տարածումը և օգտագործումը: Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է Կոլումբիայի հանրային անվտանգության ամրապնդման և զենքի օգտագործման վերահսկման ուղղությամբ:

TECH5 ընկերությունն իր գործընկեր Sycamore-ի հետ համատեղ նախաձեռնել է թվային ուսանողական ID համակարգի կիրառումը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում: Ներկայացված լուծումը նույնպես օգտագործում է TECH5-ի T5-Cryptograph տեխնոլոգիան՝ ուսանողների դեմքի կենսաչափական տվյալների կոդավորված և գաղտնագրված պահպանման համար:

TECH5-ի վաճառքի և բիզնես զարգացման վերնախավի փոխնախագահ Ամեյա Բհագվատը նշում է, որ այս նախագիծը կարևոր քայլ է դեպի հաջորդ սերնդի թվային ID լուծումների իրականացում՝ մատչելի և արդյունավետ եղանակով: Գործընկեր Sycamore-ի փոխտնօրեն Միշել Գամերոն հույս է հայտնում, որ

համագործակցությունը ընդլայնվելու է՝ ընդգրկելով պետական և ձեռնարկատիրական ոլորտներում այլ թվային ինքնության նախագծեր:

Այժմ անդրադառնանք Եվրոպական միության երկրների պարագայում ներդրված բիոմետրիկ նույնականացման ազգային ընթացակարգերին, որոնք Եվրոպական Հանձնաժողովի կիրառական 2019/329 որոշման շրջանակում ընդունվել են 2019թ. փետրվարի 25-ին և հրապարակվել պաշտոնական տեղեկագրում 2019թ. փետրվարի 26-ին, սահմանում է կենսաչափական տվյալների՝ մատնահետքերի և դեմքի պատկերի որակի, լուծաչափի և օգտագործման տեխնիկական բնութագրերը, որոնք պարտադիր են Եվրոպական Միության Մուտքի/Ելքի Համակարգի (Entry/Exit System, EES) շրջանակներում (European Commission 2019):

Որոշման հիմնական դրույթներն ընդգրկում են հետևյալը՝

- ✓ Եվրամիության EES համակարգը նախատեսված է երրորդ երկրների քաղաքացիների մուտքի և ելքի տվյալների էլեկտրոնային գրանցման, ինչպես նաև նրանց թույլատրված մնալու տևողության վերահսկման համար:
- ✓ Համակարգը նպատակ ունի ուժեղացնելու արտաքին սահմանի վերահսկողությունը, կանխելու ապօրինի միգրացիան և աջակցելու ահաբեկչական ու ծանր հանցագործությունների կանխարգելմանն ու բացահայտմանը:
- ✓ Որոշումը շեշտում է, որ կենսաչափական տվյալների՝ հատկապես մատնահետքերի և դեմքի պատկերի որակը և հուսալիությունը վճռորոշ նշանակություն ունեն համակարգի հաջող իրականացման համար: Կենսաչափական տվյալները կարող են վերցվել ինչպես տեղում կենդանի եղանակով (live capture), այնպես էլ էլեկտրոնային ճանապարհով՝ էլեկտրոնային մեքենայով ընթեռնելի ճանապարհային փաստաթղթից (eMRTD):
- ✓ Սահմանված բնութագրերը հիմնված են ICAO միջազգային չափանիշների վրա և չեն ներկայացնում նոր ստանդարտներ, այլ ապահովում են համադրելիություն՝ գոյություն ունեցող համաեվրոպական և միջազգային համակարգերի հետ:
- ✓ Որոշման իրականացման շրջանակում նպատակադրվել է նաև տեխնիկական պահանջների հիման վրա զարգացնել EES համակարգի ճարտարապետությունը, կապի ենթակառուցվածքները և ապահովել իրավապահ մարմինների հասանելիությունը համակարգին՝ ըստ սահմանված պայմանների:

Որոշումը ներառում է նաև հատուկ դրույթներ մի շարք ԵՄ անդամ և ասոցացված պետությունների վերաբերյալ՝ (Դանիա, Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Շվեյցարիա, Նորվեգիա, Լիխտենշտեյն), կապված իրենց պարտավորությունների և իրավական ներգրավվածության հետ:

Այս որոշումը կարևոր նախադրյալ է ստեղծում ԵՄ միգրացիոն վերահսկողության թվայնացման, անվտանգության բարելավման և բարդ իրավական համակարգերի տեխնոլոգիական արդիականացման համար:



Գծապատկեր 5. Եվրոպական միության մուտքի/ելքի համակարգի կենսաչափական նույնականացման հավաստման գործընթացի նկարագիր

Եվրոպական միության մուտքի/ելքի համակարգում (Entry/Exit System – EES) կենսաչափական նույնականացման գործընթացը ներառում է երկու հիմնական կենսաչափական մոդալության՝ մատնահետքերի և դեմքի պատկերի օգտագործում՝ անձի ինքնությունը հաստատելու նպատակով: Համակարգը նախատեսված է ո թվով անձանց կենսաչափական շաբլոնները պահելու և համապատասխանեցման համար օգտագործելու համար:

Նախապես սահմանված չափման գործընթացը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. Կենսաչափական նմուշի ներկայացում. Հանձնագրված անձը EES-ում գրանցման նպատակով ներկայացնում է իր կենսաչափական նմուշներից մեկը կամ երկուսը՝ մատնահետքեր կամ դեմքի պատկեր:

2. Նույնականացման ստուգում. Իրականացվում է կենսաչափական ստուգում՝ ներկայացված նմուշը համեմատելով տվյալ անձի նույնականացման հետ՝ կապված կենսաչափական հղման տվյալների հետ: Այս փուլը ներկայացված է որպես «լռելյայն ստուգում»:

3. Թեստային նույնականացում՝ բացասական արդյունքով. Այնուհետև նույն անձից ստացվում է երկրորդ կենսաչափական մոդալության նմուշը՝ կամ միաժամանակ, կամ արդեն առկա հղման տվյալներից: Այս երկու մոդալությունները համադրվում են, և իրականացվում է նույնականացման գործընթաց՝ ամբողջ շտեմարանի վրա՝ բացառելով տվյալ անձի կենսաչափական տվյալները: Այս փուլը, որը հայտնի է որպես «նույնականացում, որի արդյունքը նախապես բացասական է հայտնի», նպատակ ունի համակարգի սխալ դրական նույնականացման հավանականությունը գնահատելու:

Եթե տվյալ մոդալությունն ընդգրկում է մատնահետք, ապա նույնականացումը կրկնվում է նույն պայմաններում՝ մատնահետքերի ճշգրտության գնահատման համար:

4. Սխալ դրական նույնականացում. Եթե նույնականացման արդյունքում վերադարձվում է կենսաչափական նմուշ, որը գերազանցում է շեմային արժեքը, սակայն չի պատկանում համեմատվող անձին, ապա այն համարվում է սխալ դրական նույնականացում (false positive match):

Պետք է նշել, որ 1-ին և 2-րդ փուլերը ներառվում են EES-ի նույնականացման գործընթացի շրջանակում, մինչդեռ 3-րդ և 4-րդ փուլերը իրականացվում են բացառապես կենսաչափական համակարգի ճշգրտության վերլուծության և գնահատման նպատակով:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիներին, ապա մեր դեպքում գործում է «Ես եմ» ազգային նույնականացման հարթակը, որը անձի նույնականացման գործիքների հավաքակազմ է, որը ներառում է նույնականացման քարտով, բջջային հեռախոսով և սմարթ սարքով մուտքի լուծումները: Էլեկտրոնային ծառայություն մատուցողները իրենց «հաճախորդներին» նույնականացնելու նպատակով ինտեգրվում են միասնական հարթակին, և հարթակը վերադարձնում է հաջող նույնականացումն անցած «հաճախորդի» հանրային ծառայությունների համարանիշը, որը ծառայում է որպես անձի հիմնական նույնականացուցիչ:

Քաղաքացիների համար ծառայությունների մատուցման էջերում «Մուտք» կոճակը սեղմելով՝ անհրաժեշտ է վերահասցեագրվել նույնականացման միասնական համակարգ՝ nid.e-gov.am, որտեղ հնարավորություն կլինի ընտրելու նույնականացման հետևյալ եղանակներից որևէ մեկը՝

- ✓ Նույնականացման քարտով մուտք. Այս տարբերակի դեպքում անհրաժեշտ է ունենալ նույնականացման քարտ (ID card), որը քաղաքացիները ստացել են 2023թ. փետրվարի 15-ից առաջ, ինչպես նաև քարտ կարդացող սարք:

- ✓ Բջջային նույնականացման քարտով մուտք. Անհրաժեշտ է, որ բջջային հեռախոսակապի օպերատորից, քաղաքացիները ձեռք բերեն բջջային ID SIM քարտ և ակտիվացնեն ծառայությունը:
- ✓ Կոնտակտային տվյալների տրամադրմամբ մուտք (ոչ խիստ նույնականացում). Տարբերակն առկա է միայն այն էլեկտրոնային ծառայություն մատուցողների հարթակում, որոնք ծառայությունը մատուցելու համար անձի խիստ նույնականացում չեն պահանջում:

Այս տարբերակի պարագայում անհրաժեշտ կլինի տրամադրել անձնական տվյալներ՝ անուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համար և գործող էլեկտրոնային փոստի հասցե, որի հավաստման համար փոստից ստացված կոդը անհրաժեշտ կլինի հավաքել մուտք գործելու համար:

Գծապատկեր 6. Նույնականացման քարտի կիրառմամբ՝ էլեկտրոնային թվային ստորագրություն և բջջային էլեկտրոնային թվային ստորագրություն

«Ես եմ» հարթակի գործարկման իրավական հիմքերն, ինչպես նաև պետական մարմինների կայքերում գործիքակազմի ինտեգրման պահանջները սահմանված են ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 25-ի N 572-Ն որոշմամբ:

«Ես եմ»-ը մուտքի մեկ միասնական միջոց է թվային բոլոր ծառայություններից օգտվելու համար, որոնք մատուցվում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի կողմից:

«Ես եմ» հարթակը նախագծվում է թվային նույնականացման միջազգային լավագույն ստանդարտներին՝ եվրոպական eIDAS 2.0 կանոնակարգին համապատասխան՝ էլեկտրոնային ինքնության բաց էկոհամակարգի ստեղծմամբ: Սա ապահովելու է անվտանգության բարձրագույն մակարդակ և հետագա հուսալի փոխգործելիություն միջազգային գործընկերների հետ:

Թվային բանկային տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ սերունդների միջև փոխգործակցությունն ու համատեղ աճը դառնում են հիմնարար նախապայմաններ ժամանակակից ֆինանսական ծառայությունների արդյունավետության համար: Նորարար թվային սերունդների առանձնահատկությունները և պահանջները պետք է հաշվի առնվեն՝ ապահովելու համար ինտեգրված, անհատականացված և անվտանգ բանկային լուծումներ, որոնք կնպաստեն թվային ներառմանը և ֆինանսական ինքնուրույնության զարգացմանը: Այս գործընթացում կարևոր է տեխնոլոգիական առաջընթացի և մշակութային բազմազանության համադրումը՝ բանկային համակարգերի կայուն ու արդյունավետ զարգացման համար:

Եզրահանգումներ

Ժամանակակից թվային տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումը հանգեցրել է սերունդների սոցիալ-տնտեսական և մշակութային վարքագծերի փոփոխությանը՝ ազդեցություն ունենալով ֆինանսական ծառայությունների պահանջարկի և սպառման ձևերի վրա: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ Millennials, Generation Z, Alpha և Beta սերունդները զգալի տարբերություններ ունեն թվային գրագիտության մակարդակով, տեխնոլոգիական ակնկալիքներով և ֆինանսական վարքագծով: Այս սերունդների արդյունավետ ինտեգրումը թվային բանկային համակարգում պահանջում է տարբերակված մոտեցումներ, որոնք կհիմնվեն տեխնոլոգիական նորարարությունների, միջսերունդային վստահության և ֆինանսական ներառականության սկզբունքների վրա: Հետազոտությունը փաստում է, որ սերունդաբանական առանձնահատկությունները բանկային թվային

ծառայությունների նախագծման և մատուցման փուլերում կարող են զգալիորեն բարձրացնել օգտատերերի ներգրավվածությունն ու վստահությունը:

Մյուս կողմից՝ կենսաչափական նույնականացման տեխնոլոգիաները, ինչպիսիք են դեմքի, մատնահետքի և ցանցաթաղանթի վերլուծությունը, դարձել են թվային ինքնության վավերացման և պաշտպանության արդի գործիքներ: Դեպքի ուսումնասիրությունների և համեմատական վերլուծության միջոցով բացահայտվեց, որ տվյալ տեխնոլոգիաները էապես նվազեցնում են նույնականացման սխալները, բարձրացնում են անվտանգությունը և խթանում թվային ներառումը: Հնդկաստանի, Եթովպիայի, Կոնգոյի և Կոլումբիայի ազգային նույնականացման ծրագրերի համատեքստում վեր հանվեցին լավագույն փորձեր, որոնք կարող են կիրառելի լինել նաև ՀՀ-ում՝ «Ես եմ» հարթակի զարգացման և ազգային ռազմավարությունների իրականացման շրջանակներում: Այսպիսով՝ կենսաչափական տեխնոլոգիաները կարող են կարևոր դեր ունենալ թվայնացման գործընթացում՝ միաժամանակ ապահովելով միջսերունդային համերաշխություն, բարձրացնելով ծառայությունների մատչելիությունը և ամրապնդելով հանրային թվային վստահությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ինչպես են թվային բանկերը ազդել ֆինթեքի զարգացման վրա: Թվային բանկինգ, վերլուծություն, վճարային համակարգեր». *Fintech.am (2024, September 5)*. https://www.fintech.am/digitalbanks-fintech/: Մուտք՝ 04.06.2025:
2. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ». *eSEM Էլեկտրոնային ստորագրության կառավարման համակարգ*, 2025, https://www.ekeng.am/hy/esem: Մուտք՝ 12.06.2025:
3. Basco, Jen. *Generation Beta Characteristics. Goodlife*. 2025 Retrieved from https://www.goodliife.com/blog/generation-beta-characteristics/. Accessed: 16.06.2025
4. Deloitte Development LLC. *Elevating the payments experience: How modern card issuing can unlock deeper financial relationships with cardholders*. Deloitte, 2022. https://www2.deloitte.com/us/en/pages/financial-services/articles/elevating-the-digital-payment-experience.html Accessed: 18.06.2025
5. Dimock, Michael (2019, January 17). Where Millennials end and Generation Z begins. Pew Research Center. Retrieved May 22. https://www.pewresearch.org/fact-tank/2019/01/17/where-millennials-end-and-generation-z-begins Accessed: 18.06.2025
6. European Commission. (2019). Commission Implementing Decision (EU) 2019/329 of 25 February 2019 laying down the specifications for the quality, resolution and use of fingerprints and facial image for biometric verification and identification in the Entry/Exit System (EES). Official Journal of the European Union, L 57, 18–26. Retrieved from https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32019D0329 Accessed: 16.06.2025
7. Finance Magnates. (2023). Gen Smart Banking: Decoding the Financial DNA of Each Generation. Retrieved May 13, 2025, from https://www.financemagnates.com/fintech/gen-smart-banking-decoding-the-financial-dna-of-each-generation/ Accessed: 10.06.2025
8. Global Banking & Finance. (2024). Next-Gen Banking: How Financial Institutions Can Boost Engagement Now. Retrieved May 24, 2025, from https://www.globalbankingandfinance.com/next-gen-banking-how-financial-institutions-can-boost-engagement-now Accessed: 20.06.2025
9. Höfrová, Alena, Balidemaj, Venera, & Small, Mark (2024). A Systematic Literature Review of Education for Generation Alpha. Discover Education, 3(1), 125. https://doi.org/10.1007/s44217-024-00218-3 Accessed: 16.06.2025

10. IMARC Group. (2024). Mobile Payment Market: Global Industry Trends, Share, Size, Growth, Opportunity and Forecast 2024-2029.https://www.imarcgroup.com/mobile-payment-market Accessed: 25.06.2025

11. Mehra, Kajal (2023, October 13). TECH5 awarded U.S. Army BEC-1 biometric contract with Leidos. TimesTech. https://timestech.in/tech5-awarded-u-s-army-bec-1-biometric-contract-with-leidos/ Accessed: 16.06.2025

12. National ID Program Ethiopia. Authentication https://id.gov.et/authentication Accessed: 16.06.2025

13. National ID Program Ethiopia. (2024, June). Ethiopia's digital ID chief lays out roadmap for reaching 90M enrollments by 2027. https://id.gov.et/updates/News/Ethiopia%E2%80%99s-digital-ID-chief-lays-out-roadmap-for-reaching-90M-enrollments-by-2027 Accessed: 25.06.2025

14. Ollerton, Niamh (2025). Generation Alpha: The new digital natives and their influence on education and financial services. QS Insights Magazine. https://magazine.qs.com/qs-insights-magazine-17/gen-alpha Accessed: 27.05.2025

15. Rusnali, Nur Aisyah (2021). Alpha Generation and Digital Literacy for the Future of the Nation. Palakka: Media and Islamic Communication, 2(2), 110–119. ISSN: 2746-4687. https://www.jurnal.iain-bone.ac.id/index.php/palakka/article/view/2302/1053 Accessed: 21.06.2025

16. TECH5. (2022, May 23). TECH5 implements its digital identification technologies in Colombia in order to help guarantee public security in the country. https://tech5.ai/digital-id-colombia-public-security/ Accessed: 12.06.2025

17. TECH5. (2023, May 15). TECH5, DRC partner to offer digital student ID across Congo. https://idtechwire.com/tech5-drc-partner-to-offer-digital-student-id-across-congo/ Accessed: 12.06.2025

18. Unique Identification Authority of India. (2023). About UIDAI. https://www.uidai.gov.in/en/about-uidai/unique-identification-authority-of-india.html/ Accessed: 12.06.2025

19. Yurtseven, Nihal, & Karadeniz, Sirin (2020). An overview of Generation Alpha (Chapter 1). In The Teacher of Generation Alpha. Peter Lang Publishing. https://www.researchgate.net/publication/349180864_The_Teacher_of_Generation_Alpha_Chapter_1 Accessed: 21.05.2025

WORK CITED

1. Elektronayin karavaruman entakarrucvacqneri nerdrman grasenyak. (2025). eSEM՝ elektroniakan storagrutyan karavarum [eSEM: Electronic Signature Management System]. https://www.ekeng.am/hy/esem Accessed: 04.06.2025 (in Armenian)

2. Fintech.am. (2024, September 5). Inchpes en t'vayin bankery azdel fintech-i zargacman vra: tvayin banking, verluc'utyun, vcharayini hamakarger [How Digital Banks Impacted Fintech Development: Digital Banking, Analysis, Payment Systems]. https://www.fintech.am/digitalbanks-fintech/ Accessed: 12.06.2025 (in Armenian)

INTEGRATION AND COLLABORATION OF DIGITAL GENERATIONS IN THE FIELD OF DIGITAL BANKING TECHNOLOGIES

ASHOT MARDOYAN
Armenian State University of Economics,
Chair of Financial Markets and Institutions, Head
Ph.D. in Economics, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

HAYK SARGSYAN
Armenian State University of Economics,
Department of Financial Markets and Institutions, Lecturer
Ph.D. in Economics, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

The current stage of digital technology development shapes new forms of interaction between generations and the development of digital financial services. The aim of the study is to assess the applicability and effectiveness of biometric identification technologies in the context of digital identity protection, cybersecurity assurance, and the provision of public services. The main objectives include revealing the digital behavior characteristics of generations, analyzing the applied potential of biometric methods – specifically facial recognition, fingerprint, and retinal scanning technologies - as tools for identity verification and access and payment authentication in digital environments, as well as evaluating their role in expanding digital inclusion amid the integration of different generations, service diversification, and technological innovation.

The study employs analytical, comparative, inductive, historical-comparative, and descriptive methods. National identification programs of India, Ethiopia, Congo, and Colombia, as well as EU legal regulations and the Republic of Armenia's "ES EM" digital platform, were analyzed.

The study concludes that biometric identification technologies increase identification accuracy and information security, reduce validation risks, and can effectively support national digitalization strategies by ensuring the accessibility of digital services, digital inclusion, cybersecurity, and technological trust across diverse generations.

Keywords: *biometric identification, digital identity, generations, digital banking, financial literacy, digital inclusion, cybersecurity, digitalization, technological integration.*

ИНТЕГРАЦИЯ И СОТРУДНИЧЕСТВО ЦИФРОВЫХ ПОКОЛЕНИЙ В ОБЛАСТИ ЦИФРОВЫХ БАНКОВСКИХ ТЕХНОЛОГИЙ

АШОТ МАРДОЯН
заведующий кафедрой финансовых рынков и институтов
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук, доцент
г. Ереван, Республика Армения

АЙК САРГСЯН
преподаватель кафедры финансовых рынков и институтов Армянского государственного экономического университета, кандидат экономических наук, доцент
г. Ереван, Республика Армения

Современный этап развития цифровых технологий формирует новые виды взаимодействия между поколениями и развитием цифровых финансовых услуг.

Цель исследования – оценить применимость и эффективность биометрических технологий идентификации в контексте защиты цифровой идентичности, обеспечения кибербезопасности и предоставления общественных услуг.

Основные задачи включают выявление особенностей цифрового поведения поколений, анализ прикладного потенциала биометрических методов,- в частности, технологий распознавания лиц, отпечатков пальцев и сканирования сетчатки глаза как инструментов подтверждения личности и аутентификации доступа и платежей в цифровой среде, а также оценку их роли в расширении цифровой инклюзии при интеграции различных поколений, диверсификации услуг и технологических инновациях.

Исследование проведено с использованием аналитических, компаративных, индуктивных, историко-сравнительных и описательных методов. Проанализированы национальные программы идентификации Индии, Эфиопии, Конго и Колумбии, а также нормативные акты ЕС и цифровая платформа Республики Армения «ЕС ЕМ».

По результатам исследования сделан вывод о том, что биометрические технологии идентификации повышают точность идентификации и уровень информационной безопасности, снижают риски фальсификаций и могут эффективно поддерживать национальные стратегии цифровизации, обеспечивая доступность цифровых услуг, цифровую инклюзию, кибербезопасность и технологическое доверие для различных поколений.

Ключевые слова: *биометрическая идентификация, цифровая идентичность, поколения, цифровой банкинг, финансовая грамотность, цифровая инклюзия, кибербезопасность, цифровизация, технологическая интеграция.*

ՀԵՌԱՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՐԸ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ *

ՀՏԴ 331 DOI: 10.52063/25792652-2025.2.25-309

ԱՆՆԱ ՄԱՔՍՈՒԴՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
«Մարդկային ռեսուրսների կառավարում»
մագիստրոսական ծրագրի ղեկավար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
a.maksudyan@ysu.am
ORCID ID: 0009-0004-3883-2010

ԺԵՆՅԱ ՄԻՐԻՄԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
«Մարդկային ռեսուրսների կառավարում»
մագիստրոսական ծրագրի ուսանող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mirimannyan@gmail.com
ORCID ID: 0009-0005-3677-271X

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հեռավար աշխատանքի դերը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) աշխատաշուկայում՝ վերլուծելով դրա վերաբերյալ տարածված ընկալումները, ինչպես նաև դրա անհրաժեշտությունն ու առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ***ուսումնասիրել հեռավար աշխատանքի տարածման միտումները և դերը ՀՀ աշխատաշուկայում,***
2. ***վերլուծել հեռավար աշխատանքի դրական և բացասական կողմերը՝ հիմնվելով նաև միջազգային փորձի վրա,***
3. ***առաջարկել գործիքներ, որոնք կնպաստեն հեռավար աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը ՀՀ-ում:***

Հետազոտությունն իրականացվել է որակական ու քանակական տվյալների համակցված մեթոդաբանությամբ՝ առցանց հարցման միջոցով: Տվյալների հավաքագրման նպատակով մշակվել է կառուցվածքային հարցաշար՝ լրացված 133 մասնակցի կողմից: Վերլուծությունը կատարվել է նկարագրական մեթոդներով և թեմատիկ խմբավորմամբ՝ բացահայտելու հեռավար աշխատանքի կիրառման առանձնահատկությունները և ընկալումները:

Հետազոտության հիմնական եզրահանգումն է, որ հեռավար աշխատանքի արդյունավետության ապահովումը պայմանավորված է մի շարք հիմնարար գործոններով, որոնցից առանձնապես կարևոր են հստակ և շարունակական հաղորդակցությունը աշխատակիցների և ղեկավարության միջև, տեխնիկական բավարար ապահովվածությունը, ինչպես նաև աշխատանքային նպատակների հստակ սահմանումը և դրանց

* Հոդվածը ներկայացվել է 09.04.2025թ., գրախոսվել՝ 25.07.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

չափելիությունը: Այս գործոնների համադրությամբ է հնարավոր ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի աշխատակիցների արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի որակի պահպանմանը՝ անկախ ֆիզիկապես գտնվելու վայրից: Ուստի՝ ակնկալվում է, որ հեռավար աշխատանքի կիրառման տեմպերը Հայաստանում կաճեն առաջիկա տարիներին՝ ապահովելով ինչպես կազմակերպությունների ռազմավարական նպատակների իրագործումը, այնպես էլ՝ աշխատակիցների ներգրավվածությունը և բավարարվածությունը:

Հիմնաբառեր՝ *հեռավար աշխատանք, աշխատաշուկա, կառավարում, աշխատանք-կյանք հավասարակշռություն, ճկունություն, արդյունավետություն, ինքնավարություն, ներգրավվածություն, մոտիվացիա:*

Ներածություն

Տեխնոլոգիական զարգացումը, ինչպես նաև համաշխարհային իրադարձությունները, մասնավորապես՝ COVID-19 համավարակը, խթանեցին հեռավար աշխատանքի տարածումը: Հեռավար աշխատանքը դառնում է նորագույն միտում, որը ընդլայնվում է ոչ միայն ճգնաժամային ժամանակահատվածներում, այլ նաև համաշխարհային աշխատաշուկայում՝ որպես աշխատելու նոր ձևաչափ: Այս հոդվածում կքննարկենք հեռավար աշխատանքի ազդեցությունը, դրա դրական և բացասական կողմերը, ինչպես նաև ապագա միտումները:

Հեռավար աշխատանքը այլևս չի հանդիսանում միայն ժամանակավոր լուծում ճգնաժամերի ընթացքում, այլ դարձել է երկարաժամկետ աշխատանքային մոդել: Կազմակերպություններն ու աշխատողները վերաիմաստավորել են աշխատանքի կազմակերպումը, իսկ հեռավար աշխատանքը՝ որպես հիմնական աշխատանքային ձև, փոխել է աշխատաշուկայի կառուցվածքը:

Հեռավար աշխատանքի նշանակությունը

«Հակաճգնաժամային կառավարման միջոցառումների միջազգային և հայաստանյան փորձը կորոնավիրուսային համավարակի պայմաններում» (Բաղդասարյան, Գասպարյան 170) հոդվածը, անդրադարձ կատարելով ճգնաժամերի պայմաններում տնտեսության համարժեք արձագանքի կարևորությանը, ընդգծում է զբաղվածությանն աջակցող միջոցառումների դերը՝ նշելով, որ դրանք «պետք է նպաստեն աշխատանքի անվտանգ վերադարձին և դյուրացնեն աշխատաշուկաների կառուցվածքային տեղաշարժերը՝ բարելավելու հետճգնաժամային տնտեսական ճկունությունը»:

Ըստ աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) սահմանման՝ հեռավար աշխատանքը աշխատանքի լիովին կամ մասնակիորեն իրականացումն է այլընտրանքային աշխատավայրում՝ աշխատանքի հիմնական վայրից դուրս (International Labour Organization 3):

World Economic Forum-ի կանխատեսմամբ, մինչև 2030 թվականը, ամբողջ աշխարհում հեռավար, «թվային» աշխատատեղերի թիվը ակնկալվում է աճել մոտ 25%-ով՝ հասնելով շուրջ 92 միլիոնի (World Economic Forum, The Future of Jobs: Remote Work and Employment Trends 2024):

Հեռավար աշխատանքը ստեղծել է նոր հնարավորություններ ինչպես կազմակերպությունների, այնպես էլ աշխատողների համար: Այս համատեքստում կարևոր տեղ ունի Նիկոլաս Բլումի, Լիանգի, Ռոբերթսի և Ժիչուն Ջենի Յինգի (2013) աշխատանքը (Nicolas, Liang, Roberts, Ying 12): Հետազոտությունը ներկայացնում է Չինաստանի CTrip ընկերության փորձը, որտեղ աշխատակիցների մի մասը

պատահական ընտրությամբ տեղափոխվել է տնից աշխատանքի ռեժիմին՝ հնարավորություն տալով գիտականորեն գնահատելու այս մոտեցման դրական և բացասական կողմերը:

CTrip-ը Չինաստանի խոշորագույն առցանց ճանապարհորդական գործակալություններից մեկն է, որը ցուցակված է NASDAQ բորսայում և ունի շուրջ 16,000 աշխատակից: Ուսումնասիրության շրջանակում ընտրվել են ընկերության զանգերի կենտրոնի աշխատակիցները, ովքեր կատարում էին ստանդարտացված, չափելի գործառույթներ՝ ապահովելով հաճախորդների աջակցություն հեռախոսազանգերի միջոցով:

Փորձի ընթացքում կամավոր աշխատակիցները, ովքեր բավարարում էին տնից աշխատանքի տեխնիկական պահանջները (համապատասխան աշխատանքային պայմաններ, ինտերնետային կապ), պատահականորեն բաժանվեցին երկու խմբի.

● **Վերահսկիչ խումբ** – աշխատակիցները շարունակում էին աշխատել գրասենյակից:

● **Փորձարարական խումբ** – աշխատակիցները 9 ամիս շարունակ աշխատում էին տնից:

Արդյունքները ցույց տվեցին, որ տնից աշխատող աշխատակիցների արտադրողականությունը միջինում 13%-ով աճել է համեմատած գրասենյակային խմբի հետ: Այս աճը պայմանավորված էր երկու գործոններով.

1. **9% արտադրողականության աճ՝** պայմանավորված ավելի երկար աշխատանքային ժամերով: Տնից աշխատողները ավելի քիչ ընդմիջումներ էին անում, ավելի քիչ բացակայություններ ունեին (հիվանդության արձակուրդների նվազում), և նրանց աշխատանքային օրվա արդյունավետությունն ավելի բարձր էր:
2. **4% արտադրողականության աճ՝** պայմանավորված հանգիստ միջավայրում աշխատելու հնարավորությամբ: Գրասենյակային միջավայրում աղմուկը և աշխատակիցների միջև շփումները հաճախ կարող են խանգարել կենտրոնացվածությանը, մինչդեռ տնից աշխատելը ապահովել է ավելի բարձր արդյունավետություն:

Այս արդյունքները փաստում են, որ տնից աշխատանքի մոդելը կարող է բերել էական շահույթներ, հատկապես այն ոլորտներում, որտեղ աշխատանքի արդյունքները չափելի են և մեծապես կախված են անհատական ջանքերից:

Ուսումնասիրության հետաքրքիր փուլերից մեկն այն էր, երբ փորձից հետո CTrip-ը որոշեց ընդլայնել տնից աշխատանքի ծրագիրը՝ թույլ տալով բոլոր աշխատակիցներին ընտրել աշխատելու վայրը՝ տանը կամ գրասենյակում:

Արդյունքում, տնից աշխատանքի ընտրությունը դարձավ ավելի տարածված, և կազմակերպությունը հայտնաբերեց, որ արտադրողականության աճը կրկնապատկվեց՝ հասնելով 22%-ի: Սա բացատրվում է նրանով, որ, երբ աշխատակիցները հնարավորություն ունեն ընտրելու իրենց նախընտրելի աշխատանքային միջավայրը, նրանք աշխատում են առավելագույն արդյունավետությամբ:

Բացի այդ, աշխատակիցների պահպանման մակարդակը զգալիորեն աճել է: Գրասենյակային խմբի համեմատ տնից աշխատողների կադրերի հոսքը նվազել է 50%-ով, ինչը նշանակում է, որ ընկերությունը ավելի քիչ աշխատակիցների կորուստ է ունեցել և խնայել է կադրերի նոր համալրման ու ուսուցման ծախսերը:

Deloitte-ի 2023 Human Capital Trends զեկույցի համաձայն, հեռավար աշխատանքի տարածումը վերածվել է ոչ միայն ժամանակակից աշխատաշուկայի կարևորագույն բաղադրիչներից մեկը, այլև դարձել է կազմակերպությունների ռազմավարական զարգացման առաջնային ուղղություն (Deloitte 2023):

Զեկույցը ցույց է տալիս, որ հեռավար և հիբրիդային աշխատանքի մոդելները վերածվել են նոր ստանդարտի: Կազմակերպությունների 56%-ը վերանայել է իրենց

աշխատանքային ռազմավարությունները՝ մեծ ուշադրություն դարձնելով թվային հարթակների ինտեգրմանը և ճկուն աշխատանքի մոդելներին:

Ըստ զեկույցի՝ այս փոփոխությունները հիմնականում պայմանավորված են երեք հիմնական գործոններով.

1. **Աշխատանքային միջավայրի փոփոխությունը:**

Կազմակերպությունների 87%-ը Deloitte-ի հարցման շրջանակում նշել է, որ հեռավար աշխատանքի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է աշխատանքի կազմակերպման ճկունությունից: Շատ ընկերություններ անցել են հիբրիդային աշխատանքային մոդելին, որը համատեղում է հեռավար և գրասենյակային աշխատանքը՝ փորձելով հավասարակշռել արտադրողականությունն ու թիմային համագործակցությունը:

2. **Տեխնոլոգիական գործիքների դերը հեռավար աշխատանքի կառավարման մեջ:**

Նշվում է, որ կազմակերպությունների 73%-ը ներդրել է թվային հարթակներ (օր.՝ արհեստական բանականությամբ աջակցվող գործիքներ), որոնք նպաստում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, կազմակերպությունների 46%-ը դեռևս չունի բավարար թվային ենթակառուցվածքներ, ինչը կարող է արգելակել աշխատանքի արդյունավետ կազմակերպումը:

3. **Կադրային կառավարման մարտահրավերները:**

Deloitte-ի զեկույցում ընդգծվում է, որ հեռավար աշխատանքի ազդեցությունը կազմակերպության արտադրողականության վրա կարող է լինել երկակի.

Հեռավար և հիբրիդային աշխատանքը կարող է բարձրացնել անհատական արդյունավետությունը, քանի որ նվազում են ավելորդ հանդիպումները, իսկ աշխատակիցները կարող են կենտրոնանալ առանց աշխատավայրի խանգարող գործոնների: Ըստ Deloitte-ի զեկույցի, կազմակերպությունների մոտ 40%-ը նշել է, որ հեռավար աշխատանքի պայմաններում աշխատակիցները դառնում են ավելի ինքնավար, կարողանում են ավելի արդյունավետ կազմակերպել իրենց աշխատանքային ժամանակը և իրականացնել իրենց պարտականությունները՝ առանց ղեկավարների կողմից մշտական վերահսկողության:

Բացի այդ, աշխատանքի թվայնացումն ապահովում է ճկունություն, ինչը թույլ է տալիս ներգրավել տաղանդավոր մասնագետներ՝ անկախ աշխարհագրական դիրքից: Սա հատկապես կարևոր է այն ընկերությունների համար, որոնք աշխատում են գլոբալ շուկայում և ձգտում են ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների՝ անկախ նրանց ֆիզիկական գտնվելու վայրից: Արդյունքում, կազմակերպությունները կարողանում են կառուցել բազմազան և միջազգային թիմեր, որոնք աշխատում են ընդհանուր նպատակների շուրջ՝ առանց աշխարհագրական սահմանափակումների:

Չնայած դրական կողմերին՝ հեռավար աշխատանքը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ թիմային աշխատանքի արդյունավետության վրա: Ընկերությունների 35%-ը Deloitte-ի հետազոտության շրջանակում նշել է, որ հեռավար աշխատանքի պայմաններում թիմային համագործակցությունն ու հաղորդակցությունն էականորեն նվազում են: Վիրտուալ միջավայրում շփումը հաճախ սահմանափակվում է ֆորմալ հաղորդագրություններով և վիդեոկոնֆերանսներով, ինչը խոչընդոտում է թիմային մտածողության զարգացմանը և համատեղ որոշումների կայացման արդյունավետությանը:

Բացի այդ, ղեկավարների 54%-ը նշել է, որ հեռավար աշխատանքի պայմաններում բարդացել է աշխատանքի վերահսկման գործընթացը: Դասական

գրասենյակային միջավայրում ղեկավարները կարողանում են անմիջապես հետևել աշխատակիցների գործունեությանը, մինչդեռ հեռավար պայմաններում արդյունավետության գնահատման մեխանիզմները դեռևս ունեն բարելավման կարիք: Կազմակերպությունները ստիպված են ներդնել նոր մոնիթորինգի և գնահատման գործիքներ, որոնք թույլ կտան հետևել աշխատակիցների արդյունքներին՝ առանց նրանց աշխատանքի նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելու:

Մեկ այլ խնդիր, որ առանձնացնում է Deloitte-ի զեկույցը, կիբեռանվտանգության ռիսկերի աճն է: Հեռավար աշխատանքի պայմաններում աշխատակիցները հաճախ օգտվում են անձնական սարքավորումներից, որոնք կարող են չունենալ բավարար պաշտպանություն՝ կիբերհարձակումներից խուսափելու համար: Սա մեծացնում է կորպորատիվ տվյալների արտահոսքի և անվտանգության խախտումների հավանականությունը: Այդ պատճառով ընկերությունները պետք է լրացուցիչ ներդրումներ կատարեն տեղեկատվական անվտանգության ոլորտում՝ ապահովելու համար կազմակերպության տվյալների պաշտպանվածությունը:

Work-from-anywhere: The productivity effects of geographic flexibility հոդվածում անդրադառնալով «աշխատանք ցանկացած վայրից» մոդելին, նշվում է, որ «մարդիկ հավանաբար պետք է ինքնուրույն որոշեն այն միջավայրը (տուն կամ գրասենյակ), որը լավագույնս համապատասխանում է իրենց» (Arbter 5-27):

Դա բարելավում է կյանքի որակը՝ նվազեցնելով անհատական ծախսերը՝ (ինչը բարձրացնում է աշխատակիցների բավարարվածությունը), նվազեցնելով բացակայությունները, հնարավորություն տալով կանանց առաջ շարժվել իրենց կարիերայում (հատկապես նրանց, ովքեր սահմանափակումներ ունեին կրոնական կամ ընտանեկան պարտականությունների կատարման առումով):

Մեկ այլ հետազոտության արդյունքներ ցույց են տալիս, որ հեռավար աշխատանքը կարող է ունենալ երկակի ազդեցություն (Prasad, Arahant, Kaushik 1-14): Մասնավորապես, աշխատակիցների մոտ անհատական մակարդակում կարող է նկատվել արդյունավետության բարելավում, մինչդեռ խմբային մակարդակում արտադրողականությունը նվազում է:

Ղեկավարների կողմից, օրինակ, բարդանում է պարտականությունների պատվիրակման գործընթացը, քանի որ հաղորդակցությունը ավելի դժվար է իրականացվում, հատկապես, եթե վիրտուալ հաղորդակցման հմտությունները բավականաչափ զարգացած չեն: Այստեղ առաջանում են նաև թիմերի կառավարման և ներգրավվածության խնդիրներ, երբ արդյունքում տուժում է ղեկավարի «վերահսկողական» ազդեցությունը:

Մյուս կողմից, ինքնավարությունը, ճկուն գրաֆիկը ապահովում են արտադրողականության աճ:

Հետազոտությունը ցույց է տալիս նաև, որ ամենաշատը տուժել են այն կին աշխատակիցները, ովքեր ունեն երեխաներ, ինչը նոր գենդերային անարդյունավետության պատճառ կարող է դառնալ: Տարբեր գործոններով պայմանավորված շեղումները, սթրեսը նպաստում են արտադրողականության նվազմանը: Աշխատանք-կյանք հավասարակշռության ապահովման ճիշտ ռազմավարությունները կարող են նվազեցնել այս բացասական ազդեցությունները:

Հեռավար աշխատանքի առավելությունները կազմակերպությունների համար

1. **Ծախսերի նվազեցում**. Գրասենյակային ծախսերի, կոմունալ ծառայությունների և այլ կազմակերպչական ծախսերի կրճատում՝ հնարավորություն տալով կազմակերպություններին ծախսեր խնայել և ռեսուրսները ուղղել այլ տեղ:
2. **Աշխատուժի հասանելիության ընդլայնում**. Հեռավար աշխատանքը թույլ է տալիս գործատուներին ներգրավել մասնագետներ համաշխարհային շուկայից՝ առանց աշխարհագրական սահմանափակումների:

3. **Արտադրողականության բարձրացում**. Աշխատակիցները կարող են կենտրոնանալ առանց գրասենյակային խանգարումների, ինչը հանգեցնում է ավելի բարձր արդյունավետության (Harvard Business Review 2023):
4. **Հաճախորդների սպասարկման բարելավում**. Տարբեր ժամային գոտիներում աշխատող աշխատակիցները կարող են շարունակական սպասարկում ապահովել՝ բարելավելով հաճախորդների փորձը:
5. **Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն**. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցում՝ տրանսպորտային ծախսերի և ածխածնի արտանետումների կրճատման հաշվին:

Հեռավար աշխատանքի առավելությունները աշխատողների համար

1. **Ժամանակի խնայողություն**. Ճանապարհի վրա անցկացվող ժամանակի կրճատում՝ հնարավորություն տալով ավելի շատ ժամանակ տրամադրելու անձնական կյանքին:
2. **Կյանքի որակի բարելավում**. Ավելի շատ ժամանակ ընտանիքի, հանգստի և անձնական կյանքի համար:
3. **Ֆիզիկական և հոգեկան առողջության պաշտպանություն**. Աշխատանքի և անձնական կյանքի ներդաշնակության պահպանմամբ բարելավվում է աշխատողների հոգեկան ու ֆիզիկական առողջությունը:
4. **Աշխատանքի տեղայնացման ազատություն**. Աշխատողները կարող են ընտրել իրենց աշխատանքային միջավայրը՝ օգտագործելով տեխնոլոգիական ռեսուրսներ:
5. **Արժեքների նկատմամբ վերահսկողություն**. Աշխատողները կարող են ինքնուրույն կազմակերպել իրենց աշխատանքային միջավայրը՝ բարձրացնելով անձնական արդյունավետությունը:
6. **Ներառականության ապահովում**. Սահմանափակ աշխատունակ անձինք ավելի լայն հնարավորություններ կունենան ներգրավվելու տարբեր աշխատանքներում:

Հեռավար աշխատանքի վիճակագրություն

Համաշխարհային միտումները շարունակաբար ապացուցում են հեռավար աշխատանքի աճը տարբեր տարածաշրջաններում:

● **ԱՄՆ** – 2020 թվականին հեռավար կամ հիբրիդային աշխատանքի մասնաբաժինը կազմում էր մոտ 15%, ինչը զգալիորեն աճեց COVID-19 համավարակի հետևանքով: 2021-ին ցուցանիշը բարձրացավ մինչև 30%, իսկ 2023-ին հասավ 40%-ի (McKinsey & Company 2023): Այս դինամիկ աճը ցույց է տալիս աշխատաշուկայի արագ հարմարվելը նոր պայմաններին և հեռավար աշխատանքի մոդելի ընդունման մեծացում:

● **Եվրոպա** – 2020-2023 թվականների ընթացքում հեռավար աշխատանքի տարածումը աճել է շուրջ 25%-ով, ընդ որում՝ 2020-ին հեռավար աշխատողների մասնաբաժինը միջինը կազմել է 12%, իսկ 2023-ին հասել է 15%-ի (OECD, The Future of Remote Work and Its Implications for Policy 2023): Տարածաշրջանային տարբերություններ կան՝ հյուսիսային և արևմտյան Եվրոպայում հեռավար աշխատանքը ավելի տարածված է, քան հարավային և արևելյան երկրներում:

● **Ասիա** – տեխնոլոգիական առաջադեմ երկրներում՝ Ճապոնիայում և Հարավային Կորեայում, հեռավար աշխատանքը ընդհանրապես ավելի դանդաղ է տարածվում՝ 2023-ին կազմելով մոտ 10%-15% (World Economic Forum 2023): Տեղական մշակույթն ու աշխատանքային ավանդույթները ազդեցություն ունեն հեռավար աշխատանքի ընդունման արագության վրա:

ՀՀ-ում հեռավար աշխատանքի զարգացման միտումները

Հայաստանում հեռավար աշխատանքի զարգացումը սկսվեց 2020 թվականից, երբ COVID-19 համավարակը ստիպեց կազմակերպություններին արագ անցնել հեռավար աշխատանքային մոդելին: 2024 թվականին ՀՀ Աշխատանքային օրենսդրությունում տեղի ունեցան փոփոխություններ, որոնք հաստատեցին հեռավար աշխատանքի օրինականությունը:

ՀՀ Աշխատանքային օրենսդրության փոփոխություններ

Հեռավար աշխատանքը պաշտոնապես ընդունվեց որպես աշխատավարձով աշխատանքի օրինական ձևաչափ:

● Տվյալների պաշտպանության և կիբեռանվտանգության հարցերը ընդգրկվել են իրավական կարգավորման շրջանակներում:

Մասնավորապես, ՀՀ Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին 2023 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունված օրենքը սահմանում է (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք՝ 2024 թ. փոփոխություններով):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 106.1 հոդվածը սահմանում է հեռավար աշխատանքի կարգավորման հիմնարար դրույթները՝ թույլ տալով աշխատողին կատարել իր պարտականությունները առանց աշխատանքի վայր ներկայանալու, եթե կողմերի միջև կա փոխադարձ համաձայնություն և աշխատանքի բնույթը դա թույլ է տալիս: Հոդվածը նաև կարգավորում է հեռավար աշխատանքի իրականացումը արտակարգ իրավիճակներում՝ առանց լրացուցիչ պայմանավորվածության, ինչպես նաև սահմանում է կարգավորումներ պարապուրդի, արձակուրդի, սարքավորումների տրամադրման, ծախսերի փոխհատուցման և հասանելիության պահանջների շուրջ: Այս դրույթները միտված են ապահովելու աշխատանքային հարաբերությունների ճկունությունը և շարունակականությունը, հատկապես ոչ ստանդարտ իրավիճակներում, և համահունչ են միջազգային գործելակերպին:

Հեռավար աշխատանքի մարտահրավերները

Այնուամենայնիվ, հեռավար աշխատանքը նաև ներկայացնում է մի շարք մարտահրավերներ՝ կապված աշխատանքային գործընթացների կառավարման, աշխատողների ինտեգրման, թիմային աշխատանքների խթանման, ինչպես նաև տեխնոլոգիական խնդիրների հետ: Հետևաբար՝ գործատուները և կառավարությունները պետք է մշակեն հատուկ ռազմավարություններ՝ արդյունավետ աշխատանքային մոդելներ ստեղծելու համար:

Հեռավար աշխատանքի հիմնախնդիրները և ՄՌԿ մասնագետի դերը

Հեռավար աշխատանքը ունի բազմաթիվ առավելություններ, սակայն այն նաև ներկայացնում է մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են հատուկ մոտեցումներ, մասնավորապես՝ մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ոլորտում: ՄՌԿ մասնագետները պետք է լինեն պատրաստ՝ լուծելու հեռավար աշխատանքի հետևանքով առաջացած մարտահրավերները, ապահովելու թիմերի արդյունավետությունը և հոգեբանական բարեկեցությունը:

1. Աշխատանքի և անձնական կյանքի ներդաշնակություն

Հեռավար աշխատանքը կարող է դժվարացնել աշխատանքի և անձնական կյանքի սահմանազատումը: Աշխատողները կարող են երկարաժամկետ աշխատել՝ չհիշելով հանգստանալու և ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու կարևորությունը:

Սա կարող է հանգեցնել հոգնածության, մասնակի այրումների և հոգեբանական խնդիրների, որոնք հետագայում ազդում են աշխատանքի արդյունավետության վրա:

ՄՌԿ մասնագետը պետք է մշակի քաղաքականություններ, որոնք կնպաստեն աշխատողների աշխատանքի և հանգստի ներդաշնակության պահպանմանը:

2. Հաղորդակցության և համագործակցության խնդիրներ

Հեռավար աշխատանքը կարող է առաջացնել դժվարություններ թիմերի մեջ հաղորդակցման և համագործակցության հարցերում: Աշխատողները հաճախ մենակ են աշխատում և «շփվում են» միայն էլ. նամակների կամ տարբեր թվային գործիքների հետ: Սա կարող է հանգեցնել տեղեկատվության պակասի, սխալ հաղորդակցությունների և թիմային համագործակցության խնդիրների:

ՄՌԿ մասնագետները պետք է ապահովեն աշխատակիցների ակտիվ ներգրավվածություն և համագործակցությունը: Օգտագործելով տարբեր թվային գործիքներ՝ նրանք պետք է ստեղծեն արդյունավետ հաղորդակցման և համագործակցության միջոցներ, որոնք կօգնեն թիմերին պահպանել միասնականություն: Հաճախ պետք է կազմակերպվեն վիդեոհանդիպումներ, թիմային քննարկումներ ու ինտերակտիվ սեմինարներ, որոնք թույլ կտան աշխատողներին ճանաչել և չմոռանալ միմյանց:

3. Աշխատանքային արդյունավետության վերահսկում

Հեռավար աշխատանքի ժամանակ հաճախակի է դառնում աշխատանքի արդյունավետության վերահսկումը: Եթե նախկինում գործատուները կարող էին անմիջականորեն տեսնել աշխատողների աշխատանքը, ապա հեռավար պայմաններում դա դառնում է ավելի դժվար: Բացի այդ, աշխատողները կարող են հակված լինել պակասեցնելու աշխատանքը, ինչպես նաև ժամանակի կառավարման խնդրի առաջ կանգնել:

ՄՌԿ մասնագետները պետք է մշակեն ավելի պարզ ու արդարացված չափորոշիչներ աշխատանքային կատարողականի գնահատման համար՝ օգտագործելով արդյունքներին ուղղված մոտեցումներ: Նրանք պետք է ներդնեն նաև նոր գործիքներ՝ այնպիսի ծրագրեր, որոնք կհեշտացնեն աշխատանքային ժամերի և աշխատանքային արդյունքների վերահսկումը: Սա կարող է ներառել հաճախորդների հետ կապերի կամ աշխատողների միջեւ աշխատանքի ընթացիկ իրավիճակների մասին զեկույցների մշակում:

4. Հոգեբանական խնդիրներ

Հեռավար աշխատանքը հաճախ հանգեցնում է աշխատողների մենակ լինելու զգացման և սթրեսի աճի: Սա կարող է դառնալ աշխատանքի արդյունավետությանը և կազմակերպության կոլեկտիվին վնասող գործոն:

ՄՌԿ մասնագետները պետք է մշակեն աջակցող մեխանիզմներ, որոնք թույլ կտան աշխատողներին հաղթահարել վախերն ու անհանգստությունները: ՄՌԿ թիմը պետք է սերտորեն համագործակցի ղեկավարության հետ՝ աշխատողների կողմից ներկայացված մտահոգությունները լուծելու և վստահություն ստեղծելու համար:

5. Տեխնոլոգիական խնդիրներ և կիբեռանվտանգություն

Հեռավար աշխատանքը պահանջում է տեխնոլոգիական ապահովվածություն և գրագիտություն, որը ոչ բոլոր կազմակերպությունները կարող են ապահովել բավարար մակարդակով: Աշխատողները հաճախ աշխատում են տնային սարքավորումների վրա, ինչը կարող է խոչընդոտել արդյունավետությանը կամ համարվել կիբեռանվտանգության խնդիր: Որպես արդյունք՝ անվտանգության սպառնալիքները կարող են մեծանալ:

ՄՌԿ մասնագետների գործն է ապահովել, որ բոլոր աշխատողները ունենան համապատասխան տեխնոլոգիական ռեսուրսներ և ծանոթություն կիբեռանվտանգության լավագույն պրակտիկաների հետ: Պետք է աջակցեն կազմակերպության կիբեռանվտանգության քաղաքականությունների իրականացմանը՝ առաջարկելով վերապատրաստումներ և սեմինարներ աշխատողների համար:

Վերլուծություն

ՀՀ աշխատաշուկայում հեռավար աշխատանքի դերը, դրա նկատմամբ վերաբերմունքը, ընդհանուր պատկերացումները, միտումներն ու հնարավոր կանխատեսումները վերլուծելու նպատակով կազմվել է 19 հարցից բաղկացած հարցաշար:

Հարցման մասնակիցները թվով 133-ն են: Մասնակիցների թվի ընդհանուր կառուցվածքում գերակշռում են տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի կազմակերպությունների ՄՌԿ բաժնի (շուրջ 20%) և ոլորտի այլ ստորաբաժանումների աշխատակիցները (շուրջ 73,33%), ընդհանուր առմամբ՝ հարցվածների 22%-ը: Կրթական ոլորտի ներկայացուցիչներն ընդհանուր առմամբ կազմում են 20%-ը, և հաջորդաբար՝ ֆինանսական ոլորտ՝ 9%, հեռահաղորդակցության ոլորտ՝ շուրջ 6%, բանկային ոլորտ՝ 5%, արտադրական ու առողջապահական ոլորտներ՝ համապատասխանաբար 3.7% և 3%:

Մասնակիցների 64%-ը տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ են, 18%-ը՝ ՄՌԿ մասնագետներ/ղեկավարներ, 12%-ը՝ տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, 5%-ը՝ կազմակերպության ղեկավարներ կամ հիմնադիրներ: Աշխատակիցների ճնշող մեծամասնությունը կազմում են մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչները (գրեթե 64%):

Մինչև 50 աշխատակից ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչ աշխատակիցները կազմում են գրեթե 38%-ը, 51-200՝ 29%-ը, 1000-ից ավելի՝ 15%-ը:

Տարիքային կազմում գերակշռում են մինչև 28 (43%) և 29-44 (46%) տարեկան աշխատակիցները: Սեռային կազմում մեծամասամբ իգական սեռի ներկայացուցիչներ են (87.9%):

Հեռավար աշխատանքի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը հարցման արդյունքներով գնահատվում է դրական: Վերոնշյալ ոլորտների ներկայացուցիչների մեծ մասը (մոտ 76%-ը) հեռավար աշխատանքի վերաբերյալ ունի ավելի շատ դրական կամ բացառապես դրական մոտեցում: Հետևաբար, չեզոք կամ բացասական վերաբերմունք արտահայտող պատասխաններն անհամեմատ քիչ են հանդիպում:

Չնայած դրական վերաբերմունքին՝ մասնակիցների 39%-ը նշել է, որ շատ հազվադեպ է աշխատանքն իրականացնում հեռավար տարբերակով, 36%-ը՝ հաճախ, 14%-ը՝ մշտապես, իսկ 10%-ը՝ երբեք չի աշխատել հեռավար տարբերակով: Մշտապես հեռավար աշխատող աշխատակիցների թվում SS ոլորտի կամ մարքեթինգի ոլորտների ներկայացուցիչներն են: Հաճախ հեռավար աշխատում են կրթական, SS, ֆինանսական ոլորտի ներկայացուցիչները: Շատ հազվադեպ՝ պետական ոլորտի ներկայացուցիչները:

Հեռավար աշխատանքի փորձը կեսից ավելի դեպքերում եղել է կամավոր՝ աշխատակիցների ընտրությամբ, 16.5%-ը կազմակերպության պահանջով, իսկ 13.5%-ն երբևէ նման փորձառություն չի ունեցել:

Հեռավար աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործում, ըստ մասնակիցների, որոշիչ դեր ունի հստակ հաղորդակցությունն ու հետադարձ կապը, տեխնիկական ապահովվածությունը և աշխատանքային հստակ նպատակներն ու չափելի արդյունքները:

Հակառակ կողմից, կառավարման պատշաճ գործիքների բացակայությունը դիտարկվել է որպես ամենամեծ խոչընդոտ: Ընդ որում, որպես խանգարող հանգամանք դիտվում է աշխատանքի արդյունավետ գնահատման մեխանիզմների բացակայությունն ու աշխատակիցների ուշադրության պակասը:

Մոտիվացիայի վրա ազդեցության տեսանկյունից. 45.9%-ը կարծում է, որ հեռավար աշխատանքը բարձրացնում է աշխատանքային մոտիվացիան, 45.1%-ը կարծում է, որ ազդեցություն չունի, իսկ 9%-ի կարծիքով նվազեցնում է մոտիվացիան:

Մոտիվացիայի ապահովման ամենահաճախ կիրառվող գործիքը ճկունությունն է աշխատանքային ժամերի ընտրության հարցում, հաջորդիվ թիմային հանդիպումներն ու միջոցառումներն են և կատարողականի վրա հիմնված խրախուսումները:

Կազմակերպություններում հեռավար աշխատողների ներգրավվածությունն ապահովելու համար սովորաբար հատուկ մոտեցումներ չեն կիրառվում (81.2% դեպքերում): Իսկ կիրառվող մեթոդները հիմնականում ուղղված են առցանց կամ անցանց հանդիպումներին, պարբերաբար հաղորդկացման հնարավորությունների ապահովմանը:

Հարցված մասնակիցները մեծ մասամբ կարծում են, որ հեռավար աշխատանքը կդառնա ընդունված պրակտիկա ՀՀ-ում՝ առաջիկա 5-10 տարիների ընթացքում:

ՄՌԿ մասնագետների համար հիմնական մարտահրավերները, ըստ մասնակիցների, ներառում են.

- հեռավար աշխատողների արդյունավետ վերահսկումը
- աշխատակիցների ներգրավվածությունը
- թիմային աշխատանքի կազմակերպումը
- աշխատողների մոտիվացիայի պահպանումը
- տեխնիկական և կիբերանվտանգության հարցերը
- կորպորատիվ մշակույթի պահպանումը:

Մարտահրավերները կարող են հաղթահարվել համապատասխան թվային գործիքների ներդրման միջոցով՝ վերահսկողության ու հետադարձ կապի ապահովման, ինչպես նաև պարբերաբար թիմային հանդիպումների օգնությամբ: ՄՌԿ մասնագետները, ըստ մասնակիցների, ցանկալի է, որ զարգացնեն իրենց թվային, հաղորդկացման հմտություններն ու կատարողականի կառավարման/վերահսկման ու մոտիվացիայի ապահովման մեխանիզմները:

Ըստ ոլորտների՝ SS ոլորտի ներկայացուցիչները մեծ մասամբ աշխատում են հեռավար տարբերակով, ֆինանսական, հեռահաղորդակցության, կրթական ու բանկային, ինչպես նաև արտադրական ոլորտներում, չնայած դրական վերաբերմունքին, աշխատանքները հազվադեպ են կազմակերպվում հեռավար տարբերակով:

ՄՌԿ մասնագետները, ընդհանուր մասնակիցների թվում կազմում են մեծամասնությունը՝ հեռավար աշխատանքի նկատմամբ ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք ունենալու առումով:

Արդյունքներ

Հարցված մասնակիցների մեծամասնությունը (76%) դրական կամ բացառապես դրական վերաբերմունք ունի հեռավար աշխատանքի նկատմամբ: Սա ցույց է տալիս, որ աշխատաշուկայի զգալի հատվածը պատրաստ է կամ նախընտրում է հեռավար աշխատանքը: Բացասական կամ չեզոք վերաբերմունքը շատ ցածր տոկոս է կազմում, ինչը վկայում է այն մասին, որ հեռավար աշխատանքը համարվում է ընդունելի և կենսունակ տարբերակ:

Չնայած դրական վերաբերմունքին՝ հարցվածների միայն 14%-ն է մշտապես աշխատում հեռավար, 36%-ը հաճախ, իսկ 39%-ը՝ շատ հազվադեպ: Սա ենթադրում է,

որ թեև աշխատակիցները դրական են տրամադրված, գործնականում հեռավար աշխատանքը դեռևս չի դարձել հիմնական ձև՝ աշխատանքների կազմակերպման առումով:

Մշտապես հեռավար աշխատողների թվում գերակշռում են SS և մարքեթինգի ոլորտները, մինչդեռ պետական ոլորտում հեռավար աշխատանքի կիրառումը հազվադեպ է: Կարելի է ասել, որ SS և մարքեթինգի ոլորտները Հայաստանում համարվում են հեռավար աշխատանքի առաջատարներ, մինչդեռ ավանդական կառավարման մշակույթ ունեցող ոլորտները դեռևս զգուշավոր են այս անցման հարցում:

Որոշ ոլորտներում, օրինակ՝ արտադրական և առողջապահական, ֆիզիկական ներկայությունը անհրաժեշտ է, ինչը սահմանափակում է հեռավար աշխատանքի հնարավորությունները: Տեխնիկական, կառավարման և մշակութային խոչընդոտները դեռևս խանգարում են հեռավար աշխատանքի լայն տարածմանը:

Հնարավոր պատճառները՝

- SS ոլորտում աշխատանքի արդյունքները չափելի են, և կարելի է արդյունավետ կառավարել անձնակազմը՝ առանց ֆիզիկական ներկայության պահանջի:
- Բանկային և ֆինանսական ոլորտներում անվտանգության, գաղտնիության ու վերահսկողության բարձր պահանջները սահմանափակում են հեռավար աշխատանքի կիրառումը:
- Հեռահաղորդակցության ոլորտում, չնայած տեխնոլոգիական բնույթին, հաճախ անհրաժեշտ են տեղում աշխատող թիմեր՝ ենթակառուցվածքների սպասարկման համար:

Հետևաբար՝ ենթադրում է, որ հեռավար աշխատանքի ընդունումը կախված է ոչ միայն աշխատակիցների նախասիրություններից, այլև ոլորտի առանձնահատկություններից և կառավարման ոճերից ու մեխանիզմներից:

Հետազոտության արդյունքներով հեռավար աշխատանքի արդյունավետության համար կարևոր են հետևյալ պայմանները՝

- հստակ հաղորդակցություն և հետադարձ կապ
- տեխնիկական ապահովվածություն
- աշխատանքային հստակ նպատակներ և չափելի արդյունքներ

Միևնույն ժամանակ, խոչընդոտող գործոնների թվում առանձնանում են՝

- կառավարման պատշաճ գործիքների բացակայությունը
- աշխատանքի գնահատման մեխանիզմների բացակայությունը
- աշխատակիցների ուշադրության պակասը

Սա ենթադրում է, որ կազմակերպությունները պետք է ներդնեն նոր գործիքներ և մեթոդներ՝ հեռավար աշխատանքի կառավարման գործընթացները բարելավելու համար:

Եթե աշխատակիցների 45.9%-ը կարծում է, որ հեռավար աշխատանքը բարձրացնում է մոտիվացիան, ապա մոտավորապես նույնքան մարդ (45.1%) չի տեսնում որևէ ազդեցություն: Սա ցույց է տալիս, որ հեռավար աշխատանքի մոտիվացիոն ազդեցությունը կախված է կառավարման մեթոդներից: Օրինակ՝ ճկուն աշխատանքային գրաֆիկն ու թիմային հանդիպումները կարևորվում են որպես հիմնական մոտիվացիոն գործոններ, ինչը կարող է լինել առանցքային՝ հեռավար աշխատանքի հաջողության համար: Կորպորատիվ մշակույթը և թիմային աշխատանքի արդյունավետ կազմակերպումը հեռավար աշխատանքի հիմնական խնդիրներից են, որոնք պահանջում են նոր մոտեցումներ: Հետևաբար՝ ՄՌԿ մասնագետները պետք է մշակեն աշխատակիցների սոցիալական ներգրավվածության նոր մեթոդներ:

Հեռավար աշխատանքի գնահատման և արդյունավետության ապահովման համար չափելի նպատակների սահմանումը կարևորագույն խնդիր է: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ այս պահին հեռավար աշխատանքի

վերահսկումը դեռևս խիստ սահմանափակ է, քանի որ կազմակերպությունների մեծ մասը չունի հստակ KPI-ներ (Key Performance Indicators) կամ մեխանիզմներ աշխատանքի արդյունքները չափելու համար:

Համակարգված և օբյեկտիվ գնահատման մեխանիզմների ներդրման համար անհրաժեշտ է մշակել հստակ չափելի նպատակներ, որոնք կօգնեն հաղթահարելու կառավարման և արտադրողականության հիմնական մարտահրավերները:

Ակնկալվում է, որ առաջիկա 5-10 տարիների ընթացքում հեռավար աշխատանքը կդառնա ընդունված պրակտիկա Հայաստանում, եթե կառավարման մեխանիզմներն ու մոտեցումները համարժեք կերպով զարգանան:

Ապագայի կանխատեսում

Ինչպես նշվում է “McKinsey & Company”-ի հոդվածում, աշխատուժի ավելի քան 20 տոկոսը կարող է հեռավար աշխատել շաբաթվա ընթացքում երեքից հինգ օր՝ նույն արդյունավետությամբ, ինչ գրասենյակից աշխատելիս: Եթե հեռավար աշխատանքն այդ մակարդակով հաստատվի, ապա տանը աշխատող մարդկանց քանակը կտրուկ կաճի (McKinsey & Company 2021)

Ընկերությունները, որոնք կիրառել են հեռավար աշխատանքը, շատ հավանական է, որ շարունակեն ընդլայնել այդ մոդելները՝ ներառելով նաև նոր տեխնոլոգիաներ և ավելի ճկուն աշխատանքային մոդելներ: Թեև այս գործընթացը լիովին չի հասնի բոլոր ոլորտներին, այն հաստատվելու է տեխնոլոգիական առաջընթացի հետ՝ հատկապես՝ «հիբրիդային» աշխատանքային ձևերի միջոցով, որտեղ աշխատողները կկարողանան ընտրել իրենց համար առավել հարմար աշխատանքային ձևը:

Եզրակացություն

Հեռավար աշխատանքը դարձել է կարևոր աշխատանքային մոդել, որն ունի բազմաթիվ հնարավորություններ, բայց նաև հետապնդում է խնդիրներ և մարտահրավերներ, որոնք պետք է լուծվեն ճիշտ կառավարման և ռազմավարության միջոցով: ՄՌԿ մասնագետներն ունեն վճռորոշ դեր՝ աջակցելու աշխատողներին արդյունավետ կերպով աշխատելու և այդ ընթացքում պահպանելու ինչպես կազմակերպության, այնպես էլ աշխատողների բարեկեցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաղդասարյան Ֆիրդուս, Գասպարյան Անահիտ. «Հակաճգնաժամային կառավարման միջոցառումների միջազգային և հայաստանյան փորձը կորոնավիրուսային համավարակի պայմաններում». Գիտական Արցախ, «Արցախ» հրատ., N 2, Երևան, 2023, էջ 168–182:

2. ՀՀ Ազգային ժողով. «ՀՀ Աշխատանքային օրենսգիրք (2024թ. փոփոխություններով)», https://www.arlis.am/documentview.aspx?docid=185327: Մուտք՝ 01.04.2025:

3. AIHR. Remote Work Trends and Challenges, 2023. 2023, www.aihr.com/articles/remote-work-trends-2023, Accessed: 01.04.2025:

4. Arbter A. Work from Anywhere: How to Manage Remote Teams. 2022, p. 5–27:

5. Deloitte. The State of Remote Work in 2023: Global Trends. 2023:

6. Forbes. How Remote Work Is Shaping the Future of Business. 2023, www.forbes.com/sites/forbestechcouncil/2023/remote-work-business-impact: Accessed: 01.04.2025.

7. Gallup. Remote Work: Benefits and Challenges for Employees. 2023.

8. Harvard Business Review. Managing Remote Teams Effectively. 2023, www.hbr.org/2023/remote-teams-management: Accessed: 01.04.2025.

9. Harvard Business Review. Remote Work and Employee Wellbeing. 2023, www.hbr.org/2023/employee-wellbeing-remote: Accessed: 01.04.2025.

10. Ihm Jennifer, Kim Yunjin. Whom Does Remote Work Make Happy? The Digital Divide in Remote Workers' Well-Being. Cyberpsychology, Behavior, and Social Networking, 27, 2017, https://www.researchgate.net/publication/381693552: Accessed: 01.04.2025.

11. International Labour Organization (ILO). Teleworking during the COVID-19 Pandemic and Beyond. 2020, https://www.ilo.org/sites/default/files/wcmsp5/groups/public/@dgreports/@stat/documents/publication/wcms_747075.pdf: Accessed: 01.04.2025.

12. ILO. Remote Work and Its Impact on Employment. 2023.

13. Klehe Ute-Christine, Derous Eva. Work from Anywhere: How to Manage Remote Teams. Gazdaság és Társadalom, 15(4), 5–20, 2022, https://www.researchgate.net/publication/374401513_Work_from_anywhere_How_to_manage_remote_teams: Accessed: 01.04.2025.

14. McKinsey & Company. How Remote Work Is Changing Global Business Models. 2023.

15. McKinsey & Company. The Remote Work Revolution: How Companies Are Adapting. 2023.

16. McKinsey & Company. What's next for remote work: An analysis of 2,000 tasks, 800 jobs, and nine countries. November 2021.

17. Nicolas B., Liang J., Roberts J., Ying Zh. J. Does Working from Home Work? Evidence from a Chinese Experiment. 2013, p. 12.

18. OECD Publishing. The Future of Remote Work and Its Implications for Policy. 2023.

19. Prasad Sh., Arahant A., Kaushik A. Exploring the Impact of Remote Work on Productivity: A Systematic Review. 2024, p. 1–14.

20. PwC. The Future of Remote Work: Trends and Insights. 2023.

21. SHRM. The Future of Work: Remote and Hybrid Models. 2023, www.shrm.org/resourcesandtools/hr-topics/technology/pages/future-of-remote-hybrid-work.aspx: Accessed: 01.04.2025.

22. TechCrunch. How Remote Work Is Changing the Tech Industry. 2023, www.techcrunch.com/2023/remote-work-and-tech-industry: Accessed: 01.04.2025.

23. World Economic Forum. The Future of Jobs: Remote Work and Employment Trends. Jan. 2024, https://www.weforum.org/stories/2024/01/remote-global-digital-jobs-whitepaper: Accessed: 01.04.2025.

WORKS CITED

1. Baghdasaryan Firdus, Gasparyan Anahit. «Hakatwgnajhamayin kar'avarman mijocar'umneri mijazgayin ev hayastanyan p'ord'y' koronavirusayin hamavaraki paymannerum». Gitakan Arcax, «Arcax» hrat., [International and Armenian Experience of Anti-Crisis Management Measures in the Context of the Coronavirus Pandemic. Scientific Artsakh, "Artsakh" Publishing House, No. 2, Yerevan, 2023], N 2, Erevan, 2023, e'j 168-182: (in Armenian)

2. HH Azgayin jhoghov. «HH Ashxatanqayin o'rensgirq (2024t'. p'op'oxut'yunnerov)». [National Assembly of the Republic of Armenia. Labour Code of the Republic of Armenia (with amendments of 2024)],

https://www.arlis.am/documentview.aspx?docid=185327: Accessed: 01.04.2025: (in Armenian)

REMOTE WORK AND ITS ROLE IN EMPLOYMENT SYSTEM

ANNA MAKSUDYAN
Yerevan State University,
Master's Program in HRM, Head
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia

ZHENYA MIRIMANYAN
Yerevan State University,
Master's Program in HRM, Graduate Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this study is to examine the role of remote work in the labor market of the Republic of Armenia (RA) by analyzing common perceptions about it, as well as its necessity and specific characteristics.

The objectives of this research are to examine the current trends in the adoption of remote work and its significance in the Armenian labor market, to analyze its main advantages and challenges with reference to international experience, and to develop practical tools and recommendations that can support the effective organization of remote work in Armenia.

The study was conducted using a mixed-methods approach, combining qualitative and quantitative data through an online survey. A structured questionnaire was developed for data collection, completed by 133 participants. The analysis was carried out using descriptive methods and thematic grouping to identify the features and perceptions of remote work implementation.

The study concludes that the effectiveness of remote work depends on several fundamental factors, most notably clear and continuous communication between employees and management, adequate technical security, and the precise definition and measurability of work objectives. The interplay of these elements fosters an environment conducive to higher employee productivity and the preservation of work quality, regardless of physical location. Accordingly, the application of remote work in Armenia is expected to expand in the coming years, supporting the attainment of organizational strategic goals while simultaneously enhancing employee engagement and satisfaction.

Keywords: *remote work, labor market, management, work-life balance, flexibility, efficiency, autonomy, engagement, motivation.*

ДИСТАНЦИОННАЯ РАБОТА И ЕЁ РОЛЬ В РЕГУЛИРОВАНИИ СИСТЕМЫ ЗАНЯТОСТИ

АННА МАКСУДЯН
руководитель магистерской программы по управлению человеческими ресурсами Ереванского государственного университета,
кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения

ЖЕНЯ МИРИМАНЯН
магистрант программы по управлению человеческими ресурсами Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Цель исследования — изучить роль дистанционной работы на рынке труда Республики Армения (РА), проанализировав существующие представления, необходимость и особенности данного явления. Задачи исследования:

- изучить тенденции распространения дистанционной работы и её роль на рынке труда РА;
- проанализировать положительные и отрицательные стороны дистанционной работы с учётом международного опыта;
- предложить инструменты, способствующие эффективной организации дистанционной работы в Армении.

Исследование основано на комбинированной методологии, сочетающей качественные и количественные данные, собранные с помощью онлайн-опроса. Была разработана структурированная анкета, которую заполнили 133 участника. Анализ данных проводился с использованием описательных методов и тематической группировки для выявления особенностей и восприятия дистанционной работы.

Основной вывод исследования заключается в том, что эффективность дистанционной работы зависит от ряда ключевых факторов, среди которых особенно важны чёткая и постоянная коммуникация между сотрудниками и руководством, достаточное техническое обеспечение, а также ясное определение и соизмеримость рабочих целей. Совокупность этих факторов способствует повышению производительности труда и сохранению качества работы вне зависимости от физического местонахождения. Следовательно, ожидается, что внедрение дистанционной работы в Армении будет активно развиваться в ближайшие годы, обеспечивая как достижение стратегических целей организаций, так и вовлеченность и удовлетворенность сотрудников.

Ключевые слова: *дистанционная работа, рынок труда, управление, баланс работа-жизнь, гибкость, эффективность, автономия, вовлеченность, мотивация.*

ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՄԲ *

ՀՏԴ 330.3 DOI: 10.52063/25792652-2025.2.25-324

ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի
ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս,
«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպության մասնաճյուղի
կառավարիչ,
տնտեսագիտության թեկնածու,
ք. Աբովյան, Հայաստանի Հանրապետություն
artur.muradyan@ysu.am
ORCID: 0009-0000-8128-8082

Ուսումնամեթոդական սույն հոդվածի նպատակն է ներկայացնել մենեջմենթի հիմնախնդիրները ՀՀ-ում՝ համադրելով այն ժամանակակից կառավարման մոդելների հետ, ինչպես նաև սովորեցնել ուսանողներին կատարել թիմային վերլուծություն՝ ընդգծելով կառավարման տարբեր մոդելների կարևորությունը պետության և բիզնեսների զարգացման տեսանկյունից:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են մենեջմենթի հինախնդիրները ՀՀ-ում, ներկայացվել են ժամանակակից կառավարման մոդելները:

Հոդվածում ներկայացվող մեթոդիկան կիրառվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետում դասավանդվող մենեջմենթ առարկայի շրջանակներում 2018-2025թթ. ուսումնական տարիների ընթացքում, որի համար հիմք են հանդիսացել ներկայացված տեսական դրույթները և իրականացված բազմաթիվ հետազոտական աշխատանքներ: Դասավանդման մեթոդիկան ունի գործնական աշխատանքների կազմակերպման հստակ կոմպոնենտ, ինչը թույլ է տալիս առավել արդյունավետ իրականացնել գործնական պարապմունքները և ապահովել ուսանողի կարողությունների ձևավորման ու զարգացման գործընթացը: Գործնական պարապմունքներն իրականացվել են խմբային և անհատական բազմապրոֆիլ աշխատանքների միջոցով: Վերլուծվել են կառավարման տարբեր մոդելներ, ուսանողները ներկայացրել են հայկական կառավարման մոդելի իրենց տեսլականը: Ուսանողները հանձնարարությունները ներկայացրել են գրավոր (հետազոտական աշխատանքի պահանջներին համապատասխան) և բանավոր (պրեզենտացիաների միջոցով):

Դասավանդման ընթացքում ստացվում են հետևյալ վերջնարդյունքները՝ կառավարման մոդելների առանձնահատկությունների ներկայացում, մոդելների համեմատական վերլուծություն, ՀՀ կառավարման մոդելի ձևավորման խնդիրների ուսումնասիրում, հայկական կառավարման մոդելի դուրսբերում, թիմային աշխատանքի հմտությունների ձևավորում, մասնագիտական գրավոր խոսքի հղկում, մասնագիտական բանավոր խոսքի զարգացում:

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2025թ., գրախոսվել՝ 21.07.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Հիմնաբառեր՝ *մենեջմենթ, վերջնարդյունք, կարողություն, կառավարման մոդել, ուսումնամեթոդական, հիմնախնդիր, նորարարություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր աշխարհում գրեթե բոլոր զարգացած երկրները տարբերվում են իրենց ուրույն կառավարման մոդելներով, ինչը արդիական է դարձնում կառավարման ժամանակակից մոդելների ուսումնասիրումը: Վերջիններս ունեն ազգային առանձնահատկություններ, սերտորեն կապված են երկրի տնտեսական զարգացման մակարդակի, մշակույթի, ազգային հատկանիշների հետ: ՀՀ-ում մենեջմենթին նվիրված բազմաթիվ աշխատանքներ կան, սակայն ուսումնամեթոդական հոդվածում մենք փորձել ենք նորովի մոտենալ վերլուծությանը՝ ներկայացնելով մենեջմենթի հիմնախնդիրները ՀՀ-ում՝ ժամանակակից կառավարման մոդելների համադրմամբ: Հոդվածում ներկայացված տեսական դրույթները հիմք են հանդիսացել ԵՊՀ ԻՄ-ում դասավանդվող «Մենեջմենթ» առարկայի գործնական պարապմունքները արդյունավետ կազմակերպելու համար:

«Կառավարման մոդել» հասկացությունը պետությունների և բիզնեսի կառավարման առանցքային տարրերից է: Ըստ Ֆ. Թեյլորի կառավարման մոդելը գյուտ չէ, այլ էվոլյուցիա (Studfile 2012) Կառավարման հայտնի մոդելներն ունեն էական տարբերություններ, որոնք հաշվի են առնում կոնկրետ երկրի առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական զարգացումը, բնակիչության մտածելակերպը և կենսամակարդակը (Bigenc 2023): Կառավարման մոդելը տեղեկատվական, աշխատանքային, ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսների ամբողջություն է (Moscow Mba, 2024): Կառավարման բիզնես մոդելը նկարագրում է այն գործընթացը, թե ի՞նչ արժեքներ է ստեղծում կազմակերպությունը, ինչպե՞ս է ձևավորում և անցնում իր ռազմավարական զարգացման ուղին՝ նպատակների իրագործման միջոցով հասնելով իր իսկ առաքելությանը (ACBA 2021): Ուսումնամեթոդական հոդվածի ընթացքում կառանձնացնենք առավել հայտնի և կայացած մոդելները:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈԴԵԼՆԵՐ

Ճապոնական կառավարման մոդել

Ճապոնական մոդելը աշխարհում ամենաարդյունավետներից մեկն է: Այն հիմնված է «Մենք բոլորս մի ընտանիք ենք» փիլիսոփայության վրա: Ճապոնական մենեջմենթի հիմնական խնդիրը աշխատողների հետ լավ հարաբերությունների հաստատումն է (Валовой 226-227): Մոդելի առանձնահատկություններն են (Սուվարյան 402-404).

- «ցմահ վարձման համակարգը»,
- աշխատավարձի յուրահատուկ մոդելը (վարձատրությունն ավելանում է տարիքի և ստաժի հետ),
- կազմակերպության ներսում գործող արհմիությունները,
- «էգալիտարիզմը»՝ հավասարությունը:

Ճապոնական կառավարման հիմքը նպատակային կառավարումն է՝ «չեն լինում վատ զինվորներ, լինում են վատ գեներալներ» սկզբունքով (Վարդանյան 639): Ճապոնիան աշխարհում առաջինն էր, որ զարգացրեց ժամանակակից կառավարումը «մարդկային դեմքով»: Առաջնային է դարձել «մեր հարստությունը մարդկային ռեսուրսներն են» սկզբունքը: Առանձնանում է «նիհոնսի-կիկէյիհո» երևույթը, որը էթնոմշակութային ավանդույթների և այլ գաղափարների սինթեզ է ազգային մտածողության ճապոնական մոտեցմամբ: Աշխատանքի գնահատումն իրականացվում է թիմային նորմերի հիման վրա: Ղեկավար անձնակազմի ընտրությունը կատարվում է ընկերության աշխատողների՝ առավել ազնիվ, պարկեշտ և աշխատասեր աշխատակիցներից:

Հարավ-կորեական կառավարման մոդել

Հարավային Կորեան կարճ ժամանակում աղքատ գյուղատնտեսական երկրից վերածվեց զարգացած տեխնոլոգիաներով նորարար երկրի (Dzen 2023): Մոդելին բնորոշ են.

- նորարարության բարձր աստիճան,
- սերտ համագործակցություն պետության և բիզնեսների միջև,
- ամուր կորպորատիվ մշակույթ,
- նորարարության և հաճախորդների բավարարվածության եզակի համադրություն,
- ընկերությունների մեծ մասը ընտանեկան են, «Ես» մոդելը համակցված է «Մենք» սոցիալական մոդելի հետ:

Ներդնելով նոր տեխնոլոգիաներ՝ բիզնեսները ձգտում են դիֆերսիֆիկացված ծառայությունների միջոցով բավարարել հաճախորդների կարիքները: Առանցքային է բիզնեսի ամուր կապը պետության հետ: Հարավային Կորեան այսօր դարձել է բազմաթիվ ոլորտներում համաշխարհային առաջատարներից մեկը (na-journal, 2020):

Չինական կառավարման մոդել

Չինական կառավարման մոդելի հիմքերը եկել են կայսերական կառավարման ժամանակներից (Zhibin Zhang 270–282): Մեծ է կոնֆուցիականության ազդեցությունը: Կարևոր է պետական ապարատի դերը, հիերարխիան և կարգապահությունը: Այն առանձնանում է ավանդույթների և մտածելակերպի կայունությամբ: Մոդելի հիմնական բնութագրերն են՝ համահունչություն, հարմարեցում, ճկունություն, փոխադարձություն, բարդություն, դինամիզմ, խիստ կարգապահություն, օրիգինալ կառավարման ոճ, հոգևոր արժեքներ (Qijie Xiao 47-89): Չինական մոդելին բնորոշ է ռազմավարական մտածելակերպը: Կարևորվում են հետևյալ սկզբունքները՝ կոմունիստական կուսակցության վերահսկողություն, արժանիք և խիստ ընտրություն, անընդհատ վերապատրաստում և զարգացում, կոլեկտիվիզմ և թիմային աշխատանք, անվտանգություն և սոցիալական երաշխիքներ:

Ամերիկյան կառավարման մոդել

Ամերիկյան կառավարման մոդելը հիմնված է կառավարման դասական ուղղության վրա, որը ձևակերպել է կառավարման վարչական դպրոցի հիմնադիր Անրի Ֆայոլը (Мексон, Альберт, Хедури 492): Մոդելին բնորոշ հիմնական գործոններից մեկը քաղաքացիների ժողովրդավարությունն է և նրանց՝ աշխատանքի ու կրթության ձգտումը: Ամերիկյան մոդելի հիմնադիրը Թեյլորն է, չնայած մեծ նշանակություն են ունեցել նաև Ֆորդը, Մայոն և Մաքգրեգորը: Այն կիրառվում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Կանադայի, Նոր Զելանդիայի, ինչպես նաև աշխարհի շատ այլ երկրների կողմից (Мартшев 944): Մոդելն իր մեջ ներառում է մարդկային հարաբերությունների տեսությունը, իրավիճակային մոտեցումը և ռազմավարական կառավարումը (Зайцев, Соколова 414): Ըստ Փիթեր Դրաքերի՝ «Կառավարումը յուրաքանչյուր կազմակերպության հատուկ և որոշիչ կառուցվածքն է» (Друкер, Макьярелло 704): Ամերիկացի մենեջերը «անհատապաշտի» կերպար է, որի համար առաջնայինը առաջխաղացման միջոցով անձնական հաջողության հասնելն է (Попов 152): Մոդելին բնորոշ են՝ ղեկավարության նույնացումը բաժնետերերի հետ, բաժնետերերի հավասարությունը, ֆինանսական թափանցիկությունը (Ստեփանյան 482-489): Այն կիրառում են այնպիսի հսկաներ, ինչպիսիք են «General Motors»-ը, «General Electric»-ը, «Emerson»-ը, «Caterpillar»-ը և այլն («Կորպորատիվ կառավարման անգլոամերիկյան մոդելը»):

Գերմանական կառավարման մոդել

Գերմանական կառավարման մոդելի հիմնադիրը հայտնի գերմանացի գիտնական, սոցիոլոգ և տնտեսագետ Մ. Վեբերն է, որի կարծիքով կառավարումը պետք է իրականացվի բացառապես ռացիոնալ հիմունքներով (Вебер 704): Մոդելին բնորոշ են՝ բարձր որակը և մրցունակությունը, որակի և բավարարվածության համադրումը, նորարար լինելը, սոցիալական բարձր պատասխանատվությունը և այլն**:** Կարևորվում են աշխատակիցներին աջակցությունը, կրթությունը և վերապատրաստումները, մոտիվացիոն ճկուն համակարգը (Миннебаева, Ахметова 1267-1269): Ղեկավարները ստեղծում են բարձր կորպորատիվ մշակույթ՝ զուգորդելով կազմակերպության և աշխատակիցների շահերը: Մասնագիտական ուսուցումը լավագույններից մեկն է աշխարհում (Маркеева Байрта 123-124): Որակավորված աշխատողների մոտ 70%-ը ունեն հիմնական մասնագիտական աշխատանք:

Սկանդինավյան կառավարման մոդել

«Կապիտալիզմի բարեկեցության երեք ձևերը» գրքի հեղինակ Գ. Էսպին-Անդերսոնը առանձնացնում է սոցիալական մոդելի հետևյալ դասակարգումը՝ սոցիալ – ժողովրդավարական, պահպանողական, ազատական (Esping-Andersen 248): Սոցիալ – ժողովրդավարական մոդելի իրավական հիմքը լրիվ զբաղվածության քաղաքականությունն է: Սոցիալ – դեմոկրատական մոդելը անվանում են սկանդինավյան, որի հիմնական սկզբունքը ունիվերսալիզմն է (Ferrera 17-37): Բոլորը հավասար են անկախ տարիքից և սեռից: Պետությունը ծանր սոցիալ-տնտեսական վիճակը հաղթահարելու բեռը վերցնում է իր վրա (Борко, Каргалова, Ковальский 236): Կառավարումն իրականացնում է պատասխանատվության, արդարության և համագործակցության սկզբունքներով (Тэтчер 504): Հատուկ նշանակություն է տրվում սոցիալական համագործակցության զարգացմանը և բիզնեսի սոցիալական պատասխանատվությանը (Вайнштейн 156): Ա. Սապիրը գտնում է, որ սոցիալական պետության եվրոպական մոդելը ընդհանուր արժեքների վրա հիմնված մի յուրահատուկ համակարգ է (Борко, Каргалова, Ковальский 147): Մոդելին բնորոշ են՝ սոցիալական, իրավական ծառայության և ապահովագրական զարգացած համակարգեր, հարկերի բարձր մակարդակ: Շվեդ տնտեսագետ Ա. Լինդբեկի կարծիքով երկրի զարգացման համար կարևոր են ապահովագրությունները (Линдбек 306): 1941-1944 թվականների պատերազմից հետո ԽՍՀՄ ռազմատուգանքները թույլ տվեցին Ֆինլանդիայում անցկացնել մեծ բարեփոխումներ: Արդյունքում վերջինս աղքատ գյուղատնտեսական երկրից վերածվեց արդյունաբերական զարգացած երկրի (Kettunen 225-247): Կենսաթոշակային օրենսդրությունը, կրթական նոր համակարգը հնարավորություն էին տալիս անվճար շարունակելու ուսումը: Նոր մոդելի շնորհիվ Դանիայում տեղի ունեցավ տնտեսական հեղաշրջում, երկիրը կարճ ժամանակում վերածվեց զարգացած պետության (Broberg, Roll-Hansen 294):

Ֆրանսիական կառավարման մոդել

Ֆրանսիան մտնում է մարդկային զարգացման շատ բարձր մակարդակ ունեցող երկրների խմբի մեջ՝ ըստ ՄԱԶԾ-ի մարդկային զարգացման զեկույցի (HDI 0.893) զբաղեցնելով 20-րդ տեղն աշխարհում (Комиссарова 26-27): «Շրջանառության մասին» օրենքով սահմանվում են ֆրանսիական բիզնեսի իրավունքի հիմնական սկզբունքները: Մեծ տարածում ունեն բաժնետիրական ընկերությունները: Վերջիններս հիմնականում պետական են՝ արդյունաբերական բիզնեսներ, խոշոր բանկեր: Կապիտալի մեծ մասը պատկանում է կա՛մ պետությանը, կա՛մ մեկ այլ պետական ընկերության: Ֆրանսիան տարբերվում է ԵՄ այլ երկրներից պետական մենաշնորհներով (Երկաթուղիների ազգային ընկերություն, «Էյր Ֆրանս», «Électricité de France», Միջուկային նյութերի գլխավոր ընկերություն, Փոստի և կապի գլխավոր տնօրինություն և այլն): Պետական կարգավորման համակարգն անցել է զարգացման

մի քանի փուլ՝ պետական խիստ կարգավորումից մինչև ինդիկատիվ պլանավորում՝ հավասար մոտեցում պետական և մասնավոր բիզնեսի համադրությամբ:

Սինգապուրյան կառավարման մոդել

Սինգապուրյան մոդելը հիմնված է կոռուպցիայի դեմ խիստ պայքարի, քաղաքակիրթ պետական կառավարման, տնտեսական խթանման միջոցառումների վրա: Կառավարությունը կենտրոնացել է երկրի կայունացման և տնտեսական վերակառուցման վրա (Jayaram 39-48): Սինգապուրը համարվում է ամենաթափանցիկ և ամենաարդար երկրներից մեկն աշխարհում: Խրախուսվում են օտարերկրյա ներդրումները, խստորեն վերահսկվում է սոցիալական և տնտեսական միջավայրը՝ չխանգարելով շուկայի ազատ գործունեությանը: Ստեղծվել է միջազգային բիզնեսի հարթակ՝ քաղաքականությունը և օրենքները հարմարեցնելով միջազգային ստանդարտներին: Կառավարումը կենտրոնացված է, ղեկավարները պրոֆեսիոնալ են, մասնագիտական որակավորումը բարձր, ունակ են ընդունելու ռազմավարական և իրավիճակային որոշումներ (Low 13):

Հրեական կառավարման մոդել

Հրեա գիտնական Ռաբբի Նաչմանիին է պատկանում հետևյալ խոսքը. «Եթե վաղը ավելի լավը չես, քան այսօր, ապա ինչի՞դ է պետք վաղը», ինչն առավելագույնս բնորոշում է հրեական մոդելը («Еврейские законы больших денег»): Բարձր է գնահատվում մտքի գրոհը, բաց հաղորդակցության ոճը թույլ է տալիս բոլորին հայտնել կարծիքներ (“Israeli Business Culture”): Ղեկավարը համարվում է թիմից մեկը, սակայն ընդունված է վիճել նրա հետ կամ հակասել նրան: «Forbes»-ի լավագույն տասնյակի մոտ 40%-ը հրեաներ են (“THE WORLD'S REAL-TIME BILLIONAIRES”): Ռուսական «Forbes»-ի ցուցակում նրանք կազմում են ավելի քան 20%: Հրեական հաջողության ֆենոմենն ուսումնասիրել է հրեա մարքեթոլոգ Դմիտրի Սենդերովը «Մեծ փողի հրեական օրենքներ» գրքում (“125 миллиардеров России. Рейтинг Forbes 2024”): Կառավարման մոդելը անմիջական է, անկեղծ և երբեմն կոպիտ: Նրանք հաճախ շփվում են «վեճային» և միշտ բացահայտ արտահայտում են իրենց կարծիքը: Հրեաները որդեգրել են «Lean Start Up» փիլիսոփայությունը և կիրառում են «արագ ձախողում, հաճախ ձախողում, ձախողում առաջ» մտածելակերպը (Lautman “Israeli Business Culture”): Մոդելին բնորոշ են՝ կանոնների և վերջնաժամկետների խախտումը, ընտանեկան ժամանցը, հիերախիայի նկատմամբ անտարբերությունը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ կառավարման մոդելի վրա մեծ ազդեցություն է ունեցել կառավարման խորհրդային մոդելը: 70 տարիների ընթացքում ձևավորված փորձը և կապը հետսովետական երկրների հետ մի կողմից, մյուս կողմից նոր մոդելների ներխուժումը ՀՀ և տարբեր երկրների կողմից իրականացվող նեդրումները, ստեղծեցին իրարամերժ կառավարման մոտեցումներ՝ թե՛ մասնավոր և թե՛ պետական ոլորտներում: Հայկական կառավարման մոդելի ձևավորման գործընթացում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք կփորձենք ներկայացնել ստորև:

Հայ մեծ ռազմական գործիչ, փիլիսոփա Գարեգին Նժդեհի «Ընտանիք-ազգ-պետություն» գաղափարը լավագույնս ընդգծում է այն հենասյուները, որոնք կարող են հիմք դառնալ հայկական կառավարման մոդելի կայացման համար (Գինոսյան 2015): Ըստ Ջոն Քոմոնսի՝ «կապիտալիստական կարգերի հակամարտությունների արդյունքում տարաձայնություններ, հակասություններ և եկամտի անարդար բաշխում է առաջանում շուկայի տարբեր մասնակիցների միջև, պետությունը հանդես է գալիս որպես «արբիտր»» (Commons 432): «Management Mix» խորհրդատվական և ուսուցողական ընկերության նախագահ Րաֆֆի Սեմերջյանը ՀՀ ղեկավարներին

բաժանել է չորս կատեգորիաների՝ հետխորհրդային մտածելակերպ ունեցող, ավանդական, ժամանակակից և հետմոդեռն կամ հեռանկարային ղեկավարներ (Սեմերջյան): «Grant Thornton Amyot» ընկերության տնօրեն Գագիկ Գյուլբուդաղյանը համարում է, որ «Հայկական կառավարման մոդելի ռազմավարական խնդիրը կորպորատիվ կառավարման ժամանակակից սկզբունքների մակերեսային կիրառումն է (“How to align human capital with global business objectives”): Հայական մոդելը պատկերացնելու համար համեմատականներ անցկացնենք երկու ծայրահեղ տարբեր՝ ճապոնական և ամերիկյան մոդելների հետ (Տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Կառավարման մոդելի ճապոնական, ամերիկյան և հայկական մոտեցումների տարբերությունները

Ճապոնական մոդել	*Հայկական մոդել*	*Ամերիկյան մոդել*
Կոլեկտիվիզմ	Անհատականություն	Անհատականություն
Ոչ ֆորմալ շփում	Անձնակազմի և ղեկավարության ֆորմալ շփում	Ֆորմալ շփում
Հորիզոնական կարիերա (գերակշռող)	Ուղղահայաց կարիերա (գերակշռող)	Ուղղահայաց կարիերա (գերակշռող)
Աշխատավարձ՝ ըստ ավագության և ըստ աշխատած տարիների	Աշխատավարձ՝ ըստ պաշտոնի	Աշխատավարձ՝ ըստ պաշտոնի և կատարված աշխատանքի
Խմբային / թիմային աշխատանք, փոխօգնություն	Մրցակցություն անձնակազմի միջև, թույլ արտահայտված թիմային աշխատանք	Մրցակցություն անձնակազմի միջև, անհատական արդյունքների գերակայում
Ներքևից վերև որոշումների ընդունում՝ առանց շտապելու, համաձայնեցված	Վերևից ներքև անհատական որոշումների արագ ընդունում ՝ հաճախ ձևականորեն համաձայնեցված	Որոշումների կայացման հստակ հիերարխիա, անհատի պատասխանատվության բարձր մակարդակ

Վերլուծելով կառավարման ժամանակակից մոդելները՝ նկատում ենք, որ բոլոր դեպքերում առաջնային է մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Ըստ Գարի Դեսլերի՝ այն ղեկավարների կողմից անձնակազմի հետ տարվող աշխատանքների մեթոդների ու եղանակների ամբողջություն է, որն իր մեջ ներառում է աշխատողների ընտրությունը, հավաքագրումը, ուսուցումը, գնահատումը, կատարելագործումը և վարձատրումը:

Ըստ Շապիրոյի՝ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը՝ կադրեր ներգրավելու, նրանց արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև մասնագիտական ու սոցիալական զարգացումն ապահովելու անընդհատ գործընթաց է (Шапиро, Шатаева 5, 29): Կառավարման օբյեկտ են կազմակերպության աշխատողները՝ մասնագետները, ղեկավարները, որոնց նկատմամբ իրականացվում են կառավարչական տարբեր գործառույթներ (Базаров, Еремина 106-108): Կառավարման սուբյեկտներ են ղեկավար ապարատի ստորաբաժանումներն ու անհատները, որոնք իրականացնում են անձնակազմի կառավարման գործառույթները (Кибанова 110): Կառավարման մոդելներում շատ կարևոր է մարդկային ռեսուրսների պլանավորման գործընթացը, որն իրականացվում է երեք փուլերով՝ առկա ռեսուրսների գնահատում, ապագա պահանջի գնահատում, ապագա պահանջի բավարարման ծրագրերի մշակում (Սուվարյան 391):

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով ուսումնամեթոդական հոդվածը՝ կատարենք հետևյալ եզրահանգումները.

ՀՀ կառավարման մոդելի կայացման հիմնական խնդիրներն են.

- անձի առաջնահերթությունները ի հակադրումն թիմի(խմբի),
- թերի մասնագիտական կարողությունները և դրանք զարգացնելու թույլ հեռանկարները,
- ազգային-պետական գաղափարախոսության բացակայությունը,
- օրենքների հանդեպ անվստահությունն ու դրանք շրջանցելու համատարած փորձերը,
- բարձր կոռուպցիոն ռիսկերը,
- կրթություն-աշխատաշուկա թույլ արտահայտված կապը,
- պետական և մասնավոր ոլորտների տարբերվող մոտեցումները,
- կրթական ցածր ցենզը և այլն:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք գործողություններ, ինչպիսիք են.

- խիստ գործող օրենսդրական դաշտի կիրառում, որը պետք է վերաբերի բոլորին առանց բացառությունների՝ թե՛ մասնավոր և թե՛ պետական ոլորտներում,
- կոռուպցիայի նվազագույն, գրեթե զրոյական մակարդակ,
- կրթական արժեքների վերանայում, պրոֆեսիոնալ կրթական համակարգի ներդրում,
- կրթական հաստատությունների և բիզնես շուկայի միաձուլում,
- մարդկային ռեսուրսների կառավարման ճկուն համակարգի մշակում, կարիերայի աճի հստակ մշակված ձեռագիր,
- կորպորոտիվ մշակույթի ձևավորման և ռազմավարական կառավարման մոտեցումների կիրառում,
- պետական և մասնավոր ոլորտների միասնական կառավարման մոտեցումների ձևավորում,
- սոցիալական ապահովվածության ճկուն ծրագրեր:

